Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՍԻՄՈՆՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ Է ...

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 821.19-3:93/94
ԳՄԴ 84(5Հ)-4+63.3
Ս 504

ՍԻՄՈՆՅԱՆ ՀՐԱՉԻԿ
Ս 504 ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ Է… / Հ. ՍԻՄՈՆՅԱՆ.- ԵՐ.: ԵՊՀ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2016.- 292 էջ:

Գրքում ամփոփված են անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հր. Սիմոնյանի՝ հարուստ ու արգասաբեր կյանքի ճանապարհի անցած մտավորականի հուշերը:

Գրքի առաջին բաժնում հեղինակը գեղարվեստական պատումին բնորոշ գծերով վարպետորեն պատկերում է իր մանկության շրջանի վառ դիպվածները, որոնցից յուրաքանչյուրը մի պատմվածք-նովել է անցյալի վերհուշներով ու կարոտի անհուն զգացումներով:

Երկրորդ մասը մեր ժամանակների մշակութային, հասարակական քաղաքական հայտնի գործիչների, մտերիմ ընկերների մասին հիշարժան դեպքերի մի ընտրանի է:

Վերջին բաժնում զետեղված է անզուսպ ծիծաղ առաջացնող մանրապատումների մի հրաշալի փունջ:

Գիրքը անխտիր կհետաքրքրի ցանկացած տարիքի ու հետաքրքրությունների տեր ընթերցողի:

ՀՏԴ 821.19-3:93/94
ԳՄԴ 84(5Հ)-4+63.3

ISBN 978-5-8084-2050-2 © Հր. Սիմոնյան, 2016

ԿԱՐՈՏ

ՄՈՒՏՔ

Ծնվել եմ գյուղի արևմտյան ծայրամասում գտնվող հայրական տանը (Ձրի թաղ), բայց մանկությունս անցկացրել եմ հին Շինուհայրի հակառակ կողմում՝ արևելյան ծայրամասի (Խաչերի թաղ) մայրական տանը՝ Թագուհի տատիս մոտ: Այնպես էր ստացվել, որ օրական երկու-երեք անգամ մի տեղից մյուսն էի գնում՝ անցնելով գյուղի մի ծայրից մյուսը: Ըստ որում գնում էի տարբեր ճանապարհներով: Դա էր պատճառը, որ դեռ չորսհինգ տարեկանում գիտեի ողջ գյուղը:

Երկու տների միջև ընկած հիմնական ճանապարհն անցնում էր եկեղեցու մոտով, որն ամուր փակ էր գյուղում խորհրդային կարգեր հաստատվելուց ի վեր: Բայց ինչպես նախկինում, հիմա էլ, երբ փոքր էի, գյուղի ծեր մարդիկ երեկոները հավաքվում էին զրույցների հենց եկեղեցու մոտ, որոնք տևում էին մինչև մութն ընկնելը:

Հայրական տնից մայրական տուն վերադառնալիս ես կանգ էի առնում եկեղեցու մոտ՝ ունկնդրելու մեծերի զրույցները: Միշտ չէ, որ ինձ հաջողվում էր երկար ժամանակ ունկնդիր լինել այդ զրույցներին: Ինձ շատ հաճախ ուղղակի քշում էին՝ թույլ չտալով լսել ասելիքները: Բայց չնայած դրան՝ ծերերի պատմությունները գերում էին ինձ, ուստի թուք ու մուր ուտելուց հետո էլ հաջողվում էր լսել զանազան պատմություններ:

Գյուղում պտտվում էին զանազան զարմանահրաշ զրույցներ հին-հին դարերի լայնաբազուկ ու քաջ հսկաների մասին,

որոնք պաշտպանում էին բնակիչների անդորրը:

Մեծերի այդ զրույցներից իմանում ենք, որ գյուղը միշտ հաղթող է եղել: Թուրք ու թաթար երկյուղից չեն մտել այնտեղ, եկել-անցել են կողքով:

Այդ օրերից արդեն գլորվել է շուրջ ութ տասնամյակ, բայց այդ ժամանակ լսածս պատմություններից շատերը մնացել են հիշողությանս մեջ:

Ես մեծանում էի ընտանեկան մի միջավայրում, որի անդամներն ունեին քաղաքական տարբեր հայացքներ:

Հայրս՝ Ռուբեն Սիմոնյանը, երդվյալ կոմունիստ էր՝ նվիրված խորհրդային կարգերին: Տարիներ շարունակ նավթագործ բանվոր հոր հետ ապրել և աշխատել էր Բաքվում, ապա 1918 թվականին՝ քաղաքը թուրքերին անցնելուց հետո, անասելի դժվարություններով վերադարձել էր գյուղ: Շատ երիտասարդ նա դարձել էր գյուղխորհրդի գործկոմի քարտուղար, ապա կոլեկտիվացման տարիներին նշանակվել էր գյուղի առաջին նախագահը (1930-1931 թթ.):

Մեր տանը՝ հորս գրասեղանին, Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի գրքերն էին, որ նա բարեխղճորեն ու համբերատարությամբ կարդում և գրառումներ էր անում մինչև ուշ գիշեր: Գրասեղանի վերևում Ստալինի մեծադիր նկարն էր ...

Ես մեծանում էի բոլշևիկյան գաղափարների միջավայրում և այն օրերի համար խորհրդային պարզ կենցաղի և ապրելակերպի պայմաններում:

Մայրս՝ Մարիամը, երբեք քաղաքական հարցերով չէր հետաքրքրվել. նա զբաղվում էր միայն առտնին հոգսերով:

ՏԱՏՍ

Մանկության օրերի ամենաքաղցր հուշերս կապված են տատիս հետ:

Դեռ շատ փոքր էի, երբ նստում էի ծնկներին ու բռնում փեշերից: Երբ քիչ մեծացա, բաց չէի թողնում փեշը: Իսկ երբ անկողին մտնելիս բարձրացնում էր վերմակը, մենք երեք եղբայրներով արագ վազում էինք, թե ո՛վ է շուտ մտնելու նրա տաքուկ ու երանությամբ լի ծոցը:

Բարության տիպար էր տատս, որին սիրում էի ամբողջ հոգով: Նրա մահվանից անցել են տասնամյակներ, բայց հիմա էլ՝ նրան հիշելիս, ջերմագին զգացում եմ ապրում:

Տատս ծնվել էր գյուղի հայտնի Շիրինյան գերդաստանում: Շատ փոքր է եղել, երբ մայրը նրա համար գործել է մի գեղեցիկ գորգ, որի վրա հյուսված էր նրա անունը՝ **Թագուհի**:

Դեռ 15 տարին չէր լրացել, երբ սիրահարվել էր Բաքվից եկած մի երիտասարդի՝ գյուղի քահանա տեր Դավթի որդուն:

Երբ եղբայրը՝ հայտնի դաշնակցական Պատվականը, իմացել էր, որ երիտասարդը հնչակյան է, զայրալից գոչել էր. «Ես քույր չունեմ նրան տալու: Թող ետ դառնա եկած ճանապարհով»: Տուն գալով՝ քրոջը հրամայել էր. «Չլինի-չտեսնեմ, որ էլի խոսք ու զրույցի ես բռնվել էդ լակոտի հետ»: Թագուհին կոտրված սրտով անձայն հեռացել էր ...

Բայց երիտասարդների գաղտնի հանդիպումները շարունակվել էին: Մի քանի օր անց, երբ եղբայրը գործով գնացել էր

Տաթև, տնեցիներն առավոտյան Թագուհու մահճակալը տեսել էին դատարկ: Երիտասարդները փախել էին գյուղից: Հնչակ-դաշնակ պայքարը վերջացել էր:

Ամուսնությունից հետո երիտասարդները մեկնել էին «նավթի քաղաք»: Այնտեղ ծնվել էին նրանց չորս երեխաները՝ մայրս՝ Մարիամը, ապա նրա եղբայրը՝ Մխիթարը, և երկու քույրերը՝ Ժենյան և Աշխենը:

Անցնում են տարիներ, թվում էր՝ ամեն ինչ լավ պետք է լիներ: Բայց կյանքը տակնուվրա է լինում, երբ Բաքվում սկսվում են քաղաքացիական կռիվներ: Կարճատև մի դադարի ժամանակ ընտանիքը կարողանում է անասելի դժվարություններով հասնել գյուղ: Տատս իր հետ վերցրել էր տան ոսկեղենը և կարի մեքենան:

Շատ չանցած՝ մահանում է պապս, և ընտանիքի չորս երեխաների հոգսը ընկնում է տատիս ուսերին: Նա ընդամենը 36 տարեկան էր:

Հաջորդ տարվա հուլիսին Գորիսի բանտում բոլշևիկները սպանել էին հորեղբոր տղային՝ Արշակ Շիրինյանին, նրա գաղափարական ընկերոջ՝ Վահան Խորենու հետ: Երկուսն էլ եվրոպական համալսարաններում կրթություն ստացած, բարձր ինտելեկտի տեր անձնավորություններ էին:

Տատս կար էր անում, սովորել էր նաև թոնրում հաց թխել և շուտով դարձել էր գյուղի ամենալավ հացթուխներից մեկը: Բայց դա քիչ էր, ուստի միայնակ մշակում էր տան առջևի փոքրիկ այգին և Ղոշանց կոչվող ձորի մեծ այգիները:

Դա այն ժամանակն էր, երբ Զանգեզուրը սկսել էր կենաց ու մահու կռիվ իր գոյության համար: Եկել էր Անդրանիկ զորավարը և համարյա ամբողջ մի տարի իր արծվային թևերի տակ էր առել երկրամասի հայությանը:

Զորավարի գնալուց հետո վիճակը բարդացել էր. մերթ դաշ-

նակցականներն էին սուր ճոճում, մերթ բոլշևիկները: Ժողովուրդը դրանց արանքում շվարել մնացել էր:

Դեռ Անդրանիկի գալուց առաջ Որոտանի ձորերի երեք գյուղերի՝ Խոտի, Շինուհայրի և Հալիձորի դաշնակցական կազմակերպությունների ընդհանուր ղեկավար էր նշանակված տատիս եղբայրը՝ Պատվական Շիրինյանը, իսկ Զանգեզուրի ու Ղարաբաղի ինքնապաշտպանության ղեկավար էր դարձել հորեղբոր տղան՝ Արշակ Շիրինյանը: Մի տարի հետո նա ընտրվել էր Հայաստանի պառլամենտի անդամ և մեկնել Երևան:

Տատս հոգով դաշնակցական էր և մինչև կյանքի վերջը մնաց այդպիսին:

Երբ գավառ էր գալիս Նժդեհը, Շինուհայր գալիս միշտ իջևանում ու գիշերում էր տատիս եղբոր՝ Պատվականի տանը: Այդպիսի դեպքում տատս գնում էր եղբոր կնոջը՝ Համեստին օգնելու: Նա Նժդեհին չէր համակրում, իսկ որոշ ժամանակ անց սկսել էր ուղղակի ատել նրան գործած դաժանությունների համար: Ասում էր, թե ամեն անգամ գյուղում հայտնվելիս անպայման հրամայում էր ձերբակալել սրան-նրան, հատկապես երիտասարդների, որոնք բոլշևիկների կարճատև աշխուժացման օրերին համակրել էին նրանց:

Տղաներին գնդակահարում էին տեղում կամ տանում ու Տաթևի ժայռից նետում անդունդը: Հարևան գյուղերում նույն բանն էր կատարվում:

Տաթևի վանքի շատ երիտասարդ աբեղաներից մեկը՝ ծննդով Շինուհայրից, տեսնելով այդ անօրինակ դաժանությունը, բողոքել էր և դա համարել աստվածանարգ գործ: Նրա ձեռքերը կապել էին և նույնպես բարձունքից նետել ներքև:

- Ի՞նչ տարբերություն,- ասում էր տատս. - բոլորը հայ են՝ բոլշևիկ թե դաշնակ:

Հետագայում, երբ ես չափահաս էի, պատմում էր, որ սկզբում ինքը Բաքվում համակրել էր հնչակյաններին, քանի որ ամուսինը եղել էր քաղաքի նշանավոր հնչակյաններից մեկը, բայց գյուղ վերադառնալուց հետո համակրել էր դաշնակցականներին, որովհետև իր ամենասիրելի մարդիկ՝ եղբայր Պատվականը և հորեղբոր տղան՝ Արշակ Շիրինյանը, եղել են նշանավոր դաշնակցականներ:

Պատմելով տարեց թե երիտասարդ մարդկանց տեղում գնդակահարելու կամ Տաթևի ժայռից նետելու մասին՝ տատս ասում էր. «Անդրանիկի ժամանակ ո՞վ էր տեսել նման բան ...»: Ճիշտ էր նա: Շատ տարիներ հետո, երբ ես աշխատում էի «Անդրանիկի ժամանակը» մենագրության վրա, պարզեցի, որ Զանգեզուրում եղած երկար ամիսների ընթացքում Անդրանիկի կարգադրությամբ սպանվել էր միայն մի հայ, այն էլ՝ Գորիսի Ազգային խորհրդի գրավոր համաձայնությունից հետո: Դա եղել էր Գորիս քաղաքից մի անկուսակցական մարդ, որն իր հրացանը վաճառել էր հարևան թուրքական գյուղի ծանոթներից մեկին:

- Եթե նույնիսկ Անդրանիկը և Նժդեհը չգային, մեկ է, զանգեզուրցին իր երկիրը թուրքին տվողը չէր,- ասում էր տատս:

Երբ Նժդեհի զորքի մնացորդները նահանջում էին դեպի Իրան, եղբոր՝ Պատվականի կինը՝ Համեստը, ամուսնուն առաջարկում է, որ միանան նրանց: Ամուսինը կտրականապես մերժում է՝ ասելով. «Մեր ճակատագիրն է, թող բոլշևիկները գան, կտեսնենք, գուցե մեզ ձեռք չտան, իսկ եթե հալածանք սկսեն, Աստված իրենց հետ»: Համեստը, սակայն, չի հանդարտվում, շարունակում է պնդել, բայց ամեն անգամ կտրուկ մերժում է ստանում: Տատս էլ իր հերթին ասել էր. «Ա՛յ աղջի, դեռ մենք չգիտենք՝ ինչ բան է բոլշևիկը: Գուցե լավ է լինելու»:

Գիշերը, երբ բոլորը քնած են լինում, Համեստը հագնվում ու

կամաց իջնում է գոմ, դուրս բերում ձին և նստելով փախչում է տնից ու միանում Նժդեհի նահանջող զորքին: Երբ հասնում են Շուռնուխ գյուղին, զինվոր տղաներից մեկը հարցնում է. «Քույրի՛կ ջան, ո՞ւր ես գնում»: «Ուզում եմ Պարսկաստան գնալ»,- լինում է պատասխանը: «Իսկ դու գիտե՞ս, որ Պարսկաստան գնալու համար պետք է անցնես Արաքս մեծ գետը»,- ասում է նա: «Կանցնեմ, ի՞նչ կա, կամրջի վրայով կանցնեմ»,- լինում է Համեստի պատասխանը: «Բայց կամուրջ չկա, քո՛ւյր ջան, լողալով պիտի անցնես»,- զգուշացնում է զինվորը:

Համեստը, որ կյանքում գետ չէր մտել, շուռ է տալիս ձիու գլուխը և վերադառնում տուն:

Նժդեհի դեպի Պարսկաստան նահանջող զորքի հետ են լինում չորս-հինգ շինուհայրցի երիտասարդ զինվորներ, որոնց թվում էր տատիս փոքր քրոջ ամուսինը: Նրանք բոլորը մի ջոկատի կազմում հասնում են Մեղրի, ուր հրաման են ստանում հետևել Արաքսի ափին խռնված ժողովրդի կարգ ու կանոնին, թույլ չտալ խուճապ, մի բան, որ չէր ստացվում: «Բոլորս,- հետագայում պատմել է նա,- կարծում էինք, թե Նժդեհը ամենավերջինը պիտի անցնի գետը, բայց նրա գնալուց հետո տղաները դեռ 4-5 օր այստեղ-այնտեղ կռվում էին Կարմիր զորքի դեմ՝ ապահովելով նահանջը»:

Տեսնելով, որ ամեն ինչ վերջացած է, և այլևս ավելորդ է կռվելը՝ մեր տղաները, ցերեկները թաքնվելով և գիշերները քայլելով, անտառներով ու ձորերով հասնում են գյուղ:

Չէր անցել մի քանի օր, երբ Շինուհայրի գլխին պայթում է մի մեծ արհավիրք:

Խորհրդայնացված Ադրբեջանի կողմից Զանգեզուր մտած Կարմիր բանակի հետ Գորիս քաղաք էր եկել 900 զինվորից բաղկացած մի զորամաս՝ կազմված Առաջին համաշխարհային

պատերազմի տարիներին ռուսներին գերի հանձնված թուրք զինվորներից:

Բոլշևիկ-քեմալական եղբայրացման օրերն էին, և Աթաթուրքի պահանջով սովետական կառավարությունը Անատոլիա էր ուղարկում Ռուսաստանում գտնվող օսմանյան գերիներին: Նույն Քեմալ Աթաթուրքի պահանջով նրանց զինել էին, զգեստավորել, ապահովել սննդամթերքով և հավաքագրել զինվորական ստորաբաժանումների՝ վաշտերի, գումարտակների, գնդերի մեջ:

Դրանից հետո այդ զորամասերը, իրենց ազգային դրոշները պարզած, կարմիր զորքերի ուղեկցությամբ մեկնում էին Թուրքիա:

Խորհրդային Ադրբեջանից Զանգեզուր մտած Կարմիր բանակի պաշտպանության տակ Գորիս քաղաք էր մտել նաև թուրքական մի գունդ՝ կազմված նախկին ռազմագերիներից, որը, այդտեղից դուրս գալով, Սիսիանի վրայով պետք է անցներ Նախիջևան, այնտեղից՝ Թուրքիա:

Թուրքական գունդը մի քանի օր մնում է Գորիսում, որպեսզի կարգի բերի շարքերը, լրացնի ուտելիքի պաշարը, ձեռք բերի ձիեր:

Այդ բոլոր օրերին Գորիս-Ղափան ճանապարհի վրա գտնվող թուրքաբնակ Շահվերդլար և էյվազլար գյուղերի բնակիչները պատվիրակություններ կազմած գալիս ու ողջունում են «կարմիր եղբայրների» գալուստը: Շահվերդլար գյուղի պատվիրակության մեջ է լինում նաև Թայիրը:

Այդ 25-30 տարեկան թուրք երիտասարդը, որի ցեղակիցները ձուկ չէին ուտում, զբաղվում էր ձկնորսությամբ և մի քանի տարի շարունակ Որոտան գետից բռնած ձուկը ձիուն բարձած շաբաթը թե տասն օրը մեկ բերում և ցորենով ու այլ բաներով փոխանակում էր Շինուհայրում: Քանի որ մեր տունը գյուղ մտնող ճա-

նապարհի սկզբնամասում էր, Թայիրը ձուկը տատիս վաճառելուց հետո բակում նստում, հանգստանում էր, իսկ տատս ու հարևան Ասաք ամու աղջիկները նաև հյուրասիրում էին նրան, որից հետո նա ձուկը վաճառելու էր տանում գյուղամեջ: Ժամանակի ընթացքում մեր մեծ բակի երեք տների համար Թայիրը կարծես հարազատացել էր, դարձել «քիրվա»:

Օսմանյան «հեղափոխական գունդը» ողջունելու համար պատվիրակություններ էին գալիս նաև Զանգեզուրին հարևան ադրբեջանական շրջաններից: Կարմիր բանակի հրամանատարությունը խրախուսում էր այդ հանդիպումները:

Չնայած «կարմիր հրամանատարության» և տեղում ստեղծված հեղկոմի կոչերին՝ քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը հրաժարվում էր թուրքական գնդին որևէ աջակցություն ցուցաբերելուց:

Ավելին՝ ընդհատակյա դաշնակցական կազմակերպությունը ձեռնարկել էր գիշերային հարձակում կատարել գնդի վրա, բայց ձախողել էր:

Իսկ Նախիջևանի երկրամասի ադրբեջանական իշխանություններն օր օրի սպասում էին թուրքական գնդի ժամանմանը:

Վերջապես Կարմիր բանակի հրամանատարությունը որոշում է արագացնել գնդի մեկնումը: Առաջադրանք է տրվում դուրս գալ Գորիս քաղաքից և, մտնելով խճուղի, առանց աջ ու ձախ շեղվելու, ուղիղ մեկնել Անգեղակոթ, ապա կարճատև դադարից հետո Բիչանակի լեռնանցքով մտնել Նախիջևանի տարածք: Ըստ որում՝ տեղանքը լավ իմացող տեղի թուրքերից մի քանի հոգու, այդ թվում՝ մեր քիրվա Թայիրին, նշանակում են ուղեկիցներ՝ գունդը հասցնելու մինչև Բիչանակ և վերադառնալու:

Քաղաքից արևմուտք ընկած վերին տափարակ դուրս գալուց հետո, երբ անցել էին ընդամենը 5-6 կիլոմետր, գունդն ուղեկցող

տեղացի թուրքերից Թայիրի մեջ միտք է հղանում՝ զորամասի հրամանատարությանը համոզելու գնդի շարժը թեքել ձախ և իջնել գավառամասի ամենահարուստ գյուղը՝ Շինուհայր, որտեղ հնարավոր կլինի համալրել պարենի պաշարը և ձեռք բերել ձիեր, որոնց պակասը խիստ զգացվում էր: Թայիրի առաջարկությանն անվերապահորեն միանում են զորամասն ուղեկցող տեղացի մյուս թուրքերը: Սկզբում գնդի հրամանատարը տատանվում է, բայց հետո համաձայնություն է տալիս: Խճուղուց դուրս գալով՝ գունդը ուղղություն է վերցնում դեպի հարավ՝ Շինուհայր:

Գյուղ իջնելը հեշտ չէր. դա երկու կիլոմետրից ավելի շատ թեք ու քարքարոտ զառիվայր էր: Օգտվելով դրանից՝ գյուղացիների մի մասը, ընտանիքն առած, իջնում է գյուղից ներքև ընկած անհասանելի անդնդախոր կիրճերը: Թուրք ասկյարները նախ շրջապատում են գյուղը, ապա անմիջապես ձեռնարկում են իրենց սովորական գործերը՝ թալան, բռնաբարություններ, սպանություններ: Հավաքում են գյուղի բոլոր ձիերն ու ջորիները: Մեր թաղում գալով Ղոչունց Միրզայի տուն՝ կողոպտում են և գնալիս, մտնելով գոմ, հանում են նոր գնած նժույգը: Միրզայի տղան կախվում է սանձից և աղաչում է չտանել, բայց նույն րոպեին գնդակահարվում է:

Տատս չէր կարողացել առնել չորս փոքրահասակ երեխաներին ու փախչել ներքևի ձորերը և ապավինել էր բախտի բանին:

Բակ են մտնում չորս հոգի՝ երեք հրացանավոր ասկյար՝ ձիերի սանձերը բռնած, և մեկը, որ տատիս ծանոթ է թվում: Հաջորդ վայրկյանին նա ճանաչում է «քիրվա» Թայիրին, որն առաջնորդում էր ասկյարներին:

Թուրքերը բարձրանում և մտնում են տուն, իսկ երեխաները փախչում ու բարձրանում են կտուրը:

Ասկյարներից մեկը տատիցս պահանջում է հանել ունեցած-

չունեցած ոսկեղենը, որովհետև Թայիրը նրանց ասած է լինում, որ տանտերը Բաքվից է եկել և շատ հարուստ է: Տատս ասում է, որ ինքը ոսկեղեն չունի: Տունը տակնուվրա են անում և ներսի սենյակում գտնում թաքցրած ոսկե զարդեղենը: Ասկյարները գտածոն սկսում են բաժանել իրար մեջ:

Թայիրն ասկյարներից պահանջում է իրեն ևս բաժին հանել, բայց սրանք նրան կոպտորեն մերժում են և ցույց տալիս պատի վրայի՝ տատիս մայրիկի գործած, հիշատակ մնացած գորգը՝ «ԹԱԳՈՒՀԻ» հյուսածո տառերով: Թայիրը հաշտվում է իր բախտի հետ և սկսում է իջեցնել գորգը: Տատս խնդրում է գորգը չտանել և դրա փոխարեն առաջարկում է տեղաշորի ողջ ծալքը, բայց Թայիրը մերժում է և փաթաթում գորգը:

Երբ թալանչիները պատրաստվում էին սենյակից դուրս գալ, տատս, որ թուրքերեն բավականին սովորել էր Բաքվում ապրած տարիներին, նրանց խոսքերից հասկանում է, որ իրեն ուզում են պատվազուրկ անել: Ուստի մեկ ոստյունով պոկվում է տեղից և փորձում դուրս փախչել: Նրան անմիջապես հետևում է Թայիրը և բռնում սանդուղքի ներքնամասում:

Մինչ ասկյարները թալանած ոսկեղենը տեղավորում էին իրենց ծոցերում, բակում ծավալվում է կատաղի գոտեմարտ Թայիրի ու տատիս միջև: Վերցնելով հրացանները՝ ասկյարները շտապում են իրենց ցեղակցին օգնության: Նրանք արդեն մոտ էին, երբ տատիս մկաններում հայտնվում է գերբնական մի ուժ, և նա ողջ ատելությամբ եղունգները խրում է Թայիրի այտերի մեջ: Ցավից ճչալով՝ սա բաց է թողնում տատիս: Տատիս հաջողվում է դուրս փախչել, բայց ասկյարները շարունակում են հետապնդել նրան:

Ասկյարներն արդեն շատ մոտ էին և ձորաբերանին ուզում էին բռնել տատիս, երբ սա շուռ է գալիս և մի ոստյուն կատարելով

սլանում է դեպի անդունդի գլուխ և հաջորդ վայրկյանին իրեն նետում ներքև:

Թուրքերն ապշահար մոտենում են ձորաբերանին և սարսափած հետ քաշվում: Ոոպեներ անց նրանք և Թայիրը, նստելով ձիերը, հեռանում են:

Այդ ամենը տեսնում են տան կտրի վրա սարսափահար կանգնած չորս երեխաները:

Արդեն իրիկնամուտ է լինում, երբ գունդը, 300-ից ավելի ձիեր ու ջորիներ բեռնած, թողնում է գյուղը և բարձրանում վերին տափարակ՝ գիշերելու:

Իսկ թաղի բնակիչները՝ տղամարդ թե կին, ամբողջ գիշեր չեն քնում: Բոլորը, իրենց գլխին եկածները թողած, ողբում են տատիս մահը, որն իր պատիվը փրկելու համար դիմել էր մինչ այդ գյուղում չտեսնված ու չլսված քայլի:

Մի քանի տղամարդ՝ մեր թաղից Ղոչունց Միրզան, Ղոչունց Արմենակը, Սուլեյմանն ու Մաթևոսը և ուրիշներ, երկար պարաններ կապելով իրար, իջնում են ձորը և գտնում տատիս: Աստված նրա կյանքը չէր առել: Ձարդվել էին նրա երկու ոտքը, ձախ ձեռքը և ուսը: Նա կենդանի էր մնացել, որովհետև, բարեբախտաբար, ընկել էր ներքևում տարածված խիտ մացառուտի վրա, որը զսպանակի դեր էր խաղացել: Տղամարդիկ վերցնում են արյունլվա, գիտակցությունը կորցրած տատիս և, մեծ դժվարություններ հաղթահարելով, լուսադեմին նրան դուրս են բերում ձորից:

Շուտով Գորիսից կանչում են երիտասարդ, բայց արդեն մեծ անուն հանած սնղչի Առաքելին, որը և կապում է տատիս վերքերը:

Թագուհի տատս գյուղում դարձել էր հայ կնոջ պատվի ու բարոյականության խորհրդանիշ:

Գյուղում անթիվ ոճրագործություններ կատարելուց ու գյուղացիներին թալանելուց հետո՝ հաջորդ օրը, թուրքական գունդը, նորից մտնելով խճուղի, շարունակում է ճանապարհը դեպի Նախիջևան: Մի քանի օր է տևում, մինչև հասնում է Անգեղակոթի մոտերքը:

Սիսիանի գավառամասի դաշնակցական զինված ջոկատները կազմակերպված դուրս են գալիս ընդհատակից, գիշերը միասնաբար բուռն հարձակում են գործում թուրքական գնդի վրա: Թուրքերը հանկարծակիի են գալիս և փորձում դիմադրություն կազմակերպել, բայց անօգուտ: Լույսը բացվելուն պես զինված ջոկատներին օգնության են գալիս տարբեր գյուղերի գյուղացիները՝ բահերով, եղաններով, կացիններով: Կռիվը տևում է ողջ ցերեկը, և գունդը գլխովին ջախջախվում է: Փրկվում են միայն մի քանի հոգի՝ իրենց գցելով Նախիջևան:

Սիսիանցիների ձեռքն են անցնում գնդի զինամթերքը և հրացանները: Նրանց են անցնում նաև Շինուհայրից թալանված ողջ ունեցվածքը, ձիերն ու ջորիները:

Լսելով այդ մասին՝ շինուհայրցիները մեծ ուրախություն են ապրում:

- Ոսկեղենս թող հալալ լինի սիսիանցի քաջ տղաներին,- ասել էր տատս:

ՄԵՐ ԳՈՄԸ

Մեր գոմի հետ կապված են շատ դիպվածներ, որոնցից մեկ-երկուսի մասին ուզում եմ պատմել:

Գարնան սկզբից մինչև աշնան վերջը գոմի դուռը կիսաբաց էր: Քամու մի մոլորված ծվենից տարուբերվում և միալար հոգոց էր հանում: Երբ շատ փոքր էի, վախենում էի գոմից ներս նայել. այնտեղ կիսամութ էր, քանի որ չուներ ո՛չ լուսամուտ, ո՛չ երդիկ:

Երբ քիչ մեծացա, տատիս փեշից բռնած, նրան կպած էի գոմ մտնում: Դուռը բացելիս դիմացի պատին ամրացված փայտյա ճախերին թառած չորս-հինգ հավերը վախվորած, ցածրաձայն կչկչում էին և իսկույն լռում:

Նույն պատի աջ կողմում՝ մթության մեջ, հազիվ նշմարվում էր մեր կովը, առջևում՝ մսուրը: Նա գոմի երևելին էր, և տատս նրա նկատմամբ հատուկ խնամք էր տանում. խրձի կապը քանդելիս խոտի համեղ կտորները բաժին էր հանում նրան:

Հակառակ կողմում ավանակն էր՝ աշխատասեր ու ծայրահեղ համեստ: Նա անխոս կատարում էր տան բոլոր ծանր գործերը: Ես միշտ խղճում էի նրան: Նրա բաժինը դարմանն էր, որ տատս շալակով բերում էր կոլխոզի կալից՝ պահակի լուռ համաձայնությամբ: Նրան բաժին էին հասնում նաև խոտի խրձի կոշտ մասերը: Չնայած դրան՝ նա երբեք աչք չէր գցում կովի մսուրի վրա: Ասում էին, երբ կոլխոզ չկար, շատերն իրենց ձիերին ու ավանակներին երբեմն գարի էին բաժին հանում, բայց

հիմա նոր ժամանակներ էին, և ոչ ոք գարին «քամուն չէր տալիս»:

Անասուններին կեր տալուց հետո տատս գոմում էլի որոշ ժամանակ շարժվում էր դեսուդեն, իսկ ես այդպես էլ բաց չէի թողնում նրա փեշը: Եվ երբ գործը վերջացնելուց հետո գոմից դուրս էինք գալիս, ճախերին թառած հավերի մոտով դեպի դուռը գնալիս ես ցույց էի տալիս, թե իբր համարձակ եմ և նրանցից չեմ վախենում:

Մեր գոմում բաղձալի համերաշխություն էր, կատարյալ խաղաղություն: Այնտեղ չկային ո՛չ կաշառակեր իշխանավորներ, ո՛չ օլիգարխներ և ո՛չ էլ պնակալեզներ:

Այն Աստծո կողմից ստեղծված տարբեր էակների խաղաղ համակեցության փայլուն օրինակ էր:

ԱՆԱՎԱՐՏ ԼՈԳԱՆՔ

Ամռան սկզբներին Բաքվից մեզ հյուր էր եկել տատիս ամուսնու հեռավոր ազգականը՝ կնոջ հետ: Գյուղը շատ է դուր գալիս երիտասարդ զույգին, և նրանք մեզ մոտ մնում են ամբողջ երկու ամիս՝ իրենց օրերն անցկացնելով տանը և բակին հարակից փոքր այգում:

Երբ տատիս կանչում էին հաց թխելու, վերադառնալուց հետո անպայման լողանում էր: Բայց հիմա ամիսը բոլորել էր, հյուրերը չէին շտապում վերադառնալ, իսկ ինքը անհարմար էր զգում լողանալ:

Տեսնելով, որ հնար չկա՝ նա որոշում է մի կերպ գոմում լողանալ: Նա նախ աննկատ այնտեղ է տանում տաշտը, սափորն ու օճառը, նաև նավթավառ լամպը, ապա, երկու դույլ տաքացրած ջուր վերցնելով, մտնում է գոմ: Վառելով լամպը և ծածկելով դուռը՝ նա հանվում ու մտնում է տաշտ: Էշը, որ դարման էր ուտում, այդպես էլ գլուխը չի բարձրացնում: Իսկ կովը, տեսնելով մի սպիտակամորթ էակի, որը, սափորը ձեռքն առած, ջուր է լցնում գլխին, կարծում է, թե «սատանա» է մտել գոմ: Խրտնում է, ծառս լինում և մի պտույտ գործելով՝ կատաղած սլանում ու տապալում է ջրով լի դույլերը, ապա, կատարելով երկրորդ պտույտը, հարձակվում է «սատանայի» վրա: Բարեբախտաբար տատս կարողանում է ցատկել տաշտից, բացել դուռը և տկլոր դուրս թռչել բակ, մոլեգնած կովը՝ հետևից: Նա սարսափած, հարայ-հրոցով օգնություն է կանչում և բարեբախտաբար

հասցնում է թռչել Ասաք ամու հավաբնի վրա: Հարևաններից առաջինը դուրս է գալիս Ասաք ամին, ապա դուրս են գալիս մեծ ու փոքր բոլոր հարևանները՝ դիտելով տկլոր տատիս: Ասաք ամին շտապ մտնում է տուն և առաջին պատահած բրդյա ծածկոցը բերում ու մեկնում է վախից կուչ եկած օրվա հերոսին:

ՎԱՐԴԱԳՅՈՒԼԻ ԾԱՏՈՒՐԸ

Ահա և գոմի հետ կապված մի ուրիշ դեպք:

Պատահաբար բացում եմ գոմի դուռը և տեսածիցս սարսափած՝ լաց ու կոծով փախչում եմ տուն: Հասնում է տատս, բայց երկար ժամանակ չի կարողանում ինձ հանգստացնել: Վախից դողում եմ: Վերջապես ընդհատ-ընդհատ հասկացնում եմ, որ գոմում գլուխ կա: Տատս չհավատալով իջնում է գոմ ու տեսնում, որ, իսկապես, պատի տակ հավաքված գոմաղբի գագաթին մի գլուխ է, իսկ մարմինը չի երևում: Վախից հետ-հետ է գնում, բայց հաջորդ պահին ճանաչում է Վարդագյուլի Ծատուրին: Նրանք անասուն չունեին, ուստի եկել ու մտել էր մեր գոմի գոմաղբի մեջ՝ իբր մարմնի ցավերը բուժելու համար:

Վարդագյուլի խալխը եղել է գյուղի ամենաաղքատը: Ո՛չ դաշտ են ունեցել, ո՛չ այգի: Հին կարգերի օրոք երկու եղբայրները՝ Հակոբն ու Ծատուրը (սրան նաև Մունթի էին ասում՝ կանացի հակումներ ունենալու համար), նոքյար * են եղել գյուղի ամենահարուստներից մեկի՝ Սաքոյի Ասրու մոտ: Ավագ եղբայրը՝ Հակոբը, Ասրու համար վարուցանք էր անում, իսկ Մունթին հսկում ու մշակում էր նրա՝ Որոտան գետի ձախ ափի այգիները՝ Ձուարը և «Վարդապետի բաղը», որը մի ժամանակ պատկանել է Տաթևի վանքին:

---

* Ծառա:

Վայրենի տեսք ուներ Մունթին: Վախ ներշնչող էին մանավանդ նրա աչքերը՝ մեծ ու ոչինչ չարտահայտող: Նա չէր ածիլվել տարիներ շարունակ, քանի որ դրա կարիքը չուներ՝ մազ չէր բուսնում երեսին:

Խորհրդային նոր կարգերը ամեն բան տակնուվրա էին արել: Սաքոյի Ասրին կուլակաթափ էր եղել, իսկ Վարդագյուլենց ընտանիքը՝ շունչ առել: Հակոբի երկու տղաները դարձել էին կոմսոմոլ, գյուղի ակտիվիստներ, ընդունվել էին դպրոց և սովորում էին գերազանց:

Միայն Մունթու կյանքում համարյա ոչինչ չէր փոխվել: Ինչպես ցարի ու դաշնակի ժամանակ, հիմա էլ՝ սովետի օրոք, նա ամառ թե ձմեռ Ասրու այգիներում էր, որ հիմա կոլխոզինն էր: Նրա կացարանը երկու-երեք քառակուսի մետրանոց մի բուն էր, ուր նա մտնում էր, երբ մութը թանձրանում էր: Մնացած ողջ ժամանակը դրսում էր: Գել ու գազան, սողուն թե թռչուն նրա բարեկամներն էին: Ամբողջ կյանքում չէր լողացել, նույնիսկ չէր հանվել ու մտել գետը: Այդ էր պատճառը, որ նրա մարմնի վրա ոչ մի մակաբույծ կենդանի չկար, և եթե սրանցից մեկը սխալմամբ մոտենում էր, ապա յուրատեսակ հոտից սատկում էր տեղնուտեղը:

Ամբողջ տարվա ընթացքում Մունթին միայն մեկ անգամ էր բաղերից բարձրանում գյուղ: Դա լինում էր հոկտեմբերի կեսերին՝ 10-15 օրով: Գալիս էր՝ թափելու գյուղացիների բաղերի ծառերի ընկույզը, որին մեր գյուղում ճղոպուր էին ասում: Այդ ծառերը մեր գյուղում հսկա մեծություն ունեին:

ՍԱԹԵՆԻԿԻ ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՓԱԽՈՒՍՏԸ

Աշնանային մի օր շինուհայրցի մի խումբ աղջիկներ իջել էին Որոտան գետի ափերը՝ մոշ հավաքելու: Երեկոյան կողմ եղանակը շատ արագ փոխվում է, սկսում է անձրև տեղալ, ապա հանկարծակի իջնում է այնպիսի քաշաթուխպ, որ աղջիկները հազիվ են կարողանում իրար գլխի հավաքվել և արագորեն շալակելով հավաքածը՝ վերադառնում են գյուղ: Բավական տարածություն անցնելուց հետո միայն պարզվում է, որ աղջիկներից մեկը՝ Սաթենիկը, չկա: Գյուղում հարայ է ընկնում: Մի խումբ երիտասարդներ, նստելով ձիերը, գնում են փնտրելու արկածյալ աղջկան: Թանձր մառախուղի մեջ մի քանի ժամ այս ու այն կողմ շրջելուց հետո նրանք ստիպված ձեռնունայն վերադառնում են գյուղ: Ընդհանուր կարծիքն այն է լինում, որ Սաթենիկը անզգուշաբար ընկել է փրփրաբաշ Որոտան գետը, որը քշել տարել է նրան:

Իրականում այլ բան էր տեղի ունեցել: Մառախուղի մեջ չկողմնորոշված աղջիկը մոլորվել ու գնացել էր հակառակ ուղղությամբ և հայտնվել թուրքաբնակ տարածքներում: Ճանապարհին նրան հանդիպում են հինգ ձիավոր, որոնք աղջկան թուրքերեն հարցնում են, թե ուր է գնում այդ անձրևային եղանակին: Աղջիկը չի պատասխանում, որովհետև թուրքերեն ոչ մի բառ չգիտեր: Հաջորդ րոպեին նրանցից մեկը մոտենում է, նրան վերցնում ու բարձրացնում է իր ձիու վրա: Սաթենիկը միայն հասկանում է, որ ձիավորները հայեր չեն և գնում են ուրիշ ուղղությամբ:

Նա սկսում է աղիողորմ լաց լինել, բայց արդեն ուշ էր: Նրան սաստում են, և փոքրիկը լեղապատառ սսկվում է:

Աղջիկը Քասունց տնից էր: Ծնողներն ու ազգականները հարայ-հրոց են բարձրացնում, բայց ոչնչով օգնել չեն կարողանում:

Հայ աղջկան գերած թուրք ձիավորներից մեկը, գյուղ հասնելով, նրան տանում է իր տուն: Անցնում են տարիներ, Սաթենիկը հասակ է առնում, դառնում փարթամ մի օրիորդ: Տանտերը նրան ամուսնացնում է իր որդիներից մեկի հետ, և սկսվում է Սաթենիկի թուրքավարի կյանքը: Այն աստիճան է տիրապետում թուրքերենին, որ հյուր եկած թուրքերը կասկած անգամ չեն ունենում, որ նա հայ է:

Անցնում է ավելի քան երեսուն տարի, բայց Սաթենիկը չի մայրանում: Պատճառը ոչ ոք չգիտեր:

Եվ ահա մի օր թուրքական աուլում հայտնվում է շինուհայրցիների մի խումբ՝ Առաքել պապի (Չիբուխ Առաքելի) գլխավորությամբ: Եկել էին ջորիներով՝ մեծաքանակ բրինձ գնելու: Իմանալով այդ մասին՝ Սաթենիկի մեջ բուռն ցանկություն է առաջանում տեսնել հայ մարդկանց: Նա մոտենում է, որպեսզի ունկնդիր լինի նրանց խոսակցությանը: Այդ նկատելով՝ Առաքել պապը թուրքերեն հարցնում է Սաթենիկին.

- Աշըս, հարալըմ սան*:

Սաթենիկը փղձկում է երեխայի պես, ապա աչքերը սրբելով՝ ասում, որ ինքը հայի աղջիկ է, որ հիշում է Շինուհայր անունով իրենց գյուղը, որը հիմա էլ այն տեսնում է իր երազներում: Իսկ այն հարցին, թե ում է հիշում իր հարազատներից, Սաթենիկը պատասխանում է, որ հիշում է միայն ծնողներին՝ Քասունց Անդ-

---

* Աղջի՛կ, որտեղացի՞ ես:

ռանիկին և Եղիսաբեթին: Նա տեղյակ չէր, որ իր անհետանալուց հետո մայրը վշտից մահացել էր նույն տարում, հայրը՝ մի քանի ամիս հետո: Սաթենիկը Առաքել ապորը աղիողորմ խնդրում է իրեն վերցնել իրենց հետ: Առաքել ապոր կարգադրությամբ տղաները կնոջը տեղավորում են ջվալի մեջ և բեռնում ջորիներից մեկի վրա: Երբ ճանապարհ են ընկնում դեպի տուն, արդեն վրա էր հասել երեկոն:

Առաքել ապերը տղաներին՝ Գևորգին, Խաչատուրին և Հակոբին, կարգադրում է՝ եթե թուրքերը գլխի ընկնեն և հետապնդեն իրենց, պետք է պաշտպանվել հնարավոր բոլոր միջոցներով և մինչև վերջին շունչը: Բարեբախտաբար ամեն ինչ բարեհաջող վերջ է ունենում. առավոտյան կողմ ոտք են դնում Շինուհայրին հարևան Խոտ գյուղի սահմաններից ներս: Աղջկան հանում են ջվալից և նստեցնում Առաքել ապոր ձիուն:

Գյուղը ցնծությամբ է ընդունում իր կորած զավակին: Բոլորը՝ տղամարդ թե կին, հավաքվում են Քասունց մարած օջախում: Բոլորի ուրախությանը սահման չկար: Տեր Բաղդասարը, համբուրելով Առաքել ապոր, Գևորգի, Խաչատուրի ու Հակոբի ճակատները, կոչով դիմում է հավաքվածներին՝ օգնել, որպեսզի նորից ծուխ բարձրանա Քասունց Անդրանիկի օջախից:

ԲՈՒՇԻՆ ԱՎԵՏԻՍԸ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ

Մեր գյուղում շատ էին հսկա, ուժեղ տղամարդիկ, որոնց անունները հայտնի էին նաև հարևան գյուղերում: Հատկապես փառաբանված էին Ղոչունց Բոզին, Բուշին Ավազը, Հսկա Բոլին: Նրանց լրացնում էին երկարահասակ մարդիկ՝ Թունանին Շափաղաթը, Նանուխին Գարեգինը, Բուշին Մանուչարը:

Ամենից ուժեղներն ու քաջերը եղել են Բուշին բազմանդամ ընտանիքում: Դրանցից մեկն էլ Բուշին Ավետիսն էր:

Օրերից մի օր, երկու ջորիները վերցնելով, նա գնացել էր Նախիջևան՝ աղ բերելու: Ջորիները բեռնելուց հետո նա ուղևորվում է տուն: Նախիջևանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա տեսնում է, որ մի տափարակի վրա հավաքված տարբեր տեղերից եկած թուրք փահլևանները պատրաստվում են կոխ բռնելու: Մինչ մրցության սկսվելը նրանց ղեկավարը, ճանապարհով գնացող Ավետիսին դիմելով, ծաղրանքով ասում է.

- Ո՞ւր ես գնում, ա՛յ գյաուր, գոնե մոտեցի՛ր ու թամաշա՛ արա, թե չէ հայերից կոխ բռնող չի լինի:

Ավետիսը կանգնեցնում է ջորիները, մոտենում ու հարցնում.

- Ո՞վ է ձեզանից ամենաուժեղն ու քաջը:

Բոլորը ծաղրանքով քրքջում են: Վերջապես նրանցից ամենաուժեղն Ավետիսին կանչում է իր մոտ և ասում.

- Ես ու դու հենց հիմա կոխ կբռնենք:

Այնուհետև պայման է դնում.

- Եթե պարտվես, երկու ջորիներդ իրենց բեռով պիտի տաս ինձ:

Ավետիսը համաձայնություն է տալիս, և կոխը սկսվում է: Վայրկյաններ անց նա թուրք փահլևանին կտրում է գետնից և բարձրացնում գլխից վեր, բայց չի զարկում գետին, այլ զարմանքից քարացած մյուս փահլևաններին հարցնում է, թե էլ ով է ցանկանում կոխ բռնել իր հետ: Բոլորը բերանները բաց պապանձվում են:

Ավետիսը շարունակում է ճանապարհը:

ՁՐԱՂԱՑՔԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Բուշի գերդաստանից ահա մի ուրիշ պատմություն ևս:

Հարևան Հալիձոր գյուղի միակ ջրաղացը խափանվել էր: Նրա տերը՝ Բախշին, տեղեկանում է, որ շինուհայրցի Բոլին Շուշիում գնել է և եզներով գյուղ է տանում նոր ջրաղացքար՝ փոխարինելու իր ջրաղացի արդեն մաշված քարը: Առանց ժամանակ կորցնելու՝ նա դուրս է գալիս Բոլուն ընդառաջ և խնդրում-աղաչում է՝ ջրաղացքարը երեք-չորս շաբաթով վարձակալությամբ տա իրեն, այլապես գյուղը կկանգնի սովի առջև:

Երկար չեմուչումից հետո Բոլին ի վերջո համաձայնվում է՝ պայմանով, որ երեք ամիս հետո Բախշին այն կվերադարձնի տիրոջը:

Անցնում է ոչ թե երեք ամիս, այլ մի ամբողջ տարի: Բոլու՝ Շինուհայրի ջրաղացը դուրս է գալիս շարքից: Սա Հալիձոր գնացողներին մի քանի անգամ ապսպրում է խնդրել Բախշուն, որ վերադարձնի ջրաղացքարը, բայց վերջինս, ամեն անգամ մի պատճառ գտնելով, խուսափում է:

Համբերությունը հատած՝ Բոլին օրերից մի օր ինքն է ոտքով Բերդի ձորով ճանապարհվում Հալիձոր: Տեղ հասնելով՝ նա հարցնում և իմանում է Բախշու ջրաղացի տեղը: Բախշին անմիջապես արդարանում է՝ բերելով զանազան պատճառաբանություններ, և խոստանում մի շաբաթ հետո իր ձեռքով ջրաղացքարը տանել Շինուհայր և հանձնել Բոլուն: Բայց խոստումը չի կատարում: Էլի սկսվում են վիճաբանություններ, որոնցից մեկի

ժամանակ Բոլին մտնում է ջրաղաց, ոտքով կանգնեցնում պտտվող ջրաղացքարը, այն տեղից հանում և դնելով ուսին՝ առանց խոսք ու զրույցը շարունակելու ճանապարհվում է Շինու-հայր:

Ա՜ ՔԵԶ ԲԱՆ

Մեր հարևան Խոտ գյուղի երիտասարդ տղաներից մեկն անցյալ դարի սկզբներին մեկնում է Բաքու՝ «մարդ դառնալու»: Նա աշխատանքի է անցնում նավթահանքերից մեկում, բայց որոշ ժամանակ անց թողնում է այդ գործը և զբաղվում մանր առևտրով: Աչքաբաց ու ճարպիկ լինելով՝ նա իր համար ստեղծում է ապրելու քիչ թե շատ տանելի պայմաններ:

Տարիներ հետո այդ երիտասարդ մարդու մոտ ցանկություն է առաջանում մի քանի օրով գնալ հայրենի գյուղ, տեսակցել հարազատներին ու ընկերներին:

Գնալով ծննդավայր՝ սա այնտեղ մնում է երկու-երեք շաբաթ: Բաքու վերադառնալու նախօրյակին մանկության հարազատ ընկերները՝ թվով յոթ-ութ հոգի, որոշում են նրա պատվին կազմակերպել հրաժեշտի ճաշկերույթ և հավաքվում են ընկերներից մեկի տանը:

Տանտերը մոտ է բերում մի քանի շիշ թթի օղի, և սկսվում է կերուխումը: Կենացներ առաջարկելու պատիվը վստահվում է աչքաբաց հյուրին՝ ակնկալելով նրանից լսել իմաստուն խոսքեր ու խրատներ: Հյուրը հրաժարվում է, բայց դրա փոխարեն ցանկություն է հայտնում ստանձնել բաժակները լցնողի պարտականությունը: Աշխարհ չտեսած, միամիտ շինականները շնորհակալությամբ և երախտագիտական խոր զգացումներով են ընդունում ինքնազոհողության պատրաստ թանկագին հյուրի առաջարկությունը:

Դրանից հետո բաքվեցի հյուրը նաև ցանկություն է հայտ-

նում, որ բոլորը խմեն նույն բաժակով՝ ի նշան եղբայրական հավասարության ու համերաշխության: Այդ առաջարկությունն ավելի է ոգևորում սեղանակիցներին: «Կեցցե՛ս տու, հա՜», «ապրե՛ս, շա՜տ ապրես տու» աղաղակների ուղեկցությամբ սկսվում է կերուխումը:

Օղին լցնելու և կենացներ առաջարկելու պարտականությունը ստանձնած հյուրը, առաջին բաժակը լցնելով, «սա՛ղ լինեք» ասելով, խմում է: Հաջորդ բաժակը լցնում և տալիս է կողքի նստածին: Երրորդ բաժակը դարձյալ սկզբից ինքն է խմում, որից հետո լցնում և հերթականությամբ տալիս է սուփրայի շուրջը նստած մյուս ընկերոջը: Եվ այսպես շարունակ: Երբ բաժակն արդեն մի լրիվ շրջան է կատարած լինում, սեղանակիցներից առավել աչքաբացներից մեկի մոտ հեռավոր, շատ թույլ կասկած է առաջանում, թե միգուցե ներկաներից մեկն ավել է խմում մյուսներից: Մտածում է, բայց չի կարողանում միտքն իրար բերել, պարզել, թե ով է այդ «ավել խմողը», և թե այդ «ավել խմողը» ինչքան է ավել խմում:

Երկար մտածմունքներից հետո այդ «աչքաբաց» սեղանակիցը կողքին նստածին կասկածանքով հարցնում է.

- Ախպե՛ր ջան, ես գլխի չեմ ինկում, կարո՞ղ ա, վեր մեզանա մինը ավել ա խմում:

Հետևում է պատասխանը.

- Արա՛, հինչ բիաբուռ մարթ ես, խե՞ շառը պիրում-քիցում ես մեր սեղանին: Սա՛սըտ կտրի, համութ ա ... Ըտենց պան կինի՞:

Բաժակը ևս մի պտույտ է կատարում, բայց այնպես էլ ներկաներից ոչ մեկի գլուխը չի ըմբռնում, թե ինչ է կատարվում: Դրա փոխարեն բոլորի մոտ բորբոքվել էին երախտագիտական խոր զգացումներ քաղաքից եկածի նկատմամբ, որն «ընկերներին նեղություն չտալու» համար ստանձնել էր բաժակները լցնելու ծանր պարտականությունը:

Վերջապես, բաժակի հինգ թե վեց պտույտից հետո տղաներից մեկի՝ Ալեքսանի գլխում թույլ կասկած է ծագում, թե հնարավոր է, որ սեղանակիցներից մեկը ավել է խմում, և այդ մասին իր կասկածը շշուկով փսփսում է կողքին նստած Ծատուրի ականջին: Շատ չանցած՝ կասկածը սողոսկում է ևս երկու-երեք հոգու մեջ, բայց թե ներկաներից ո՛վ է ավել խմողը, այնպես էլ ոչ ոք գլխի չի ընկնում: Վերջապես, նրանցից մեկը՝ Համփան, օրորվելով, հազիվ լսելի ձայնով կողքին նստած Միքելին կասկած է հայտնում.

- Արա՛, ըստեղ հենց ա ավել խմող ինի ...

Բաքվեցին, որ լսել էր Համփու ասածը, խիստ դժգոհում է և խոժոռ դեմք ընդունելով՝ նրան հարցնում է, թե ով է էդ աննամուսը, որ ավել ա խմում: Հետո սկսում է ապացուցել, թե այդպիսի բան չկա և չի էլ կարող լինել, քանի որ բոլոր ներկաները նամուսով մարդիկ են:

- Ալեքսա՛ն, ես մի ստաքան եմ խմալ, հետո լցրել, քեզ եմ տվալ, դուզ ա, չէ՞,- հարցնում է նա կողքին նստածին:

- Հա՛, ախպե՛ր ջան, դուզ ա, շա՜տ դուզ ա ...

Նույն հարցը նա հերթով ուղղում է հաջորդ սեղանակցին, երրորդին, չորրորդին և այդպես բոլորին:

Բոլորն էլ իրենց հերթին երդվում են, որ իրենք չեն նկատել, թե ավել խմող կա: Բոլորը հաստատում են, որ խմել են եղբայրական հավասարությամբ: Միայն մեկը լուռ է մնում և ամոթից կախում է գլուխը: Բաքվեցին նեղացածի տեսքով դիմում է նրան:

- Ալեքսա՛ն, դե ասի տեսնեմ՝ հով ա ավել խմողը: Խե՞ զուր տեղը օգում ես կռեվ քիցես:

Խեղճ Ալեքսանը արդարանալով հազիվ քրթմնջում է.

- Ա՜, դե՛ ես հինչ գիդամ է՜, իրանք են ասում ...

ԱՐՀԱՎԻՐՔ

Ժայռի պռնկին նստած մեր խոտանոցի՝ անտաշ քարերով շարված արևկող պատն ուղիղ նայում էր անդունդին: Նրա ճեղքվածքներից մեկում բնադրել էր թռչնաց մի զույգ: Ամեն մեկը՝ մի անձեռակերտ պատկեր. իրանն ու կուրծքը՝ սպիտակաթույր, թևերը՝ սաթի պես սև, մարմինը՝ ոսկեփայլ, գլխին՝ խոպոպիկ: Այդպիսի թռչունք մեր գյուղում չկային:

Նրանք խոտանոցի կտուրին երևում էին վաղ գարնանը, երբ դեռ բացված չէին մեր բակի երկու բալենիները: Գալիս էին երկուսով և ուշ աշնանն իրենց երկիր վերադառնում չորսով: Տատս ասում էր, թե նրանք գալիս են հեռուներից՝ Թավրիզի կողմերից: Այն ժամանակ ես կարծում էի, թե Թավրիզը շատ հեռավոր, աշխարհի ծայրին գտնվող կախարդական մի չքնաղ երկիր է: Ժամանելուն պես, այս էլ որերորդ անգամ, թռչունները կարգի էին բերում իրենց բույնը:

Օրեր անց նրանցից մեկը բույնից դուրս չէր գալիս, մյուսն ուտելիք էր հասցնում նրան: Վերջապես եկավ պահը, երբ նրանք նորից միասին էին՝ նստած կտուրի բնահայաց եզրաքարերին: Հսկում էին պատի ճեղքը, ուր աշխարհ էին եկել երկու թռչնակներ:

Առջևում երջանիկ օրեր ու ամիսներ էին՝ ամբողջ մի հավիտենականություն: Բայց պակաս չէր հոգսը. մեծացնել էր պետք փոքրիկներին: Եվ նրանք լուսադեմից մինչև իրիկնամուտ զբաղված էին կեր հայթայթելով: Նրանցից մեկը թռչում էր՝ մի բան

հասցնելու, մյուսը կտուրի վրայից հսկում էր բույնը:

Տղամարդ թե կին բարձրացել էին հանդը: Հնձի օրեր էին, դաշտերում՝ եռուզեռ: Իսկ գյուղի վրա նստել էր հուլիսյան թանձր տապը: Քարերը շիկացել էին, տերևները՝ սսկվել, ճանճ ու բզեզ՝ թաքնվել թփերի ու խոտերի տակ: Անդորր էր չորս կողմը:

Եվ հանկարծ բակը լցվեց աղմուկով: Տատս արագ դուրս եկավ սենյակից, ես էլ՝ հետևից: Խոտանոցի վրա ծավալվում էր անթիվ-անհամար ողբերգություններից մեկը. պատի վրայով բարձրացել և գլուխը թռչնաց բույն էր մտցրել երկար, հազարա-փայլ մի օձ:

Թռչունները խելակորույս պտտվում էին բույնի շուրջը, սլա-նում վեր ու վար, ճչում աղեկտուր: Բայց այլևս անօգուտ էին ողբն ու լացը: Շուտով օձը գլուխը հանեց բնից և դանդաղ իջավ ու անհետացավ ձորի թավուտներում:

Քիչ անց թռչուններն իրար հետևից արագ մտան բույնը և իսկույն դուրս թռան ու նստեցին կտուրի եզրին: Նրանք լուռ էին, պապանձված:

Տատս արագ հեռացավ, ես՝ հետևից: Երկար ժամանակ նա լուռ էր:

Հետաքրքրությունից դրդված՝ ես վերադարձա խոտանոցի պատի մոտ, բայց թռչուններն այնտեղ չէին: Նրանք հեռացել էին անդունդն ի վար՝ դեպի Որոտան գետի կիրճերը, այնտեղից՝ ավելի հեռուներ՝ Թավրիզի կողմերը գնալու համար:

Հաջորդ տարվա գարնան սկզբից տատս շատ էր սպասել թռչունների գալուստին, բայց նրանք այլևս չէին երևացել այս կողմերում:

ԲՈՂԱՐԸ

Արթին ամինք ոչ կով ունեին, ոչ ոչխար, մի շուն ունեին, որ ամբողջ օրը բակում քնած էր: Եթե մռութի մոտով մի հավ կամ մի կատու էր անցնում, հազիվ մռլտում էր ու շարունակում քնել: Տատս ասում էր. էս ինչ շուն է որ, չգիտեմ ինչու են պահում: Շունը մերն էր՝ Բողարը: Ձմռան մի գիշեր խոր քնի մեջ էի, երբ դրսից կարճատև վնգստոց լսվեց: Շատ հոգնած էի և մնացի տեղաշորում: Առավոտյան, երբ տնից դուրս եկա, Բողարը չկար: Հիշեցի գիշերվա վնգստոցը և արագորեն սկսեցի փնտրել: Նրան գտա հարևան Դարաբերդի լքված կալում, մնացել էին ոսկորները և չորս կողմը ցաք ու ցրիվ մորթու կտորներ:

Գիշերը գայլերը հարձակվել էին ու բակից տարել: Այն ժամանակվանից տատս այլևս շուն չէր պահում:

ՀԱՆՃԱՐԵՂ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Արևը ամպի ծվեն անգամ չէր թողել երկնքի լազուրի վրա: Տատս ինձ ուղարկել էր Արթին ամիենց տնից ինչ-որ բան բերելու: Գնացի, դուռը ծեծեցի, բայց բացող չեղավ: Ուզում էի վերադառնալ, երբ հիվանդ ծերուկը, որ սովորականի պես պառկած էր մարագի կտրին փռած թաղիքի վրա, ոտնաձայնի՞ցս, թե՞ դռան թակոցի վրա արթնանալով, հարցրեց.

- Հո՞վ ա ըտեղ:

- Ես եմ, Արթի՛ն ամի,- ասացի և մոտեցա նրան:

- Հի՞նչ ես օգում, ա՛ խոխա,- հարցրեց նա:

Ես պատասխանեցի.

- Տատս խնդրել է ...

Խոսքս դեռ չավարտած՝ հանկարծ աշխարհը լցվեց հռնդյունով:

Բնազդաբար վեր նայեցի, ինձ հետևեց ծերուկը: Մի ինքնաթիռ էր թռչում Որոտան գետի կիրճերի վրայով:

Արթին ամին, աչքերը լայն բացած, ապշահար նայում էր երկնքին:

Ո՞վ էր տեսել այդպիսի բան: Նույնիսկ Արակի՝ իրենց բներից վեր սլացող անգղերը չէին ճախրում այդքան բարձր ու արագ:

Ընդարձակ մի պտույտ կատարելով՝ րոպեներ հետո ինքնաթիռը անհետացավ հորիզոնից:

- Ա՛ խոխա, էտ հի՞նչ պան էր,- ապշահար հարցրեց ծերուկը:

Ես, որ արդեն ավարտել էի երկրորդ դասարանը և քիչ-միչ գիտեի ինքնաթիռի մասին, համոզված պատասխանեցի.

- Սամալյոտ ա, պապի՛:

- Հի՞նչ ա, էտ հի՞նչ պան ա, իշտեղա՞ն ա, ուրդո՞ւ եկալ,- հետաքրքրվեց նա:

- Բանվորներն են սարքում երկաթից ու փայտից, և ինքնիրեն թռչում ա,- կրկնեցի ուսուցչի ասածը:

- Ա՛ խոխա, դո՞ւզ ես ասում,- զարմացած հարցրեց նա և ընկավ մտքերի մեջ:

Քիչ հետո ցածրաձայն դժգոհեց.

- էս շան տղի բոլշևիկները երկինքը էնքան բիզ-բիզ են ընի-լու, որ իրիքնակը* յեր են քիցելու, խայտառակ ենք տռնալու ...

Ծերունին, բոլշևիկներից խիստ դժգոհ, շուռ եկավ կողքի վրա:

---

* Արեգակը:

ՄԱՇՈՆ

Երկնքի պատռվելն ու գարնան շունչն առած անձրևի շրմփոցը մեկ եղավ: Գյուղամեջը վայրկենապես դատարկվեց: Լախտին թողած՝ տները փախան քափուքրտինք կտրած տղաները՝ ճանապարհին հապշտապ կապելով քիչ առաջ ոտքեր դաղած կաշվե գոտիները:

Գալոն բակ մտավ հևիհև և հոգնած: Մազերից և ականջներից ծլլում էր անձրևաջուրը: Տղան, որ կարծես ջրափոսից էր դուրս եկել, շտապում էր իրեն գցել տուն:

Դեռ շեմին ոտք չդրած՝ տեսավ դռանը կպած մի գորշ կծիկ: Մոտեցավ՝ իմանալու, թե ինչ է դա: Նորածին կատվի ձագ էր՝ թրջված ու անշարժ: «Ինչպե՞ս է այս խեղճը ընկել այստեղ»,- մտածեց տղան, ապա ձեռքն առնելով համարյա անշունչ ձագուկին՝ մտավ տուն:

Հաճելի տաք էր: Թոնրի պռնկին՝ թաղիքի վրա, պառկած էր պապը: Նա արթնացավ դռան ճռռոցից:

- Բե՛ր, մո՛տ բեր,- Գալոյի ձեռքերի մեջ տեսնելով ձագուկին՝ ասաց պապը:

Քիչ հետո ձագուկը ուշքի եկավ: Կերակրել էր պետք, բայց բերանը չէր բացում: Տատը փայտյա ամանի մեջ կաթ բերեց:

- Մի կերպ խմեցրո՛ւ, բալե՛ս, մեղք է,- պատվիրեց Գալոյին:

- Տա՛տ, ի՞նչ անուն տանք սրան:

- Չգիտեմ: Դեռ տեսնենք ապրո՞ւմ է: Թե կարող ես, կերակրի՛ր, հետո կտեսնենք:

- Ասում եք՝ ի՞նչ անուն դնենք,- կողքի վրա շուռ գալով՝ հարցրեց պապը: - Շատ տարիներ առաջ մենք մի կատու ունեինք, Մաշո էր անունը: Չգիտեմ՝ ով էր այդ անունը դրել ... Հա՛, հաստատ Մաշո էր անունը, լավ եմ հիշում: Մաշո՛ դրեք:

Այդ օրվանից Գալոն ու Մաշոն անբաժան էին: Երբ տղան տեղաշոր էր մտնում, Մաշոն շուտով նրա ոտքերի տակ էր: Թե Գալոյի ձեռքը ուտելու բան էր ընկնում, մի մասը Մաշոյինն էր: Երբ Գալոն դպրոց էր գնում կամ գնում էր խաղալու ընկերների հետ, Մաշոն քաշվում էր մի անկյուն, գլուխը դնում առաջ մեկնած թաթերին և համբերությամբ սպասում Գալոյին: Եվ երբ նա հայտնվում էր, կատուն ծառս էր լինում, վազում դեպի նա, մլավոցով պտտվում շուրջը, մռութը քսում տրեխներին, հետո կրնկակոխ հետևում նրան՝ երկյուղ կրելով, թե Գալոն նորից տնից դուրս կգա՝ իրեն թողնելով մեն-մենակ:

Աննկատ անցան շաբաթներն ու ամիսները, և բոլորեց տարին: Գալոն չիմացավ, թե ինչպես մեծացավ Մաշոն:

Մայիսի վերջերին էր, երբ տատը հայտնեց, որ Բաքվից հորեղբոր տղա Սամվելը ապսպրել է, թե գալիս է՝ ամառն անցկացնելու գյուղում: Ասել էր, թե հիվանդ է, բժիշկները խորհուրդ են տվել փոխել օդը:

- Քաղաքի մարդ է,- ասաց պապը,- տանը մի կարգին բան էլ չկա ...

- Թող գա, բան չկա, ուտելու մի բան կճարենք,- պատասխանեց տատը: - Լավ է, որ էս տարի այծը կարգին կաթ ունի:

Օրերից մի օր Սամվելը եկավ: Տատը ոտ ու ձեռ էր ընկել և չգիտեր՝ էլ ինչ աներ՝ տեսնելով հարազատին: Ինչ ուներ-չուներ, մեջտեղ հանեց: «Այծի կաթն էլ միայն նրան եմ տալու» - մտմտում էր նա:

Բայց Գալոյին առաջին իսկ հայացքից հյուրը դուր չեկավ: Ինչ-որ սառնություն էր փչում նրանից: «Մի տես՝ ինչպես է փքվել, կարծես աշխարհի տերն է: Հետո՞, ի՞նչ շնորհք է դա. պառկել ու պահանջում է տատից: Իսկ իրեն՝ Գալոյին, ընդհանրապես ոչ մի բանի տեղ չի դնում, միայն հրամայում է»,- մտածում էր Գալոն:

Բայց Սամվելի ատելության կենտրոնում Մաշոն էր: Խեղճն ամեն կերպ աշխատում էր հյուրի աչքից հեռու մնալ: Հենց երեկ ձեռքն ընկած փայտը Սամվելը իջեցրեց Մաշոյի գլխին: Անցյալ օրն էլ կոշիկի ծայրով հարվածեց խեղճ կենդանուն: Գալոյի սիրտը ճմլվեց՝ տեսնելով կտուրը փախչող Մաշոյին: Փախչում էր՝ ազատվելու համար նոր հարվածներից՝ չիմանալով՝ որ մեղքերի համար:

Դառնացավ Գալոյի խաղաղ օրը ...

Մի օր էլ, երբ Գալոն տուն եկավ, Մաշոն չկար:

- Ո՞ւր է,- հարցրեց նա տան միակ փայտյա մահճակալին փռված Սամվելին:

- Ի՜նչ իմանամ, հո քո կատվի պահակը չեմ,- եղավ պատասխանը, ապա շունչ առնելով շարունակեց,- գող է, լակել է կաթը: Պատժել եմ, շան տուր եմ տվել և շպրտել ա՜յ էնտեղ:

Եվ անտարբեր հայացքով ու արհամարհանքով ձեռքով ցույց տվեց անդունդը:

Կատաղությունից ու անզորությունից Գալոն փղձկաց:

- Գողը դո՛ւ ես,- լացակումած ասաց նա և վազեց դեպի ձորափ: - Մաշո՜, Մաշո՜, ա՜յ Մաշո ...

Բայց Մաշոն չէր երևում:

Ամբողջ գիշեր Գալոն անկողնում շուռումուռ էր գալիս: Առաջին անգամ էր, որ Մաշոն հետը չէր ...

Լուսադեմին, կես քնած, կես արթուն, Գալոյի ականջով մլավոց ընկավ: Նա վեր թռավ, նստեց անկողնում: «Չէ՞, երազ է»,- մտածեց նա և նորից մտավ վերմակի տակ: Մլավոցը կրկնվեց: Մաշոն էր, որ հազիվ էր նշմարվում մթության մեջ: Դրսում՝ մետաղյա ցանցի մյուս կողմում, կանգնել էր նա և կարոտով նայում էր սենյակից ներս: Գալոն տեղից բարձրացավ ու մոտեցավ պատուհանին: «Կա՛ց, Մաշո՛, կա՛ց» - շշնջաց նա և թռավ դուրս: Մի քանի վայրկյան հետո նրանք գգված էին տեղաշորում ...

Բայց չարը կողքին էր: Միակ փայտյա անկողնում, ձայնը գլուխն առած, խռմփում էր Սամվելը: Ի՞նչ է լինելու վաղը՝ չգիտեին ...

Այդ օրվանից Մաշոյի մի ոտքը տանն էր, մյուսը՝ դրսում: Հետո սկսեց տնեցիների աչքին դեպքից դեպք երևալ: Տուն չէր գալիս, գիշերն անցկացնում էր չգիտես ուր: Հետո կատարվեց այն, ինչը չէր անցնի Գալոյի մտքով: Մաշոն տնից բան էր տանում, այն էլ թաքուն: Ի՞նչ է սա՝ գողությո՞ւն: Գալոն չէր հավատում: Մի՞թե ճիշտ էր Սամվելը:

- Ես ասում էի, չէ՞, որ դա կատու չէ, այլ ցավ ու կրակ,- նախատինքի շեշտով տեղին թե անտեղի ասում էր նա, ապա բավականությամբ ավելացնում,- գո՛ղ է, գո՛ղ: Թե նրան էս կողմերում տեսա, վերջը պիտի տամ:

Մի գիշեր էլ, մտնելով տուն, Մաշոն լակել էր կաթը, շտապելուց շուռ տվել ամանը և դուրս պրծել:

Առավոտյան Սամվելը փոթորկվել էր կատաղությունից:

- Մեկ է, ես նրան սատկացնելու եմ, ձեռքիցս չի պրծնելու,- փրփրած գոռում էր նա:

Գալոն չէր պատասխանում: Ատելի մարդը ճիշտ էր դուրս եկել:

Եկավ սեպտեմբերը: Սամվելը պատրաստվում էր Բաքու վերադառնալու: Գալոն չէր թաքցնում ուրախությունը:

- Թող ռա՛դ լինի, գնա՛,- ասում էր նա բարձրաձայն:

- Սո՛ւս, ա՛յ տղա, սո՛ւս կաց, կլսի,- հորդորում էր տատը:

Այդ օրը Մաշոն նորից երևաց: Եվ եկավ դեռ մութը չընկած: Երևի էլ չէր դիմացել քաղցին: Կիսաբաց դռնից թաքուն սենյակ մտնելով՝ արագորեն սկսեց ուտելիք փնտրել: Քիչ անց դուռը շրխկոցով փակվեց: Դա Սամվելն էր, որ հարևանի տան սրահից նկատել էր Մաշոյի տուն մտնելը, և վրա հասնելով՝ ինքն էլ մտել էր ներս՝ մի ակնթարթում ծածկելով դուռը:

- Հիմա դու իմ ձեռքից չես պրծնի, գո՛ղ ավազակ,- ասաց ու ձեռքն առավ պատի տակ ընկած հացթուխի երկաթե շամփուրը:

Քիչ հետո դպրոցից եկավ Գալոն՝ քաթանից կարած պայուսակը ուսած:

- Կա՛ց, մի՛ մտիր սենյակ,- հրամայեց Սամվելը ներսից: - Ընկերդ էլի գողություն է անում:

Քիչ հետո արագ բացելով դուռը՝ Սամվելը Գալոյին ներս թողեց, ապա նորից ետևից ամուր ծածկեց այն:

- Չխղճաս, քո բերանի հացն էր խլում գողը:

Մաշոն ահաբեկ թռել էր մահճակալի սնարին և սպասում էր դաժան հատուցման: Սարսափած աչքերով մեկ Սամվելին էր նայում, մեկ փակ դռանը: Չէ՜, փրկություն չկար: Որքան ուժ ուներ, Սամվելը վրա բերեց երկաթե շամփուրը: Մաշոն ցավից ծառս եղավ և սլացավ դեպի ցանցապատ պատուհանը: Ելք չկար, և մնաց ցանցածողից կառչած:

Շամփուրը նորից իջավ կատվի վրա, այս անգամ՝ գլխին: Օրորվելով Մաշոն ընկավ գետնին:

- Խփի՛ր նրան,- հրամայեց Սամվելը:

Գալոն խփեց ոտքով և իր տմարդի արարքից սարսափած՝ ետ քաշվեց:

Մշուշված աչքերով Մաշոն տեսավ, բայց այլևս չզգաց Գալոյի հարվածի ցավը, իր եղբայր Գալոյի ... Մաշոն մեռնում էր, Գալոյի Մաշոն:

Սամվելը երկաթե շամփուրը էլի վրա բերեց, հետո մտցրեց կողերից ներս:

- Ինչո՞ւ ես էդպես անում, ինչո՜ւ,- հուսահատ ճչաց Գալոն:

Բայց Մաշոյի վրա կարծես արդեն շունչ չկար:

Գալոն դուրս վազեց, մտավ հացատուն և նետվեց տատի գիրկը:

- Թող գնա հեռանա էստեղից, թող շո՛ւտ գնա էդ գազանը:

- Կգնամ, էլ չեմ գա,- կատվի գլխից բռնած գոռում էր Սամվելը: - Կարծում եք՝ դուք ինձ շա՞տ եք պետք:

Մոտենալով անդունդի եզրին՝ նա Մաշոյին զզվանքով շպրտեց ձորը:

Անցավ էլի մեկ ամիս: Սամվելը գնացել էր, բայց Գալոն դեռ չէր մոռացել կատարվածը:

Մի օր էլ՝ կեսօրին, տատն ասաց.

- Բալե՛ս, մի քիչ ընկույզ է փռած կտուրին, բարձրացիր իջեցրու. անձրև է գալու:

Ամպերը կապարի ծանրությամբ լեռնապարից սահում էին ներքև՝ դեպի գյուղ: Շուտով երկինքը մաղեց: Աշնան անձրևը գալիս էր աննկատ, առանց որոտների ու կայծակների:

Գալոն շտապ կտուրը բարձրացավ և քարացավ տեղում: Հարևանի ցանկապատին կանգնել էր Մաշոն՝ հյուծված ու տառապած: Կանգնել ու կարոտով նայում էր տանը ... Իր երբեմնի տանը:

Գալոն կտուրից ձայնեց.

- Տա՜տ, ա՜յ տատ, եկել է Մաշոն:

Տատը մտել էր հացատուն և չէր լսում: Գալոն արագ իջավ կտուրից և վազեց դեպի կատուն: Մաշոն շրջվեց և առանց ետ նայելու՝ ժայռի պռունկով դանդաղ իջավ ձորը:

- Մաշո՜, ո՞ւր ես գնում, Մաշո՜ ...

- Մաշո՜, ո՞ւր, Մաշո՜, Մա՜-շո՜,- արձագանքեցին դիմացի քարափները:

Մաշոն այլևս չերևաց այդ կողմերում:

Էն գնալն էր, որ գնաց:

ԲԱԶԱՐՉԱՅԻ ՍԱՐԵՐՈՒՄ

Հայրս

Հայրս, որ մեր գյուղի՝ Շինուհայրի կոլխոզի առաջին նախագահն էր եղել (1930 – 1931 թթ.), ուղարկվել էր սովորելու Երևանում նոր բացված Լ. Պ. Բերիայի անվան երկամյա գյուղատնտեսական դպրոցում, որը, չգիտես ինչու, պաշտոնապես համալսարան էր հորջորջվում:

Դա այն ժամանակ էր, երբ կոմունիստական կուսակցության ամենաբարձր մարմինների որոշումով աշխատանքներ էին սկսվել՝ տոհմաբուծական նորամուծությունների միջոցով արմատապես բարելավելու Հայաստանի խոշոր անասնաբուծության վիճակը: Հանրապետությունում կովերի մթերատվությունը չափազանց ցածր էր, ուստի խնդիր էր դրվել, որ աշխատանքներ սկսեն՝ հնարավորինս սեղմ ժամկետներում փոխելու վիճակը: Այդ նպատակով նախատեսվել էր հանրապետությունում ստեղծել կովաբուծական երկու խոշոր սովխոզ, մեկը՝ Լոռիում, մյուսը՝ Սիսիանի շրջանի ռուս մոլոկաններով բնակեցված Բազարչայ մեծ գյուղում:

Մոսկովյան կենտրոնական կառավարությունը, ի կատարումն կուսակցության վերին մարմինների որոշումների, հսկայական միջոցներ էր հատկացրել այդ երկու տոհմաբուծական կենտրոնների համար արտասահմանից (եթե չեմ սխալվում՝ Շվեյցարիայից) բարձր արդյունավետության ցուլեր գնելու հա-

մար: Շատ չանցած՝ նշված երկու սովխոզներն արդեն ունեին հզոր պոտենցիալով 5-ական ցուլ:

Նշված ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո հայրս նշանակվում է Բազարչայի անասնաբուծական սովխոզի տնօրենի՝ Հարություն Մկրտչյանի տեղակալ: Սա Գորիսի շրջանի Տաթև գյուղից էր, մի ազնվագույն մարդ, իր գործին ամբողջովին նվիրված անձնավորություն: Նրանք երկուսով տքնաջան աշխատանքով կատարում էին իրենց վրա դրված ծանր պարտականությունները: Լինելով սովխոզի ընդհանուր ղեկավար՝ Հարությունը միաժամանակ անձամբ իր վրա էր վերցրել անասնակերի հայթայթման ու կուտակման, ինչպես նաև նոր անասնագոմերի կառուցման դժվարին աշխատանքների կատարումը, իսկ տոհմաբուծական գործի կազմակերպումը դրվել էր հորս վրա:

Անասնագոմերը՝ թվով հինգ-վեց, շատ կարճ ժամկետներում կառուցվեցին Բազարչայ գյուղից դեպի հյուսիս՝ շուրջ 4 կմ հեռավորության վրա՝ բարձրաբերձ մի հսկա սարի ստորոտում կուչ եկած Ղոշաբուլաղ անվանյալ վայրում:

1934 թվականի գարնան սկիզբն էր: Հայրս անմիջապես մեկնել էր իր աշխատավայր՝ նորակառույց գոմերում կազմակերպելու տոհմաբուծական աշխատանքները: Ապրիլի կեսերին Սիսիանի գյուղերից գնված մի քանի հարյուր կովերն արդեն տեղավորված էին նորակառույց անասնագոմերում: Անասնապահները գիշերում էին գոմերում, մինչև որ ավարտին հասցվեին միհարկանի մի քանի բնակելի տների կառուցումը: Հայրս նույնպես անասնապահների հետ էր գիշերում:

Վերջապես, արագորեն կառուցված տներից մեկը հատկացվել էր հորս՝ բաղկացած մի ոչ մեծ սենյակից և խոհանոցից, որոնք իրարից բաժանված էին նեղլիկ միջանցքով:

Գարնան վերջին նորաստեղծ ավան եկավ մի երիտասարդ, որին Երևանից գործուղել էին Սիսիանի շրջան՝ աշխատելու որպես նորաստեղծ տոհմաբուծական սովխոզի անասնաբույժ: Նա նույնպես տեղավորվել էր անասնապահներին հատկացված խրճիթներից մեկում, ուր արդեն բնակվում էին չորս-հինգ հոգի:

Վերջացել էր ուսումնական տարին, և հայրս մի կիսաջարդ բեռնատար ավտոմեքենա էր ուղարկել մեր գյուղ՝ Շինուհայր, որպեսզի մենք ընտանիքով գնանք իր մոտ՝ այնտեղ անցկացնելու ամառվա ամիսները: Մենք բոլորս՝ մայրս՝ իր երեք մանկահասակ զավակներով, շուտով հայտնվեցինք նորաստեղծ ավանում:

Շշուկներ աստղազարդ գիշերներին

Անցել էր տասը և ավելի օր, երբ դիմելով մորս՝ հայրս ասաց, թե Երևանից եկած անասնաբույժը չի հարմարվում տեղի պայմաններին, չի ուզում ապրել սենյակում, որտեղ գիշերում են ևս չորս-հինգ անասնապահ: Ապա նա մորս խնդրեց խոհանոցը դատարկել, եղած-չեղածը տեղավորել միջանցքի ծայրում և այն հատկացնել երիտասարդին: Մայրս սկզբում «չեմ ու չում» արեց, բայց, ի վերջո, ստիպված համաձայնություն տվեց:

Շուտով խոհանոց-սենյակում հայտնվեցին մահճակալ և այլ պարագաներ: Հայրս նաև մորս խնդրեց ամեն օր երիտասարդին բաժին հանել մեր ուտելիքներից:

Հաջորդ առավոտյան երիտասարդը հորս հետ եկավ: Նրա ձեռքին ընդամենը մի պայուսակ էր՝ ունեցած-չունեցածով: Անցան օրեր: Մենք միասին էինք ճաշում երիտասարդի հետ, որի անունը Կարապետ էր, բայց Կարո էին ասում, Կարո Սահակյան:

Հայրս ինձ պատվիրել էր նրան դիմել «հորեղբայր» բառով: Ես թեև շատ դժվարությամբ էի արտաբերում այդ բառը, բայց շատ շուտով ամուր կապվեցի մեր նոր բարեկամի հետ:

Համարյա ամեն օր՝ ճաշից հետո, Կարո հորեղբայրն ինձ վերցնում և հետը տանում էր զբոսանքի: Հաճախ էինք լինում փոքրիկ գետակի մոտ, որն աղմկելով իջնում էր սարերից ու մեր տան կողքով գալարվելով գնում հեռուներ:

Օրերից մի օր՝ դրսում խաղալիս, աստիճանաբար հայտնվել էի գոմերի մոտ պառկած ցուլերից մեկի մոտ և սկսել խաղալ նրա վիթխարի գլխի հետ: Այդ պահին այդտեղ հայտնված անասնապահներից մեկը սարսափահար հարայ-հրոց էր բարձրացրել, բայց չէր համարձակվել մոտենալ ցուլին և ինձ հեռացնել ահավոր վտանգից: Այդ աղաղակի վրա գոմից դուրս է թռչում Կարոն, վազում դեպի ցուլը, ինձ հանում նրա մռութի տակից և գիրկն առնելով բերում տուն:

Հիշում եմ մի ուրիշ դեպք ևս: Բարձրացել էի գոմերից մեկի կտուրը: Բարձրանալը հեշտ էր, բայց իջնել չկարողացա: Լաց ու կոծ էի գցել: Ի վերջո, համարձակություն ձեռք բերելով, գոմի կտրից թռել էի ներքև, որտեղ կուտակված էր գոմաղբի մի մեծ զանգված: Մինչև գոտկատեղս խրվելով այդ զանգվածի մեջ՝ նորից ու նորից փրկության աղաղակ էի բարձրացրել: Որտեղից որտեղ դարձյալ հայտնվել էր Կարո «հորեղբայրը», որն ինձ քաշել-հանել էր գոմաղբակույտի միջից: Ես շարունակում էի լացը, իսկ նա ձեռքիցս բռնած տարավ գետակի մոտ և սկսեց մաքրել հագուստս, ապա դարձյալ ձեռքս բռնած տարավ տուն ու հանձնեց այդ բոլորից անտեղյակ մորս:

Օրերն անցնում էին: Հայրս առաջվա պես երկու-երեք օրը մեկ կեսօրից հետո ձիով իջնում էր Բազարչայ՝ աշխատանքների

ընթացքի մասին զեկուցելու սովխոզի նախագահին և վերադառնում էր հաջորդ օրվա առավոտյան:

Այդ օրը սարերի գլխին ահավոր ուժգնությամբ դղրդում էր երկինքը: Տեղատարափ անձրևը ոռպեների ընթացքում փոքրիկ լճակներ էր գոյացրել մեր տան մուտքի մոտ: Ես դրսում էի: Մայրս աղաղակով ինձ կանչեց. «Շուտ արի՛ տուն»: Քիչ անց տեղատարափ անձրևի տակ դեպի տուն էր վազում նաև Կարո հորեղբայրը: Հասնելով նա գիրկն առավ ինձ և վազքով մտավ տան միջանցքը: Մայրս երախտապարտության խոսքեր ասաց Կարոյին և ինձ ներս տարավ՝ փոխելու թրջված շորերս:

Վրա հասավ երեկոն, ապա և ... գիշերը: Մայրս ինձ և փոքրիկ եղբայրներիս՝ Վանիկին ու Մարտիկին կերակրելուց հետո բացեց անկողինը, և մենք պառկեցինք:

Իմ մահճակալը տեղավորված էր սենյակի միակ մեծ լուսամուտի մոտ: Երկար ժամանակ չէի կարողանում քնել՝ հայացքս հառած երկինք: Հազարավոր աստղեր առկայծում էին և աչքով անում իրար: Նրանցից մի քանիսն աչքիս առաջ ընկնում էին ցած և հետագիծ թողնելով չքանում անհուն տիեզերքում: Այդպես էր ինձ թվում:

Եվ հանկարծ մի տկտկոց ընկավ ականջիս: Վայրկյանի ընթացքում մայրս դուրս թռավ տեղաշորից և մոտեցավ ինձ. ուզում էր իմանալ՝ քնա՞ծ եմ, թե՞ արթուն: Ես փակեցի կոպերս: Նա շուռ եկավ և ոտնամատների ծայրերով արագ-արագ մոտեցավ դռանը:

- Ամո՛թ է, ամո՛թ, ա՛յ տղա,- շշնջաց մայրս և էլի ինչ-որ բաներ ասաց:

Մի այլ շշնջոց, այս անգամ տղամարդու, լսվեց դռան մյուս կողմից: Ես լարեցի ուշադրությունս, բայց ոչ մի բառ չէի ընկալում: Վայրկյաններ անց տիրեց լռություն: Մայրս վերադարձավ

ու մտավ անկողին՝ նախապես մոտենալով ինձ՝ կրկին ստուգելու՝ քնա՞ծ եմ, թե՞ արթուն: Ես դարձյալ ամուր փակել էի աչքերս:

Ողջ գիշերն անքուն անցկացրի: Ամեն ինչ հասկանում էի: Ականջիս մեջ դաջվել էին դռան մյուս կողմից եկած բառերը. «Բա՛ց արա, խնդրում եմ, ոչինչ չի լինելու, բա՛ց արա»:

Առավոտյան ես տեղաշորից դուրս եկա սովորականից շատ ավելի ուշ: Մայրս արդեն խոհանոցում էր: Նա, ինչպես միշտ, պատրաստում էր իմ և մանկահասակ եղբայրներիս առավոտյան ուտելիքը: Բայց ես ոչինչ չկերա, լուռ էի, անգամ խոսել չէի ուզում: Անցած գիշերն արթուն մնացած լինելով՝ ծանրացել ու փակվում էին կոպերս: Աչքս նորից պառկելու վրա էր: Շատ ժամանակ անցավ, թե քիչ, ես նորից անկողին ընկա: Մայրս՝ շատ անհանգստացած, նույնպես պառկեց կողքիս՝ չիմանալով իր անելիքը: Ո՛չ բժիշկ կար, ո՛չ դեղատուն:

Անցան շատ ժամեր: Ես այլևս չէի կարողանում քնել, բայց նաև չէի նայում երկնքին, չէի հաշվում աստղերը: Գլխիս մեջ անցած գիշերվա շշուկներն էին ...

Շատ ժամանակ էր անցել, թե քիչ, հանկարծ նորից թակոցի ձայն լսեցի՝ տի՛կ-տա՛կ: Մայրս վայրկենապես բարձրացավ և գնաց դեպի դուռը: Նորից քչփչոց հասավ ականջիս.

- Դուռը բա՛ց, Մարիա՛մ, բա՛ց արա: Ես չեմ կարող առանց քեզ: Ոչինչ չի լինելու, բա՛ց արա, խնդրում եմ:

- Ինձ հանգի՛ստ թող,- դողդոջուն ձայնով խնդրեց մայրս. - ես երեք երեխա ունեմ, մի՛ խայտառակիր ինձ:

- Ես քո երեխաները կպահեմ,- հետևեց պատասխանը:

- Ինչո՞ւ դու պիտի իմ երեխաները պահես: Նրանք իրենց հայրն ունեն: Շատ եմ խնդրում, ինձ հանգի՛ստ թող:

Չգիտեմ՝ էլի ինչեր ասաց «հորեղբայրը», երբ մայրս բավական բարձր ձայնով գոչեց.

- Ես այլևս համբերել չեմ կարող: Վաղը Ռուբենը կգա՝ ես նրան ամեն ինչ կպատմեմ, ամեն ինչ կասեմ:

- Չես ասի, դու խելոք կին ես,- եղավ պատասխանը:

Մայրս վերադարձավ անկողին:

Այդ գիշեր նույնպես արթուն մնացի: Սրտիս մեջ տագնապ էր, գլխիս մեջ՝ խառնիխուռն մտքեր, որի կենտրոնում Կարո «հորեղբայրն» էր: Նորից հրաժարվեցի որևէ բան ուտելուց: Մայրս տագնապահար նորից չէր հեռանում մահճակալիս մոտից:

Կեսօրին մոտ, երբ հայրս վերադարձել էր Բազարչայից, մայրս նրան ասաց, որ երեխան հիվանդ է, և դրա պատճառը, հավանաբար, այստեղի օդն ու ջուրն է:

- Մեզ տուն ուղարկի՛ր, սա մեր տեղը չէ,- խնդրեց նա:

Սկզբում հայրս վրդովվեց մորս առաջարկի վրա, բայց որոշ ժամանակ անց, երբ հանդարտվել էր, ցածրաձայն ասաց.

- Ոնց ուզում ես, արա՛:

Երկու օր հետո հայրս նույն ջարդուխուրդ մեքենայով մեզ ճանապարհեց գյուղ:

Ես արդեն իմ հարազատ միջավայրում էի, տատիս ապահով գրկում:

Մեր գյուղ վերադառնալուց որոշ ժամանակ անց հայրս, ազատվելով աշխատանքից, նշանակվում է Գորիսի շրջանի մեքենատրակտորային կայանի (ՄՏԿ) տնօրեն: Մենք ընտանիքով տեղափոխվում ենք Գորիս քաղաք: Ես ընդունվում եմ տեղի յոթնամյա դպրոց:

Դրանից մեկ-երկու ամիս հետո Երևանում տեղի է ունենում հանրապետությունում անասնաբուծության զարգացման հարցերին նվիրված կարևոր խորհրդակցություն, որին մասնակցելու էին կանչված նաև Բազարչայի սովխոզի տնօրեն Հարություն Մկրտչյանը և հորս փոխարինած Կարո «հորեղբայրը»: Ներկա է լինում նաև ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Լոռվա տոհմաբուծական սովխոզում կատարվող գործերի մասին նրա տնօրենի հաշվետու զեկուցումից հետո խոսքը տրվում է Կարո «հորեղբորս», որը խորհրդակցության մասնակիցներին պատմում է Բազարչայի նորաստեղծ սովխոզում ծավալված աշխատանքների մասին: Ելույթը փայլուն է ստացվում՝ արժանանալով կենտկոմի առաջին քարտուղարի ջերմ հավանությանը:

Շատ չանցած՝ Կարո Սահակյանը փոխադրվում է Երևան և նշանակվում հանրապետական մասշտաբի կարևոր ղեկավար պաշտոնի: Այստեղ նույնպես նա իրեն դրսևորում է որպես տաղանդավոր կազմակերպիչ: Հետագա տարիներին նրան վստահում են նորանոր բարձր պաշտոններ:

Երեկվա իր երիտասարդ բարեկամի արագ առաջխաղացումը, նրա մեծ հաջողությունները շատ էին ոգևորում հորս: «Տեսա՞ր՝ ինչ տղա դուրս եկավ մեր Կարոն,- ասում էր նա՝ հպարտորեն դիմելով մորս. - դեռ շատ է առաջ գնալու, կտեսնես»: Ես նայում էի մորս կողմը՝ իմանալու, թե նա ինչ արձագանք է տալու: Բայց նա սովորաբար լռում էր:

Շատ տարիներ անց

Այդ օրերից անցել էր շուրջ քառասուն տարի: Փայլուն կարիերայից հետո Սահակյանը անցել էր վաստակած հանգստի, բայց շարունակում էր կատարել հասարակական ու գիտական աշխատանքներ: Պաշտպանել էր դոկտորական ատենախոսություն և հայտնի անուն էր դարձել նաև գիտական շրջաններում, ընտրել էին Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, դասավանդում էր Երևանի համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում: Իր հարուստ գիտելիքները Կարո Սահակյանը ժողովրդի լայն շրջաններին էր փոխանցում նաև հասարակական հիմունքներով կատարվող դասախոսությունների միջոցով: Շատ տարիներ նա ղեկավարում էր հանրապետական «Գիտելիք» ընկերության բնական գիտությունների բաժինը:

«Գիտելիք» ընկերությունը դասախոսություններ ու զեկուցումներ էր կազմակերպում ոչ միայն հասարակական հիմունքներով, այլև վարձատրությամբ: Դասախոսությունից հետո տվյալ կազմակերպությունը համապատասխան գումար էր փոխանցում ընկերության հանրապետական վարչությանը, որից էլ մասնաբաժին էր հասնում դասախոսին:

«Ընկերությունում» ֆինանսական խախտումներ էին կատարվել: Ահազանգ էր եղել, և համապատասխան մարմինները ստուգումներ էին անցկացրել, կազմվել էին արձանագրություններ: Ընդհանուր եզրակացությունն այն էր եղել, որ ստացված գումարները համարժեք չեն կարդացած դասախոսությունների թվին, հետևապես գումարներ են յուրացվել: Դա որակվել էր որպես ընկերության ղեկավարության «հանցագործ անտարբերության» հետևանք: Ինչ խոսք, դա ծանր մեղադրանք էր:

Կատարված խախտումներից զերծ չէր մնացել նաև ընկերության բնական գիտությունների բաժինը: Մարդիկ կային, որոնք անարդարացի շոշափում էին նաև բաժնի ղեկավարի անունը՝ ասելով, որ նա անհրաժեշտ հսկողություն չի սահմանել իրեն ենթակա բաժնի աշխատանքների վրա:

Նշված ֆինանսական խախտումների հարցն ուռճացնելով՝ մամուլի առանձին օրգաններ առաջարկում էին դատական պատասխանատվության կանչել օրինազանցներին:

Առավոտյան նոր էի մտել աշխատասենյակ, երբ հնչեց հեռախոսի զանգը: Առաջին քարտուղարի օգնականը խնդրեց անցնել ընկեր Քոչինյանի մոտ: Գնացի: Այնտեղ էր նաև կենտկոմի գաղափարական հարցերի գծով քարտուղար Ռոբերտ Խաչատրյանը: Տրամադրությանս մասին հարցում անելուց հետո Անտոն Երվանդիչը խոսք բացեց «Գիտելիք» ընկերության գործերի մասին՝ անդրադառնալով նաև այնտեղ տեղ գտած «ֆինանսական խախտումների» հարցին:

- Շատ ճիշտ է,- ասաց նա,- որ մարդիկ վրդովվում են մեր կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտած թերությունների ու բացթողումների առնչությամբ: Դա ողջունելի է: Բայց չի կարելի լուն ուղտ դարձնել և վարկաբեկել մեր մտավորականներին, մեր դասախոսներին, որոնք հայրենասիրական մեծ գործ են կատարում, ամեն ինչ անում են գիտությունը հասցնելու ժողովրդի լայն խավերին:

Ապա մի փոքր դադարից հետո շարունակեց.

- Դու մոտիկից ծանո՞թ ես ակադեմիկոս Կարո Սահակյանին: Ազնիվ ու անկաշառ մարդ է: Շատ տարիներ մոտիկից գիտեմ նրան: Եվ հիմա ոմանք, օգտվելով առիթից, ուզում են անձնական հաշիվներ մաքրել այդ ազնվագույն կոմունիստի հետ՝ վարկաբեկելով նրան: Մենք այդ բանը թույլ չենք տա:

Ապա Քոչինյանը, դիմելով Ռոբերտ Խաչատրյանին, խնդրեց կազմել մի նոր հանձնախումբ և խորապես ուսումնասիրել «Գիտելիք» ընկերության գործունեությունը բոլոր առումներով:

Այդպես էլ արվեց: Տարբեր մասնագետներից կազմված հանձնախումբը մոտ մեկ ամիս ընկերության գործունեությունը բազմակողմանի ստուգելուց հետո իր եզրակացությունը գրավոր շարադրեց և ներկայացրեց կենտրոնական կոմիտե:

Ստուգումները պարզել էին, որ ոմանք ընդամենը ցանկանում էին անձնական հաշիվներ մաքրել մտավորականության առանձին ներկայացուցիչների, այդ թվում՝ Կարո Սահակյանի հետ:

Այդ դեպքից անցել էր բավական երկար ժամանակ:

Սովորաբար ընդմիջմանը տուն էի գնում, որն աշխատանքի վայրից մոտ էր: Քիչ այն կողմ՝ «Կասկադ» կոչվող զբոսավայրի դիմացի շենքում, Ռոբերտ Խաչատրյանի բնակարանն էր: Մի օր գրողների միության դիմաց մենք հանդիպեցինք իրար: Նոր էր գնում աշխատանքի, հոգնած դեմք ուներ: Երևում էր, որ սովորականի պես ամբողջ գիշեր կարդացել է:

Երկուսով Բաղրամյան փողոցով բարձրանում էինք աշխատանքի, երբ պատահաբար մեր դեմ դուրս եկավ Կարո Սահակյանը: Նա շատ ուրախացավ և մեզ առաջարկեց մտնել տուն, որը գտնվում էր փարթամ ու գողտրիկ մի այգու մեջ: Մենք հրաժարվեցինք, քանի որ աշխատաժամ էր, բայց ակադեմիկոսը համառում էր: «Ոչ մի դեպքում ձեզ բաց չեմ թողնի»,- սպառնաց նա, ապա նորից ու նորից խնդրեց տուն մտնել: Մենք այլ ելք չունեինք և բարձրացանք երկհարկանի շենքի երկրորդ հարկի նրա ընդարձակ ու լուսավոր բնակարանը:

Կնոջ մահից հետո Կարո Սահակյանն ամուսնացել էր երկրորդ անգամ: Երիտասարդ տիկինը մեզ դիմավորեց սիրով, ջեր-

մորեն: Շուտով շենքի առաջին հարկից հայտնվեցին երկու երիտասարդ, որոնք նրա հետ կարճատև քչփչոցից հետո արագ անցան խորոված՝ պատրաստմանը: Ամեն ինչից երևում էր, որ մենք այդ օրը չենք հասցնելու գործի գնալ:

Բացված սեղանը լիքն էր բարիքներով: Կենացները հաջորդում էին իրար, բոլորիս տրամադրությունը բարձրացել էր: Եվ դա աշխատանքի ժամերին:

Եղավ մի պահ, երբ Ռոբերտը ցանկություն հայտնեց մի քիչ հանգստանալ: Պառկելով օթոցին՝ նա իսկույն քնեց:

Էլի բավական ժամանակ անցավ, երբ ակադեմիկոսն ինձ առաջարկեց դուրս գալ պատշգամբ ու վայելել այգու գեղեցկությունը:

Այդպես էլ արեցինք: Երկար քննարկում էինք «Գիտելիք» ընկերությունում տեղի ունեցած անախորժությունները: Զրուցակիցս ցավով էր վերհիշում, որ ոմանց ուրախություն էր պատճառել իր հասցեին արված անարդարացի ամբաստանությունները, միաժամանակ երախտագիտական զգացումներով էր հիշում կուսակցության կենտրոնական կոմիտեի ղեկավարությանը՝ ցուցաբերած անկողմնակալ դիրքորոշման համար:

Զրույցն ավարտին էր մոտենում, երբ հանկարծ դիմելով ինձ՝ ակադեմիկոսը հարցրեց.

- Ընկե՛ր Սիմոնյան, դու որտեղացի՞ ես:

Ես պատասխանեցի, որ Գորիսեցի եմ:

- Գորիս քաղաքի՞ց,- կրկին հարցրեց նա:

- Ծննդով Շինուհայր գյուղից եմ: Այնտեղից ընտանիքով տեղափոխվել ու հաստատվել ենք Գորիսում:

- Ծնողներ ունե՞ս,- հարցրեց նա:

- Ունեմ,- ասացի,- Դուք նրանց գիտեք:

- Ո՞նց թե գիտեմ: Ովքե՞ր են:

- Հորս՝ Ռուբեն Սիմոնյանի հետ Դուք աշխատել եք Բազարչայի սովխոզում:

Կարո Սահակյանը մի պահ զարմացավ, հետո հարցրեց.

- Ռուբենի առողջականը ո՞նց է, լա՞վ է:

- Ընդհանուր առմամբ՝ ոչինչ: Դե՛ տարիքն առած մարդ է, էլի,- ասացի:

- Երբ հայրիկիդ հետ աշխատում էինք սովխոզում, հիշում եմ՝ այն ժամանակ նա երեք մանկահասակ բալիկ ուներ: Բոլորը ողջ-առո՞ղջ են: Ինչո՞վ են զբաղվում,- հարցրեց նա:

Ես պատասխանեցի, որ բոլորն էլ տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ են, լավ են:

- Որքան հիշում եմ,- ասաց նա,- հորդ զավակներից ավագը շատ սիրելի երեխա էր: Հիմա ի՞նչ զբաղմունք ունի:

Ես հանկարծակիի եկա: Մի պահ եղավ, որ ուզում էի ասել, թե ՁԵր ասած երեխան Ձեր դիմաց է, բայց չասացի: Դրա փոխարեն մոգոնեցի, որ, իբր, Գորիսում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա ինքնակամ մեկնել է Մոսկվա, ընդունվել տեղի բժշկական ինստիտուտ, ավարտել, հիմա մայրաքաղաքի նշանավոր վիրաբույժներից մեկն է:

Կարո «հորեղբայրն» ուրախություն հայտնեց.

- Շա՜տ լավ է:

Մորս մասին ոչինչ չհարցրեց...

ՀՆԻ ՈՒ ՆՈՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ

Ինչպես նախկինում, երբ ցարն էր, հետո՝ դաշնակը, այժմ էլ կոլխոզում շատ դժվար էր ապրուստը: Նոր՝ բոլշևիկյան կարգերի օրոք լավն ու վատը խառնվել էին իրար: Գյուղը թոթափել էր հազարամյա նիրհը և գնում էր անծանոթ ուղիներով: Բոլորը շարժման մեջ էին: Հիմա նոր իշխանությունը գոնե կրթություն և լուսավորություն էր բերել բոլորի համար՝ առանց խտրության:

Գյուղը լցվել էր նոր սերնդով: Յոթնամյա դպրոցի խարխուլ շենքը փոխարինվել էր նորով՝ ընդարձակ ու լուսավոր, ուր նոր սերունդը պարտադիր կրթություն էր ստանում: Պիոներները լավ սովորելու երդում էին տալիս, երիտասարդները ոգեշնչված էին գալիքի հեռանկարով:

Քանի որ աշակերտների թիվն աննախադեպ աճել էր, ուստի դպրոցում աշխատելու համար գյուղ էին գործուղվել Գորիս քաղաքի մանկավարժական ուսումնարանն ավարտած մի քանի շնորհալի երիտասարդներ, որոնց թվում էր Սերո Խանզադյան անուն-ազգանունով երիտասարդը, որը դարձել էր ոչ միայն աշակերտների, այլև բնակչության սիրելին:

Երեկոներն ակումբում ասեղ գցելու տեղ չկար: Գործում էր թատերական ինքնագործ խմբակը, որտեղ ընդգրկված էին նաև ավելորդ երկչոտության դարավոր քողը նետած աղջիկներ:

Գյուղում հատկապես մեծ եռուզեռ էր լինում, երբ Գորիս քաղաքից ժամանում էին թատերական ու համերգային խմբեր:

Հիշողությանս մեջ մնացել է այն համերգը, որով հանդես էր եկել այդպիսի խմբերից մեկը՝ քամանչահար Աշոտի ղեկավարությամբ: Երգչուհին անզուգական Քյարունց Նինան էր, վաղամեռիկ մի հրեշտակ, որը կատարում էր նաև Աշոտի առաջին ինքնուրույն ստեղծագործությունները: Դրանք, որ հիմնականում նվիրված էին հայրենի Զանգեզուրի չքնաղ բնությանն ու սիրած աղջկան, դեռ մեծ տարածում չունեին: Շատ չանցած՝ աշուղի ստեղծագործական ոգին պոռթկալու էր ամբողջ ուժով, նրա քնարը արտաբերելու էր երգարվեստի անգին գանձեր՝ արժանանալով իր հարազատ ժողովրդի լիաբուռն հիացմունքին:

Հեռու տեղերից նույնպես գալիս էին համերգային խմբեր, որոնք սովորաբար շատ ցածրորակ էին: Նրանց հեռանալուց հետո երկար ժամանակ գյուղում պտտվում էին ծիծաղաշարժ հորինվածքներ:

Հիշում եմ այդպիսի համերգային խմբերից մեկի կատարումները: Դրանցից մեկը «ժողովրդի եղկելի թշնամիների» մերկացման անմիջական արձագանքն էր: Հերթական անգամ «հայտնաբերվել էր հակահեղափոխական ոճրագործների մի որջ», որում, իբր, այս անգամ թաքնված են եղել զինվորականներ, Կարմիր բանակի բարձրաստիճան հրամանատարներ՝ նշանավոր զինվորական գործիչ Տուխաչևսկու գլխավորությամբ:

Եվ ահա, աշուղներից մեկը այդ առթիվ երգ էր հյուսել, որը հիմա կատարում էր խումբը: Հատկապես տպավորիչ էին երգի տեքստի այս վերջին տողերը.

Էն ավազակ Տուխաչովսկին
մեզի դավաճանեց,
Սովետի գաղտնիք
զագրանից հանեց:

Ընկեր Ստալին վիզը ոլորեց
Եվ մեր երկիրը թշնամուց փրկեց:

Կեցցե՜ Կարմիր բանակ
և յուր խրամկազմ,
Կեցցե՜ Կարմիր բանակ
և յուր խրամկազմ:

Սրահի բոլոր նստարանները բուռն ծափերով հավանություն էին տալիս ժողովրդի թշնամիներին տված պատժին:

Համերգային խումբն իր գործն ավարտեց կոլխոզային երջանիկ կյանքին նվիրված մի երգով, որի վերջին տողերն էին.

Աշխոր ունեմ, աշխոր ունեմ,
ջանեջա՜ն,
Կոլխոզումը լավ կյանք ունեմ,
ջանեջա՜ն:

Երգի ավարտին առաջին երկու նստարանները զբաղեցրած կուսակցականները սպասածից թույլ արձագանքեցին, բայց դրա փոխարեն կոմերիտական երիտասարդությունը հավանության արձագանք տվեց: Իսկ ամենավերջին շարքերում մինչ այդ լուռ նստած նախկին «կուլակները» և անցյալում քիչ թե շատ տանելի ապրուստ ունեցածները քթի տակ խնդմնդում էին՝ չթաքցնելով զայրալից դժգոհությունը: Իսկ նրանցից մեկը՝ Ղրջանց Մուքելը, դռները շրխկացնելով, առաջինը դուրս եկավ սրահից՝ բարձրաձայն «Ես ձեր մերը ...» մռլտալով:

ԴԱՏԱՎՃԻՌ

1937 թվականի աշունն էր, հավանաբար հոկտեմբերի վերջերը: Ինը տարեկան էի, դպրոցի երրորդ դասարանում: Օրվա դասերը վերջանալու վրա էին, երբ դասարան մտավ դպրոցի տնօրենը և պատվիրեց ամբողջ դասարանով գնալ Գորիս քաղաքի կենտրոնական հրապարակ՝ մասնակցելու «ժողովրդի թշնամիների» մերկացմանը:

Երբ հասանք հրապարակ, արդեն «աշխատավորների միտինգը» սկսվել էր: Ծովածալ բազմություն էր հավաքվել, ասեղ գցելու տեղ չկար: Մենք բարձրացանք հրապարակին կից միահարկ երկար շինության կտուրը, որտեղից շատ հարմար էր տեսնել և ունկնդրել այն ամենը, ինչ տեղի էր ունենում ներքևում:

Հրապարակի մյուս կողմում գտնվող կուսակցության շրջանային կոմիտեի երկհարկանի շենքի պատշգամբում կանգնած էին շրջանի ղեկավարները, իսկ պատշգամբի տակ՝ «ժողովրդի դավաճանների» և «դաշնակցական թափթփուկների» խումբը, եթե չեմ սխալվում, բաղկացած չորս հոգուց, բոլորն էլ երեկվա շրջանային պատասխանատու աշխատողներ, կոմունիստական կուսակցության անդամներ՝ ջարդված հոգով, գունատ, ծեծված, տառապած: Հենց երեկ Գորիսում վերջացել էր նրանց դատավարությունը, որի ընթացքում «բոլորն էլ խոստովանել» էին, թե իրենք վնասարարներ ու խափանարարներ են, դավաճաններ, որ գաղտնի կապեր են ունեցել օտարերկրյա հետախուզությունների և դաշնակցության կուսակցության արտասահմանյան կենտրոնի հետ, կատարել նրանց հանձնարարությունը և այդ

ամենի դիմաց ստացել առատ վարձատրություն: Իսկ այսօր նրանց հրապարակ էին բերել, որպեսզի ժողովուրդը երես առ երես տեսներ իր «ոխերիմ թշնամիներին»: Եվ պատշգամբից ելույթ ունեցողները պատմում էին այդ բոլորի մասին, անարգանքի սյունին գամում «ճիվաղներին», պահանջում գնդակահարել, փոշիացնել նրանց: Ամեն ելույթից հետո լսելի էին «Մա՛հ դավաճաններին», «Մա՛հ դաշնակ թափթփուկներին» և նման կոչեր: Հիշողությունիցս չի ջնջվել հատկապես մի ելույթ, որ ունեցավ Գրիգոր անունով մեկը, որ ուսանող էր Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումում: Նա պատշգամբից այնպես էր գոռում, այնպիսի պաթոսով էր պահանջում «ընկեր Ստալինի ծրագրերը խափանող» «ստոր դաշնակների» մահը, որ շատերի մարմնով սարսուռ էր անցնում: Այդ ելույթից հետո ժողովուրդը նրան մկրտեց «ամպագոռգոռ Գրիգոր» անունով:

Իսկ հրապարակը լուռ ու քարացած տնքում էր: Ծափեր չկային, որին սպասում էին միտինգի կազմակերպիչները: Միայն մենք՝ փոքրիկներս էինք, որ ուրախ էինք ու ոգևորված: Ուրախ էինք, որ պատժվելու են «ժողովրդի թշնամի դաշնակները», որոնք ամեն ինչ արել են «մեր երջանիկ կյանքը թունավորելու», «Ստալին պապիկին սպանելու համար»:

Միտինգը վերջացավ, «հանցագործների» խմբին նորից առաջնորդեցին Գորիսի բանտ:

Երբ տուն դարձա, հարցրի մորս.

- Մա՛մ, ովքե՞ր են դաշնակները:

Մայրս չպատասխանեց: Հետո թե՝ «Գնա դասերդ սովորի, բալե՛ս, որ մեծանաս, ամեն ինչ կիմանաս»:

Մի քանի օր հետո դպրոցի աշնանային արձակուրդներն էին: Ինչպես բոլոր արձակուրդներին, այս անգամ էլ գյուղ գնացի՝ տատիս մոտ:

Հաջորդ օրը Թագուհի տատս ինձ իր հետ այգի տարավ՝ խաղող քաղելու: Գյուղում միայնակ էր ապրում, մենակ էլ խնամում էր այգին: Համարյա անլսելի ձայնով հաճախ էր ինչ-որ երգեր թնկթնկում: Այդ օրն այգում նորից լսեցի նրա երգը. երգելիս ինչ-որ անուններ էր տալիս՝ Անդրանիկ, Սերոբ, Չաուշ ... Ես ականջալուր ունկնդրում էի: Նախկինում էլ նրանից այդ անունները լսել էի, բայց հիմա տատս ինչ-որ ուրիշ շեշտով ու ոգեշնչանքով էր արտաբերում դրանք: Հետո անցավ մի ուրիշ երգի և դաշնակ անունը տվեց: Ես ապշել էի: Չէի կարողանում հասկանալ, թե տատս ինչու է գովերգում մեր թշնամիներին ...

- Ի՞նչ բան է դաշնակը, տա՛տ,- հարցրի նրան, երբ մոտեցել էր զամբյուղին՝ դատարկելու խաղողով լի գոգնոցը:

Չպատասխանեց, հոնքերը խառնելով գնաց իր գործին:

Խե՛ղճ տատ: Որքա՜ն դառնություններ էր տեսել: 1919 թ. մեռել էր ամուսինը՝ կնոջ խնամքին թողնելով չորս անչափահաս երեխաների: Հաջորդ տարվա հուլիսին Գորիսի բանտում բոլշևիկներն սպանել էին հորեղբոր տղային՝ Արշակ Շիրինյանին, նրա գաղափարական ընկերոջ՝ Վահան Խորենու հետ: Երկուսն էլ եվրոպական համալսարաններում կրթված դաշնակցական հայտնի գործիչներ էին, Հայաստանի խորհրդարանի անդամներ: Տատիս համար ծանր էր եղել Արշակի կորուստը, որովհետև նա էր միայն, որ օգնության ձեռք էր մեկնում որբուկներին: Ապա Բաքվում ավիավթարի զոհ էր դարձել տատիս 20-ամյա դուստրը, հետո՝ 1939 թվականին գյուղում բոլշևիկ-ղոչիները սպանել էին 26 տարեկան միակ որդուն, որը, իբր, հայհոյել էր իշխանություններին: Հիմա էլ Բաքվից լուր էին բերել, թե գյուղից փախած և այնտեղ համարյա ծպտյալ ապրող, յոթ տասնամյակը լրացած միակ եղբայրը՝ նախկին դաշնակցական գործիչը, հանգիստ չունի. ամեն անգամ քննության էին կանչում և սպառնալիքներ

տեղում: Խեղճը ժամ առ ժամ սպասում էր ձերբակալման:

Ծառի տակ կես արթուն, կես քնած պառկած էի, երբ նորից ականջիս հասավ տատիս երգի ձայնը: Նստեցի և ողջ էությամբ ականջ դարձած՝ լսում էի նրան: Երգն այս անգամ հնչում էր բարձր ու խրոխտ: Զայրույթ կար, բողոք, հոգու ճիչ ...

«Մեր հայրենիք՝ թշվառ, անտեր,

Մեր թշնամեաց ոտնակոխ»:

Տատիս շուրթերից էլի էի լսել այդ երգը, բայց միշտ լսել էի առանց բառերի, ցածրաձայն: Այժմ երգը հնչում էր իր ողջ հմայքով, հատ-հատ, հատու բառերով: Տատս կարծես ուզում էր ասել, թե վախ չունի ինքը: Դա սարսափելի 1937-ի աշունն էր:

Դասերը սկսվեցին, և ես հրաժեշտ տվեցի Թագուհի տատիս:

Մի օր էլ, երբ դպրոցից տուն էի գալիս, սանդուղքներով բարձրանալիս հանկարծ միտս եկան երգի բառերը: Երգելով տուն մտա:

«Մեր հայրենիք՝ թշվառ, անտեր» ...

Մայրս ապշել էր:

- Ո՞վ սովորեցրեց, բալե՛ս:

- Տատը:

- Սո՜ւս ... ս ... ս: Էլ չլսեմ այդ երգը, մոռացի՛ր:

Լռեցի:

Դարձյալ աշուն էր, դարձյալ նոյեմբեր:

Արձակուրդներին էլի գյուղ էի գնացել՝ տատիս մոտ: Մի օր էլ, երբ լույսը հազիվ էր բացվել, գյուղի կատարածուն՝ խեղճ ու կրակ մի ծերունի, հայտնվեց մեր տան կտուրին:

- Թաքվի՛, ա՛յ Թաքվի,- ձայն տվեց նա:

- Ի՞նչ ա, ա՛յ եթիմ,- սենյակից դուրս գալով՝ հարցրեց տատս: - Ի՞նչ ես ուզում, հիմա ի՞նչ ես ուզում ...

- Ես բան չեմ ուզում, Թաքվի՛ աքեր: Գյուղխորհրդից կանչում են. շրջանից մարդ ա եկալ:

- Ի՞նչ են ուզում:

- Բրդի հարկը չես տվալ ... Ուզում են ...

Տատս երբեք ոչխար չէր ունեցել, բայց բուրդ էին ուզում:

- Գնա՛, կգամ,- ասաց տատս և, քթի տակ ինչ որ բաներ քրթմնջալով, ներս եկավ սենյակ: Վիրավորանքից ու անզորությունից նա տեղը չէր գտնում:

Քիչ ժամանակ էր անցել, երբ կտուրին նորից երևաց կատարածուն:

- Թաքվի՛, ա՛յ Թաքվի ...

Տատս զայրույթից այլայլվեց, անճանաչելի դարձավ: Ես նրան երբեք այդպես չէի տեսել: Մի ակնթարթում նա ուղղակի իրեն դուրս նետեց սենյակից:

- Ի՞նչ ես ուզում, ա՛յ թաղված:

- Բուրդն ուզում են,- կարկամելով ասաց խեղճ ծերուկը:

Ձեռքերը մեկնելով դեպի դիմացի ձորերը՝ տատս լացակումած ու հուսահատ ճչաց.

- Ո՞ւր եք կորել, ա՛յ դաշնակցական տղերք, ո՞ւր եք կորել, ո՞ւր: Ինչո՞ւ էդ ձորերից դուրս չեք գալիս, որ տեսնեք, թե էս անօրենները ինչ օյին են խաղում մեր գլխին: Ո՞ւր եք կորել, եկեք տեսե՛ք ...

Չգիտեմ, «դաշնակ տղերքին» ուղղված տատիս խոսքերը խնդրա՞նք էր, թե՞ հրաման: Բայց այսօր էլ դեռ ականջումս է նրա աղիողորմ ձայնը:

«ԱՐՎԵՍՏԻ ԿՈԹՈՂՆԵՐԻ» ՄԵԾ ՎԱՐՊԵՏԸ

Հայրենական պատերազմից առաջ էր՝ կարծեմ 1938-ին: Ինը-տասը տարեկան էի:

Գորիսի շրջանի հեռավոր փոքր գյուղերից մեկի կոլտնտեսության նախագահը մեր ընտանիքի լավ բարեկամներից էր: Նա պատրաստվում էր որդու հարսանիքին հրավիրել նաև հորս:

Աշուն էր: Աշնանացանի եռուն օրեր էին, ուստի շրջանի մեքենատրակտորային կայանի պետը, շատ զբաղված լինելով, ստիպված մերժել էր ընկերոջը, միաժամանակ մորս խնդրել իր փոխարեն գնալ ու մասնակցել:

Մայրս ինձ առնում է հետը, և մի բեռնատար մեքենայով մեկնում ենք հարսանքի:

Երբ տեղ հասանք, մութն արդեն ընկած էր: Դաշտերից, անասնագոմերից ու այգիներից նոր վերադարձած մարդիկ արդեն զբաղեցրել էին իրենց տեղերը՝ սենյակի չորս պատերի երկայնքով հարմարեցված փայտյա տախտակների վրա, իսկ սեղաններին արդեն դրված էին այդ օրերի գյուղացու համար ծայրահեղ համեստ ուտելիքներ: Սենյակն աղոտ լուսավորում էին երկու-երեք նավթավառ լամպ: Մորս ու ինձ տեղավորել էին հարս ու փեսային բավական մոտ նստատեղերին:

Հարսանիքը չէին սկսում, սպասում էին մի արժանավոր ու մեծ համբավ ձեռք բերած մարդու, որն ուշանում էր:

Մի պահ մայրս իր կողքին նստած տարիքն առած մեկին կամաց հարցրեց, թե ով է այդ մարդը: Սա, շատ զարմացած ու ար-

համարհանքով նայելով մորս պատասխանեց. «Տու իշտիղացի՞ ես: Բա հո՞ւնց ա, վեր էդ մարթին ճնանչում չես: Բա համութ չի՞: Ըշխարի սաղ ժողովուրթը գյուդում ա, տու գյուդում չե՞ս»:

Մայրս սսկվել էր անտեղյակությունից ու ամոթից: Բայց քիչ հետո, հետաքրքրությունից դրդված, նորից հարցրեց, թե այդ մարդն ինչ մասնագիտության տեր է, ով է, ինչ պաշտոն ունի:

- Մեր գյուղի ամենալավ քարմա* կտրողն ա,- հպարտությամբ վրա բերեց նա: - Տու գյուդում չես է՞, թա հինչեր ա անում:

Նա երանությամբ սկսեց պատմել, թե աթարագործը ինչպիսի գերագույն վարպետությամբ է կատարում իր գործը, ինչպես է աթարի հսկա զանգվածը կտրատում ամենատարբեր մասերի, ապա զանազան ձևերով ստեղծում քառակուսի, եռանկյունի, ռմբաձև և նույնիսկ կլոր կտորներ:

- Բա էդ հալա հեչ,- շարունակեց նա: - Բա պահի կոթավը, պահի ծայրավը հի՞նչ նկարներ ա անում ըտանց վիրա, հի՞նչ նկարներ ա անում: Պա՞հ, պա՞հ, պա՞հ ... Խաչեր, աստղեր, ամեն պան: Ըտենց վարպետ չի կա վեչ մի տեղ: Հրևան պոլոր գյուղերան կյամ են, խնթրում, ըղաչանք-պըղատանք են անում, վեր տանեն, ինքը քինում չի: Մին-մին ա քինում: Թորքերն ալ են Լաչինան, Ղուբաթլուան, Քալբաջառան կյամ, խնթրում, ըղաչում, վեր քինա, համա մին-մին ա քինում: Թորքը կարում չի նկար անի, շատը դիրա համար են կյամ, խնթրում ...

Վերջապես կիսամութ սենյակում շշուկ տարածվեց, թե «Կյամ ա», այսինքն՝ գալիս է: Բոլորի պատասխանատվությունը բարձրացավ: Եվ երբ երկու-երեք հոգու ուղեկցությամբ նա ներս մտավ, բոլորն անմիջապես ոտքի կանգնեցին: Հիացական հայացքների ուղեկցությամբ նրանք մեծահամբավ հյուրի համար

---

* Աթար:

ճանապարհ հարթեցին դեպի սեղանի գլուխը, նրա համար պատրաստված հատուկ տեղը՝ կոլխոզի նախագահի կողքին: Վերջինս նրան անմիջապես հարցրեց. «Վարպե՛տ ջան, սկսե՞նք, թե՞ չէ»: Պատվավոր հյուրը գլխի հազիվ նկատելի շարժումով համաձայնության նշան տվեց՝ տիրական հայացք նետելով ներկաների վրա:

Հարսանիքը սկսվում էր ...

Ա՜Յ ՔԵԶ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ես միշտ վայելել եմ մորս գուրգուրանքը: Միայն մի անգամ էր դուրս եկել ափերից և փորձել ինձ ծեծել: Ի՞նչն էր պատճառը:

Նա գնացել էր խանութ՝ գնումների, ուր պատահաբար հանդիպել էր մեզ դասավանդող ուսուցիչներից մեկին: Սա սկսել էր մորս բողոքել, թե վերջին ժամանակներս տղադ շատ անկարգապահ է դարձել և հաճախ էլ փախչում է դասերից: Նա բողոքել էր նաև, որ ես գաղտնի ծխում եմ, և այդ մասին նույնիսկ խոսք է եղել ուսուցչանոցում:

Մայրս տուն էր վերադարձել այլայլված: Ես նկատել էի, որ նրա հետ ինչ-որ բան է պատահել:

- Ես տեսնել չեմ ուզում քեզ: Էդ ինչե՞ր են խոսում քո մասին,- ասաց նա:

- Ի՞նչ են խոսում. - հարցրի:

- Խանութում հանդիպեցի ընկեր Արուսյակին: Նա բողոքեց քեզանից, իսկ ես ամոթից գետինը մտա:

- Ի՞նչ ա ասել:

- Շատ բան ասաց: Ինչո՞ւ ես փախչում դասերից:

Ես ստեցի, թե դասերից չեմ փախչում:

Մորս վրդովմունքը գնալով ափերից դուրս էր գալիս:

- Էդ որտեղի՞ց է քեզ փող, որ պապիրոս ես առնում, ծխում:

- Ես պապիրոս չեմ ծխում,- դարձյալ ստեցի:

- Ամբողջ ուսուցչանոցն է խոսում: Քանի՜-քանի՜ հոգի քեզ տեսել են սրա-նրա պատերի տակ ծխելիս:

Անցավ երկու-երեք օր, համոզվեցի, որ ինչպես ուսուցչի, այնպես էլ ինձ հետ ունեցած խոսակցությունների մասին մայրս ոչինչ չէր հայտնել հորս, բայց նաև շարժուձևով ցույց էր տալիս, որ ինքը չի հանդուրժում ո՛չ դասերից փախչելս և ո՛չ էլ ծխելս:

Միայն մի անգամ մեղմաձայն ասաց.

- Ցավդ տանեմ, ծխելը շատ վատ բան է: Ծխելուց խուլիգան դառնալը մի քայլ է:

- Ուրեմն պապան խուլիգա՞ն ա,- հարցրի ես:

Մայրս մի պահ ապշած մնաց և, ոչինչ չպատասխանելով, անձայն վերադարձավ խոհանոց:

Հիրավի, հայրս մոլի ծխող էր, և այդ մասին բոլորը գիտեին: Մի գլանակի հետ հաշիվը մաքրելուց տասը-տասնհինգ րոպե հետո մյուսն էր վառում: Նա այնքան էր ծխում, որ ամբողջ մատները դեղին գույն էին ստացել: Պատերազմից առաջ խանութներում վաճառում էին մի տեսակի ծխախոտ՝ «Նարգիլե» անվամբ, հետո՝ «Բելոմոր-կանալ», «Կազբեկ» և այլ անուններով ծխախոտներ:

Տեսնելով, որ ստացած աշխատավարձի մեծ մասը հայրս վատնում է ծխախոտի վրա, մայրս մի օր, վերջապես համբերությունից դուրս գալով, աղմուկ էր բարձրացրել: Երկար վիճաբանությունից հետո, որն ընթացել էր հարայ-հրոցով, հայրս առաջարկել էր կոմպրոմիս, այն է՝ ինքը աշխատավարձից մի կոպեկ անգամ չի ծախսելու ծխախոտ գնելու վրա, բայց շարունակելու է ծխել: Միմյանց հաշտության ձեռք էին մեկնել:

Երկու-երեք օր անց՝ ուշ երեկոյան, մեր դարպասի դուռը ծեծեցին: Ես վազելով իջա բակ և բացեցի դուռը: Մի հսկա տղամարդ էր, որը, շուռ գալով դեպի կողքին կանգնած ձին, սկսեց իջեցնել չորս մեծ պարկ՝ ամուր կապկպած բերաններով:

Ռոպեներ անց բակ իջավ նաև հայրս, և մենք երեքով սկսեցինք պարկերը տեղավորել ներքնահարկում: Նա անծանոթ հյուրին հրավիրեց վերև՝ «մի բաժակ բան խմելու»:

Հաջորդ օրը կիրակի էր: Վաղ առավոտյան հայրս իջել էր ներքնահարկ և հսկա պարկերից մեկը քարշ տալով՝ սանդուղքներով բարձրացրել էր վեր: Բացելով պարկը՝ մոտեցող մորս ասել էր, որ ինքն իր խոստումը կատարել է և այլևս ոչ մի տուփ ծխախոտ չի գնելու:

Այդ տարիներին Գորիսի շրջանի մի շարք գյուղերում ծխախոտագործությունը մեծ թափ էր առել: Խնձորեսկ, Տեղ, Կոռնիձոր, Հալիձոր և այլ գյուղերում ծխախոտի ցանքատարածքներն ավելացել էին մի քանի անգամ: Հայրս իր ընկեր, Խնձորեսկ գյուղի կոլտնտեսության նախագահից խնդրել էր ուղարկել ծխախոտի տերևներ, և ահա անաստվածը ուղարկել էր մի ձիաբեռ:

Հայրս ինձ կանչեց իր մոտ և հանձնարարեց իրեն օգնել՝ ծխախոտի տերևները դասավորելու, փռելու և չորացնելու: Ես ժամերով նրան օգնում էի, բայց նաև ժամանակ առ ժամանակ լսում էի նրա սպառնալիքը, թե աստված չանի, եթե նկատի, որ ես ծխում եմ: Այն ժամանակ ...

Ա՜յ քեզ դաստիարակություն ...

ԵՐԱՆԵԼԻ ՕՐԵՐ

Հայրենական մեծ պատերազմից թե առաջ, թե հետո Գորիս քաղաքն ապրում էր մի զարմանալի բովանդակալից ու եռուն մշակութային կյանքով: Անցյալի հարուստ ավանդույթներին զումարվել էր խորհրդային ժամանակներում մշակույթի զարգացման նկատմամբ իշխանությունների ցուցաբերած առանձնակի հոգատարությունը:

Քաղաքում գործում էր գորիսեցիների հպարտություն՝ ինքնատիպ դրամատիկական թատրոնը, որը ստեղծվել էր դեռևս ցարական կարգերի օրոք՝ 1912 թվականին: Նրա բարձրակարգ դերասանական կոլեկտիվը պատիվ կբերեր ամենապահանջկոտ հանդիսատեսին: Խաղում էին Սունդուկյան ու Շիրվանզադե, նույնիսկ՝ Շեքսպիր:

Հիշում եմ, պատերազմից առաջ դեռ նոր գրական ասպարեզ իջած երիտասարդ Սերո Խանզադյանի «Վահրամ Որոտանցի» պիեսի բեմադրությունը Գորիսի դրամատիկական թատրոնում: Նյութը վերցրած էր օտար զավթիչների դեմ սյունեցիների մղած ազգային-ազատագրական պայքարի ժամանակներից: Թատերասեր գորիսեցիները հպարտ էին, որ իրենց մեծատաղանդ երիտասարդ հայրենակիցը հրապարակ է իջել՝ բարձրաձայն ավետելով մի նոր հզոր տաղանդի մուտքը հայ գրականություն:

Քաղաքում կային զանազան համերգային համույթներ, որոնցից ամենահայտնին այն խումբն էր, որի կազմում էին Աշոտ Ղադայանը (աշուղ Աշոտ), երկու աչքից կույր, թառահար Յոլուն Ղազարը, դափնչի Վահանը և երգչուհի Նինա Քյարունցը:

Կային նաև երաժշտական ուրիշ խմբեր: Փողային երկու

նվագախումբ կար, որ ղեկավարում էր մաեստրո Վազգեն Խշտոյանը: Նա հեռուներից պատահաբար եկել էր Գորիս և այլևս չէր հեռացել: Նրա նվագախմբերից մեկում ընդգրկված էին արդեն վարպետ երաժիշտների համբավի հասած երիտասարդներ, իսկ մյուսում՝ հիմնականում դպրոցականներ: Ես այս երկրորդ փողային նվագախմբի անդամ էի. նվագում էի ալտ: Նույն նվագախմբում էր իմ դպրոցական ընկերներից Կիմ Թաթարյանը, նաև՝ Լևոն Բեգլարյանը: Վերջինս կարճ ժամանակում այնքան էր առաջադիմել, որ մաեստրո Խշտոյանը նրան ընդգրկել էր մեծահասակների նվագախմբի մեջ:

Վաղ գարնանից մինչև ուշ աշուն քաղաքային այգում ասեղ գցելու տեղ չկար: Այգու արևելյան մասում պարահրապարակն էր, ուր փողային նվագախմբերից մեկը հնչեցնում էր եվրոպական և լատինաամերիկյան պարային երաժշտություն: Պարում էին բոլորը՝ տղա թե աղջիկ:

Գորիսը բառիս բուն իմաստով սպորտային քաղաք էր. ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, թեթև ատլետիկա: Որպես ֆուտբոլիստներ անուն էին հանել ֆոտոնկարիչ Ժորան, հետագայում հայտնի բժիշկներ դարձած, պրոֆեսորներ Յոլյան Գուրգենն ու Սուրենը, նրանց եղբայր Գրիշան և բազմաթիվ ուրիշներ: Իսկ շախմատը երիտասարդ սերնդի անբաժանելի մաս էր:

Բարձր մշակույթ ունեցող և սպորտային եռուն կյանքով ապրող քաղաքում հաճախ էին հայտնվում մայրաքաղաք Երևանից և ուրիշ տեղերից եկած համերգային խմբեր և անհատ կատարողներ: Բարձրաճաշակ գորիսեցին հավանում էր կամ դժգոհում: Գարեջրի գործարանի արևմտյան թևի քարակերտ սյունաշարի հատվածը հավաքատեղի էր երիտասարդների համար, որոնք աղմուկով քննարկում էին արվեստին և սպորտին առնչվող հարցերը:

ԱԼԱՍԿՅԱՐԸ

Ահա Գորիս քաղաքի այդ ծաղկուն օրերին էր, որ գործկոմի կուլտուրայի բաժնում իրարանցում էր սկսվել: Կուսշրջկոմից հայտնել էին, թե Հայաստանի կուլտուրայի մինիստրության գիտությամբ, «եղբայրական» Ադրբեջանի խորհրդայնացման 35-ամյակի կապակցությամբ այդ հանրապետության ամենանշանավոր երաժշտական խմբերից մեկը երկու օր հետո Լաչինից ժամանելու է Գորիս քաղաք՝ Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական արտիստ աշուղ Ալասկյարի ղեկավարությամբ: Լաչինից ի գիտություն էին հայտնել, որ հոբելյանի առիթով խումբը շուտով մեկնելու է Մոսկվա և հանրապետության ուրիշ նշանավոր երաժշտական կոլեկտիվների հետ մասնակցելու է մայրաքաղաքի Միությունների տան սյունազարդ դահլիճում տեղի ունենալիք հոբելյանական համերգին: Ուստի այդ պատճառով խումբը Գորիս քաղաքում, ցավոք, հանդես է գալու միայն մեկ ելույթով:

Կուսշրջկոմից նաև բացատրել էին, թե նշանավոր խմբի այցելությունը Գորիսի համար մեծ պատիվ է, ուստի համերգը պետք է կազմակերպել շատ բարձր մակարդակով: Միաժամանակ զգուշացրել էին. «Այնպես արեք, որ հանկարծ խայտառակ չդառնանք հա՜»:

Կուլտուրայի բաժնի աշխատողները երկու օր շարունակ ջանասիրաբար լծվել էին նախապատրաստական աշխատանքների. կարգի էին բերվում հին թատրոնի հոյակապ շենքի սրահն ու բեմը, մաքրվում էին լուսամուտներն ու հատակը, ազդագրեր էին պատրաստվում ու փակցվում քաղաքի կենտրոնական ու

ծայրամասային թաղերում և այլն: Մարդիկ մտովի ըմբոշխնում էին գալիք համերգի վայելքները, իսկ քաղաքի բարձրաձաշակ մտավորականությունը անակնկալ նվերի էր սպասում:

Ապրիլի 22-ի երեկոյան թատրոնի դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Առջևի շարքերում շրջանի ղեկավարությունն էր, կուսակցական և սովետական ակտիվը, ինչպես նաև աշուղ Աշոտը՝ տիկնոջ հետ, քաղաքի մտավորականության կուռքը՝ երաժշտության մեծ գիտակ, բազմաշնորհ Մեսրոպ Հովհաննիսյանը և ուրիշ երևելիներ:

Վերջապես ժամանեց խումբը: Համերգի կազմակերպիչներն այնպես էին ծրագրել, որ մեծարգո հյուրերը ոչ թե անմիջապես գնան ետնաբեմ, այլ մտնեն դահլիճ ու ժողովրդի ողջույնների ուղեկցությամբ բարձրանան բեմ: Խմբի երևալը դահլիճում առաջ բերեց փոթորկալի ծափահարություններ, իսկ քաղաքի գարեջրի գործարանի պահակ Գարեգինը վերջին շարքերից նույնիսկ բարձրաձայնեց. «Յաշասըն դոստուլար Ազարբայջան»:

Երաժիշտները բարձրացան բեմ: Առջևում Ալասկյարն էր՝ ձեռքին սազը՝ ավելի քան երկու մետրանոց կոթով: Բեմի ձախ մասի աթոռներին կողք կողքի շարվեցին դհոլչին, թառահարը և երգչուհին:

Երաժիշտների արտաքին տեսքը, հագուստ-կապուստն առաջին հայացքից տարօրինակ տպավորություն թողեցին: Բայց մտածում էինք. արվեստում կարևորը տաղանդն է, բովանդակությունն է, այլ ոչ թե նրա նվիրյալների արտաքին բարեմասնություններն են: Ուստի բոլորը մեծ հարգանքով ու անհամբեր սպասում էին ելույթին:

Համերգը սկսվեց: Ալասկյարը, սազին զարկելով, ճեմում էր բեմի մի ծայրից մյուսը, թափահարում մարմինը, գլխով հիացմունքի արտահայտություններ անում: Խմբի մյուս երկու անդամ-

ները իրենց թառ ու դափով ձայնակցում էին նրան, իսկ ծայրամասի աթոռին նստած երգչուհին առայժմ լուռ էր:

Առաջին երկու համարները քիչ թե շատ ծափեր պոկեցին դահլիճից: Ալասկյարը, որ կատարում էր նաև համերգավարի դերը, հայտարարեց, թե հիմա խումբը կկատարի ադրբեջանական ժողովրդի ամենասիրած երգերից մեկը՝ «Ուջա դաղլարը»: Նա երգում էր, իսկ մյուսները երգն ուղեկցում էին կրկներգով:

Երգը դեռ չվերջացրած՝ Ալասկյարը սազը դրեց գետնին և այլայլված դեմքով կատաղի սլացավ դեպի դափ զարկողը և հասնելով նրան՝ տո՛ւր թե կտաս. վզակոթին, գլխին, փորին: Իբր խեղճը դափը զարկելիս աններելի ճակատագրական սխալ էր թույլ տվել, և կարծես դա տեղի էր ունեցել Բեթհովենի հանճարեղ ինններորդ սիմֆոնիան կամ Մոցարտի ռեքվիեմը կատարելիս:

Արյունլվա թշվառը, անօգնական ու անզոր, մի կերպ դուրս պրծավ հարվածների տարափից և փախավ ետնաբեմ, Ալասկյարը՝ հետևից: Դահլիճը քարացել էր: Վայրկյաններ անց նա խեղճին, վզից բռնած, բերեց ու նստեցրեց իր տեղը:

Դահլիճի առաջին շարքերը, որ մինչ այդ արդեն դժգոհաբար քրթմնջում էին, հիմա, բարձրանալով տեղից, ուղղվեցին դեպի դուռը:

Հետին շարքերում համարյա հարսանիք էր: Երիտասարդներն ու պատանիները ցնծում էին աղմուկ-աղաղակով: Տարբեր կողմերից լսվում էին բացականչություններ. «Ապրես, Ալասկյար ջան, ապրես», «Ես քու ցա՛վը տանեմ, Ալասկյար», «Ձանիտ մեռնեմ, Ալասկյար», «Արա՛, դրան մի պիրաք, ճակատը պաչեմ, է՞»:

Իսկ գարեջրի գործարանի պահակը աննկատ ծլկել էր:

ՍԱՔՈՅԻ ԱՍՐԻՆ

Մեր գյուղի ամենահարուստ մարդը Սաքոյի Ասրին է եղել: Վարդագյուլենց տունը մի հարյուր մետրի վրա էր նրա մեծ տնից: Մեր տունն էլ հեռու չէր: Ասրու մոտ «նոքյարություն» էին անում Վարդագյուլենց խալխը և ուրիշ հողազուրկ գյուղացիներ:

Գյուղից վեր գտնվող հանդերում Ասրին ուներ ընդարձակ հողատարածքներ: Նրան էին պատկանում Որոտանի ափի ընտիր այգիները՝ «Զուարը» և «Վարդապետի բաղերը», որոնք նա գնել էր Տաթևի աղքատացած վանքից: Մեծահարուստը տեր էր կովերի նախիրների և հազարավոր ոչխարների:

Զանգեզուրում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ասրու ունեցվածքի մեծ մասը հանրայնացվեց՝ թողնելով նրան մի քանի կով և մի 50-60 ոչխար, իսկ երբ սկսվեց գյուղի կոլեկտիվացումը, նա գյուղացիներին հորդորում էր հակառակ չգնալ իշխանությունների կամքին, աղքատ թե հարուստ՝ մտնել կոլտնտեսություն: Ասրին առաջինն է եղել, որ իր կովերն ու ոչխարները, բոլոր հողատարածքներն ու այգիները կամավոր հանձնել է կոլտնտեսությանը: Նա իր հինգ որդիներին խորհուրդ է տվել ակտիվ մասնակցել գյուղ եկած նոր կյանքին: Սրանք բոլորն ընդունվել են կոմսոմոլի շարքերը, դպրոցում աչքի են ընկել իրենց առաջադիմությամբ, իսկ գյուղի սոցիալիստական վերափոխման ժամանակ հանդես են եկել որպես կոլեկտիվ կյանքի ջատագովներ:

Սովետա-գերմանական պատերազմը տակնուվրա էր արել ամեն ինչ: Զորահավաքի առաջին իսկ օրերին Ասրու չորս որդիները միաժամանակ բանակ էին կանչվել, իսկ հինգերորդը, որի 16 տարին նոր էր լրացել, հաջորդ տարի կամավոր էր գրվել: Նրանց բոլորին ուղարկել էին տարբեր ռազմաճակատներ:

Պատերազմի երկրորդ տարում մահացել էր Ասրու կինը, և նա մնացել էր անօգնական, առանց խնամքի: Ի վիճակի չլինելով աշխատել ու աշխօր վաստակել՝ ծերունին կանգնել էր սովի առջև:

1942 թվականի վերջերին էր կամ 43-ի սկզբին: Դպրոցի տնօրեն ընկեր Ռուբեն Պետրոսյանը ինձ կանչեց և, մի ծրար տալով, պատվիրեց տանել ու հասցնել շրջանային գործադիր կոմիտեի նախագահին:

Մտնելով ընդունարան՝ այնտեղ նստած տեսա կարկատած հագուստով, քրքրված տրեխներով մի թշվառ ծերունու, որը սպասում էր գործկոմի նախագահի մոտ մտնելու: Ես իսկույն ճանաչեցի. Ասրին էր:

- Հայրի՛կ, մտի՛ր, ազատ է,- ասաց նախագահի քարտուղարուհին:

Հազիվ տեղից վեր բարձրանալով և ձեռնափայտին հենվելով՝ ծերունին ներս մտավ՝ դուռը թողնելով բաց:

- Սողոմո՛ն, ջանիդ մեռնեմ, Ասրին եմ է՞, Ասրին,- մղկտաց ծերունին: - Սոված մեռնում եմ է՞, Սողոմո՛ն, սոված մեռնում եմ:

Գործկոմի նախագահ Սողոմոն Կարապետյանը, որ մեր հարևան Խոտ գյուղից էր, գիտեր Ասրու պատմությունը: Վերջինս ժամանակին շատ էր օգնել այդ փոքր գյուղի մարդկանց: Սողոմոնն անմիջապես տեղից բարձրացավ, մոտեցավ ծերունուն, օգնեց տեղավորվելու աթոռին, ապա ինքը նստեց դիմացը և

սկսեց հարցուփորձ անել: Գործկոմի նախագահը հարցրեց բանակում գտնվող որդիներից:

- Խոխորցաս մինի՝ Արտաշի սև թողթը եկալ ա, քե մատաղ: էն մյուսները գյուղում չեմ՝ հոր են,- պատասխանեց ծերունին և վշտի ծանրությունից կուչ եկավ:

Ափսոս, ես չկարողացա ունկնդրել նրանց զրույցի շարունակությունը: Քարտուղարուհին, ինձնից վերցնելով ծրարը, ասաց, որ կփոխանցի պետին, և ես կարող եմ գնալ:

Հետո իմացա, որ գործկոմի բարի նախագահը կարգադրել էր Ասրուն տալ երեք փութ ցորեն: Իսկ ավելի ուշ լսեցի ամենասարսափելին. գյուղը ստացել էր նաև Ասրու մյուս որդիների «սև թղթերը»:

Բարեբախտաբար այդ մասին ծերունին չիմացավ. նա մահացել էր «սև թղթերը» տեղ հասնելուց առաջ՝ 1944 թվականի սկզբներին:

ԽԵԼԱՄԻՏ ԱՌԱՋԱՐԿ

1953 թ. մայիս ամիսն էր: Ընդամենը երկու թե երեք շաբաթ էր, որ աշխատում էի Հայաստանի կոմկուսի Գորիսի շրջանային կոմիտեում որպես հրահանգիչ:

Այն ժամանակներում, ընդունված կարգի համաձայն, գյուղատնտեսական կարևոր աշխատանքները սկսվելու ընթացքում կուսշրջկոմի բոլոր աշխատողները՝ քարտուղարները, բաժինների վարիչներն ու հրահանգիչները, «կցվում» էին մեկ կամ ավելի կոլտնտեսությունների՝ տեղերում աշխատանքների կազմակերպմանը հետևելու և աջակցելու, թերությունները վերացնելու համար:

Սկսվել էին խոտհնձի, դաշտերից խոտի տեղափոխման և կուտակման աշխատանքները: Ես հանձնարարություն էի ստացել մեկնել Քարաշեն գյուղ:

Կուսակցության շրջկոմները սովորաբար ունենում էին մեկական մարդատար ավտոմեքենա՝ հիմնականում «Վիլիս» մակնիշի, որը սպասարկում էր շրջկոմի առաջին քարտուղարին: Մյուս բոլոր աշխատողները գյուղեր էին մեկնում շրջկոմին պատկանող ձիերով:

Առավոտը դեռ նոր էր բացվել, երբ ես արդեն ձիով Քարաշեն տանող ճանապարհին էի: Տեղ հասա, երբ արևն արդեն զենիթին էր: Պատահական մի կնոջ հարցրի կոլխոզի նախագահի գրասենյակի տեղը: Նա ցույց տվեց՝ միաժամանակ ավելացնելով.

«Էս ժամին նախագահի գրասենյակում մարդ չի լինի: Բոլորը նախագահի հետ գնացել են խոտհնձի: Ա՜յ էն սարի դոշին են»:

Ձիու գլուխը թեքելով՝ գնացի այդ ուղղությամբ: Մոտ մեկ ժամ հետո տեղ հասա: Ճանապարհին պատկերացնում էի, որ հիմա կոլխոզնիկները, քափ ու քրտինքի մեջ, հերոսաբար աշխատում են:

Երբ տեղ հասա, զարմացել էի. բոլորը՝ 50-60 մարդ, գերանդիները տնկած հողի մեջ կամ դրած գետնին, մեջքի կամ կողքի պառկած էին մայիսյան բարկ ու հաճելի արևի տակ: Բոլորը, գլխարկներն իջեցրած աչքերին, քնած էին: Քնածների երկար շարքերում նկատելով կոլտնտեսության նախագահին՝ դեռ ձիուց չիջած մոտեցա նրան: Նա ոչ մի շարժում չարեց: Ես սրտնեղված դիմեցի նրան.

- Ընկե՛ր Սուջոյան, բա էս անելու բա՞ն է: Օրվա էս ժամին քնո՞ւմ են: Ո՞վ է տեսել էսպիսի բան ...

Ձիու վրա նստած՝ էլի մի քանի ուսուցանող, դատարկ-մատարկ խոսքեր ասացի:

Վերջապես ընկեր Սուջոյանը, գլխարկը աչքերից բարձրացնելով ճակատի վրա, դիմեց ինձ.

- Շատ մտածիլ մի, քե՛ մատաղ: Լավ ա ինելու: Կործ ա էլի՛, ընիլու ենք: Կործը կործին ուտիլով քինալու ա: Ծիան եր եկ*: Ե՛ր եկ, ե՛կ կողքիս պրանի:

---

* Ձիո՛ւց իջիր:

ՏԱԹԵՎՑԻ ԲԱԳՈՆ

Առաջին հանդիպումը

Հունիսի սկիզբն էր: Կուսշրջկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի հանձնարարականով գնացել էի Տաթև՝ ծանոթանալու բերքահավաքի նախօրյակին գյուղի աշխատավորների շրջանում տարվող մասսայական-քաղաքական աշխատանքների վիճակին:

Որոտան գետի վրայի «Սատանի» կոչված կամրջով ձիով բարձրանում էի գյուղ, երբ նկատեցի, որ ճանապարհի աջ եզրին մեկը պառկած, գլխարկը աչքերին քաշած, քնած է, իսկ քիչ այն կողմ նրա էշն էր՝ արտի մեջ արձակած:

Ես առաջին անգամ էի այդ մարդուն տեսնում, թեև մինչ այդ լսել էի նրա մասին:

Բագրատն էր, որին գյուղացիները Բագո էին անվանում: Նրան Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին բանակ էին կանչել: Ղրիմում մասնակցել էր դաժան կռիվների և արկի պայթյունից աճուկներից ներքև զրկվել երկու ոտքից: Նրան փայտից սարքած արհեստական ոտքեր էին դրել, որոնք, տարիների ընթացքում հնանալով, քայլելիս ճռռում էին:

Մոտենալով նրան՝ ես երիտասարդին չսազող դիտողություն արեցի.

- Էդ անելու բա՞ն է: Մեծ մարդ ես: Հանրային ունեցվածքը թշնամու ունեցվա՞ծք է, ի՞նչ է: Շուտ էշդ հանի՛ր արտից:

Բագոն շարժում անգամ չարեց: Քիչ անց, շուռ գալով կողքի վրա, պատասխանեց, թե հանգիստ մնա, երբ անասունը կշտանա, արտից ինքնիրեն դուրս կգա:

- Եթե դու չես հասկանում, որ արտը քոնը չէ, այլ սոցիալիստական, հանրային սեփականություն է, քեզ կսովորեցնեն,- երիտասարդական ավյունով մեծամտորեն սպառնացի ես:

- Ա՛ խոխա, շա՞ռ ես տու, հի՞նչ ա, էշս պիչենա՞վ եմ պիիլու,- ասաց սովետական բանակի նախկին քաջ զինվորը, ապա մարմնի մնացած մասը հարմարեցնելով տեղին՝ շարունակեց,- հիմա ես մի երկու հարց եմ տալու քեզ, վեր պատասխանես, ապրես ...

- Լսում եմ,-ասացի:

- Արտը կոլխոզինն ա, ճի՞շտ ա:

- Այո՛,- ասացի:

- Ե՞ս հով եմ:

- Դու էլ կոլխոզնիկ ես:

- Ա՜յ, ապրե՛ս, լավ ես կլխի ինգալ: Արտը կոլխոզինն ա, ես ալ եմ կոլխոզինը, ուրեմն արտն իմն ա: Էտ արտի իմ փայը* տալիս եմ էշիս, բա տու հո՞վ ես:

Ասելու բան չունեի և ավելորդ համարեցի նոր բացատրություններ լսելու: Բագոյի ասելիքը տրամաբանական էր: Քաշելով ձիու սանձը՝ հեռացա:

---

* Բաժինը:

Անցել էին ամիսներ, վրա էր հասել ձմեռը: Հավանաբար դեկտեմբերի վերջերն էր: Խստաշունչ ձմեռը առատ ձյունով պատել էր չորս կողմը:

Ես հրահանգ էի ստացել մեկնել շրջանի ամենահեռավոր գյուղերից մեկը՝ Մալդաշ, և ուսումնասիրել, թե այնտեղ ինչ միջոցներ են ձեռնարկված անասունների ձմեռային խնամքը կազմակերպելու ուղղությամբ:

Մալդաշն աշխարհից կտրված փոքր համայնք էր՝ ընկած սարերից վեր՝ Տաթև գյուղից մի ութ-տասը կիլոմետր հեռավորության վրա: Տաթևից մինչև Մալդաշ ընկած ողջ տարածության վրա անտառածածկ մի վիթխարի զանգված էր:

Արդեն օրը թեքվել էր, երբ հասել էի Տաթև: Գյուղի ընկերները խորհուրդ տվեցին գիշերել իրենց մոտ և ճանապարհը շարունակել առավոտյան, բայց ես համառեցի ու ճանապարհ ընկա:

Ահավոր ցուրտ էր, թուխպը պատել էր չորս կողմը:

Երևի անցել էի ճանապարհի կեսը, երբ ականջիս հասավ անտառի խորքից եկող տարօրինակ ձայներ, ավելի ճիշտ՝ հոգոցներ: Ձիու գլուխը շրջեցի ձայնի կողմը, և շուտով աչքիս առջև բացվեց աներևակայելի մի պատկեր. երկու ոտքերից զուրկ Բագոն տապալել էր հսկա մի ծառ, այն բաժանել կտորների, դրանց մի մասն արդեն միայնակ բեռնել ձիու մի կողքը և հիմա, քափ ու քրտինքի մեջ կորած, ճիգեր էր թափում՝ մյուս կողքը ևս բարձելու համար:

Ինձ տեսնելով՝ Բագոն ուրախացավ: Գարնանը տեղի ունեցած մեր առաջին տհաճ հանդիպումից հետո մենք էլի հանդիպել էինք մի քանի անգամ և ընկերացել: Այդ մարդն ինձ համար ար-

դեն խիզախության մարմնացում էր դարձել, և ես ավելի մտերմորեն էի հաղորդակցվում նրա հետ: Համոզվել էի, որ նա նաև աշխարհի ամենաբարի էակներից մեկն է:

Մենք միասին փայտով բեռնեցինք նրա ձին:

Հաջողություն մաղթելով՝ շարունակեցի ճանապարհս:

ԱԴՈՒՇ ԱՄԻՆ

Սերո Խանզադյանի պատմվածքներից քաղված պատումների հիման վրա կինո նկարահանելու համար 1956 թ. ամռանը Գորիս էր եկել դերասանական մի մեծ խումբ, որի կազմում էր նաև ժողովրդական արտիստ, մեծանուն Հրաչյա Ներսիսյանը: Կինոնկարի գեղարվեստական ղեկավարն էր ռեժիսոր Մելիք-Ադամյանը, որը նաև ֆիլմի սցենարի հեղինակն էր, իսկ ֆինանսական մասի ծախսարար էր նշանակված «Հայկինոյի»՝ Կարապետյան ազգանունով և կանացի շարժուձևերով մի ռուսախոս աշխատակից: Խմբին աջակցելու պարտականությունները դրվել էին կուսշրջկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի և շրջգործկոմի կուլտուրայի բաժինների վրա:

Կինոնկարի հիմնական գործողությունները ծավալվելու էին Գորիս քաղաքում և հին Հալիձոր գյուղում: Հայրենական պատերազմից հետո վերին հարմար հարթության վրա գյուղացիները նոր տներ էին կառուցել, իսկ լքված գյուղում մնացել էր մի ծեր ու հալումաշ մարդ՝ իր ավանակով: Գարունը բացվելուն պես նա իջնում էր Որոտան գետի կիրճի իր փոքր այգին, կարգի բերում ու մշակում, իսկ ամռանն ու աշնանը հավաքում էր քիչումիչ բերքը, բեռնում ավանակին և տանում Գորիս քաղաք՝ շուկայում վաճառելու, կամ ոչ հեռու Վերիշեն գյուղ՝ փոխանակելու կարտոֆիլի ու ցորենի հետ:

Ծերունու միակ որդին, որ Երևանում մեծ պաշտոնյա էր դարձել, լքել էր միայնակ ու հիվանդ հորը՝ նրան թողնելով թշվա-

ռության մեջ: Եվ ահա աշնանային մի օր՝ դեռ չհասած շուկա, ծերունին, որ հոն էր տանում վաճառելու, հանկարծ փողոցում հանդիպում է երախտամոռ մեծապաշտոն որդուն՝ շրջապատված շրջանի առաջին դեմքերով:

- Բարև, հո՞ւնց ես,- ձևականորեն հարցնում է որդին:

- Յոլա եմ քինում, բալա՛ս,- հետևում է հանկարծակիի եկած ու կարկամած հոր պատասխանը:

Դրանով էլ ավարտվում է հոր ու որդու «զրույցը»: Վերջինս, թողնելով ապշահար ծերունուն, պաշտոնյաներով շրջապատված հեռանում է:

Կինոնկարահանումները ծավալվելու էին նշված բովանդակության սցենարի համաձայն:

Գլխավոր հերոսի՝ ծերունու դերը կատարելու էր մեծանուն Հրաչյա Ներսիսյանը:

Ամեն ինչ պատրաստ էր, բայց չէինք կարողանում քաղաքում ավանակ գտնել: Երեք-չորս օրվա փնտրտուքներից հետո վերջապես իմացանք, որ շրջսովետի գիշերային պահակ Ադուշ ամին՝ 60-65 տարեկան մի ծերունի, որն ապրում էր հարևան Գորիս գյուղում, ունի ավանակ: Կենդանին արտակարգ էր՝ ջորու չափ, սև ու սպիտակ նախշերով:

Ավանակի տիրոջ և ֆիլմի տնտեսական մասի ղեկավարության միջև կնքվում է պայմանագիր, որով նախատեսվում է, որ ավանակը նկարահանման է տարվում առավոտյան ժամը 8-ին և գոմ է բերվում երեկոյան ժամը 7-ին: Այդ ընթացքում կենդանուն կերակրելու պարտականությունը ստանձնում է «Հայֆիլմը», ավանակի աշխատանքի դիմաց Ադուշ ամին օրավարձ էր ստանում:

Արդեն երկու շաբաթից ավելի էր, ինչ նկարահանումներն ընթանում էին հանգիստ, ըստ ծրագրի, երբ օրերից մի օր շրջգործ-

կոմի ֆինանսական բաժնի ավագ մասնագետ Կարլ Գրիգորյանը, որը մեր ընկերական շրջանի ամենասրամիտ կատակաբաններից էր, առավոտյան աշխատանքի գնալիս հանդիպում է Ադուշ ամուն: Նրա հետ զրույցի է բռնվում և «ոնց ես, ոնց չես» -ից հետո խոսքը տանում դեպի ավանակը: Ծերուկից տեղեկանալով կնքված պայմանագրի բովանդակության մասին՝ նա զայրացած տեսք է ընդունում և ասում. «Սրիկաները քեզ հիմարի տեղ են դրել ու խաբել»: Տեսնելով, որ Ադուշ ամին խայծը կուլ է տալիս՝ նա ավելի է բորբոքում զրույցը՝ ասելով, թե էն Ներսիսյանն էլ, որ խանի նման էշը նստած դես ու դեն է քշում, սաղ օրը տանջում է խեղճ անասունին: Այնուհետև շեշտում է՝ չգիտես արածն ինչ է, բայց օրական ստանում է նրանից տասն անգամ ավելի, իսկ խեղճ Ադուշ ամուն տալիս են «շան լափի չափ»:

Ադուշ ամին գժվում է:

- Բա հի՞նչ անենք,- հուսահատական զայրույթը չզսպելով և Հրաչյա Ներսիսյանի նկատմամբ ատելությամբ լի՝ հարցնում է նա:

Խիստ ջղայնացածի տեսք ընդունելով՝ Կարլը պատվիրում է. «Երբ առավոտյան գան, գոմի դուռը չբացես, էշը չտաս: Ինչքան Ներսիսյանին են աշխատավարձ տալիս, թող էնքան էլ քեզ տան»:

Ադուշ ամու աչքերն առկայծում են իրեն հասանելիք փողը մտովի չափելուց հետո:

Վերջում Կարլը խիստ պատվիրում է ոչ ոքի ոչինչ չասել իրենց զրույցի մասին:

Վաղ առավոտյան սովորականի պես գալիս են, բայց Ադուշ ամին գոմի բանալին չի տալիս: Սկսվում է թունդ վիճաբանություն, որը վերջանում է հայհոյանքներով: Քիչ հետո վրդովված

տեղ է հասնում նաև Կարապետյանը՝ իր երկու աշխատակիցներով: Ադուշ ամին նախապես փակել էր տան դարպասը:

Ծայր է առնում թունդ լեզվակռիվ երկրորդ հարկի պատշգամբում կանգնած Ադուշ ամու և տան փակ դարպասների առջև այս ու այն կողմ զայրալից չափչփող Կարապետյանի միջև: Վերջինս սպառնում է միլիցիայի միջոցով ջարդել տալ դարպասն ու գոմի դուռը: Ադուշ ամին հիշոցների տարափ է թափում նրա գլխին: Տեսնելով, որ սպառնալիքները չեն անցնում՝ Կարապետյանը ստիպված մեղմում է խոսակցության տոնը, փորձում փոխել մթնոլորտը, բայց՝ զուր: Ադուշ ամին պատշգամբից բարձրաձայն պահանջում է իրեն այնքան փող տալ, որքան ստանում է «էն Ներսեսը»: Այս ասելով՝ նա անմիջապես հեռանում է պատշգամբից:

Կարապետյանը վերադառնում է ձեռնունայն, բարկացած և հուսահատ:

Իսկ Հրաչյա Ներսիսյանը երանության մեջ էր: Կարծես նույնիսկ ուրախ էր, որ նկարահանումները խափանվել են:

Վաղ առավոտից նրա երկրպագուներից շատերը հավաքվում էին հյուրանոցի մուտքի մոտ և սպասում մեծ վարպետին: Եվ երբ նա հայտնվում էր, նրանք շրջապատում էին կենդանի լեգենդին և առաջնորդում ... ո՞ւր: Ուղիղ քաղաքի զբոսայգում գտնվող ճաշարան: Տանում էին հյուրասիրելու: Նրա նախաճաշն այնպիսին էր, ինչպիսին բոլորինը, բայց միայն մի տարբերությամբ. օղին էր շատ: Եվ երբ շիշը դատարկվում էր, նա, ձեռնաթաթերն իրար բերած դնում էր սեղանին, գլուխը՝ ձեռնաթաթերին և մուշ-մուշ քնում: Ճաշարան մտնողները մատուցողների հետ խոսում էին շշուկով, շատերի համար էլ մտնելն ու դուրս գալը մեկ էր լինում: Եվ երբ մեկ-երկու ժամ հետո նա արթնանում էր, անմիջապես դիմում էր բուֆետպանին. «Մա՛նչս, ղայֆե մը

բեր»: Սկզբում չէին հասկացել «ղայֆե» բառի իմաստը, քանի որ Գորիսում քչերն էին սուրճ խմում, նրանք էլ օգտագործում էին ռուսահունչ «կոֆե» բառը: Վարպետը շատ էր նեղվել: Վերջապես բուֆետպանը կոֆե եփելու պարագաներ էր գտել, և ամեն ինչ հարթվել էր:

Գորիսեցիները՝ մեծից փոքրը, քաջ գիտեին «Կարմիր Զանգեզուր» ֆիլմի ամեն մի դրվագ, և ահա այժմ իրենց հետ էր գլխավոր հերոսի կերպարը մարմնավորած առասպելական մարդը:

Վարպետը շատ լավ ծանոթ էր քաղաքի տեղանքին ու շրջապատին: «Կարմիր Զանգեզուր» ֆիլմի ստեղծումից անցել էր շուրջ քսան տարի, բայց նա չէր մոռացել նկարահանումների վայրերի անունները՝ «Լաստի խութ», «Ծլոկի թաղ», «Քարահունջի բաղեր» ...

Օրերն անցնում էին, բայց նկարահանումներն այդպես էլ մնացել էին խափանված, դերասաններն անգործ հորանջում էին, իսկ ծայրահեղորեն վրդովված ծախսարարի մի ոտը կուսակցության շրջկոմում էր, մյուսը՝ շրջխորհրդի կուլտուրայի բաժնում: Նա անդադար բողոքում էր ու պահանջում կտրուկ միջոցներ ձեռնարկել ավանակը ետ բերելու համար, բայց պաշտոնյաները չգիտեին, թե ինչպես դա անեն:

Ես խորապես համոզված էի, որ այդ ամենը Կարլի սարքած գործն է, բայց նա, միամիտ ձևանալով, երդում-հավատ էր անում, թե բանից անտեղյակ է:

Վերջապես հարցը քննարկման դրվեց շրջսովետի գործկոմի նախագահի մոտ: Նրա աշխատասենյակում հավաքվել էին պատկառելի պաշտոնյաներ, այնտեղ էին նաև Կարլը, «Հայֆիլմ» կինոստուդիայից Կարապետյանը և էլի երկու-երեք հոգի: Կանչվել էր նաև Ադուշ ամին, բայց Կարլի գաղտնի խորհրդով նա հիվանդ էր ձևացել և մտել անկողին:

Երկար քննարկումներից հետո շրջգործկոմի նախագահն առաջարկեց Ադուշ ամուն համոզելու համար նրա մոտ ուղարկել մի պատվիրակություն, որի կազմում ընդգրկվեցին կուսշրջկոմից և շրջգործկոմից երկուական հոգի, այդ թվում՝ ես, շրջանի միլիցիայի պետը, Կարլը, հայֆիլմականներից՝ Կարապետյանը, գանձապահը և էլի ուրիշ երկու-երեք հոգի:

Պայմանավորվածության համաձայն՝ հաջորդ օրը պատվիրակությունն ամբողջ կազմով հավաքվեց շրջգործկոմի աշխատասենյակներից մեկում՝ քննարկելու համար գործողությունների կոնկրետ ծրագիրը: Ոմանք, հայացքներն ուղղելով միլիցիայի պետի կողմը, ճիշտ էին համարում դիմել խիստ միջոցների, և եթե հարկ լինի, ջարդել գոմի դուռը: Մեծամասնությունը, սակայն, առավելությունը տալիս էր Ադուշ ամուն համոզելու քաղաքակիրթ եղանակներին:

Ի վերջո որոշվեց տեղում ճշտել անելիքները՝ ելնելով իրադրությունից և գործողությունների զարգացման տրամաբանությունից:

Խումբը ուղևորվեց Հին Գորիս գյուղ: Բարակ անձրև էր մաղում: Աննկատ վրա էր հասել աշունը՝ այս կողմերի համար ամպամած ու քամոտ: Ադուշ ամու տան մատույցներում մեծ-մեծ բազալտե քարեր էին: Անձրևը դադարեց: Մոտեցանք դարպասներին: Ամուր փակ էին: Անմիջապես հարց առաջացավ, թե ով է առաջինը կանչելու Ադուշ ամուն: Ես առաջարկեցի Կարլին՝ հիմնավորելով, որ երկուսն էլ աշխատում են նույն հիմնարկում և մտերիմ են: Բայց նա կտրականապես հրաժարվեց՝ հայտարարելով, թե կոկորդի խրոնիկ հիվանդություն ունի: Քանի որ բոլորից շատ շտապում էր Կարապետյանը, ուստի հենց նա էլ առաջինը ծղրտալով սկսեց կանչել՝ «Ադյո՛ւշ ամի, Ադյո՛ւշ ամի» և լռեց: Խորամանկ ծերունու գլուխը մի պահ երևաց պատուհանի

ապակիների ետևում և անմիջապես չքացավ: Տիրեց հուսահատ լռություն:

Վերջապես միլիցիայի պետը ճիշտ համարեց, որ բոլորը կանչեն միաժամանակ ու միաբերան: Եվ «Ադուշ ամի՜, Ադուշ ամի՜» խմբովին աղաղակը տարածվեց թաղով մեկ: Հատկապես ուժգին բղավում էր քարերից մեկի վրա պպզած և դաժան դեմք ընդունած միլիցիապետը: Շատ չանցած՝ քարերի վրա թառած էին հանձնախմբի բոլոր անդամները:

Անցավ ևս 10-15 րոպե՝ վերջապես պատշգամբում երևաց Ադուշ ամին՝ ոտաշորով և ճակատը թաշկինակով կապած:

- Հո՞ր եք եկալ, հի՞նչ եք օգում,- վերևից բղավեց նա:

-Ադո՛ւշ ամի, էշն ենք ուզում, էշն ենք ուզում,- միաբերան գոչում էր պատվիրակությունը: - Խնդրում ենք՝ չմերժես, Ադո՜ւշ ամի:

Իսկ Կարապետյանը կեղծավորաբար կանչում էր.

- Адюш ами, дорогой, խնդրում եմ մեզի ընդունեք, կնստինք, կխոսինք, կբարըշանք ...

Ի պատասխան այդ աղաչանքների ու կեղծավորության՝ Ադուշ ամին շուռ եկավ և մտավ սենյակ: Մենք բոլորս հուսահատաբար մռլտում էինք: Բայց շատ չանցած՝ նա կրկին երևաց պատշգամբում՝ շորերը հագած: Իջնելով ներքև՝ բացեց դարպասի փոքր դռնակը և դուրս եկավ:

- Ընկե՛ր Գրիգորյան, ե՛ք ըստեղ,- զայրալից դիմեց նա Կարլին,- ե՛ք ըստեղ, պան եմ ասում:

Կարլի մոտենալուն պես Ադուշ ամին ձեռքը տարավ գրպանը և հանելով լուցկու տուփը՝ մեկնեց նրան ու հրամայաբար գոչեց.

- Ընկե՛ր Գրիգորյան, քե՛լ, էս տոնը պաժառ տու, համա էշի անունը տաս վեչ:

Նա լուցկին խոթեց Կարլի բուռը, ապա շուռ գալով արագ ներս մտավ՝ շրխկացնելով փականքները:

Խորտակված էր մեր վերջին հույսը:

Ադուշ ամին, բարձրանալով պատշգամբ, մի պահ շուռ եկավ և գոչեց.

- Ես քու Ներսեսի ...

Այդ ասելով՝ նա անհետացավ տան խորքերում:

Անձրևը նորից սկսեց մաղել: Աննկատ վրա էր հասել աշունը՝ այս կողմերի համար ամպամած ու ցուրտ:

«Հայֆիլմի» նկարահանումները տապալելուց հետո Ադուշ ամին հիվանդացել էր: Թոքերի բորբոքում էր ստացել և երեք ամսից ավելի չէր ներկայանում աշխատանքի: Չնայած դրան՝ նա միշտ կայտառ էր, խորամանկ ժպիտը դեմքին:

Գործկոմի շենքի նոր պահակ էին նշանակել, և Ադուշ ամին դուրս էր մնացել աշխատանքից: Բայց նա երկար անգործ մնալ չէր կարող: Լավ է, որ քաղաքի երկրորդ միջնակարգ դպրոցի շենքի պահակն անցել էր թոշակի, և Կարլի միջամտությամբ Ադուշ ամին փոխարինել էր նրան: Կարլն առաջվա պես նրա աստվածն էր:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորների հերթական ընտրությունների նախընտրական շրջանն էր: Զանգեզուրի օկրուգում պատգամավորության թեկնածու էր առաջադրվել Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Շմավոն Առուշանյանը:

Որոշ ժամանակ անց հայտնի դարձավ, որ երեք օրից ընկեր Առուշանյանը ժամանելու է շրջան՝ հանդիպելու աշխատավորների հետ: Կուսակցության շրջանային կոմիտեն զորահավաքի էր ենթարկել ուժերը՝ պատգամավորության թեկնածուի հանդիպումները բարձր մակարդակով անցկացնելու համար:

Կուսշրջկոմի աշխատողները տեղեկացված էին, թե քաղաքում որտեղ են նախընտրական գործերը լավ գնում: Հատկապես տպավորիչ էր եղել թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրենի հաղորդումը, թե ամեն օր իրենց ագիտսենյակ է այցելում 50-ից 100 հոգի, որ այնտեղ անցկացվում են հետաքրքիր զրույցներ ընտրողների հետ, տարբեր թեմաներով կազմակերպվում են զեկուցումներ և այլ միջոցառումներ:

Առուշանյանը ժամանեց Գորիս: Ինչպես կարգն էր, շրջանի ղեկավարները նրան դիմավորել էին ջերմորեն: Դիմավորողների թվում էր եղել նաև Կարլ Գրիգորյանը: Հյուրանոցում հանգստանալուց հետո պատգամավորության թեկնածուն նրանց ուղեկցությամբ եկավ կուսշրջկոմ: Այստեղ նրան զեկուցեցին նախընտրական շրջանում քաղաքի բնակչության բարոյաքաղաքական տրամադրությունների և քարոզչական այն մեծ աշխատանքների մասին, որ տարվում են հօգուտ իրենց հայրենակցի: Նա ծննդով ծայրամասային Խոզնավար գյուղից էր:

Աշխատանքային օրվա վերջից արդեն անցել էր երկու ժամ, երբ Առուշանյանը ցանկություն հայտնեց այցելել մեկ-երկու ձեռնարկություն կամ ուսումնական հաստատություն՝ իմանալու, թե ինչպես են կահավորված ագիտացիայի սենյակները, երեկոներն ինչ միջոցառումներ են անցկացվում: Առաջարկվեց գնալ մերձակա թիվ 2 միջնակարգ դպրոց, որի պատերից ներս տարվող աշխույժ քարոզչական աշխատանքների մասին մեծ եռանդով պատմել էր նրա տնօրենը:

Մոտեցանք դպրոցին: Դուռը ներսից փակ էր: Մտածեցինք, թե քաղաքացիները շենքի մյուս կողմի դռնից են ներս ու դուրս անում: Ստուգեցին ու հաղորդեցին, թե այն նույնպես փակ է: Կարլը, որ գիտեր, թե ով է շենքի պահակը, մոտեցավ դռանը և կանչեց. «Ադո՜ւշ ամի, Ադո՜ւշ ամի»: Կրկնեց մի քանի անգամ.

պահակը երևի քնած էր: Անցավ երկու-երեք րոպե. վերջապես հեռվից լսվեց Ադուշ ամու ձայնը. «Հո՞վ ա ըտեղ, հի՞նչ եք օգում»: Մերոնք պատասխանում էին. «Մենք ենք, մենք, Ադո՛ւշ ամի, բա՛ց արա, բա՜ց»:

Վերջապես դուռը բացվեց, և բոլորս ներս մտանք կիսամութ նախասրահ: Մենք ամոթից պապանձվել էինք:

Տեսնելով մեր շփոթված ու այլայլված վիճակը՝ Առուշանյանն ինքը խզեց լռությունը:

- Ադո՛ւշ ամի, ընտրությունների քինալո՞ւ ես,- հարցրեց նա գորիսյան բարբառով:

- Հինչի՞:

- Ընտրությունների:

- էտ հի՞նչ ա:

Կողքից մեկը հուշեց.

- Ադո՛ւշ ամի, էն որ թուղթը վերցնում, ջնջում են, հետո գցում քվեատուփ:

Մեզնից քաղաքականապես ամենազգաստն իր գործընկերոջն ուղղեց.

- Ադո՛ւշ ամի, էն որ թուղթը վերցնում են, չեն ջնջում և գցում են արկղի մեջ:

- Արկղը հի՞նչ ա ...

- Յաշիկը, Ադո՛ւշ ամի, յաշիկը:

Ծերունին ոչինչ չէր հասկացել:

- Ես պան չեմ րալ, գյուդում չեմ,- մեղավորի ձայնով ասաց նա ...

Առուշանյանը լուռ լսում էր: Վերջապես հարցրեց.

- Ադո՛ւշ ամի, ձեր դեպուտատը հո՞վ ա:

- Ա դե՛ ես հինչ գիդամ է՜: Հով էշը, մենք ալ փալանը,- եղավ պատասխանը:

Բոլորս շվարել էինք, իսկ Առուշանյանը, որ մինչ այդ ժպտում էր, հիմա չկարողացավ զսպել ծիծաղը, հետո թե՝

- Ադո՛ւշ ամի, հո՞ր ա ձեր ագիտպունկտը:

- Էտ հի՞նչ ա:

- Էն վեր հվաքվում են, զրուց անում:

- Հա՜, անցած շափաթ մի էրկու հոքի թոխթի նկարներ են պիրալ ընդեղ, պատի վիրա մեխալ, քինացալ:

Եվ ցույց տվեց ագիտսենյակի դուռը, որի վրա կախված էր մի հաստաբեկոր երկաթյա սև կողպեք:

- Մարթ-մուրթ կյա՞մ ա ըստեղ,- հարցրեց պատգամավորության թեկնածուն:

- Չէ՛, հի՜նչ էս ասում, ընկե՛ր ջան: Ադուշը խոխա՞ յա, ռախա՞ յա: Մի ծետ է՜, մի ծետ կարալ չի կլոխը կոխի ընդեղ ...

Առուշանյանը չէր կարողանում զսպել հռհռոցը: Երբ արդեն հանդարտվել էր, դիմելով մեզ՝ ասաց.

- Ոսկի մարդ է, լա՜վ նայեք:

Իսկ մենք թրջված հավի պես պապանձվել էինք:

ՄԵԾԱՄԻՏ ԱԲԵԼԸ

(լրացում նախորդ շարադրանքի)

Դպրոցում ստացած խայտառակ տպավորության ազդեցությանն տակ ընկել էր բոլորիս տրամադրությունը: Առուշանյանը ցանկություն հայտնեց լինել մի ուրիշ տեղամասում ևս:

Դեպուտատության թեկնածուին առաջարկեցինք լինել քաղաքային հիվանդանոցի շենքում տեղակայված ընտրական տեղամասում, որի մասին նույնպես դրական կարծիքներ էինք լսել:

Ընկեր Առուշանյանն ընդունեց այդ առաջարկը, և մենք բոլորս շարժվեցինք այնտեղ:

Առջևում շեշտակի բարձրացող զառիթափ էր, որը պիտի հաղթահարեինք ոտքով: Դեռ մինչև բարձունք հասնելը պիտի գնայինք ևս մի տասնհինգ-քսան մետր, երբ նկատեցինք, որ էշը նստած իջնում է բոլոր գորիսեցիներին քաջ հայտնի Բադունց Աբելը: Նա ողջ Գորիս քաղաքի զուգարաններ մաքրողն էր՝ այդ գործի միակ չգերազանցված վարպետը՝ հանդուգն ու մեծամիտ:

Երբ Բադունց Աբելը հասավ մեզ և արդեն պետք է անցներ, պատգամավորական թեկնածուն, չգիտես ինչու, նրան հանդիմանեց, ասելով.

- Ա՜յ մարդ, բա կենդանին մեղք չի՞, կուլխուվերումը կնստե՞ն...

Կյանքում որևէ քննադատություն չընդունած Աբելը զայրացած վայրկենապես հակադարձեց.

- Տու շա՞տ ես գյուդում, թե իշին հետի վերն ա լավը: Տու էշ ես իլա՞լ, որ գիդաս:

Բոլորիս մարմնով սարսուռ անցավ: Մեր կատարած մասսայական-քաղաքական աշխատանքը ծերուկը ջուրն էր նետել:

ԱԼԵՔՍԱՆ ԴԱՅԻ

Փողոցում հանդիպեցի քեռի Ալեքսանին, որին համագյուղացիները նաև «Սև տղա» էին ասում՝ մաշկի թուխ գույնի պատճառով: Վաղուց էս կողմերում չէր երևացել: Ընկերոջս՝ Կարլ Գրիգորյանի հայրն էր: Խեղճը երկար ժամանակ հիվանդ էր և տնից դուրս չէր գալիս: Հարգված մարդ էր:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նրան կանչել էին ռուսական բանակ և ծառայության ուղարկել Մերձբալթիկա: Երբ սկսվել էր պատերազմը, շաբաթներ անց գերի էր ընկել և քշվել Գերմանիա: Գերության չորս տարիներին նա աշխատել էր մի հարուստ ագարակատիրոջ մոտ: Հայրենի գյուղում քիչ թե շատ կրթություն ստացած երիտասարդը, աշխատասեր լինելով, կարճ ժամանակում սովորել էր գերմաներեն և նշանակվել հսկիչ՝ կալվածքում աշխատող մյուս գերիների վրա: Քսանական թվականների սկզբներին, գերիների փոխանակման կարգի համաձայն, Ալեքսանը ազատվել էր և վերադարձել տուն: Հայրենի Շինուհայրում նա աստիճանաբար կարգի էր բերել անձնական տնտեսությունը, իսկ գյուղում կոլտնտեսություն կազմակերպելուց հետո աշխատել անընդմեջ՝ հազիվ հասցնելով կերակրել բազմանդամ ընտանիքը:

1925-ին նրան մեղադրել էին տրոցկիզմի մեջ, բայց բախտը բերել էր. կենդանի էր մնացել:

Հիմա նա կյանքի վերջին տարիներն էր անցկացնում:

- Բարի օր, Ալեքսա՛ն դայի, հո՞ւնց ես,- հարցրի:

Մի փոքր լռությունից հետո ծերուկն ասաց.

- Հո՞ւնց եմ: Հո՞ւնց պիտի լինեմ, ա՛յ բալա: Վեր էն գերության տարիները հանենք, կյանքում մի կարգին օր չեմ տեսալ ...

ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Երեկոյան՝ աշխատանքից հետո, ընկերներով կանգնել ու զրուցում էինք գարեջրի գործարանի՝ դեպի տրիկոտաժի ֆաբրիկան նայող հատվածում: Դա մեր հանդիպումների մշտական տեղերից մեկն էր, մանավանդ որ քիչ այն կողմ գարեջրի կրպակն էր:

Եվ հանկարծ մեր կողքին գտնվող չուգունե երկար սյունի վրա ամրացված լուսավորության մեծ, շատ ծանր ու կլոր գունդը պոկվելով ընկավ 150 կիլոգրամից ոչ պակաս քաշ ունեցող մեր ընկերներից մեկի գլխին ու փշրվեց: Խեղճը, ամբողջ մարմնով ճոճվելով, թրմփաց գետնին և կորցրեց գիտակցությունը:

Մենք բոլորս, խուճապի մատնված, մեքենա էինք փնտրում՝ արկածյալ ընկերոջը հիվանդանոց տանելու համար: Վերջապես, չորս-հինգ րոպե անց Մարքսի փողոցի վերին մասում երևաց մի բեռնատար: Երբ մոտեցավ, կանգնեցրինք, անշարժ մարմինը մի կերպ գցեցինք թափք ու հասցրինք տեղ:

Արկածյալի մարմնի ծանրությունը հնարավորություն չտվեց բարձրացնել երկրորդ հարկ, ուր հիվանդասենյակներն էին: Բարեբախտաբար այդ պահին այդտեղ էր շրջանի առողջապահության բաժնի վարիչ Սուրեն Ամիրյանը, որն անմիջապես կարգադրեց ազատել առաջին հարկի ծառայողական սենյակներից մեկը և այնտեղ տեղավորել հիվանդին: Բժիշկներն անմիջապես գործի անցան, վերջապես մի քանի ժամ հետո նա բացեց աչքերը:

Բժիշկներից մեկն ամենայն լրջությամբ պնդում է, որ անհրաժեշտ է հիվանդից արյուն վերցնել և անմիջապես հետազոտել: Պարզվում է, որ լաբորատորիայի վարիչը դուռը պինդ կողպել և մեկնել էր Մեղրի՝ հարազատներից մեկի հարսանիքին մասնակցելու համար: Գորիսում ուրիշ լաբորատորիա չկար, ուստի գործն արագացնելու համար որոշվում է հիվանդի արյունը շտապ հետազոտության ուղարկել Երևան:

Լավ է, հայտնի է դառնում, որ տարբեր անասունների արյուններով սրվակները վերցրած՝ շրջանի գլխավոր անասնաբույժը պատրաստվում է մեկնել մայրաքաղաք՝ դրանք քննության տալու Անասնաբուժական հանրապետական կայանում: Երկար խնդրանքներից հետո սա վերցնում է նաև մեր հիվանդի արյունով լի սրվակը՝ Արյունաբանության և արյան փոխներարկման կենտրոնի լաբորատորիայում քննության հանձնելու և պատասխանը բերելու համար:

Տեղ հասնելով՝ սա անասունների արյունը քննության է հանձնում իրենց գերատեսչական լաբորատորիայում, ապա փողոց է դուրս գալիս՝ գտնելու Արյան փոխներարկման կենտրոնը: Երկար հարցուփորձ է անում սրան-նրան, բայց պատասխանում են, որ այդպիսի հիմնարկի անուն անգամ չեն լսել: Վերջապես, մտածում է՝ ինչ տարբերություն արյան տարբեր լաբորատորիաների միջև, արյունը արյուն է, մեկ է: Եվ հիվանդի արյունը նույնպես քննության է հանձնում իրենց անասնաբուժական լաբորատորիայում:

Հաջորդ առավոտյան գալով լաբորատորիա՝ մեր անասնաբույժը վերցնում է ծրարների մեջ փակած արյան բոլոր անալիզների պատասխանները և վերադառնալով Գորիս՝ անմիջապես գալիս է հիվանդանոց և պատասխանը հանձնում գլխավոր բժշկին, որն այդ պահին հետազոտում էր հիվանդի վիճակը:

Այդտեղ գտնվող մայրը խնդրում է բարձրաձայն կարդալ: Բժիշկը չի մերժում խնդրանքը: Իսկ անալիզի պատասխանը այսպիսին էր. «Անասունն ապրող չի, մորթե՛ք»:

Մայրն անմիջապես ուշաթափ է լինում, և հազիվ են ուշքի բերում:

ՀՈՒՍԱՀԱՏ ԽՆԴՐԱՆՔ

Հանգամանքների բերումով հայտնվել էի Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղում և հյուրընկալվել մերձավոր բարեկամներիցս մեկի տանը: Սեղանի շուրջը խոսակցության ժամանակ տեղեկացա, որ այդ օրը երեկոյան գյուղի ակումբում տեղի է ունենալու համերգ՝ Երևանի Կոմիտասի անվան լարային քառյակի կատարմամբ:

Այն ժամանակներում, ընդունված կարգի համաձայն, մայրաքաղաքի թատերական գործիչները և երաժշտական համույթները պարբերաբար այցելում էին հանրապետության քաղաքներ, շրջկենտրոններ, նաև կոլտնտեսություններ ու սովխոզներ: Արվեստն աշխատավոր լայն զանգվածներին հասցնելն այն ժամանակներում ընդունված, պարտադիր կարգ էր:

Ամբողջ Խորհրդային Միությունում և նրա սահմաններից հեռու մեծ անուն վաստակած քառյակը նոր էր վերադարձել Ամերիկայի Միացյալ Նահանգներից, որտեղ ունեցած փայլուն ելույթները գերել էին բազմահազար ունկնդիրների: Մամուլի օրգանները հիացական գնահատականներ էին տվել քառյակի կատարողական բարձր վարպետությանը, իսկ երկրի նախագահ Քենեդին իր նստավայրում անձամբ հյուրընկալել էր նրանց և արժանացրել մեծ պատիվների:

Հյուրընկալ բարեկամս, որը գյուղի միջնակարգ դպրոցում ուսուցիչ էր, երեկոյան կողմ առաջարկեց գնալ համերգի: Ես իսկույն համաձայնություն տվեցի, քանզի անմտություն կլիներ

չօգտագործել առիթը՝ կրկին վայելելու հռչակավոր քառյակի հոգեպարար հնչյունները:

Հուլիսյան երեկոներից մեկն էր: Դաշտերից խումբ առ խումբ գյուղ էին վերադառնում օրվա ծանր աշխատանքից հոգնած ու սոված, արևախանձ դեմքերով կոլտնտեսականները: Երկյուղելով, որ իրենց տները շտապող մարդիկ հազիվ թե ցանկություն ունենան համերգի գալու, կոլտնտեսության ղեկավարները նախապես որոշել էին ճանապարհներից նրանց անմիջապես ուղղորդել ակումբ:

Անտեսելով հոգնած ու սոված գյուղացիների ակնհայտ դժգոհությունը՝ կոլտնտեսության ղեկավարները ու ակտիվիստները հորդորներով ու սպառնալիքներով նրանց խումբ առ խումբ ուղեկցում էին դեպի մեծ ու շքեղ մշակույթի տուն: Չնայած առավել ճարպիկ կոլտնտեսականներից ոմանց, այնուամենայնիվ, հաջողվել էր ճողոպրել, բայց դժգոհ դեմքերով մարդիկ, շատ չանցած, արդեն զբաղեցրել էին բավականին մեծ դահլիճի բոլոր նստատեղերը, իսկ առաջին շարքերում տեղավորվել էր գյուղի ղեկավարությունը:

Վերջապես ետնաբեմից ներս մտավ համաշխարհային համբավի քառյակը, և համերգը սկսվեց: Երաժիշտներն ամենայն բարեխղճությամբ կատարում էին իրենց գործը՝ կոլտնտեսականներին ներկայացնելով Կոմիտասի, Չայկովսկու, Հենդելի և ուրիշ մեծերի ստեղծագործությունները:

Երկու-երեք ստեղծագործություն լսելուց հետո դահլիճը սկսեց անհանգիստ շարժումներ անել: Շատ չանցած՝ վերջին շարքերում ծայր առած քրթմնջոցներն աստիճանաբար փոխակերպվեցին բարձրաձայն դժգոհության ու տարածվեցին դահլիճով մեկ: Իսկ համաշխարհային ամենաբարձր պատիվների ար-

ժանացած երաժիշտներն ինքնամոռաց շարունակում էին իրենց գործը:

Չէր անցել 20-25 րոպե. ժողովրդի զայրույթը դուրս եկավ ափերից: Այս ու այն շարքերից լսվում էին հիշոցներ, որոնք զուգորդվում էին բղավոցներով: Հոգնած ու սոված ամբոխից ամեն ինչ սպասելի էր:

Վերջապես մի պահ եղավ, երբ առաջին շարքում նստած սովխոզի դիրեկտոր Զավեն Հարությունյանը, որի համբերությունը նույնպես հատել էր, տեղից բարձրանալով և շուռ գալով դեպի շարքերը, բարձրաձայն խնդրանքով դիմեց նրանց.

- Ա՛յ ժողովուրդ, ձեզի ղուրբան, ամոթ է, մե սո՛ւս արեք: Մե սո՛ւս արեք, ըշկանք* էս զուլումեն ե՞րբ ենք պրծնելու ...

---

* Տեսնենք:

ԴԵՊՔԵՐ ԵՎ ԴԵՄՔԵՐ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԸ ԳՈՐԻՍՈՒՄ

Ապաշխարանք

Գնացել էի Գորիս՝ ծնողներիս այցելության: Շուտով տեղեկացա, որ հերթական այցով Հայաստանում գտնվող Անաստաս Միկոյանը ցանկություն է հայտնել լինել Զանգեզուրում: Նա եկավ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանի ուղեկցությամբ:

Ողջ քաղաքը դուրս էր եկել դիմավորելու. փողոցներում ու հրապարակներում ասեղ գցելու տեղ չկար:

Կարճատև հանգիստ առնելուց հետո Միկոյանը դուրս եկավ շփվելու ժողովրդի հետ: Բոլորը համակվել էին ջերմագին զգացումներով, նաև հպարտ էին, որ խորհրդային երկրի նշանավոր ղեկավարներից մեկը այցելել է իրենց:

Հաջորդ օրը Միկոյանը ցանկություն էր հայտնել լինել մեկ-երկու կոլտնտեսությունում: Շրջանի ղեկավարությունն առաջարկել էր Խնձորեսկ ու Տեղ նշանավոր գյուղերը, և նա համաձայնություն էր տվել:

Ուղեկցողները երեք-չորս մեքենաներով էին: Կուսակցության շրջկոմի քարտուղարն առաջարկեց միանալ իրենց:

Մեծապատիվ հյուրերը բոլորիս ուղեկցությամբ մեկնեցին Խնձորեսկ: Ընդունելությունն աննկարագրելի էր: Ողջունելու էր եկել ամբողջ գյուղը՝ մեծ ու փոքր: Միկոյանը շատ գոհ էր մնացել: Պատմական Խնձորեսկում նրան հատկապես ուրախացրել էր պատանիների ու երիտասարդների մեծ բազմությունը՝ գյուղի ապագան:

Արտակարգ ջերմ էր ընդունելությունը Տեղ գյուղում: Գյուղացիներն առատ սեղան էին բացել, որի շուրջը ծավալվել էր մտերմիկ զրույց գյուղացիների և խորհրդային պետության նշանավոր գործչի միջև:

Հանդիպումը վերջացավ, և բարձրապատիվ հյուրերը Գորիս քաղաք վերադառնալու համար դիմեցին դեպի մեքենաները: Մենք հետևեցինք նրանց: Երբ մտել էինք դեպի քաղաք տանող խճուղին, հանկարծ տեսանք, որ այն մեքենան, որի մեջ Միկոյանն ու Քոչինյանն էին, ճանապարհից թեքվելով, գնաց հակառակ ուղղությամբ ու կանգ առավ մի հարթության վրա: Նրանք դուրս եկան մեքենայից, մենք հետևեցինք նրանց: Միկոյանը ցանկացել էր հայացք նետել սահմանից այն կողմ՝ թուրքերով ու քրդերով բնակեցված տարածքներին: Մենք բոլորս մոտեցանք նրանց և կանգ առանք որոշ հեռավորության վրա: Միկոյանը տևական ժամանակ լուռ դիտում էր դիմացի Քիրսի լեռը, Լաչինի անծայրածիր անտառները ու Քոչինյանի հետ մտքեր էր փոխանակում:

Երբ անցել էր 10-15 րոպե, և մեծերը պատրաստվում էին նստել մեքենա, Միկոյանը շրջվեց դեպի Քոչինյանը և անթաքույց ափսոսանքով, բոլորիս համար լսելի արտաբերեց հետևյալ խոսքերը. “Времена, времена, да, азербайджанские большевики оказались мудрее наших ...”:

Ուշացած խոստովանություն ...

Մի անսպասելի դեպք Սիսիանի մատույցներում

Հաջորդ օրվա առավոտյան Միկոյանը ցանկություն է հայտնում լինել հանրապետությունում թթի օղիով հայտնի Քարահունջ գյուղում: Այդ ցանկությունը կատարելուց հետո հյուրերը Գորիսի ընկերների ուղեկցությամբ Գորիս-Սիսիան-Վայոց Ձոր ճանա-

պարհով մեկնում են Երևան: Գորիսից Սիսիան սահմանին հյուրերին դիմավորում է Սիսիանի շրջանի ղեկավարությունը՝ կուսակցության շրջկոմի առաջին քարտուղարի գլխավորությամբ: Երբ Միկոյանն ու Քոչինյանը մեքենաներից իջնում են, Սիսիանի շրջկոմի երրորդ քարտուղարը, որն ադրբեջանցի էր, հանկարծակի պոկվելով տեղից, արագորեն մոտենում է նրանց: Նա առաջինը բռնում է Միկոյանի ձեռքը, սեղմում երկու ափերի մեջ, ուժգին թափահարում՝ արտաբերելով բարի գալստյան խոսքեր: Նույնը կատարում է Քոչինյանի հետ: Միկոյանը կարծում է, թե նա շրջկոմի առաջին քարտուղարն է, իսկ Քոչինյանը լռում է: Շրջկոմի քարտուղարն ամոթից կարմրում է բազուկի պես: Քոչինյանը, դիմելով կողքին կանգնած Կարլին, կատակով հարցնում է. «Ի՞նչ կասես այդ զարմանալի երևույթի մասին»: Կարլը, առանց մտածելու, պատասխանում է. «Ընկե՛ր Քոչինյան, Զանգեզուրի միակ թերությունն այն է, որ Սիսիանն էլ է մտնում նրա կազմի մեջ»:

Չկարողանալով ծիծաղը պահել՝ Քոչինյանը, դիմելով Կարլին, ասում է. «Ես անպայման Պավլիկին կասեմ, թե ինչպես ես վարկաբեկում սիսիանցիներին»: Կարլը թե՝ «Ընկե՛ր Քոչինյան, խնդրում եմ Պավլիկին ասես, որ Արամն* է ասել»: Բարձրաձայն ծիծաղի արանքում Քոչինյանն ասում է. «Կա՛րլ, քեզ կարգի՛ն պահիր, թե չէ Արամին կասեմ»:

Չգիտեմ մյուսներն ինչպես, բայց Քոչինյանը Երևան էր գնում շատ բարձր տրամադրությամբ:

---

* Նկատի ուներ կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Արամ Հարությունյանին, որը նախորդ գիշեր հանկարծակի հիվանդացել էր և նույնիսկ չէր կարողացել ճանապարհել բարձրաստիճան հյուրերին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԱՐՇԱԼԻ ՀԵՏ

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը կյանքի վերջին տարիներին ավելի հաճախ էր գալիս Հայաստան և ամեն անգամ այցելում էր ՀԿԿ կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտ: Այդ ավանդույթը սկզբնավորել էին ինստիտուտի՝ ինձ նախորդած տնօրեններ, նշանավոր պատմաբաններ, ակադեմիկոսներ Ծատուր Աղայանը և Գևորգ Ղարիբջանյանը, որոնք առանձնակի ջերմ հարաբերություններ ունեին մարշալի հետ: Ես փորձում էի շարունակել այդ ավանդույթը:

Իմանալով փառապանծ մարշալի Երևան ժամանելու մասին՝ պատերազմի վետերանների խորհրդի անդամները, նախկին զինվորական հրամանատարները և թե շարքայինները գալիս էին ինստիտուտ և խնդրում կազմակերպել իրենց հանդիպումը նրա հետ:

Նրա՝ հյուրանոցում տեղավորվելուց հետո ես այցելում էի զորավարին և պայմանավորվում հանդիպումների մասին:

Հանդիպման օրը ինստիտուտի դահլիճը և միջանցքները լցվում էին ժողովրդով: Սովորաբար ես բացում էի նիստը, ողջունում մարշալի հերթական գալուստը, ապա խոսքը փոխանցում նրան:

Զորավարի ելույթից հետո դահլիճից բազմաթիվ հարցեր էին տրվում նրան, որոնց նա պատասխանում էր ամենայն պատրաստակամությամբ:

Երբ հայտարարվում էր հանդիպման ավարտը, մարդիկ դժգոհում էին և դեռ երկար ժամանակ չէին հեռանում մարշալի մոտից: Նրանք երջանիկ էին, որ իրենց հետ է Մեծ զորավարն ու Մեծ հայը:

1980 թվականին էր: Կենտկոմի առաջին քարտուղարի օգնականն ինձ զանգահարեց և հայտնեց, որ ժամը 11-ին պետք է լինեմ Կարեն Դեմիրճյանի մոտ: Գնացի: Արդեն քարտուղարի մոտ էր «Հայաստան» հրատարակչության տնօրեն Հրանտ Ղազարյանը: Երկուսի տրամադրությունը շատ բարձր էր: Ասեմ, որ Դեմիրճյանը Հրանտի նկատմամբ տածում էր մեծ համակրանք ու վստահություն, բարձր էր գնահատում նրա մտավոր կարողություններն ու անմիջականությունը:

Դիմելով ինձ՝ Դեմիրճյանն ասաց, որ նոր է վերադարձել Մոսկվայից և իր հետ բերել է մարշալ Բաղրամյանի հուշերը: Զորավարը ցանկություն էր հայտնել գիրքը տպագրել Հայաստանում, իսկ նախքան հրատարակելը խմբագրական աշխատանքը կատարել մեր ինստիտուտում: Գրքի խմբագրման և տպագրման պատասխանատվությունը Դեմիրճյանը դրեց երկուսիս վրա:

Մենք եկանք ինստիտուտ և պայմանավորվեցինք մեր անելիքների շուրջ: Հետագա օրերին մենք աշխատում էինք թե՛ ինստիտուտում, թե՛ «Հայաստան» հրատարակչությունում: Նկատեմ, որ հուշերը գրված էին բարձր մակարդակով, ուստի տեքստին մեր միջամտությունները աննշան էին և երկրորդական բնույթի: Դրանք հիմնականում վերաբերում էին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման ժամանակաշրջանին:

Վերջապես մարշալը ժամանեց Երևան: Առանց որևէ պատվախնդրության՝ նա հաշվի առավ գրքի ձեռագիր բնօրինակում մեր կատարած աննշան միջամտությունները, որոնք հատկա-

պես վերաբերում էին նրա զինվորական կենսագրության սկզբնական շրջանին: Համատեղ աշխատանքի ընթացքում Հրանտի հետ երջանկություն ունեցանք ավելի մոտիկից շփվելու Մեծ զորավարի և անզուգական մարդու հետ: Մարշալը հատկապես մեծ համակրանք ուներ Հրանտի հանդեպ: Երկուսը նույն երկրամասի ծնունդ էին, խոսում էին նույն բարբառով, և դա զորավարին հաճելի էր: Մարշալին շատ էին դուր գալիս Հրանտի անմիջականությունը, նրա երբեմն հայհոյախառն բացախոսությունը, այս կամ այն պետական ու զինվորական գործչին տված նրա հախուռն գնահատականները:

Հրանտը մի օր հետաքրքրվեց, թե ինչ կարծիք ունի մարշալն իր աստիճանակիցների՝ խորհրդային նշանավոր զորավարների մասին: Առանց այլևայլության՝ Բաղրամյանը սկսեց պատասխանել: Հենց այդտեղ էլ ես հասցրի մի քանի գրառումներ անել, որոնք շատ տարիներ անց հանձնում եմ ընթերցողների ուշադրությանը:

Մարշալ Ժուկովի մասին Հրանտի տված հարցին Բաղրամյանը մի քանի բառով այսպիսի գնահատական տվեց. “Он был силен в военном деле, но хромал в политике”: Հրանտի այն հարցին, թե ինչ կարծիքի է զորավար Ի. Դ. Չերնյախովսկու մասին, որին ինքը շատ է համակրում, մարշալը պատասխանեց. “Его преимущество в том, что рано ушел из жизни”:

Ես խնդրեցի տալ մարշալ Ռ. Յ. Մալինովսկու բնութագիրը: Բաղրամյանը պատասխանեց. «Երբ ինձ ասացին, թե Մալինովսկին շաքարախտով է տառապում, ես կատակով ասացի, թե դա նրան նույնիսկ քիչ է: Իմ այս խոսքերը հասցնում են Մալինովսկուն, նա ասում է, որ Բաղրամյանը չգիտի, թե որքան ծանր հիվանդություն է շաքարախտը, այլապես այդպիսի կատակ չէր անի»:

Բաղրամյանի խոսքերի վրա ես ասացի.

- Ուրեմն ես էլ եմ դատապարտված, քանի որ ես էլ շաքարախտ ունեմ: Զորավարը, ձեռքը դնելով ուսիս, ասաց.

- Դու մոռանում ես, որ զանգեզուրցի ես: Ոչ մի հիվանդություն չի կարող զանգեզուրցուն տապալել:

Ինձ հետաքրքրում էր մարշալ Ս. Ա. Խուդյակովի մասին Բաղրամյանի գնահատականը: Պատմեց՝ երբ Բրյանսկում առաջին անգամ հանդիպել է Խուդյակովին, նրան հարցրել է. «Դուք հա՞յ եք, շատ նման եք հայի»: «Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ի՞նչ եք ասում, ես հայ չեմ»,- եղել էր պատասխանը:

- Դրանից հետո,- տհաճ զգացումով շեշտեց մարշալը,- ես ատում էի այդ մարդուն: Որպիսի՜ եռանդով էր թաքցնում իր ազգությունը:

Բաղրամյանն անհուն սեր էր տածում իր ժողովրդի հանդեպ, ուրախանում էր Խորհրդային Հայաստանի հսկայական նվաճումներով, հաջողություններով, աշխատավոր մարդկանց կենսամակարդակի օր օրի բարձրացումով, հանրապետությունում մշակույթի ու գիտության աննախընթաց վերելքով: Նա հպարտությամբ էր խոսում իր այն հայրենակիցների մասին, որոնք խորհրդային երկրի տարբեր հանրապետություններում իրենց տաղանդով ու աշխատասիրությամբ արժանանում էին համընդհանուր հարգանքի: Միաժամանակ ցավով էր ընդունում իր ազգակիցների հանդեպ Ադրբեջանում կատարվող անիրավությունները, հայ բնակչության հալածանքի փաստերը, հայ ժողովրդի պատմության լայնածավալ խեղաթյուրումները: Որտեղ էլ որ լիներ ժողովրդի արժանավոր զավակը, «Հայաստան» և «հայ» բառերը արտաբերում էր առանձնակի հպարտությամբ: Ավելին՝ չէր հանդուրժում իր ժողովրդի, նրա մշակույթի ու լեզվի հանդեպ որևէ անհարգալից վերաբերմունք:

Ինձ հետևյալն է պատմել բարեկամներիցս մեկը՝ Վլադիմիր Մանասյանը. «1978 թվականին էր: Ես սովորում էի Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1978 թ. հոկտեմբերի 21-ին մահացավ Սովետական Միության մեծ գործիչ, հայ ժողովրդի զավակ Անաստաս Միկոյանը, որի թաղմանը ես նույնպես մասնակցում էի: Հոգեհանգստի արարողությունը կատարվում էր սովետական բանակի հոյակապ շենքի մեծ դահլիճում, ուր մասնակցում էր 500-ից ավելի մարդ՝ խորհրդային տարբեր պաշտոնյաներ: Դրանց թվում էր Սովետական Միության մարշալ Իվան Բաղրամյանը: Հոգեճաշը ղեկավարում էր Սովետական Միության կոմպոզիտորների միության նախագահ Տիխոն Խրենննիկովը: Ելույթ ունեցողների շարքում էր Անաստաս Իվանովիչի մանկության ընկերը, որի անունը չեմ հիշում: Ելույթը հայերեն էր: Այդ ելույթից հետո Տիխոն Խրենննիկովը հայտարարեց, թե հաջորդ ելույթները պետք է միայն ասվեն ռուսերեն: Այդ պահին ոտքի կանգնեց Մարշալ Բաղրամյանը և հիշեցրեց բոլորին, այդ թվում և Տիխոն Խրենննիկովին, որ Անաստաս Իվանովիչ Միկոյանը ոչ միայն խորհրդային մեծ գործիչ էր, այլև հայ Մեծ ժողովրդի զավակ: Եվ այսօրվա ելույթը, ասաց նա, որ տեղի ունեցավ հայերեն, մեծ հարգանք է և շնորհակալություն հայ ժողովրդի կողմից: Մարշալ Բաղրամյանի հայտարարությունից հետո Տիխոն Խրենննիկովը անձամբ ներողություն խնդրեց մարշալ Բաղրամյանից: Ամբողջ դահլիճը մի քանի րոպե քար լռության մեջ էր»:

«Ես երջանիկ եմ, որ մի քանի տարի ջերմ հարաբերությունների մեջ եմ եղել հայ ժողովրդի մեծ զավակ մարշալ Բաղրամյանի հետ»,- գրել է զորավարի կենսագիր, Ռուսաստանի գրողների միության նախկին նախագահ, այժմ հանգուցյալ Վլադիմիր

Կարպովն իր “Маршал Баграмян. Мы много пережили в тиши после войны” գրքում:

Բաժանելով Վլադիմիր Կարպովի ազնիվ զգացմունքները՝ նկատենք, որ իր ֆիզիկական ներկայությամբ իսկ մարշալը երջանկության զգացում էր առաջ բերում բոլոր նրանց մոտ, ովքեր բախտ էին ունենում մոտիկից շփվելու նրա հետ:

ՄԵԾ ԳԻՏՈՒՆԻ ԱՎԱԳ ԴԱՍԵՐԻՑ ՄԵԿԸ

Տասնամյակներ շարունակ հայ մարդիկ աշխարհի բոլոր կողմերում հպարտանում էին Վիկտոր Համբարձումյան անուն-ազգանունը կրող հանճարով: Հիրավի, անչափելի ու անընդգրկելի եղան գիտության մեջ նրա կատարած դարակազմիկ հայտնագործությունները, որոնք, համաշխարհային փառք բերելով նրան, միաժամանակ բարձրացրին Հայաստանի և հայ ժողովրդի պատիվն ամենուր:

Նա նաև մեծ քաղաքացի էր, իր ժողովրդի նվիրյալ զավակ: Վկա՝ Մոսկվայում նրա հայտարարած հացադուլը Արցախյան շարժման դժվարին ու անորոշ օրերին:

Հայաստանի անկախացումից հետո մոլորակի մեծագույն գիտնականներից մեկը նոր եռանդով շարունակում էր իր ստեղծագործ ուղին: Ազգային պետության շահերը նա միշտ վեր էր դասում ամեն ինչից: Դա են վկայում նաև տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով մեզ գրած նրա երեք նամակները, որոնք, իբրև թանկագին մասունքներ, պահպանվում են մեր անձնական արխիվում: Դրանցից մեկին ցանկանում ենք անդրադառնալ հանգամանորեն:

Նախատեսվել էր 1994 թ. սեպտեմբերի 8-ին հրավիրել Հայաստանի մտավորականության ներկայացուցիչների հերթական ժողով: Որպես Մտավորականության խորհրդի նախագահ՝ իմ ստորագրությամբ սեպտեմբերի 3-ի թվով հրավերի նամակ էինք հղել նաև խորհրդի անդամ Վիկտոր Համբարձումյանին: Ստա-

նալով հրավերը՝ նա մեզ ուղարկել էր հետևյալ գրավոր պատասխանը, որով ցավ էր հայտնում անկախ Հայաստանում ծայր առած, իրեն հուզող մի ցավալի երևույթի մասին:

Ստորև բերում ենք նամակի ամբողջական տեքստը:

Պատմական գիտությունների
դոկտոր Հրաչիկ Սիմոնյանին

Ցավոք սրտի ես չեմ կարողանա մասնակցել մտավորականության ժողովին: Սակայն շատ ցանկալի է, որ հավաքվող այդ ժողովը բարձրացնի իր ձայնը մեզ մոտ կատարվող մի բացասական երևույթի դեմ:

Բանն այն է, որ վերջին տարիներին բարձր դիրք գրավող պաշտոնյաները, որոնց թվում կան և մտավորականներ, ծախսում են պետական ունեցվածքը արտասահմանյան անթիվ գործուղումների վրա:

Ինձ թվում է, որ այդ գործուղումները պետք է խիստ սահմանափակվեն: Ստանալով արտասահմանից բազմաթիվ հրավերներ, մասնավորապես այն ակադեմիաներից, որտեղ ես համարվում եմ արտասահմանյան անդամ, հաջողությամբ խուսափում եմ նման գործուղումներից:

Ավելի շատ ժամանակ է մնում այստեղ աշխատելու համար: Ժողովրդին պատկանող տարադրամը խնայվում է, և գործը շահում է:

Ընդունե՛ք իմ լավագույն մաղթանքները:

Վիկտոր Համբարձումյան
6.09.1994 թ.
Բյուրական

Ականջը կանչի ժողովրդին պատկանող փողերը եվրոպանե-րում և այլուր քամուն տվող մեր պաշտոնյաների:

Խառնակ այդ ժամանակներում մանրապճեղ դավադիրների մի խմբի հաջողվեց համաշխարհային համբավի արժանացած հանճարին համոզել «կամավոր» հրաժարվելու Հայաստանի գի-տությունների ակադեմիայի նախագահի պաշտոնից: Մեծ գի-տունն ի վիճակի չեղավ դիմագրավելու «մթության քողի տակ» պատրաստված դավադրությունը: Նա հեռացավ ասպարեզից և շուտով կնքեց իր մահկանացուն:

ՄԵՐ ՍՈՒՐԵՆԸ

Կոմունիստ էր մինչև ուղնուծուծը: Արտակարգ ընդունակ էր ու աշխատասեր: Խստապահանջ էր, բայց ամենից առաջ՝ սեփական անձի նկատմամբ: Արտաքնապես ազդեցիկ էր, մանավանդ որ թավ հոնքեր ուներ: Բայց ով նրան մոտիկից ճանաչում էր, գիտեր՝ նուրբ հոգու տեր էր: Նվիրված էր ընտանիքին, հարազատներին, ընկերներին: Ժամերով կարող էր անեկդոտներ պատմել:

Զարմանալի հիշողություն ուներ. տասնամյակներ էին անցել մանկության օրերից, բայց անուն առ անուն հիշում էր ոչ միայն իր սերնդակիցներին, այլև նախորդ սերնդի համարյա բոլոր համագյուղացիներին՝ այգեգործներին, դաշտավարներին, ջրաղացպաններին, աշխատասերներին ու ծույլերին: Բոլորին տալիս էր դիպուկ գնահատականներ:

Ծնվել էր Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: Մայրական կողմից մենք ազգականներ էինք: Դառը մանկություն և պատանեկություն էր ունեցել, ինչպես գյուղի իր բոլոր սերնդակիցները: Բայց խորհրդային իշխանությունը հազարամյակների գյուղին բերել էր լույս և կրթություն:

Դեռ գյուղի դպրոցում սովորելիս Սուրենը դրսևորում է արտակարգ ընդունակություններ և աշխատասիրություն: Նա գյուղի դպրոցն ավարտում է գերազանց առաջադիմությամբ, այստեղ էլ 1926 թ. ընդունվում է կոմերիտմիության շարքերը:

1929 թ. Սուրենը մեկնում է Երևան և, առանց արտադրությունից կտրվելու, ուսումը շարունակում տեղի բանֆակում: Հաջորդ տարի՝ 1930 թվականին, նա ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը՝ միաժամանակ էքստեռն կարգով քննություններ հանձնելով Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

1932 թ. Երևանի բանֆակն ավարտելուց հետո Սուրենն աշխատանքի է գործուղվում Սիսիանի շրջան որպես կուսշրջկոմի հրահանգիչ: Սիսիանում աշխատած տարիներից նա ինձ պատմել է մի շարք զավեշտալի դեպքեր, որոնցից լավ եմ հիշում հետևյալը:

«Շատ երիտասարդ էի մի այնպիսի գործի համար, ինչպիսին կուսշրջկոմի հրահանգչի պատասխանատու պաշտոնն էր»,- պատմում էր նա:

Ընդամենը մեկ-երկու ամիս էր անցել այս պաշտոնում աշխատելուց, երբ տեղի էր ունեցել Համամիութենական կոմունիստական կուսակցության կենտկոմի արտակարգ պլենումը, ուր քննարկվել էր «հակակուսակցական ընդդիմության»՝ զինովևականների հարցը, ընդունվել կուսակցությունից նրանց վտարելու մասին որոշումը, որում զինովևականները որակվել էին որպես “политические проститутки”:

Այն տարիներին կուսակցության վերադաս մարմինների որոշումները քննարկվում էին բոլոր տեղական և նույնիսկ բոլոր սկզբնական կուսկազմակերպություններում, ընդունվում էին միաձայն որոշումներ, որոնցով խստորեն դատապարտում էին «կուսակցության գլխավոր գծից շեղված ընդդիմադիրներին», համապատասխան գնահատականներ տալիս նրանց «հակակուսակցական» գործունեությանը:

Ինչպես և ընդունված էր, շրջանների խոշոր գյուղեր էին ուղարկում առաջին հերթին կուսշրջկոմի աշխատակիցներին: Սրանք ոչ միայն ժողովներում կարդում էին կենտկոմի տվյալ պլենումի որոշումը, այլև իրենց կողմից ավելացնում մի քանի զայրալից նախադասություններ «ժողովրդի թշնամիների» հասցեին:

Եվ ահա կուսշրջկոմում նոր աշխատանքի ընդունված Սուրենին ուղարկում են շրջանի ռուսական (մոլոկանների) Բազարչայ գյուղ՝ կոլտնտեսականների ընդհանուր ժողովում մասսայականացնելու Զինովևի և նրա կողմնակիցների դեմ կուսակցության նշված պլենումի ընդունած որոշումը:

Մոլոկաններն ապրում էին խիստ մեկուսացած կյանքով: Նրանք ավանդապահ էին, դեպքից դեպք էին շփվում հարևան գյուղերի հայ բնակիչների հետ, իրենց ավանդապաշտ փակ կյանքը երբեք չէին բացում «օտարի» առջև:

Ակումբում ասեղ գցելու տեղ չկար: Ձախ կողմի շարքերը զբաղեցրել էին տղամարդիկ, աջ կողմինը՝ կանայք: Որոշումը ռուսերեն մի կերպ ընթերցելուց հետո Սուրենը պատրաստվում է իր կողմից ևս մի քանի խոսք ասել: Երկու-երեք նախադասությունից հետո, չգիտես ինչու, պարտավորված է զգում զայրույթով արտաբերել “политические проститутки” բառակապակցությունը: “Эти политические ... “ բառերը արտաբերելուց հետո նա կանգ է առնում: Ստիպված երեք-չորս անգամ կրկնում է “эти политические...” բառերը, բայց շարունակությունը չի ստացվում:

- Մոռացել ու մոռացել էի վերջին՝ “проститутка” բառը,- պատմում էր Սուրենը: - Նկատեցի, որ տղամարդկանց հատվածի շարքերում դժգոհաբար քրթմնջում են, ոմանց դեմքերին էլ քմծիծաղ է, որը գնալով վերածվում է արհամարհական գռմռոցների: Բարեբախտաբար միտս եկավ այդ բառի ժարգոնային

տարբերակը և հաջորդ վայրկյանին արտաբերեցի. “Эти политические блядьи”: Տղամարդկանց շարքերում աղմուկ բարձրացավ: Ինչպե՞ս թե. իրենց կանանց ներկայությամբ այդպիսի անպարկեշտ խոսք, այն էլ կուսակցության շրջանային կոմիտեի աշխատողի բերանից: Անթաքույց դժգոհելով՝ նրանք միաժամանակ նայում էին իրենց կանանց կողմը, որոնց շարքերում ալիքվող գոհունակության շշուկները գնալով վերածվում էին հառաչանքների:

Պատահածի մասին անմիջապես իմացել էին կուսշրջկոմում:

- Ես կարծում էի, թե այնտեղ ինձ անպայման կուսակցական որևէ պատիժ կտան կամ գոնե խիստ կհանդիմանեն,- ասում էր Սուրենը,- բայց միանգամայն հակառակը եղավ:

Կուսշրջկոմի առաջին քարտուղարը, ձեռքը մտերմաբար դնելով երիտասարդ կուսաշխատողի ուսին, ասել էր.

- Ապրե՛ս, տղա՛ս: Միանգամայն ճիշտ գնահատական ես տվել կուսակցության մեջ խցկված սրիկաներին: Միշտ այդպես սկզբունքային եղի՛ր:

Այնուհետև Սուրենը կուսակցական տարբեր աշխատանքներ է կատարում Երևանում, Իջևանում, իսկ 1937 թ. օգոստոսին աշխատանքի է անցնում ՀԿ/բ/Կ կենտկոմում՝ որպես հրահանգիչ: 1938 թ. ընտրվում է Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղար: Հայաստանի կոմկուսի 11-րդ համագումարի կողմից նույն թվին ընտրվում է ՀամԿ/բ/Կ համագումարի պատգամավոր՝ վճռական ձայնի իրավունքով: 1939 թ. ապրիլին նրան աշխատանքի են տեղափոխում Երևան, որպես ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմի առաջին տեղակալ:

Այդ բոլոր աշխատանքներում Ս. Թովմասյանը դրսևորում է բացառիկ աշխատասիրություն և ուժեղ կամք:

Դեռ այն ժամանակ մեր բոլոր համագյուղացիները, որտեղ էլ լինեին, հպարտանում էին «Թումասին Սուրենով»:

Հիշում եմ, չորրորդ թե հինգերորդ դասարանում էի: Մայրս վերադարձել էր ծնողական ժողովից, ուր ինձ ինչպես պետք է փնովել էին: Ուսուցիչները հատկապես դժգոհել էին, որ դասերի ժամանակ խանգարում եմ դասընկերներիս: Տուն եկա թե չէ, մայրս ջղայնությունը թափեց գլխիս: Երբ քիչ հանդարտվել էր, փոխեց խոսակցության տոնը՝ ասելով. «Մեր Սուրենի նման աշխատասեր եղի՛ր, նրանից գոնե մի բան սովորի՛ր, լակո՛տ»:

- Ո՞վ ա է՞ էդ Սուրենը,- հարցրի:

- Աչքդ հանողն ա, որ նորմալ երեխա լինեիր, կիմանայիր:

- Ես նրան չեմ տեսել, ո՞նց իմանամ: Երբ տեսնեմ, կիմանամ:

- էտ ա, լեզվիդ զո՛ռ տուր: Ուրիշ բանի պետք չես,- զայրալից ամփոփեց մայրս և գնաց իր գործին:

Հանրապետության ներքին գործերի ժողկոմի առաջին տեղակալի պաշտոնը Սուրեն Թովմասյանը ստանձնել էր այն ժամանակ, երբ «ժողովուրդների հայր» Ստալինը, իբր, տեղյակ չլինելով, թե ներքին գործերի մարմինները ինչպիսի տեռոր են սանձազերծել երկրով մեկ, սկսում է նախատել իր բարձրաստիճան ենթականերին՝ «երկրի հիմնական կապիտալին»՝ սովետական մարդկանց և հատկապես գիտության բնագավառի «առանձին» նշանավոր գործիչներին «նեղացնելու» համար, ասել է թե՝ զնդաններ նետելու համար:

Դեռ այն ժամանակ, չգիտես ինչու, երկրի մեծագույն հոգսերը թողած, Ստալինը սկսել էր խորանալ լեզվաբանության խնդիրների մեջ և ստեղծել սեփական հայեցակարգը:

Խորհրդային երկրում լեզվաբանությունը համարվում էր խիստ դասակարգային գիտություն՝ խարսխված Նիկողայոս Մառի՝ պաշտոնական հայտարարված տեսության վրա: Մառի

ուսմունքի դեմ հանդես եկող լեզվաբանները, այդ թվում՝ հայ խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյանը, ենթարկվելով խիստ քննադատությունների, ի վերջո հայտնվել էին բանտերում, աքսորավայրերում կամ գնդակահարվել էին:

Արդեն 1939 թ. վերջերին Ստալինը սկսում է նախատել իր բարձրաստիճան ենթականերին՝ սովետական մարդկանց նկատմամբ ցուցաբերած անտարբերության, անմեղներին մեղավորներից չզանազանելու համար:

Սուրեն Թովմասյանը պատմում է, որ աշխատանքային մի օր, իր աշխատասենյակի դուռը շրխկոցով բացելով, այլայլված ներս է մտնում իր անմիջական պետը և հևալով ասում.

- Զարմանալի բաներ են կատարվում: Հենց նոր Գրիգոր Արտեմիչը զանգահարեց ինձ ու կարգադրեց անմիջապես բանտից ազատել Հրաչյա Աճառյանին և հենց մեր աշխատակիցների ուղեկցությամբ տանել տուն: Երդվում եմ՝ ոչինչ չեմ հասկանում: Այս ի՞նչ է կատարվում:

Իսկ ահա թե ինչ էր կատարվել:

Ուղիղ կապի լսափողով Ստալինը հետևյալ խոսակցությունն էր ունեցել Գր. Հարությունյանի հետ:

- Здравствуйте, товарищ Арутюнов.

Ցատկելով ոտքի՝ Հարությունյանը պատասխանել էր.

- Здравствуйте, товарищ Сталин, слушаю Вас ...

- Товарищ Арутюнов, скажите пожалуйста, в настоящее время где находится крупнейший ученый-лингвист Грачья Ачарян.

- Грачья Ачарян находится в тюрьме, товарищ Сталин.

- Жаль, товарищ Арутюнов, очень жаль,- ասել էր «ժողովուրդների հայրը» և անջատել լսափողը:

Հարությունյանի ծնկներում դող էր բռնկվել: Անմիջապես վերցնելով լսափողը՝ նա դողդոջուն ձայնով ներքին գործերի ժողկոմին կարգադրել էր.

- Безпромедления освободите из тюрьмы ученого-лингвиста Грачья Ачаряна.

Երկուսն էլ այսպես կոչված «Тройка»-ի անդամներ էին: Այդ տխրահռչակ պատժիչ մարմինը գործում էր միութենական բոլոր հանրապետություններում: Դրա կազմի մեջ էին մտնում կուսակցության կենտկոմի առաջին քարտուղարը, ներքին գործերի նախարարը և մի ուրիշը՝ մեծ մասամբ հանրապետության դատախազը: Պատժիչ այդ մարմնին էլ հանձնված էր բռնադատվածների ճակատագիրը՝ բանտարկել, աքսորել կամ գնդակահարել:

- Մենք բոլորս զարմացած էինք կյանքի նկատմամբ Աճառյանի անտարբերության ու հանգստության վրա,- պատմում էր Ս. Թովմասյանը: - Նրա համար կյանքը կարծես ավելորդ բան էր դարձել, և հավանաբար այն պատճառով, որ զրկվել էր ստեղծագործելու հնարավորությունից:

Երբ բանտապահներից մեկը նրան հայտնել էր բանտից ազատելու մասին կարգադրության լուրը, մեծ գիտնականը այն ընդունել էր զարմանալի անտարբերությամբ:

Մեկ ժամ անց ներքին գործերի աշխատակիցների ուղեկցությամբ Աճառյանն արդեն տանն էր:

Հետագա ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը, հանձին Սուրեն Թովմասյանի, մեծագույն գիտնականն ուներ իր լավ բարեկամը: Մեկ անգամ չէ, որ Թովմասյանը եղել էր նրա տանը, հոգեկան մեծ բավականությամբ աջակցել նրան: Հանճարեղ այդ մարդու հետ ունեցած իր ջերմ բարեկամության մասին Սուրենը թողել էր բավական ծավալուն ու արժեքավոր մի հուշագրություն, որը

պահպանվում էր իր շատ հարուստ անձնական արխիվում: Այս արխիվը, ցավոք, ոչնչացավ 80-ական թվականների վերջերին՝ Ղարաբաղյան շարժման բռնկման օրերին:

Սովետական երկրի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակման հաջորդ օրն իսկ՝ 1941 թ. հուլիսի 23-ին, Սուրենը դիմում է ներկայացնում և կամավոր մեկնում ռազմաճակատ, կռվում մինչև պատերազմի ավարտը: Նա զբաղեցնում է հրամանատարական տարբեր բարձր պաշտոններ: Մինչև պատերազմի ավարտը գտնվել է Հարավային, Ղրիմյան, Անդրկովկասյան, Հյուսիսկովկասյան, Ուկրաինական (4, 3, 1) և Բելոռուսական (1, 3) ռազմաճակատներում՝ որպես դիվիզիայի քաղբաժնի պետ և զինվորական կոմիսար, դիվիզիայի հրամանատարի քաղգծով տեղակալ, կռվել է Լեհաստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում: Զորացրվել է 1946 թ. օգոստոսին:

Հանրապետության առաջին դեմքերի թվում Թովմասյանը եղել է միակը, որն անմիջական մասնակցություն է ունեցել արյունալի մարտերին, վիրավորվել մի քանի անգամ, այդ թվում՝ շատ ծանր:

Պատերազմը վերջանալուց հետո Սուրեն Թովմասյանը տուն էր վերադարձել՝ փառքով պսակված, կուրծքը զարդարված բազմաթիվ շքանշաններով:

Չնայած դրան՝ նա երկար ժամանակ անգործ էր. նրան որևէ աշխատանք չէին առաջարկում: Տևական ժամանակ նա ընտանիքը պահում էր «Խորհրդային Հայաստան» և ռուսերեն «Կոմունիստ» հանրապետական թերթերում տպագրած հոդվածների դիմաց ստացած հոնորարներով:

Հարգանք ներշնչող առնական դեմքով, սաթի պես սև ու խիտ մազերը հետ սանրած այդ խիզախ այրը դեռևս ուսադիր-

ները հանած հնամաշ զինվորական բաճկոնով էր, թեև պատերազմից արդեն անցել էր երկու-երեք տարի:

Բայց Թովմասյանն այն մարդկանցից չէր, որ ձեռքերը ծալած սպասեր բախտի ողորմածությանը: Օգտագործելով իր ազատ ժամանակը՝ նա էքստեռն կարգով շարունակում է քննություններ հանձնել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

Հիշում եմ՝ մի կիսամյակում նա հանձնել էր տասներկու քննություն, այդ թվում՝ Հին Արևելքի պատմություն, դրամագիտություն, էթնոգրաֆիա, պետրոգրաֆիա և ուրիշ խիստ մասնագիտական առարկաներ՝ բոլորն էլ գերազանց գնահատականներով: Նրա խելացիության մասին արդեն գիտեին ողջ համալսարանում:

Հաճախ էինք համալսարանի պատերից ներս ծնունդով չորս շինուհայրցիներս հանդիպում իրար: Խիկար Բարսեղյանը, որն ավարտել էր Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, այդ ժամանակ իր թեկնածուական ատենախոսությունը պատրաստում էր պետական համալսարանում: Լենդրուշ Խուրշուդյանը ընդունվել և սովորում էր համալսարանի նորաբաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, ես՝ պատմության: Մենք երեքով հպարտ էինք, որ պատերազմից փառքով տուն վերադարձած լեգենդար հայերից մեկի՝ Սուրեն Թովմասյանի մտերիմներն ենք:

30-ական թվերից ավանդույթ էր դարձել, որ «ներքևները» հազվադեպ էին հրապարակայնորեն քննադատում «վերևներին»: Դրան փոխարինում էին այս կամ այն ղեկավար գործչի հասցեին շշուկներն ու բամբասանքները, իսկ հանրապետության առաջին դեմքի դեմ որևէ բացասական խոսք դիտվում էր որպես կուսակցության դեմ ուղղված հանդուգն զրպարտություն:

Վիճակը փոխվեց, երբ պատերազմի ճակատներից հայրենիք էին վերադարձել հայորդիները՝ հպարտ իրենց կատարած հերոսական գործերով:

Եվ ահա նրանց շարքերից է, որ առաջին անգամ քննադատություններ հնչեցին հանրապետության ղեկավարների, այդ թվում՝ Հայկոմկուսի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի հասցեին:

1937 թվականից ի վեր դա չտեսնված ու չլսված բան էր:

Արդեն ձևավորվող ընդդիմության ղեկավար դարձավ Սուրեն Թովմասյանը: Նա իր կուսակցական գործերը տեղափոխել էր պետհամալսարանի կուսկազմակերպություն և այն օրերի համար անսովոր համարձակությամբ խիստ քննադատություններով հանդես էր գալիս հանրապետության ղեկավարության կողմից վարվող սխալ քաղաքականության, մասնավորապես վարչարարության դեմ:

Շատ չանցած՝ Սուրեն Թովմասյանին միացավ Հայկոմկուսի Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար Շմավոն Առուշանյանը, որը նույնպես գորիսեցի էր, ավելի ստույգ՝ Գորիսի շրջանի Խոզնավար գյուղից:

Երկու գորիսեցիների համարձակ ելույթները նորություն էին 1937 թվականից ի վեր եկած ժամանակաշրջանի համար, մինչ այդ չտեսնված ու չլսված մի բան: Չնայած բացահայտ ու թաքուն ճնշումներին՝ նրանք չէին ընկրկում, շարունակում էին գլխավորել հանրապետության ղեկավարության դեմ գնալով ծավալներ ընդունող շարժումը: Բոլորը փոփոխություններ էին ուզում, ուզում էին նոր մարդկանց տեսնել վերևներում:

Գրիգոր Հարությունյանի ղեկավարած կուսակցական վերնախավը վճռականորեն էր տրամադրված բարձրացող ընդդիմության դեմ: Հանրապետության հասարակական-քաղաքական

կյանքում որևէ լուրջ փոփոխություն կատարելը ղեկավարությունը համարում էր անթույլատրելի շռայլություն: Եվ ահա այդ վերնախավի շրջանում է, որ ծնունդ առան «հակագորիսեցիական» տրամադրություններ, որոնք տարբեր կերպ փոխանցվում էին հասարակության տարբեր խավերին:

Դրան մեծապես նպաստեց ՀԿԿ կենտկոմի բյուրոյում Գրիգոր Հարությունյանի անզգույշ արտահայտություններից մեկը: Ահա թե որը:

Այն ժամանակներում տարվա վերջին ամիսներին բոլոր կազմակերպություններում տեղի էին ունենում հաշվետու ընտրական ժողովներ, որոնց ընդունած որոշումներն ամփոփվում էին կուսակցության շրջանային և քաղաքային կոմիտեներում, իսկ վերջում դրանք քննության էին ենթարկվում և ամփոփվում ՀԿԿ կենտկոմի բյուրոյում:

Եվ ահա այստեղ 1950 թ. ժողովների արդյունքների մասին զեկուցողը նշում է, որ կենտկոմի հասցեին ամենախիստ «զրպարտիչ» քննադատությունները հնչել են Երևանի պետական համալսարանի հաշվետու-ընտրական ժողովում և կուսակցության Լենինականի քաղաքային կոնֆերանսում, որ դրանցում հատկապես ուժգին քննադատություններով հանդես են եկել գորիսեցիներ Թովմասյանն ու Առուշանյանը՝ իրենց քննադատության սլաքը հիմնականում ուղղելով կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի, նրա գործունեության դեմ:

Խիստ վրդովված Հարությունյանը, այլևս չհամբերելով, ընդհատում է զեկուցողին և արտաբերում. “Опять эти горисские кляузники”:

Բյուրոյի նիստը վերջանալուց ժամեր անց Երևանում արդեն խոսում էին, թե Գրիգոր Հարությունյանը գորիսեցիներին անվանել է «կլյաուզնիկներ»: Իսկ նրա ասածն այն ժամանակներում

անքննելի էր: Անզգույշ արված այդ արտահայտությունը շուտով տարածվում է հանրապետությունով մեկ: Ծնունդ են առնում նաև հակագորիսեցիական բազմաթիվ անեկդոտներ:

Օրինակ՝ լայն տարածում էր գտել այն անեկդոտը, թե ամեն մի գորիսեցի՝ մեծից փոքրը, գրպանում պահած ունի մի քանի գրիչ կամ գոնե սրած մատիտ՝ սրա-նրա վրա կեղծ ամբաստանություններ գրելու նպատակով: Ասում էին, որ, իբր, Մոսկվայում մտադրվել են կառուցել ամուր, երկարաժամկետ օգտագործման գրիչների ու մատիտների գործարան, և այդ առթիվ հայտարարված մրցույթում գլխավոր մրցանակը շահել են գորիսեցիները: Այս պայմաններում շատերի մոտ տրամադրություն էր առաջանում զգուշանալ նրանց հետ շփվելուց:

Բանը հասել էր նրան, որ երբ ապագա աներ-հայրս լսել էր, որ իր ավագ դուստրը հավանել է մի երիտասարդի և իր կյանքը մտադիր է կապել նրա հետ, հետաքրքրվել էր նաև, թե նա որտեղացի է: «Գորիսեցի է»,- ասել էին նրան: «Բա՜, էդ լավ չեղավ»,- վրա էր բերել նա և ընկել մտքերի մեջ:

Առաջ անցնելով՝ վերհիշում եմ շատ տարիներ անց Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ ունեցած մի զրույցի մասին: Զրույցի ընթացքում նա ասաց.

- Մեր հանձնարարությամբ համապատասխան մարմինները ներկայացրել են 1937-1938 թվականներին Հայաստանում բռնադատվածների ցուցակն ըստ քաղաքների ու շրջանների, բայց մեզ հետաքրքրում է նաև, թե հանրապետությունում բռնադատվածների թվում որքան կոմունիստներ են եղել ըստ քաղաքների ու շրջանների: Քանի որ կոմունիստների անձնական տվյալները գտնվում են ձեր ինստիտուտի արխիվում, ուստի, որքան հնարավոր է շուտ, տվյալներ ներկայացրե՛ք մեզ: Ամբողջ խորհրդային երկրում է այդ հաշվարկը կատարվում: Արևմուտքում բանն

այնպես են ներկայացնում, թե կոմունիստները կոտորել են ոչ կոմունիստներին: Այդ զրպարտությունը հերքելու համար մենք ուզում ենք ցույց տալ, որ 1937 թ. արհավիրքը չի շրջանցել կոմունիստներին: Այն համընդհանուր աղետ է եղել:

Լարված աշխատանքը տևեց շուրջ երկու ամիս: Արդյունքները, որոնք զարհուրելի էին, պաշտոնապես ներկայացվեցին կենտկոմ:

Հերթական հանդիպման ժամանակ Դեմիրճյանն ասաց.

- Ես ծանոթացա ձեր ներկայացրած տվյալներին և, ճիշտն ասած, զարմացած եմ: Ուրեմն՝ բռնությունների տարիներին հանրապետության քաղաքների ու շրջանների համեմատ Գորիսում այդքան քի՞չ են եղել բռնադատվածները, ընդամենը 4 կոմունի՞ստ: Հետևապես այդքան քի՞չ են եղել մատնիչները: Բա ո՞ւր էին գորիսեցի հայտնի կլյաուզնիկները:

«Գորիսեցիների մասին տարածված նման ամբաստանությունները հեքիաթի ոլորտից են»,- ասացի:

Հանիրավի զրպարտվող գորիսեցիներ ...

Իսկ հանրապետության աշխատավորների շրջանում գնալով ուժեղանում էր դժգոհությունն իրենց սոցիալ-տնտեսական վիճակից: Այդ տրամադրություններն աստիճանաբար թափանցում էին կուսակցական և պետական միջավայր: Հանրապետության ղեկավարության փոփոխումը դարձել էր անխուսափելի:

Վրա հասավ Ստալինի մահը: Վշտով էր համակվել ողջ Սովետական երկիրը: Բացարձակ անորոշության մեջ մարդիկ սպասում էին, թե ինչ է լինելու: Ի վերջո, իշխանության եկած Խրուշչովը և նրա պաշտոնակիցները ձեռնարկեցին երկրի ապաստալինականացման գործը, որի հետևանքով բարձր պաշտոնյաների փոփոխություններ տեղի ունեցան նաև Հայաստանում: Չնայած Անաստաս Միկոյանի ուժգին դիմադրությանը՝

ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեն Հայաստանի կոմկուսի կենտ-կոմի առաջին քարտուղար հաստատեց Սուրեն Թովմասյանին: Շատերի համար դա անսպասելի էր, ուրիշների համար՝ ճիշտ ընտրություն: Ավելի մեծ էր հոռետեսների թիվը: Թովմասյանից դժգոհները նրան հիմնականում մեղադրում էին կոպտության և «չափից ավելի կոմունիստ» լինելու, ազգային շահերին տեր չկանգնելու մեջ: Բայց դա դեռ ամենը չէր. հանրապետությունով մեկ տարածվել էր այն հորինվածքը, թե Թովմասյանը նպատակ ունի Հայաստանի բոլոր կարևոր պաշտոնները հանձնել գորիսեցիներին: Իրականում հակառակը տեղի ունեցավ: Թովմասյանի պաշտոնավարումից առաջ հանրապետության բազմաթիվ շրջանների և մայրաքաղաքի պատասխանատու պաշտոններում (կուսակցության շրջանային կոմիտեների քարտուղարներ, շրջգործկոմների նախագահներ և այլն) շատ ավելի գորիսեցիներ էին աշխատում, քան նրա օրոք:

Ավելին՝ Թովմասյանի պաշտոնավարման վերջում մնացել էին երկուսը՝ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարը և Գորիսի շրջխորհրդի նախագահը: Բայց, չնայած դրան, Թովմասյանի ամբողջ պաշտոնավարության ընթացքում գորիսեցիներին նրա կողմից հովանավորելու մասին առասպելը շարունակում էր «աշխատել»:

Հիշում եմ՝ Աբովյան փողոցով բարձրանալիս աչքիս ընկավ «Մոսկվա» կինոթատրոնի պատին ամրացված գովազդային վահանակը՝ «Ո՞ւմ է ժպտում կյանքը» կինոնկարի գովազդագրով, որի վերջում անվարժ ձեռքով ավելացված էր՝ «գորիսեցիներին»: Այսինքն՝ ստացվում էր, որ Հայաստանում կյանքը ժպտում է միայն գորիսեցիներին:

Չնայած այդ ամենին՝ Սուրեն Թովմասյանի պաշտոնավարման ժամանակաշրջանը Հայաստանի ժողովրդական տնտեսու-

թյան հզոր վերելքի, կրթության ու մշակույթի աննախընթաց զարգացման տարիներ էին: Կյանք առան բազմաթիվ արդյունաբերական նոր ձեռնարկություններ՝ իրենց բազմահազար բանվորական կոլեկտիվներով և արտադրական նորագույն սարքավորումներով:

Եվ ոչ միայն Երևանում: Հայաստանի բոլոր շրջանների համաչափ զարգացումը դարձել էր իշխանությունների տնտեսական քաղաքականության հիմնական ուղեգիծը: Նոր բարձունքների էին հասել գիտությունը և ժողովրդական կրթությունը: Հայոց գիտության և արվեստի փառքը տարածվել էր հանրապետության սահմաններից շատ հեռու:

Ազգամիջյան խնդիրների լուծման համար Ս. Թովմասյանն ուներ սեփական ամրագրված տեսակետները:

Ես սովորում էի Մոսկվայում, երբ մեր հանրակացարան էր եկել իմ վաղեմի ընկերը՝ կիրովականցի Լյուդվիգ Սարդարյանը: Իր գրպանին հարմար հյուրանոց չգտնելով՝ նա եկել էր ինձ մոտ, ուր և մնաց մի քանի օր:

Զրույցներից մեկի ժամանակ Լյուդվիգն ինձ պատմեց, թե վերջերս տեղի է ունեցել ՀԿԿ Կիրովականի քաղաքային կոմիտեի կոնֆերանս, որից հետո կոմունիստների մի խումբ շրջապատել է կոնֆերանսում ընդարձակ ելույթ ունեցած Ս. Թովմասյանին և բողոք հայտնել, թե Հայաստանի կոմկուսի կենտկոմը և հանրապետության կառավարությունը անտարբեր են Լեռնային Ղարաբաղի հայության ծանր վիճակի նկատմամբ, որ Հայաստանի հետ վերամիավորվելու նրա բնակչության մեծամասնության պահանջը չի արժանանում ոչ միայն Մոսկվայի, այլև Հայաստանի կոմկուսի և հանրապետության կառավարության ուշադրությանը: Կենտկոմի առաջին քարտուղարի բացատրությունները չէին բավարարել կոնֆերանսի մասնակիցներին:

Շուտով այդ մասին տարածվեց հասարակական լայն շրջաններում: Հարցն այնպես էր ներկայացվում, որ, իբր, Թովմասյանը կտրականապես հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու դեմ:

Ես խիստ անհանգստացած էի և սպասում էի Թովմասյանի հերթական անգամ Մոսկվա գալուն, որ առաջին ձեռքից իմանամ եղելությունը:

Լյուդվիգի Երևան մեկնելուց երկու-երեք օր անց տեղեկացա, որ Սուրեն Թովմասյանը Մոսկվայում է: Մայրաքաղաքում նա տեղավորվում էր «Մոսկվա» հյուրանոցի չորրորդ հարկի նույն համարում (թիվ 420): Ես եղել էի այնտեղ մի քանի անգամ, երբ նա աշխատանքային այցեր էր կատարել մայրաքաղաք:

Այցելեցի: Տրամադրությունը բարձր էր: Առավոտյան եղել էր կենտկոմում: Ղեկավարությունը շատ բարձր էր գնահատել Հայկոմկուսի գործունեությունը հանրապետությունում արդյունաբերության բուռն զարգացման, հատկապես խոշորածավալ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման ու հաջող գործարկման առումով:

Այնուհետև սկսեց հարցուփորձ անել իմ ուսումնական գործերից: Մտածում էի՝ արդյոք նպատակահարմա՞ր է խոսք բացել ղարաբաղյան թեմայով, թե՞ ոչ: Այնուամենայնիվ չկարողացա համբերել:

- Սուրե՛ն Ակոպովիչ,- ասացի,- Կիրովականում այդ ի՞նչ ժողով է եղել, որի ընթացքում բարձրացվել է Ղարաբաղի հարցը:

- Լուրը ձեր ակադեմիա նույնպես հասել է, հա՞:

- Այո՛,- ասացի:

- Իսկ ինչպե՞ս են ներկայացրել:

- Լսել եմ, որ Դուք դեմ եք եղել հարցի բարձրացմանը:

- Ինչպես երևում է, դու էլ էդ պրովոկատորներից ես: Ո՞ր հայ մարդը դեմ կլինի Հայաստանին Ղարաբաղի միավորմանը: Բայց պետք է հաշվարկել, թե արդյոք եկե՞լ է պահը հարցի պաշտոնական բարձրացման համար:

Եվ նա, արդեն բավական զայրացած, հետևյալ բացատրությունը տվեց.

- Դու կարծում ես, թե մենակ դուք եք հայրենասեր ու հայասեր, իսկ մենք արջի ականջում քնած ենք: Գործը կսկսեն այն ժամանակ, երբ համոզված կլինեն, որ այն ցանկալի արդյունք կբերի: Այստեղ հաշվի են նստում միայն ուժեղի հետ: Ադրբեջանը տալիս է երկրում արդյունահանվող նավթի հիմնական բաժինը: Նա հզոր է տնտեսապես: Հետևաբար վերին ղեկավարության մոտ նրա խոսքն ավելի ազդեցիկ է: Այս պայմաններում Ղարաբաղ պահանջելը նշանակում է դատարկ պարկուճով օդ կրակել: Որպեսզի մեր ասելիքը Կրեմլի ղեկավարության վրա ազդեցություն գործի, Հայաստանն իր արդյունաբերությամբ ու տեխնիկայով ոչ միայն պետք է հավասարվի Ադրբեջանին, այլև առաջ անցնի նրանից: Հիմա մեր գլխավոր խնդիրն է Հայաստանը դարձնել բարձր զարգացած արդյունաբերական երկիր: Մենք դրան կարող ենք հասնել և անպայման հասնելու ենք՝ նկատի ունենալով հայ ժողովրդի վիթխարի մտավոր կարողությունները: Իսկ դրա համար ժամանակ է պետք: Այլապես քեզ նման ծակ հայրենասերներով մենք երբեք Ղարաբաղը չենք ստանա:

- Բա ասում ենք, թե երկրի բոլոր ազգերը հավասար են: Էլ ի՞նչ հավասարություն, եթե բավական է նավթ ունենալը, որպեսզի բոլոր հարցերը Ադրբեջանը իր օգտին լուծի:

- Նորից քո էշն ես քշում: Դուք՝ ծակ հայրենասերներդ, ոչնչի չեք հասնի, եթե չփոխեք ձեր ուղեղը: Ներկայիս մեր հիմնական խնդիրն է ուժեղանալ, շարժվել և առաջ անցնել Ադրբեջանից:

- Ուրեմն ԽՍՀՄ-ը ուժեղի և թույլի փոխհարաբերությունների վրա՞ է կառուցված:

- Բա ի՞նչ ես կարծում,- եղավ պատասխանը: - Մենք հզոր ազգ ենք, դրա ապացույցը Հայրենական մեծ պատերազմին մեր ժողովրդի հերոսական մասնակցությունն էր: Այժմ մեր խնդիրը, կրկնում եմ, Հայաստանի հզորացումն է: Այդ դեպքում միայն մի քանի տարի հետո մեզ հետ հաշվի կնստեն լրջորեն:

Թովմասյանը մի պահ լռեց, վառեց հերթական ծխախոտը և շարունակեց.

- Ղարաբաղը մերը լինելու երկու ճանապարհ կա: Մեկը խաղաղ ճանապարհն է, որը մեզ նորանոր հաջողություններ է բերելու: Մյուս ճանապարհը պատերազմն է: Հիմա դուք՝ ծակ հայրենասերներդ, ուժի գործադրման պատրա՞ստ եք: Դրա համար դուք ազգային բանակ պիտի ունենաք, մի բան, որ ներկայումս ոչ միայն անհնար է, այլև անցանկալի: Հարևանների հետ խաղաղ համակեցության մեջ է մեր գալիք հզորության երաշխիքը:

Որոշ ժամանակ լուռ էինք: Լռությունից հետո նա ավելացրեց.

- Մենք, իհարկե, պիտի շարունակենք կենտրոնին մշտապես հիշեցնել Ղարաբաղի հայ բնակչության կարիքների մասին, պահանջենք, որ չխաթարվեն նրա սահմանադրական իրավունքները: Ներկա պայմաններում այլ բան հնարավոր չէ: Մյուս տարբերակը տանում է դեպի արյունահեղություն:

Ես հանրակացարան վերադարձա խառը զգացումներով: Սուրենի նկարագրած Հայաստանը բաղձալի էր, բայց ե՞րբ կլիներ դա, ե՞րբ կենտրոնի համար մենք ավելի կարևոր նշանակություն ձեռք կբերեինք, քան Ադրբեջանը:

Ես չգիտեի, որ հանրապետության ղեկավարի հետ իմ այդ խոսակցությունը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ նրա գլխին արդեն կուտակվել էին սև ամպեր: Անաստաս Միկոյանը շարունակում էր իր եռանդուն աշխատանքը Թովմասյանի դեմ:

Ոգեշնչված Միկոյանի տարած աշխատանքով՝ Թովմասյանին ընդդիմադիր գործիչները Հայաստանում, չնայած նրանց միջև եղած տարաձայնություններին, կարողացան արագորեն համախմբվել: Բանը հասավ բացահայտ առճակատման: Իրադարձությունները գաղտնի չէին մնում կենտրոնի համար, որն աստիճանաբար հակվեց Հայաստանում նոր ղեկավարություն ունենալու մտքին:

1960 թ. Սուրեն Թովմասյանը ազատվեց ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից: Նրան փոխարինեց Յակով Զարոբյանը:

Շատ չանցած՝ Թովմասյանը նշանակվեց Վիետնամում ԽՍՀՄ դեսպան: Այս պաշտոնում նա աշխատեց մինչև 1965 թվականը, որից հետո դեսպան նշանակվեց Լիբիայում: Հանձինս Վիետնամի առաջնորդ Հո-Շի-Մինի և Լիբիայի առաջնորդ Կադաֆիի՝ նա ուներ ջերմ բարեկամներ:

1970 թ. Թովմասյանն անցավ կենսաթոշակի: Երևան վերադառնալուց հետո սկսվեց նրա կյանքի ամենածանր շրջանը: Նա դեռ ֆիզիկապես ի վիճակի էր կատարելու օգտակար աշխատանք իր ժողովրդի համար, բայց հանրապետության ղեկավարությունն ամեն ինչ անում էր նրան հասարակական-քաղաքական կյանքից հեռու պահելու համար: Տեսնելով ղեկավարության նման վերաբերմունքը՝ Թովմասյանի աշխատանքային ընկերներից շատերը խուսափում էին նրա հետ շփվելուց: Այդ հանգամանքը նա ծանր էր տանում: Օրերն ամիսներ էին դառնում, ամիսները՝ տարիներ, բայց նա շարունակում էր փակված մնալ

տանը: Հանրապետության ղեկավարությունը, երեկվա իր ենթակաները նրան չէին նկատում: Այդ տարիներին ես բազմիցս խնդրել եմ Կարեն Դեմիրճյանին մի հարմար աշխատանք տալ նրան: Ստանում էի խոստումներ, որոնք մնում էին օդից կախված: Ազատվել էր Հանրային գրադարանի վարիչի տեղը, և ես կրկին խնդրանքով դիմեցի առաջին քարտուղարին, որ այդ աշխատանքը տրամադրի Թովմասյանին: Այդպես էլ ոչինչ չստացվեց:

Մնալով չորս պատերի մեջ փակված՝ նա հուշեր էր գրում, նաև թղթին էր հանձնում հայ գրողների ստեղծագործությունների մասին իր մտորումները: Կարգի էր բերում մեծարժեք անձնական արխիվը՝ հետագայում պահ տալու հանրապետության պետական արխիվին:

1980 թ. Սուրեն Թովմասյանը ուղեղի կաթված ստացավ: Մի կարճ ժամանակ անց հիվանդանոցում կնքեց մահկանացուն:

Հանրապետության ղեկավարությունն ամեն ինչ արեց Սուրենի հուղարկավորությունը աննկատ կատարելու համար: Ինչպես Յակով Զարոբյանի պարագայում, Թովմասյանի դեպքում նույնպես այդ ղեկավարությունը որոշել էր հանգուցյալի հոգեհանգիստը կատարել կենտկոմի կուսպատմության ինստիտուտում: Իմանալով այդ մասին՝ հանգուցյալի մարտական ընկերները տասնյակ հեռագրեր հղեցին Մոսկվա՝ ԽՄԿԿ կենտկոմի և խորհրդային կառավարության հասցեներով՝ պահանջելով միջամտել և թաղումը կազմակերպել հանգուցյալին արժանի պատիվներով:

Հանրապետությունից Մոսկվա հղած հեռագրերը իրենց դերը կատարեցին: Հանգուցյալի դին դրվեց Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում՝ վերջին հրաժեշտի համար: Հանգուցյալի մարմինը ամփոփվեց քաղաքային գերեզմանատանը:

Իսկ ի՞նչ եղան Ս. Թովմասյանի հսկա գրադարանը և նրա գրվածքները, որոնք վերաբերում էին հայ նշանավոր գրողների ստեղծագործությունների վերլուծությանը, ի՞նչ եղան նրա հուշերը, որոնք թանկագին մանրամասներ էին պարունակում Հայաստանի գրական կյանքի ընթացքի մասին հետպատերազմյան շրջանում...

Այս հարցը շատերին է հետաքրքրել, որոնք ժամանակին մեզ են դիմել պարզաբանումներ ստանալու համար: Ոմանք էլ տեսակետ են հայտնել, թե այդ անգին արխիվը, իբր, գտնվում է մեզ մոտ: Նշանավոր կուսակցական և գրական գործիչ Կարլեն Դալլաքյանը իր հուշերում շեշտել է, թե Թովմասյանի նշանավոր արխիվը հավանաբար գտնվում է Հրաչիկ Սիմոնյանի մոտ: Վարկածներից ոչ մեկը հիմնավորված չէ: Ամենայն հավանականությամբ այն ոչնչացվել է Սուրենի դստեր կողմից: Երբ սկսվել էր Արցախյան շարժումը, նա ընկել էր խուճապի մեջ՝ համոզված լինելով, որ դաշնակները, վերադառնալով Հայաստան, ֆիզիկական հաշվեհարդար են տեսնելու իր հոր ընտանիքի հետ: Նա կրակի էր տվել հոր հարուստ արխիվը, շտապով վաճառել հայրական բնակարանը և, վերցնելով միակ դստերը, ընդմիշտ հեռացել Հայաստանից՝ մշտական բնակություն հաստատելով Եվրոպայի ծայր արևմուտքում՝ Պորտուգալիայում:

Ահա այսպիսի բաներ:

ՄԻ ՔԱՆԻ ԴՐՎԱԳ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՑ

Առաջին հանդիպում

Անտոն Երվանդիչն է ինձ աշխատանքի ընդունել կենտկոմ՝ գաղափարախոսական գծով քարտուղար Ռոբերտ Խաչատրյանի երաշխավորությամբ:

Մինչ այդ աշխատում էի ՀԿԿ կենտկոմի կուսպատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: Արդեն գրել ու պատրաստում էի պաշտպանության ներկայացնել դոկտորական ատենախոսությունս, երբ ինձ հայտնի դարձավ, որ կենտկոմում աշխատանքի անցնելու առաջարկ է արվելու: Երկմտեցի:

Բանն այն էր, որ Անտոն Քոչինյանի և Սուրեն Թովմասյանի անձնական հարաբերությունները, մեղմ ասած, բարվոք չէին: Դա երկար պատմություն է, և հարկ չկա այստեղ խոսք բացել: Միայն ասեմ, որ Թովմասյանը մորս կողմից մոտ ազգական էր, և այդ մասին շատերը գիտեին:

Իմ կասկածները շուտով փարատվեցին: Ինձ հայտնեցին, որ կենտկոմից կանչում են: Ներկայացա պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Ստեփան Վարդանյանին, ով հայտնեց, որ ժամը 12-ին ընկեր Քոչինյանն ինձ ընդունելու է: Մինչ այդ՝ Գորիսի կուսշրջկոմում աշխատածս տարիներին, Անտոն Երվանդիչը մի քանի անգամ եղել էր մեր շրջանում, բայց ես առիթ չէի

ունեցել մոտիկից շփվելու նրա հետ: Հիմա տեսա ու համոզվեցի, թե որքան հասանելի է ժողովրդական այդ մեծ գործիչը: Երբ ես ներս մտա նրա աշխատասենյակ, ընկեր Քոչինյանը բարձրացավ տեղից, ընդառաջ եկավ ու ձեռքը մեկնեց: Նստեցինք: Անմիջապես բարեկամական մթնոլորտ ստեղծվեց:

Որոշ հարցուփորձից հետո Անտոն Երվանդիչը հարցրեց.

- Իսկ դու գիտե՞ս, թե քո հայրենի Շինուհայրը ձորերի խորխորատներից որքան արագ բարձրացրինք հարթավայր՝ «Հանդը»: Ընդամենը չորս տարում: Շատ աշխատասեր են ձերոնք: Նոր Շինուհայրն այնքան լավն է լինելու, որ դու էլ ցանկություն ես ունենալու այնտեղ տուն կառուցել:

Հիրավի, Շինուհայրը, հարևան Խոտ ու Հալիձոր գյուղերը ձորերից բարձրացնելու գործում շատ մեծ է եղել Անտոն Քոչինյանի դերը:

Շրջանի ընկերներից իմացել էի, որ Տաթևի հէկ-ի շինարարության համար Արարատից բերվող ցեմենտի մի նշանակալի մասը նրա ներքին կարգադրությամբ տրվում էր նշված գյուղերի բնակիչներին: Օգնություն էր ցուցաբերվում նաև տարբեր տեսակի շինանյութերով: Հանրապետության ղեկավարը մշտապես հետևում էր Տաթևի հէկ-ի շինարարությանը և նրա որակին: Քոչինյանի առաջարկով էր սկսվել նաև իր տեսակի մեջ եզակի ջրատարի շինարարությունը, որը թույլ կտար Որոտան գետի բարձրադիր ջրերով ոռոգելի դարձնել Գորիս քաղաքից արևելք ընկած գյուղերի հողերը:

Ռազմաճակատից վերադառնալուց հետո՝ 1946 թվականի ամռանը, Սուրեն Թովմասյանը եկել էր Գորիս և հյուրընկալվել մեր տանը:

Զրույցի ընթացքում խոսք էր բացվել հարազատ Շինուհայրի ծանր կյանքի մասին: Մինչև հիմա հիշում եմ նրա խոսքերը. «Եթե

շինուհայրցին շարունակի մնալ ծորում, նրա կյանքն ու կենցաղը չի փոխվի երբեք: Բայց համոզված եմ՝ մի տղամարդ կհայտնվի և գյուղը կբարձրացնի վերև»:

Այդ հանդուգն տղամարդը եղավ Անտոն Քոչինյանը:

Անտոն Երվանդիչը հարցրեց, թե ինչպես են ընթանում գիտական գործերս: Ասացի, որ ավարտել եմ դոկտորական աշխատանքս, որի վրա վերջին ճշտումներն եմ կատարում:

- Լավ է, շատ լավ է,- ասաց Քոչինյանը և ավելացրեց. – ուրախալի է...

Մի կարճ դադարից հետո հարցրեց.

- Դու ցանկություն կունենայի՞ր աշխատել մեզ մոտ:

Ես համաձայնություն տվեցի:

Տարիների ընթացքում կատարել եմ Անտոն Երվանդիչի անմիջական հանձնարարականները, որոնք հիմնականում վերաբերել են կարևոր փաստաթղթերի, որոշումների, զեկուցումների ձևակերպմանն ու խմբագրմանը:

Մեծ երազողը

Հանրապետության ղեկավարը հսկայական ջանքեր էր գործադրում Հայաստանի արագ առաջընթացն ապահովելու համար: Նա լավ գիտեր երկիրը: Տառապած ժողովրդի հոգսերը փարատելով՝ ուրախանում էր, ամեն հաջողությամբ ոգևորվում և տխրում, երբ ինչ-որ տեղ գործերը չէին ընթանում իր ուզածի պես: Անտոն Քոչինյանի վարած կենտկոմի բյուրոյի նիստերը իսկական դպրոց էին:

Պաշտոնի բերումով շատ տարիներ մասնակցել եմ այդ նիստերին, ականատես եղել նրա մարդկային բարձր որակների

դրսևորումներին: Հիշում եմ, բյուրոյի նիստերից մեկում քննարկվում էր վիճակագրական վարչության նախագահի հաշվետվությունը: Դա պատմական նիստ էր: Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման ցուցանիշները բարձր տրամադրություն էին առաջ բերել ներկաների մեջ: Քոչինյանին հատկապես ուրախացրել էր Հայաստանի ժողովրդագրական պատկերը. միութենական հանրապետությունների թվում բնակչության աճի ցուցանիշներով Հայաստանը գրավել էր առաջին տեղը՝ առաջ անցնելով ծննդաբերության ավանդական ցուցանիշներ ունեցող ԽՍՀՄ մահմեդական բոլոր հանրապետություններից:

Եղան բազմաթիվ ելույթներ: Իր ամփոփիչ խոսքում Քոչինյանն ասում էր, որ այդ ցուցանիշն արդյունք է հանրապետությունում ստեղծված զարգացած տնտեսության, այն բանի, որ մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով: Գալիքի Հայաստանը Անտոն Քոչինյանը տեսնում էր ավելի բազմամարդ ու ավելի հզոր: Հաշվարկները ցույց էին տալիս, որ առաջիկայում բնակչության թիվը կհատի 6 միլիոնի սահմանագիծը: Կենտկոմի առաջին քարտուղարը ոչ միայն հմուտ ու գործնական մարդ էր, այլև մեծ երազող էր: Ուստի ասում էր. «Մեր հանրապետության տարածքը մոտավորապես հավասար է Բելգիայի տարածքին, որտեղ ապրում է 8-10 միլիոն մարդ: Բայց մեր հողն ավելի բարեբեր է: Կգա ժամանակը, երբ Հայաստանում կապրի 10-12 միլիոն մարդ՝ բարեկեցության բարձր մակարդակով, իսկ երկիրը կկանգնի աշխարհի ամենազարգացած պետությունների շարքում»:

Բյուրոյի նիստից հետո մենք բոլորս առլեցուն էինք հպարտության զգացումներով:

Փորձանք

Նոր էի մտել աշխատասենյակ, երբ ընկեր Քոչինյանի քարտուղարուհին զանգահարեց ու խնդրեց անցնել Անտոն Երվանդիչի մոտ: Մտածում էի, թե ինչու է կենտկոմի առաջին քարտուղարն առավոտ շուտ ինձ իր մոտ կանչում: Ներս մտա, բարևեցի: Սովորականի պես ջերմ ընդունեց: Առաջարկեց նստել ու հարցրեց, թե ոնց է տրամադրությունս, ինչպես են գործերս: Պատասխանեցի, որ ամեն ինչ սովորականի պես է, աշխատանքային:

Հաջորդ րոպեին նա դարակից հանեց մի նյութ և, մեկնելով ինձ, առաջարկեց ծանոթանալ:

Դա Երևանից Մոսկվա ուղարկված հինգէջանոց մի դիմում էր՝ իմ դեմ ուղղված ամբաստանագիր:

Առաջին էջի վրա աչքիս ընկավ մի մակագրություն, որով Հայկոմկուսի առաջին քարտուղարին խնդրվում էր անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել և արդյունքների մասին հայտնել ԽՄԿԿ կենտկոմի կազմակերպչական բաժին:

Դիմումում ասված էր, որ ես, ղեկավարելով հանրապետության աշխատավորների շրջանում տարվող դասախոսական պրոպագանդան, իմ ենթակա աշխատողների հետ ամեն ինչ անում եմ հանրապետությունում տարածելու հակախորհրդային, հակակոմունիստական գաղափարներ, վարկաբեկելու կուսակցության քաղաքականությունը:

Ըստ որում, շեշտված էր, որ ես, մշտապես ստանալով կենտկոմի գաղափարախոսական գծով քարտուղար Ռոբերտ Խաչատրյանի և պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի վարիչ Ստեփան Վարդանյանի բացահայտ հովանավորությունը, մնում եմ անպատիժ:

Այնուհետև ամբաստանագրի հեղինակը գրում էր, որ իմ հակախորհրդային գործունեությունը պատահական չէ, և ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքին, որ իմ մայրական կողմի համարյա բոլոր տղամարդիկ եղել են կատաղի դաշնակցականներ և պայքարել են խորհրդային իշխանության դեմ: Հատկապես շեշտված էին տատիս եղբոր՝ Պատվական Շիրինյանի, նրա հորեղբոր տղայի՝ Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի անդամ Արշակ Շիրինյանի և քեռուս՝ Մխիթարի անունները:

Ես նկատում էի, որ դիմումը կարդալու ամբողջ ընթացքում Անտոն Երվանդիչը ուշադիր նայում է ինձ, հետևում դեմքիս արտահայտություններին: Դիմումի ընթերցումը վերջացնելուց հետո ընկեր Քոչինյանին ասացի, որ ամբաստանագրում նշված բոլոր փաստերը ճիշտ են, և որ ես հիմա դուրս կգամ ու անմիջապես աշխատանքից ազատվելու դիմում կներկայացնեմ: Այդ ասելով՝ տեղիցս վեր կացա: Անտոն Քոչինյանն էլ, թե՝ «Ա՛յ տղա, մի՛ տաքացիր, նստի՛ր: Էդ պրովոկատորը ոչ միայն քեզ է ցանկացել վարկաբեկել, այլև ուզել է հարվածի տակ դնել մեր կազմակերպությունը»: Ապա հարցրեց. «Քանի՞ տարի եղավ, որ աշխատում ես կենտկոմում»: Պատասխանեցի՝ երրորդ տարին է: «Ուրեմն,- ասաց նա հեգնանքով,- Հայաստանի կուսկենտկոմի աշխատողներից մեկը ամբողջ երեք տարի հանրապետությունում մղել է հակակոմունիստական քարոզչություն, իսկ մենք՝ բոլորս, քնա՞ծ ենք մնացել արջի ականջում: Ինչպես պետք է, մենք կպատասխանենք Մոսկվային: Նման սրիկաները քիչ չեն: Դու հանգի՛ստ մնա»:

Ապա Անտոն Երվանդիչը, ինձնից վերցնելով սուտ ամբաստանագիրը, պատռեց ու նետեց զամբյուղը:

- Գնա՛, մի՛ մտածիր,- ասաց ու ձեռքը մեկնեց:

Վերջալույսին

Անցան տարիներ: Անտոն Քոչինյանը թողել էր պաշտոնը: Շատ տասնամյակներ հանրապետությունում ակտիվ գործունեություն ծավալած պետական ու քաղաքական մեծ գործիչը մեկուսացվել էր: Ճիշտ է, նախկին գործակիցներից ու ընկերներից ոմանք երբեմն այցելում էին նրան, բայց կյանքի վերջին տարիները նա անցկացնում էր տանը՝ ընտանեկան շրջապատում: Ցավոք, այդպես էր մեզանում ստեղծված ավանդույթը: Գրիգոր Հարությունյանը պաշտոնազուրկ արվելուց հետո հալածվեց ու կյանքը վերջացրեց Թիֆլիսում: Սուրեն Թովմասյանը ստիպված գնաց հայրենիքից հեռու՝ օտար ափերում պաշտոնավարելու: Նա, հայրենիք վերադառնալով, կյանքի վերջին տարիներն անցկացրեց լքված ու մեկուսացված: Յակով Զարոբյանը պաշտոնաթողությունից հետո ստիպված էր հեռանալ հանրապետությունից և աշխատանքի անցնել Մոսկվայում: Անտոն Քոչինյանը թեև մնաց Հայաստանում, բայց մեկուսացված էր չորս պատերի մեջ:

Աշխատասենյակում էի: Հանկարծ դուռը բացվեց, և ներս մտավ սիրելի մարդը՝ Անտոն Քոչինյանը: Ես զարմացած անմիջապես տեղիցս վեր կացա, ընդառաջ գնացի և առաջարկեցի նստել:

Զրուցեցինք: Շատ էր փոխվել: Խունացել էին աչքերը, կամաց և ընդհատ-ընդհատ էր խոսում: Ինձ թվաց, թե շնչառությունը տեղը չէ:

Վերջապես հայտնեց գալու նպատակը. «Պարապ եմ,- ասաց,- փորձում եմ հուշեր գրել: Եթե հնարավոր է, խնդրում եմ՝ գրություն տաս, որ կուսարխիվում գտնվող «Խորհրդային Հայաստան» թերթի հավաքածուները նայեմ»:

Երբեմնի այդ հզոր մարդը երեկվա իր ենթակայից մի չնչին բան էր հայցում: Ես ապշել էի նրա օրինապահության վրա:

- Ի՜նչ եք ասում, ընկե՛ր Քոչինյան,- վրա բերեցի ես,- Դուք միայն ասացեք, թե թերթի որ տարիների համարներն են Ձեզ պետք, և ես հերթականությամբ մեքենայով կուղարկեմ ձեր տուն:

Ի դեպ, բավական երկար ժամանակ հենց այդպես էլ անում էի:

Անտոն Երվանդիչը սկսել էր հուշերը շարադրել: Տեղյակ չեմ՝ արդյոք վերջացրե՞ց, թե՞ մնացին կիսատ:

Ընկեր Քոչինյանի մահը, ինչպես հանրապետության ողջ բնակչությանը, այնպես էլ ինձ, շատ մեծ վիշտ պատճառեց: Այլևս մեզ հետ չէր Մեծ քաղաքացին և Մեծ հայը:

ՄԵՐ ՍԵՐՈՆ

Մեծ գրողը և հասարակական գործիչը վայելում էր Հայաստանի ողջ ժողովրդի անկեղծ սերը: Գործընկերներից քչերը կարող էին ունենալ այնպիսի վիթխարի գիտելիքներ, որ նա ամբարել էր իր մեջ: Բայց մարդկանց հատկապես գերում էին նրա անմիջականությունը և նվիրումը իր ժողովրդին ու երկրին: Ազգային շահերը նա վեր էր դասում ամեն ինչից, և եթե հարկ էր լինում, պատրաստ էր իրեն ենթարկել ամեն տեսակի փորձությունների:

Չնայած տարիքային զգալի տարբերություններին՝ տասնամյակներ շարունակ Սերո Խանզադյանի հետ ունեցել եմ ջերմ հարաբերություններ, եղբայրական սեր եմ տածել նրա հանդեպ, ուրախացել նրա մեծությամբ, հիացել նրա մարդկային հմայքով: Մեր անկեղծ բարեկամությունը շարունակվել է երկար տարիներ, մինչև նրա կյանքի ավարտը:

Հանդիպում գյուղինստիտուտում

Բաղրամյան փողոցով իջնում եմ՝ թիվ 1 դեղատնից գլխացավի դեղ գնելու: Հայաստանի գրողների միության շենքի առջև Սերոն զրուցում էր մի խումբ երիտասարդ գրողների հետ:

- Արա՛, խե՞ չես իրևում,- դիմելով ինձ՝ հարցրեց նա:

- Էս քանի օրը շատ զբաղված էի:

- Բա հիմա շտեղ ես քյնում ըտենց թայդի-թայդի:

- Մտնում եմ դեղատուն՝ ասկոֆեն գնելու:

- Ասկոֆենը հի՞նչ ա է ...

- Գլխացավի դեղ է, չգիտե՞ս:

- Հինչ գիդամ, ես ոչ մի դեղի անուն գյուդում չեմ: Հենց մի տեղս ցավում ա, Ժենյային ասում եմ, դեղ ա տալիս, ցավն անցնում ա: Դե՛ լավ, վեր ըտենց ա, քինա դեղն ա՛ռ և շուտ ե՛կ ըստեղ: Հեսա իր մեքենայով Խիկարն էլ ա կյալու, տեղ ենք քինալու: Մեր Միշան, Գյուլխասյանը, լավ ես ճանաչում, մեր զեմլյակն ա, կազմակերպել ա կոլեկտիվի հետ իմ հանդիպումը:

- Ախր աշխատանքի ժամ է, Սերո՛ Նիկոլաևիչ,- ասացի:

- Տատարկ-մատարկ խոսում միլ: Քինա՛, շո՛ւտ եկ:

Ես գնացի ու շտապ վերադարձա: Շուտով պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը իր մեքենայով կանգ առավ մեր դիմաց, և մենք՝ երեքով, գնացինք հանդիպման:

Գյուղատնտեսական ինստիտուտի դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Ներկաները փոթորկալի ծափերով դիմավորեցին մեծ գրողին ու հասարակական գործչին: Սերոն համաժողովրդական անհուն սեր էր վայելում, և այստեղ էլ բացառություն չէր կարող լինել:

Երբ դադարեցին երկարատև ծափերը, ռեկտոր Միքայել Գյուլխասյանը Սերոյին հրավիրեց բեմահարթակ: Բացման խոսքով հանդես եկավ ռեկտորը: Նա ներկաներին հակիրճ տեղեկացրեց, որ միջոցառումը կազմակերպված է ինստիտուտի ռեկտորատի և կուսակցական կազմակերպության բյուրոյի նախաձեռնությամբ, նվիրված է Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 60-ամյակին, ապա ձայնը փոխանցեց Սերոյին:

Բոլորն ակնապիշ հետևում էին, թե մեծ հոբելյանի կապակցությամբ ինչ է ասելու մեծ գրողը:

Սերոն մոտեցավ ամբիոնին, աջ ձեռքի մատներով սղալեց բեղերը և այսպես սկսեց իր ելույթը.

-Հարգելի՛ ժողովուրդ, լավ չեմ հիշում, թե երբ էր: 1920 թիվն էր... 1932 թիվը... 1947 թիվը... 1952 թիվը... Վերջը... Մի սովի տարի էր:

Ասելով այդ խոսքերը՝ նա կարճատև դադար առավ՝ իմանալու, թե ներկաները ըմբռնե՞լ են իր խոսքերի իմաստը, թե՞ ոչ:

Վայրկյաններ անց դահլիճը փոթորկվեց ծափերից: Բոլորը հասկացել էին գրողի ակնարկը: Ընդամենը չորս-հինգ բառով Սերոն տվել էր տասնամյակներ ընդգրկող ժամանակաշրջանին հարիր գնահատականը:

Զայրույթի պահին

Երեկո էր: Ընկերներով Սերոյի հետ Կարլ Գրիգորյանի տանն էինք՝ առատ սեղանի շուրջը: Փոխադարձ կենացներն ու կատակները վերջ չունեին: Նախօրյակին Սերոն արժանացել էր կառավարական հերթական բարձր պարգևի, և մենք հավաքվել էինք այդ ուրախալի առիթով: Բոլորիս տրամադրությունը բարձր էր: Այդ օրը մեծ գրողն իրեն գերազանցում էր կատակներով ու խոսքաշենությամբ:

Ահա այդ երջանիկ պահին էր, որ հնչեց հեռախոսի զանգը: Կարլը, որ շրջգործկոմի նախագահի տեղակալն էր, վերցնելով լսափողը և անցնելով մյուս սենյակ, մի քանի րոպե շարունակ լուռ լսում էր զանգահարողի բողոքը: Վերջինս հայտնում էր, որ

ադրբեջանցի անասնապահները, խախտելով օրինականությունը, իրենց նախիրները մտցրել են Հայաստանին պատկանող սահմանամերձ Սև լճի բոլոր կողմերը և, հակառակ հայ անասնապահների բողոքների, հայտարարում են, թե լիճը և նրա շրջակա տարածքներն իրենցն են:

Մեր բարձր տրամադրությունը չխաթարելու համար Կարլը հեռախոսալարի մյուս ծայրում գտնվողին պատասխանեց, որ ինքը հիմա ժամանակ չունի զբաղվելու դրանով և որ վաղն այդ մասին տեղյակ կպահի ղեկավարությանը:

Երբ Կարլը նստեց իր տեղը, Սերոն նրան հարցրեց.

- Էդ ո՞վ էր, որ էդքան գյալաջա էիր անում:

Կարլը միամտություն ունեցավ վերապատմելու եղելությունը: Սերոն լուռ լսում էր, ապա նրա դեմքի արտահայտությունը վայրկյանների ընթացքում չքացավ: Մենք երբեք նրան այդպիսի ամեհի զայրույթով չէինք տեսել:

- Ադրբեջանցի թուրքերը այդպես լկտիացել են, որովհետև դուք թուլամորթ եք,- բարձրաձայն գոչում էր Սերոն՝ ակնարկելով շրջանի ղեկավարությանը:- Եթե թուրքերը դիմում են ուժի և մեր ձեռքից խլում են մեր տարածքները, շատ լավ էլ անում են, տեղն ա ձեզ:

Այդ ասելով՝ նա Կարլից պահանջեց զանգահարել հեռախոսակայան, որ շտապ միացնեն ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարին:

Մինչ Կարլը զբաղված էր Սերոյի «կարգադրությունը» կատարելով՝ Մեծ գրողն ու Մեծ քաղաքացին ջղայնությունից չէր գտնում իր տեղը: Նա բարձրաձայն թուլամորթության մեջ էր մեղադրում ոչ միայն շրջանի, այլև հանրապետության ղեկավարությանը՝ «երկիրը թուրքին ծախելու» համար:

Քիչ անց հեռախոսակայանից հայտնեցին, որ կապի մեջ է կենտկոմի առաջին քարտուղարը: Վերցնելով լսափողը՝ Սերոն շարունակեց բարձրաձայնել իր զայրույթը՝ հանրապետության ղեկավարությանը մեղադրելով թուլամորթության և զիջողականության մեջ: Այդ րոպեին մեր առջև կանգնած էր միանգամայն ուրիշ Սերո Խանզադյան՝ պատրաստ հայրենի հողի մի պատառի համար զոհաբերելու իր ջերմ հարաբերությունները հանրապետության ամենաբարձր պաշտոնյայի հետ:

Մեկ-երկու օր անց մեզ հայտնի դարձավ, որ Լաչինի շրջանի ղեկավարությանը Բաքվից կարգադրություն է եղել՝ կովերի նախիրները ետ քաշել հայկական տարածքներից:

Հյուրասիրություն

Ձմռան մի խստաշունչ օր՝ Հայաստանի գրողների միության հերթական ժողովից հետո, Սերո Խանզադյանը դուրս է գալիս շենքից և տեսնում, որ երիտասարդ գրողներից չորսը հենց նոր նստում են ավտոմեքենա:

- Խոխե՛ք, սպասե՛ք,- ասում է նա,- ինձ տարե՛ք տոն, հետո իշտեղ օգում եք, քինացե՛ք:

Տղաներն անմիջապես վերադասավորվում են: Նրանցից երեքը տեղավորվում են մեքենայի հետնամասում, իսկ վարորդի կողքին նստում է Սերոն:

Երբ հասնում են գրողի՝ Նորքում գտնվող տունը, որը նա «Դաստակերտ» էր անվանում, մեքենայից իջնելիս տղաներին ասում է.

- Խոխե՛ք, տոն չեմ կանչում, համա վեր թոթը հսնի, անպայման ձեզ կնչելու եմ և մի լավ հյուրասիրեմ:

Տղաները շնորհակալություն են հայտնում և հեռանում:

Հուլիսի կեսերին, երբ գրողների միությունում նույն երիտասարդները կրկին հանդիպում են Սերո Նիկոլաևիչին, նրան հիշեցնում են թթի խոստումի մասին:

- Ասալ եմ, խոսքիս տերն եմ, տղե՛րք,- հաստատում է գրողը,- համա մեր թոթը շատ ուշ ա հսնում՝ օգոստոսի վերջին: Երբ հսնի, ձեզ անպայման կնչելու եմ:

Տղաները հեռանում են՝ կասկածը սրտներում: Նրանցից մեկն առաջարկում է ստուգել գրողի ասածը, և շատ շուտով նրանք պարզում են, որ սովորաբար հուլիսի վերջերին Նորքի այգիներում այլևս թութ չի լինում:

Պայմանավորվածության համաձայն՝ մի շաբաթ հետո նույն ընկերները հավաքվում են և մեքենայով ուղևորվում Նորք՝ հանկարծակիի բերելու համար գրողին:

Նույն օրվա երեկոյան Սերոն թութ ուտելու էր հրավիրել իր ընկերներից երեքին՝ Համո Սահյանին, Գևորգ Էմինին և «Հայաստան» հրատարակչության տնօրեն պրոֆեսոր Խիկար Բարսեղյանին:

Տեղ հասնելով՝ տղաները ծեծում են Սերոյի տան դարպասի դուռը: Հայտնվում է ինքը՝ մեծ գրողը, և հանկարծակիի գալիս, կանգնում կատարված փաստի առաջ:

«Բա հո՜, էս շան տղի լակոտները խաթա են: Մի պան էր, ղալաթ ըրինք՝ ըսեցինք, կրակն ինգա՞նք: Ծառին մի թոթ չեն թողնելու ընկերանցս համար»,- մտմտում է նա:

Բայց ուրիշ ելք չկար:

- Համեցե՛ք, խոխե՛ք, ապրե՛ք, որ եկալ եք,- ասում է Սերոն և տղաներին ներս հրավիրում:

Տղաները ներս են մտնում:

- Խոխեք հո՞ւնց եք, հո՞ւնց չեք,- հարցնում է նա և առաջարկում նստել տան մուտքից ձախ գտնվող նստարանին:

Տղաները տեղավորվում են նստարանին:

- Հոգնած կլինեք, մի քիչ դինջացեք, հետո կպիցիրանաք ծառը և մի լավ թոթ կոտեք,- ասում է նա:

Տղաները զղջում են, որ գրողի առատաձեռնության մասին կասկածներ են ունեցել:

«Էս շան լակոտները ծառին մի թոթ չեն թողնելու»,- դարձյալ մտածում է Սերոն և ստեղծված դրությունից դուրս գալու ելք է փնտրում:

Մի չորս-հինգ րոպե հետո վերջապես որոշում է իր անելիքը: Դիմելով տղաներին՝ ասում է.

- Խոխե՛ք, թա հանգստացել եք, քինացե՛ք պիցիրացե՛ք ծառը: Համա խնդրում եմ՝ շատ զգուշ լինեք, երեկ ծառի տակին երկու սև օձ եմ տեսալ: Զգո՛ւշ եղեք, հա՜, գլխներիս օյին չիկա ...

Այս խոսքերի վրա տղաները սարսափից մեխվում են տեղում, ապա հաջորդ վայրկյանին պոկվում են ու իրար հետևից սլանում դարպասներից դուրս:

- Հո՞ր եք քինում, ա՜ խոխեք,- կանչում է Սերոն նրանց հետևից: - Օձը ձեզ հի՞նչ պիտի անի ...

Բայց խոխեքը, արագորեն թափվելով մեքենայի մեջ, անհետացել էին Նորքից քաղաք իջնող Ճանապարհի ոլորաններում:

Պատմել է Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը:

Գորիս քաղաքի վերնամասերից մեկում՝ մի գեղեցիկ տափարակի վրա, Սերո Խանզադյանը կառուցել էր մի հսկա ու շքեղ առանձնատուն: Կառուցել էր գերազանցապես պետական ու հասարակական միջոցներով՝ շրջանի ղեկավար մարմինների աջակցությամբ, կարելի է ասել՝ նրանց թափած ջանքերով: Սերոն Գորիսի հպարտությունն էր, և ոչ ոք չէր կարող որևէ հարցում նրան մերժել:

Անցնում է մի քանի տարի, և շենքը վերանորոգելու ու վերակառուցելու կարիք է առաջանում: Պետք էր բարեկարգել նաև շրջապատը: Հաշվարկները ցույց էին տվել, որ անհրաժեշտ են լինելու հսկայական միջոցներ: Չնայած դրան՝ դժվարությունների առջև Սերոն չէր ընկրկում, համոզված էր, որ շրջանի ղեկավարությունը, ինչպես նախկինում, հիմա նույնպես աջակից է լինելու իրեն:

Կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը նոր էր մտել աշխատասենյակ, երբ քարտուղարուհին հայտնում է, որ քիչ առաջ Սերո Խանզադյանը զանգահարել է և լուր տվել, որ գալիս է տեսակցելու քարտուղարին:

Շրջկոմի քարտուղարը, որն արդեն լսել էր գրողի շինարարական նոր ծրագրերի մասին, անմիջապես գլխի է ընկնում, թե ինչ հարցով է գրողն իր մոտ գալիս:

Քիչ անց Սերո Նիկոլաևիչը մտնում է Ռոբերտի աշխատասենյակ: Ողջագուրվելուց և մի քանի ջերմ խոսքեր փոխանակելուց հետո գրողը գրպանից հանում է շինանյութերի մի երկար ցուցակ և մեկնում շրջկոմի քարտուղարին: Ռոբերտը կարդում է

և ապշում: Սերոն պահանջում էր այնքան շինանյութ, որը կբավականացներ մի նոր հսկա շենք կառուցելուն՝ 40 տոննա ցեմենտ, 80 մեքենա ավազ, 100 խորանարդ մետր շինանյութ, 300 կգ մեխ և բազմաթիվ այլ բաներ: Այս բոլորը, իհարկե, պետության հաշվին: Այդ բոլորը քիչ էր, նա պահանջում էր նաև քսան-երեսուն օրով մի 20-25 աշխատող տրամադրել իրեն, իհարկե դարձյալ պետության հաշվին: Շրջկոմի քարտուղարը զարմացած կմկմում է, դժգոհության նշաններ ցույց տալիս և նույնիսկ փորձում մերժողական պատասխան տալ, բայց իրեն զսպում է և մտածում, թե ոնց է դուրս գալու այդ հսկա բեռան տակից:

- Մի բան կանենք,- վերջապես ասում է նա:

Ստանալով շրջկոմի քարտուղարի ցածրաձայն պատասխանը՝ Սերոն մի քանի փաղաքշական խոսքեր է ասում նրա հասցեին և, տեղից բարձրանալով, «ցտեսություն» ասելով, ուղղվում դեպի դուռը: Վայրկյաններ անց, դռների արանքում շուռ գալով դեպի քարտուղարը, Սերոն հարցնում է.

- Ռոբերտ ջան, էլ ինչո՞վ կարող եմ քեզ օգտակար լինել:

Ռոբերտը զարմանքից հազիվ կմկմում է.

- Շնորհակալություն, Սերո՛ Նիկոլաևիչ:

Մեծ գրողը Անդրանիկ զորավարի մասին

1996 թվականին նոր էր լույս տեսել զորավար Անդրանիկի կյանքին ու գործունեությանը նվիրված իմ «Անդրանիկի ժամանակը» երկու մասից բաղկացած աշխատությունը: Առաջին մարդը, որին նվիրեցի գիրքը, Սերո Խանզադյանն էր: Ինձ շատ հե-

տաքրքիր էր իմանալ աշխատության մասին նրա կարծիքը, քանզի իր ստեղծագործություններում նա բազմիցս անդրադարձել էր զորավարի գործունեությանը, հատկապես նրա մղած կռիվներին Զանգեզուրում: Ինչպես ամեն գորիսեցի, այնպես էլ Սերոն հպարտանում էր, որ Անդրանիկը զանգեզուրցիների հետ է եղել թուրք-թաթարների դեմ կենաց ու մահու պայքարի ճակատագրական օրերին, հպարտությամբ պատմում էր իր այն հայրենակիցների մասին, որոնք մեծ զորավարի արժանավոր զինվորներն են եղել: Զանգեզուրում Անդրանիկ զորավարի գտնվելու օրերից անցել էին տասնյակ տարիներ, բայց նրա հիշատակն անթառամ էր մնացել գորիսեցիների սրտում ու գիտակցության մեջ:

Մի շաբաթ չէր անցել, երբ Սերոն հեռախոսով կապվեց ինձ հետ և խնդրեց բարձրանալ «Դաստակերտ»:

Հարազատ ընկերոջս՝ Կիմ Թաթարյանի հետ մեկնեցինք Սերոյի մոտ: Հիվանդ էր, շատ էր նիհարել, խամրել էին գեղեցիկ աչքերը: Մեզ տեսնելով՝ նա շատ ուրախացավ և մի պահ մոռացության տվեց իր վիճակը: Հասցրել էր մի քանի օրում կարդալ մեծածավալ (1611 էջ) գիրքը: Կարդացել էր նաև տիկին Ժենյան: Շատ գոհ էին մնացել:

- Չնայած առողջական վիճակս բանի նման չէ,- ասաց Սերոն,- բայց անպայման գրքի մասին գրախոսական պիտի գրեմ՝ ինձ պատճառած մեծ բավականության համար:

Մեծ գրողին այս այցելությունը վերջինը եղավ: Չնայած առողջական ծանր վիճակին՝ նա հասցրել էր գրել ընդարձակ մի գրախոսական և տպագրել «Հայք» թերթում՝ «Պատմագիտական հզորություն» խորագրով: Ժենյան ինձ պատմել է, որ այդ գրախոսականը Սերոյի վերջին գրվածքն է եղել:

Երբ թաղումից հետո վերադարձել էի տուն, այդ օրն իսկ կարիք էի ունեցել թղթին հանձնելու մի քանի տող՝ արտահայտելով իմ եղբայրական զգացումները մեծ գրողի և մեծ քաղաքացու նկատմամբ: Իմ անձնական արխիվում մնացած այդ տողերը տարիներ անց ևս հանձնում ենք ընթերցողի ուշադրությանը:

Սրբացած անուն

Սերո Խանզադյանի
թանկագին հիշատակին

Չկա այլևս մեծ վարպետը գրչի,
Չկա իմաստուն, խոսքաշեն այրը,
Փառք ու պարծանքն էր նա Զանգեզուրի,
Անհաս էր ինչպես Իշխանասարը:

Մաքուր հոգիդ համբարձվեց
Ու սլացավ տիեզերք,
Քո անունը սրբացվեց,
Չենք մոռանա քեզ երբեք:

Սերոյի մահվան հետ երկար ժամանակ չէի հաշտվում: Մեզանից ընդմիշտ հեռացել էր Մեծ հայը, գրչի անխոնջ մշակը, անփոխարինելի ընկերը:

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Բացառիկ ինտելեկտուալը

Նա ձեռք էր բերել Հայաստանի ամենաինտելեկտուալ մարդու համբավը:

Կրթված էր, տիրապետում էր լեզուների:

Հզոր էր նրա միտքը: Ռուս և համաշխարհային գեղարվեստական գրականության փայլուն գիտակ էր, մեծ սեր ուներ ռուսական և գերմանական փիլիսոփայական ու կրոնաբարոյագիտական գրականության նկատմամբ: Լինելով պատմաբան-քաղաքագետ՝ վիճաբանում էր ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչների հետ և եռանդով պաշտպանում իր տեսակետները:

Ով շփվել էր նրա հետ, զարմանում էր, թե այդ մարդն ինչպես է հասցրել իր ուղեղում կուտակել այդքան բազմաբնույթ գիտելիքներ:

Այդ ամենին գումարվել էր նրա հռետորական փայլուն տաղանդը: Իր ճարտասանությամբ գերում էր բոլորին: Ձեռքի հետ պաշտպանել էր թեկնածուական ատենախոսություն, որի ընդդիմախոսներից մեկը ես էի եղել, հետո դարձել էր գիտությունների դոկտոր: Մի շատ արժեքավոր գիրք էր գրել:

Այդ մեծատաղանդ մարդը Հայաստանի կոմկուսի կենտկոմի գաղափարախոսության գծով քարտուղար Ռոբերտ Խաչատրյանն էր:

Ռոբերտ Հրաչիկովիչը այնպես էլ չէր կարողանում հաշտվել կենտկոմում տիրող աշխատանքային խիստ կարգապահության հետ: Նա սովորաբար աշխատանքի էր գալիս առավոտյան ժամը 11-ից ոչ շուտ: Կենտկոմի բաժնի վարիչներն ու հրահանգիչները, երբ շտապ գործ էին ունենում, առավոտյան հավաքվում էին նրա ընդունարանում և սպասում, իսկ նա չկար ու չկար: Ռոբերտին սպասում էին նաև կենտկոմի մյուս քարտուղարները, եթե նրա հետ կարևոր խնդիր էին ունենում: Ոչ ոք չէր դժգոհում. բոլորը գիտեին, որ ամբողջ գիշեր նա կարդում է և պառկում է քնելու լուսադեմին:

Տաղանդավոր հաշտարարը

Ռոբերտը մարդկանց հմայելու մեծ տաղանդ ուներ:

Այն ժամանակներում հաճախ էին անձնական հարաբերություններ պարզում արվեստի աշխատողները: Գոհար Գասպարյանի և Օհան Դուրյանի միջև կատու էր անցել: Վերջինս Գոհարին մեղադրել էր, թե նա ինչ-որ դերերգ սխալ է կատարում: Մեծ երգչուհին անսահման վրդովվել էր, իսկ Դուրյանը՝ պնդել իրենը: Մշակույթի նախարարությունում չէր հաջողվել նրանց հաշտեցնել, և հարցը հասել էր կենտկոմ:

Ես Ռոբերտի մոտ էի, երբ միջանցքից աղմուկ լսվեց: Բարձրաձայն վիճելով՝ երկու մեծերը մտան ընդունարան և անմիջապես խուժեցին կենտկոմի քարտուղարի աշխատասենյակ՝ ոտքի վրա շարունակելով անձնական վիրավորանքները, բարձրաձայն մեղադրանքները: Ուզում էի դուրս գալ, բայց Ռոբերտը պատվիրեց նստել: Նա հարայհրոցին դեռ չէր միջամտում:

Վերջապես Գոհարն ու Դուրյանը հանդարտվեցին: Կենտկոմի քարտուղարը նրանց հրավիրեց նստելու, ապա ծայր առավ նրա բարոյախրատական երկարաշունչ քարոզը:

Ռոբերտը սկսեց նրանից, որ Վիեննայի հռչակավոր Պալատական օպերային թատրոնում հազար ութ հարյուր այսինչ թվականին այսինչ դիրիժորը և այսինչ պրիմադոննան (կոնկրետ նշում էր անունները) երկար ժամանակ բանակռիվների մեջ են եղել, որի հետևանքով հռչակավոր թատրոնը տևական ժամանակ կորցրել է իր հմայքը:

Օպերային արվեստին վերաբերող կենտկոմի քարտուղարի երևի կես ժամ տևած բոցաշունչ ելույթը շշմեցրել էր հակառակորդներին: Նրանք սսկվել էին ու նվաղել: Միայն դրանից հետո Ռոբերտն անցավ գործի՝ խնդրին անդրադառնալով ըստ էության:

Կենտկոմի քարտուղարը հերթականությամբ ձայն տվեց նախ Գոհարին, ապա Դուրյանին: Հիմա նրանք, իրար ընդմիջելով, հանգիստ խոսում էին իրենց դժգոհությունների պատճառների մասին: Ռոբերտը սիլլոգիզմի կանոններով բռնում էր նրանց տրամաբանության հակասությունները, ապացուցում բերած փաստերի ոչ էական, անցողիկ լինելը: Խստորեն պահպանելով պարիտետը՝ ասում էր. «Դու ճիշտ ես, դու էլ ես ճիշտ», կամ՝ «Դու սխալ ես, դու էլ ես սխալ»: Դրանով իսկ նա հաշտության հող էր նախապատրաստում:

Ի վերջո, հայոց արվեստի երկու աստղերը հանգեցին այն եզրակացության, որ իրենց ոչ բարեկամական հարաբերությունները վտանգի տակ են դնում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի ողջ կոլեկտիվի աշխատանքը: Նրանք այդ բանը չէին կարող թույլ տալ և հաշտության ձեռք մեկնեցին մեկմեկու:

Զրպարտիչներին պատժելու ուղիղ ճանապարհը

Երևանում կար մարդկանց մի խումբ, որի որոշ անդամներ արհեստ էին դարձրել դիմումների հղումը ԽՄԿԿ կենտկոմ՝ բողոքելով, թե հանրապետությունում իշխում են ազգայնական տրամադրություններ, որոնց նկատմամբ չեն ձեռնարկվում անհրաժեշտ միջոցներ: Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարին Մոսկվայից գրավոր տեղյակ էր պահվում այդպիսի դիմումների բովանդակության մասին՝ խնդրելով համապատասխան միջոցներ ձեռնարկել: Առաջին քարտուղարն էլ իր հերթին էր գաղափարախոսության գծով քարտուղարին գրավոր հանձնարարում հանդիպում ունենալ Մոսկվա հղած նամակների հեղինակների հետ և լսել նրանց: Սակայն Ռոբերտը չէր հրավիրում և ընթացք չէր տալիս: Գրավոր հանձնարարականները նա նետում էր իր գրասեղանի գզրոցների մեջ: Դրանցում սովորաբար հանգրվանում էին նաև իր հասցեով ստացված նույնաբնույթ դիմում-բողոքները:

Եվ ահա յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջին շաբաթվա առաջին օրը Ռոբերտ Խաչատրյանն իր մոտ էր կանչում ենթակա բաժինների վարիչներին, իսկ սրանց բացակայությամբ՝ նրանց տեղակալներին: Օգնության կանչելով իր քարտուղարուհուն՝ նրանք երկուսով գրասեղանի աջ ու ձախ դարակներից հանում էին ամբողջ տարվա ընթացքում կուտակված մի քանի տասնյակ նամակները: Միաժամանակ չէր մոռանում բաժինների աշխատողներին հանդիմանել, թե նրանք անհրաժեշտ հոգատարություն չեն ցուցաբերում աշխատավորների դիմում-բողոքներին: Նա ներկաներին խիստ հրահանգում էր իր դարակներից հանած նամակները կարդալ և վերցնել իրենց բաժիններին վերաբերողները, ապա խստորեն հրամայում էր դրանցով շտապ, և

որ շատ կարևոր է, մեծ հոգատարությամբ զբաղվել ու մինչև տարեվերջ պատասխանել դիմում-բողոքների հեղինակներին:

Բաժիններում գործը եռում էր: Կանչում էինք դիմումատուներին և լսում նրանց բողոքները: Բանից պարզվում էր, որ կյանքի ընթացքն ինքն-իրեն լուծել էր բարձրացված հարցերի մեծ մասը, իսկ մնացած նամակներով զբաղվելը տեղափոխվում էր հաջորդ տարի:

Մի աշխատության ոդիսականը

Շատ հաճախ դիմում-բողոքների բախտին էին արժանանում նաև խմբագրություններից և հրատարակչություններից ուղարկված հոդվածներ ու մեծածավալ աշխատություններ:

Մի անգամ «Լույս» հրատարակչությունը հրատարակել էր պատմության դպրոցական դասագիրք՝ փաստական և այլ կարգի բազմաթիվ սխալներով: Աղմուկ էր բարձրացել:

Ռոբերտ Խաչատրյանը «Լույս» հրատարակչության տնօրեն Սոս Մովսիսյանին և «Հայաստան» հրատարակչության տնօրեն Հրանտ Ղազարյանին գրավոր կարգադրություն էր իջեցրել՝ ուժեղացնել պահանջկոտությունը հեղինակների նկատմամբ և բացառել անորակ գրքերի ու դասագրքերի հրատարակումը:

Այս առիթից օգտվելով՝ առանց այն էլ հրատարակչություն ներկայացված ձեռագրերը հաճախակի մերժող Ղազարյանն ավելի էր բարդացրել հեղինակների գործը:

Կարծես քիչ էր, որ գրքերը այն ժամանակներում լույս էին տեսնում պետության միջոցներով, նաև դրանց հեղինակները ստանում էին մեծ հոնորարներ: Հրատարակչությունները ձեռա-

գրերի հեղինակներին ներկայացնում էին միայն մի պահանջ՝ բարձր որակ:

Իր աշխատության ձեռագիրը «Հայաստան» հրատարակչություն էր ներկայացրել լուսավորության նախարարության ինստիտուտներից մեկի տնօրենը:

Հրանտը մերժել էր տպագրել: Աշխատության հեղինակը նամակ-բողոք էր գրել կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Ստեփան Վարդանյանին: Վերջինիս պահանջով աշխատության ձեռագիրը հրատարակչությունից ուղարկել էին բաժին: Վարդանյանն ինձ էր հանձնարարել ծանոթանալ ձեռագրին: Ես կարդացել էի և Հրանտ Ղազարյանի պատճառաբանությունները համարել ճիշտ: Աշխատությունը նվիրված էր Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի դպրոցական կյանքի պատմությանը: Հեղինակին չէր հաջողվել հավուր պատշաճի ներկայացնել թեման: Հիմնականում օգտագործել էր միայն Բիթլիսի և Վանի նահանգների դպրոցների վիճակագրական տվյալները: Կային նաև բովանդակային թերություններ ու բացեր:

Իմ բացասական կարծիքը՝ բաժնի վարիչի ստորագրությամբ, հրատարակչություն ուղարկելուց հետո հեղինակը դիմում-բողոք էր ներկայացրել կենտկոմի՝ գաղափարախոսության գծով քարտուղարին:

Անցել էին ամիսներ, բայց խեղճը պատասխան չէր ստացել և ստիպված դիմել էր կենտկոմի առաջին քարտուղարին: Անտոն Երվանդիչը դիմումը մակագրել էր Խաչատրյանին և խնդրել շտապ ընթացք տալ, բայց սայլը տեղից չէր շարժվել. ձեռագիրը մնացել էր բաժնում: Գիշերները Բուլգակով, Նիցշե, Ալեքսանդր Բլոկ կարդացող Ռոբերտը հազիվ թե թերթեր մի անհամ ձեռագիր:

Դարձյալ գլորվել էին ամիսներ, և ձեռագրի հեղինակը դարձյալ բողոքի նամակ էր հղել Քոչինյանին: Վերջինս դիմումի վրա մոտավորապես այսպիսի մակագրություն էր արել. «Ռոբե՛րտ, խիղճ ունե՞ս, մի՛ տանջիր այդ մարդուն: Անպայման կարծի՛ք տուր»:

Այս անգամ Խաչատրյանը կարծես տրամադրվել էր: Նա ինձ կարգադրեց իրեն ներկայանալ ձեռագրով: Սկսեց թերթել, որը տևեց հինգ-վեց րոպե: Ձեռագիրը մի կողմ դնելով՝ ինձնից պահանջեց իրեն հաղորդել այնտեղ եղած էական թերությունները: Ես նշեցի երկուսը և փորձում էի շարունակել, բայց նա բավարար համարեց:

- էդ կլյաուզնիկին կանչի՛ր և ժամը երկուսին հետդ բե՛ր,- կարգադրեց նա:

Ի՞նչ կլյաուզնիկ. մարդը իր իրավունքների համար էր պայքարում:

Կանչեցի, գնացինք: Ռոբերտը բողոքավորին առաջարկեց նստել:

- Մենք ուշադիր կարդացել ենք Ձեր աշխատության ձեռագիրը,- ասաց կենտկոմի քարտուղարը:

Երբ ասաց «մենք», դիմացինը գլխի չընկավ՝ նա նույնպե՞ս կարդացել է, թե՞ ոչ:

Եվ սկսվեց մի իսկական ներկայացում: Բավական էին եղել ձեռագրի էջերի հինգ-վեց րոպե թերթելը և իմ հայտնած երկու թերությունները: Ռոբերտն ավելի քան կես ժամ նյութի այնպիսի իմացությամբ էր ջարդուփշուր անում գրվածը, որ հեղինակը բերանբաց լսելուց հետո ձեռագիրը վերցրեց և հեռացավ:

Ձեռագրի հետագա Ճակատագիրն ինձ անհայտ մնաց:

Բոցաշունչ հռետորը

Ընդմիջման ժամ էր: Աշխատասենյակից դուրս եկա ու միջանցքում հանդիպեցի Ռոբերտ Խաչատրյանին:

- Ո՞ւր ես գնում,- հարցրեց:

- Գնում եմ ճաշարան,- պատասխանեցի:

- Ես որ ընդմիջման չեմ գնում, չի՞ լինում,- հանդիմանեց նա:

Ես հո չէի կարող ասել, թե, ախր, Դուք սովորաբար տնից աշխատանքի եք գալիս ընդմիջումից հետո միայն:

- Կգա՞ս հետս,- հարցրեց:

- Ո՞ւր ենք գնում,- հետաքրքրվեցի:

- Կգնանք, կիմանաս,- կարճ կապեց նա:

Գնում էինք հանրապետական ավտոմոբիլային տրանսպորտի նախարարություն: Կենտկոմի՝ արդյունաբերության ու տրանսպորտի գծով քարտուղարը հիվանդացել էր, և Անտոն Երվանդիչը Ռոբերտին էր խնդրել գնալ ու մասնակցել նախարարության տարեկան ամփոփիչ ժողովին: Այդ օրը Ռոբերտի ծառայողական մեքենան ստուգման էին կանգնեցրել, ուստի նա ավտոմոբիլային տրանսպորտի նախարար Աղա Աղաբաբովին խնդրել էր ուղարկել իր անձնական սպասարկման ավտոմեքենան:

Իջանք բակ և ուղևորվեցինք նախարարություն, որը գտնվում էր ներկայիս քաղաքապետարանի տարածքում:

Նստելով վարորդի կողքին՝ կենտկոմի քարտուղարը նրան պատվիրեց ընթանալ դանդաղ և հնարավորինս արագ պատասխանել իր հարցերին:

Հարցերը վերաբերում էին նախարարությունում աշխատանքային կարգապահությանը, ղեկավարության աշխատաոճին,

մարդկային փոխհարաբերություններին, քաղաքական տրամադրություններին և այլն:

Տեղ հասնելով՝ մենք նախ մտանք նախարար Աղաբաբովի մոտ: Նախարարության ղեկավար աշխատողները սպասում էին կենտկոմի քարտուղարի գալստյանը: Մի քանի րոպե տևած հարցուփորձից հետո մենք մտանք դահլիճ:

Ժողովն անցնում էր բուռն քննադատությունների մթնոլորտում, որն այն ժամանակներում համարվում էր աշխատանքային կոլեկտիվների քաղաքական հասունության վկայություն և ամեն կերպ խրախուսվում էր վերևներից: Նախարարության շարքային և պատասխանատու աշխատողներն իրենց ելույթների ժամանակ խոսում էին դրական աշխատանքների մասին, միաժամանակ բարձրացնում էին բազմաթիվ ցավոտ հարցեր, որոնք խոչընդոտում էին աշխատանքների ճիշտ կազմակերպումը:

Ինչպես ընդունված էր, ժողովի վերջում նախագահողը ձայնը փոխանցեց կենտկոմի ներկայացուցչին՝ եզրափակիչ ելույթի համար:

Ես մտածում էի, թե իր գիտակցական ողջ կյանքում հումանիտար խնդիրներով զբաղված հզոր ինտելեկտուալն ինչ պիտի ասի ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում տասնյակ տարիներ աշխատող մասնագետներին, ինչ անհրաժեշտ ցուցումներ է տալու նրանց, որ չառաջացնի հեգնանք ու տարակուսանք:

Մոտենալով ամբիոնին՝ Ռոբերտը սկսեց բոցաշունչ մի ճառ, որը տևեց շուրջ կես ժամ: Ճանապարհին նախարարի վարորդից ընդամենը մի քանի րոպեում ստացած տվյալների հիման վրա այդ մեծատաղանդ մարդն ամենայն գործիմացությամբ բացահայտեց նախարարության աշխատանքներում տեղ գտած հիմ-

նական թերությունները, տվեց կատարված աշխատանքների ճշգրիտ գնահատականը: Դահլիճը քար լռությամբ և հսկայական հետաքրքրությամբ էր ունկնդրում կենտկոմի քարտուղարի ելույթը: Շատերն ապշած էին, թե նա մասնագիտական ինչպիսի խոր գիտելիքներ ունի ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառից:

Էստոնացի բարեկամս հայ մեծ հռետորի մասին

Լրացել էր Էստոնիայում խորհրդային իշխանության հաստատման 30-ամյակը: Հանդիսավոր նիստում ողջույնի խոսքեր ասելու համար, ինչպես այն ժամանակներում ընդունված էր, հրավիրել էին միութենական բոլոր հանրապետություններից ներկայացուցիչներ: Հայաստանից ուղարկել էին Ռոբերտ Խաչատրյանին:

Օրերից մի օր հեռախոսը զնգաց: Մոսկվայում սովորելու տարիների իմ մոտ ընկերներից մեկն էր՝ էստոնացի Առնոլդը: Նա արդեն դարձել էր Տալլինի համալսարանի ռեկտոր և Երևան էր եկել ինչ-որ գործով: Գնացի «Երևան» հյուրանոց՝ նրան հանդիպելու: Ողջագուրվեցինք և մի քանի ջերմ խոսքեր ասելուց հետո նստեցինք զրույցի: Շատ չանցած՝ նա հարցրեց.

- Слушай, ваш секретарь ЦК Роберт Хачатрян сейчас в Ереване?

- Да,- պատասխանեցի,- что случилось?

- Знаешь что,- շարունակեց նա,- уже прошло два месяца, как отметили юбилей нашей республики, но участники нашего торжественного собрания до сих пор находятся под впечатлением выступления вашего секретаря. Боже мой, какой он умница, какой талант.

Լսելով բարեկամիս՝ ես հպարտանում էի, որ մեր ժողովուրդը կյանք է տվել այդպիսի հանճարեղ մարդու:

Անծանոթ ունկնդրի հիացմունքը

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը 1969 թ. լայնորեն նշվել էր նաև Մոսկվայում:

Բազմաթիվ միջոցառումներ անցկացնելուց հետո Սյունաբարդ դահլիճում կազմակերպվել էր եզրափակիչ հանդիսավոր նիստ: Զեկուցող էր նշանակված եղել Ռոբերտ Խաչատրյանը: Ինչպես միշտ, այստեղ նույնպես նա փայլել էր իր անուրանալի տաղանդով:

Ինձ պատմել է հանդիսավոր նիստին մասնակցած կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը:

Երբ Ռոբերտը վերջացրել է զեկուցումը, բուռն ու երկարատև ծափահարություններից հետո առաջին շարքում նստած տարիքն առած մի պատկառելի մարդ, շուռ գալով դեպի Միրզոյանը, հարցրել է, թե այդ մարդու համար ովքեր են զեկուցումների տեքստեր գրում: Միրզոյանը պատասխանել է, որ նա երբեք իրեն նման բան թույլ չի տա: Մարդը մի պահ լռել է, ապա շարունակել է.

- Ուզում եմ Ձեզ հավաստիացնել, որ իմ երկարատև կյանքի ընթացքում Տրոցկուց հետո սա երկրորդ մարդն է, որ իր արտասանական արվեստով ապշեցրեց ինձ:

Էդիկը հարցրել է.

- Կարելի՞ է իմանալ, թե ով եք Դուք:

- Սերգո Օրջոնեկիձեի եղբայրն եմ,- հետևել է պատասխանը:

Անսպասելի պատասխան

Մոսկովյան կենտկոմից Բաբկեն Եսայու Սարկիսովին ուղարկել էին Հայաստան՝ որպես մեր կենտկոմի քարտուղարներից մեկը (1955 - 1961 թթ.): Ռուսախոս էր: Աշխատում էր հայերեն ոչ մի խոսք չասել:

Հենց առաջին օրերից Սարկիսովը կենտկոմի աշխատողների նկատմամբ, անկախ պաշտոնից ու դիրքից, անտեղի խստություններ էր կիրառում՝ նույնիսկ բանը հասցնելով անձնական վիրավորանքների:

Օրերից մի օր՝ առավոտյան շուտ, Սարկիսովն իր մոտ խորհրդակցության է հրավիրում կենտկոմի բաժնի վարիչներին: Բոլորը եկել էին, բայց չկար գիտության ու կրթության բաժնի վարիչ Ռոբերտ Խաչատրյանը: Նա սովորաբար գործի էր գալիս երկու-երեք, երբեմն նույնիսկ չորս ժամ ուշացումով: Բոլորը գիտեին և հաշտվել էին դրա հետ, բայց Սարկիսովի համար զարմանալի և անընդունելի բան էր: Նա իր քարտուղարուհուն՝ Ձեմմային, պատվիրում է հեռախոսով շտապ կապվել և պարզել, թե ինչ է պատահել: Քիչ անց քարտուղարուհին գալիս ու ասում է, թե տնից հայտնեցին, որ նա դեռ քնած է: Սարկիսովը, հազիվ զսպելով զայրույթը, խորհրդակցությունը մեկ ժամով հետաձգում է:

Վերջապես կրկին գալիս է քարտուղարուհին և հայտնում, որ Ռոբերտը տնից դուրս է եկել: Բաժնի վարիչները նորից հավաքվում են: Քիչ անց Ռոբերտը ներս է մտնում: Սարկիսովը մռայլված ու վիրավորված նրան դիտողություն է անում՝ ասելով. «Ընկե՛ր Խաչատրյան, բոլորն ասում են, որ Ձեր մակարդակը կենտկոմի քարտուղարի մակարդակ է, բայց աշխատանքային

կարգապահության տեսակետից Ձեր պահվածքը զրո է: Դա շատ վատ է»:

Պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Գևորգ Հայրյանը, որ չէր համակրում Սարկիսովին, տեղից ասում է.

- Ընկե՛ր Սարկիսով, Դուք էդ ի՞նչ մեծ կարծիք ունեք կենտկոմի քարտուղարի մակարդակի մասին:

Սարկիսովի թուքը բերանում չորանում է:

Բա՛, սա Հայաստան է:

Վերջին հանգրվան

1974 թվականին փոխվեց հանրապետության ղեկավարությունը: Ռոբերտ Խաչատրյանին նույնպես առաջարկել էին թողնել պաշտոնը և նշանակել էին Երևանի Բրյուսովի անվան ինստիտուտի ռեկտոր: Չէր համակերպվում. իր տեղը չէր: Մի քանի ամիս անց դիմում էր ներկայացրել ու ազատվել: Վաստակում էր գրքեր խմբագրելով և նման բաներով: Քիչ էր շփվում մարդկանց հետ, ընկճված էր, շատ նիհարել էր: Չգիտեինք, որ ծանր հիվանդ է: Բժիշկների խորհրդով նրան տեղափոխեցին Մոսկվա: Իր կենտկոմական ռուս ընկերները տեղավորեցին հայտնի հիվանդանոցներից մեկում: Չկազդուրվեց և շուտով հրաժեշտ տվեց կյանքին: Նրա ընկերները կնոջն ու տղային թախանձագին խնդրել էին իրենց օգնությամբ աճյունը տեղափոխել Երևան, բայց նրանք վճռականորեն հրաժարվել էին: Թաղման բյուրոն տեղ էր հատկացրել քաղաքից հեռու՝ ինչ-որ մի լքված գերեզմանոցի ծայրին, որից անմիջապես հետո սկսվում էր եռացող ճահիճը: Ասում են, որ երբ օրեր անց այցելել էին նրա գերեզմանին,

այն չէին գտել: Ամեհի ճահիճը կուլ էր տվել հանգուցյալի մարմինը:

Ո՞վ գիտե, գուցե թե մեծ ինտելեկտուալի ուղեղը դեռ այսօր էլ լույս է արձակում:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒՄ

1968 թվականի մայիսի 25-ն էր՝ Սարդարապատի համալիրի բացման օրը: Մեծ իրադարձության նախօրյակին Հայաստանի կոմկուսի կենտկոմում եռուզեռ էր:

Դեռ նախորդ օրը՝ աշխատանքի վերջին, ինձ տեղեկացրել էին, թե Անտոն Քոչինյանը կանչում է: Գնացի: Հանրապետության ղեկավարը լի էր հաճելի զգացումներով:

- Նստի՛ր,- ասաց,- մի կարևոր գործ ունես անելու: Վաղը հուշարձանի բացումն է, գիտես: Ստեփան Վարդանյանն ասում է, որ Հովհաննես Շիրազի հետ լավ հարաբերություններ ունես: Շուտով կգա նաև «Հայաստան» հրատարակչության տնօրեն պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը: Նա Լենինական էր գնացել և հիմա ճանապարհին է, գալիս է: Դու քեզ մոտ սպասի՛ր, կգա: Երկուսով գործ ունեք անելու: Ռոբերտ Խաչատրյանը հյուրերի հետ է, շուտով կազատվի, կգա: Նրա հետ կխորհրդակցեք ձեր անելիքների մասին:

Ես դուրս եկա և սպասում էի իմ աշխատասենյակում: Շուտով եկավ Խիկար Բարսեղյանը, իսկ Ռոբերտ Խաչատրյանը չկար ու չկար: Վերջապես երեկոյան ժամը 10-ն անցել էր, երբ նրա աշխատասենյակի լույսերը վառվեցին, և մենք շտապեցինք այնտեղ:

Ռոբերտ Հրաչիկովիչը մեզ երկուսիս խնդրեց կատարել մի տարօրինակ, բայց, նրա ասելով, ներկա պահի համար մի շատ կարևոր գործ, այն է՝ անել ամեն ինչ, որ Հովհաննես Շիրազը վա-

ղը չկարողանա ներկա գտնվել հուշարձանի պաշտոնական բացման արարողությանը: Ուստի նա առաջարկեց առավոտյան գնալ Շիրազի՝ Մաշտոցի պողոտայի վրա գտնվող բնակարան, ներկայանալ որպես հյուրեր և նրան զբաղեցնել առնվազն երեք ժամ, այլապես Սարդարապատում նրա երևալն իսկ առաջ կբերի իրարանցում, և նախատեսված ծրագիրը կարող է խախտվել:

Դուրս գալով շենքից՝ մենք մտահոգված էինք. ինչպե՞ս ենք կատարելու այդ անսովոր ու շատ տհաճ հանձնարարականը: Ես, ոչի՛նչ, Շիրազի հետ հարաբերություններս պահանջված չափի էին, բայց շատ տարիների ջերմ բարեկամների՝ պրոֆեսորի և պոետի ջրերը վերջին ժամանակներս մի առվով չէին գնում:

Շիրազն անդադրում բողոքում էր, թե Բարսեղյանն իրեն մշտապես հալածում է՝ դիտավորյալ կրճատելով հոնորարները: Տնօրենը պատասխանում էր, թե հաշվարկները կատարում են հրատարակչության բաժիններում, և ինքը միայն ստորագրում ու հաստատում է, իսկ եթե կասկածներ ունի, կարող է պարզել տեղում: Շիրազն այդ բացատրությունը համարում էր սադայելական խաբեություն: Հենց նախօրյակին հրատարակչության տնօրենի մոտ տեղի էր ունեցել հերթական ընդհարումը, և նա, շրխկացնելով դուռը, դուրս էր եկել՝ միջանցքներում թե դրսում առատորեն հիշելով պրոֆեսորի ազգուտակը:

Շիրազն իրավացի չէր. աշխատողներն ասում էին, որ, ընդհակառակը, տնօրենը արտակարգ բարի վերաբերմունք ունի պոետի նկատմամբ և իր տասնամյակների ընկերոջը միշտ աջակցում է հոնորարներ նշանակելիս:

Հիմա Բարսեղյանն ուրիշ ճար չուներ. պետք է գնայինք: Պատրվակն էր լինելու վաղեմի երկու ընկերների հաշտվելը:

Մայիսի 28-ի առավոտյան հանդիպելով պրոֆեսորին՝ նրա մեքենայի մեջ որոշեցինք այդ պահի մեր ստույգ անելիքը: Մտնե-

լով մոտակա մթերային խանութներից մեկը՝ վերցրինք երկու շիշ օղի, երշիկ, էլի ինչ-որ բան: Շրջադարձ կատարելով փակ շուկայի մոտ՝ քիչ անց կանգ առանք Շիրազի տան առջև և անմիջապես բարձրացանք:

Դուռը բացեց տանտիրուհին: Ներս մտանք: Միջանցքը կիսամութ էր, ճաշասենյակում վազվզում էին երկու-երեք փոքրիկներ: Կենտրոնում մի սեղան էր՝ երկու-երեք աթոռներով: Ես շշերը դրեցի սեղանին: Կինը, ինչ-որ բան ասելով, երեխաներին վերցնելով, հեռացավ:

Մեր խոսակցության վրա միջանցքից ձախ գտնվող սենյակից դուրս եկավ Շիրազը և, տեսնելով մեզ, զարմանքից կարկամեց: Համենայն դեպս Խիկարին չէր սպասում:

- Հը՛, եկել ես ինձ հալածե՞ս,- դիմելով պրոֆեսորին՝ կարկամած ասաց նա:

Բարսեղյանը պատասխանեց.

- Շենքի մոտով անցնելիս մոտս ցանկություն առաջացավ մտնել քեզ մոտ: Եկել եմ հաշտվելու, ի՞նչ է, դե՞մ ես:

Շիրազը մեզ իր սենյակ հրավիրեց: Աջ կողմում հնամաշ մի բազմոց էր, որի դարչնագույն պաստառի տակից ցցվել էին երկու-երեք զսպանակ: Վերևի մասում նրա մահճակալն էր, պատուհանի մոտ՝ գրասեղանը: Չորս կողմը գրքեր էին՝ թե՛ դասավորված, թե՛ թափթփված:

Պոետը մեզ առաջարկեց նստել բազմոցին, իսկ իր համար մոտ բերեց երևի տասնամյակների վաղեմության մի աթոռ: Բարսեղյանն ինչ-որ մի նյութ էր գտել և աշխույժ պատմում էր: Շիրազը մեկ քթի տակ ինչ-որ բանից դժգոհում էր, մեկ անհանգիստ շարժումներ անում: Երևի մտածում էր՝ այդ երբ է լինում, որ օրը դեռ նոր բացված՝ մարդուն հյուր են գնում: Խիկարը թեև հոնարարները կրճատում է, բայց, այնուամենայնիվ, իր վաղեմի ըն-

կերն է: Իսկ մյուսը կենտկոմի աշխատող է, որի հետ թեև ինքը լավ հարաբերություններ ունի, բայց պաշտոնյա է, իսկ պաշտոնյայից նա լավ բան չէր սպասում, միշտ նրանցից խուսափել էր:

Մի պահ մտքերից պոկվելով՝ նա մեզ հարցրեց.

- Դուք Սարդարապատ գնալո՞ւ եք:

- Կգնանք, անպայման,- ասաց Բարսեղյանը: - Հիմա այնտեղ ասեղ գցելու տեղ չի լինի: Պաշտոնական մասն ավարտելուց հետո կգնանք ու առանց շտապելու կծանոթանանք:

- Ուրեմն նո՞ր պիտի ծանոթանաս, Խիկա՛ր,- զարմացած ասաց նա, ես չգիտեմ՝ քանի անգամ արդեն եղել եմ:

- Ավելի՛ լավ,- ուրախացած վրա բերեց Բարսեղյանը:

Շիրազը նայեց նրան և արտաբերեց մեզ համար ամենակարևորը, թե ինքը նույնպես չի կարողանալու Սարդարապատ գնալ, որովհետև երեկ սիրտը շատ վատացել էր, և շտապ օգնություն էին կանչել, և որ հիմա էլ բանի նման չէ. մարմինն անընդհատ սարսռում է: Այդ ասելով՝ նա դեմքը ծռմռեց և, քթի տակ ինչ-որ անհասկանալի բառեր ասելով, գնաց ու մտավ անկողին՝ գլուխը մտցնելով վերմակի տակ:

Բարսեղյանն առաջարկեց շտապ օգնություն կանչել, բայց նա վերմակի տակից դժգոհեց, թե պետք չէ, և որ մեկ-երկու ժամ կքնի, կանցնի:

Մենք չգիտեինք մեր անելիքը: Տանտիրուհին այդպես էլ չերևաց: Պոետը վերմակի տակ տնքում էր, իսկ ճաշասենյակում անդորր էր:

Մեզ ոչինչ չէր մնում անելու: Շիրազն այնքան տկար էր, որ այսօր հազիվ կարողանար անկողնուց բարձրանալ: Ուստի նրան առողջություն մաղթելով՝ կոտրած սրտով հեռացանք: Մյուս կողմից ներքնապես բավարարված էինք, որ նա չի մասնակցելու հուշահամալիրի բացմանը:

Դուրս եկանք փողոց: Բարսեղյանն ասաց, թե հրատարակչությունում կիսատ թողած շտապ գործ ունի: Գնացինք: Բավական երկար տևեց՝ մոտ երկու ժամ:

Վերջապես ուղևորվեցինք Սարդարապատ: Ճանապարհին հազարավոր ավտոմեքենաներ էին՝ Երևանից և հանրապետության շրջաններից: Ամենուրեք խցանումներ էին: Վերջապես մայրուղուց թեքվեցինք դեպի հուշահամալիր:

Դեպի այն տանող ճանապարհի երկու կողմերը բռնված էին ծովածավալ բազմությամբ: Ուժգին բացականչությունները, աղմուկ-աղաղակներն ու գոռում-գոչյունները բռնել էին երկինքը:

Արդեն քայլում էինք ոտքով: Երբ է՛լ ավելի մոտեցանք, պարզվեց, թե ինչու է թնդում դաշտավայրը: Շիրազին տեսնելով՝ ժողովուրդը նրան նույնացրել էր մայր հայրենիքի և նրա սարդարապատյան էպոպեայի հետ: Աննկարագրելի էր պահը: Հազարավոր ձեռքեր նրան բարձրացրել էին վեր և տանում էին առաջ: Նրա նկատմամբ համաժողովրդական սերը դուրս էր եկել ափերից և ալեկոծում էր դաշտը:

Համա կատարել էինք, հա՜, կենտկոմի ղեկավարության հանձնարարությունը:

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ ԳՐՈՂՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ

1950 թ. աշնանն էր: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման երեսնամյակի կապակցությամբ հանդիսավոր նիստ էր տեղի ունենալու նաև Մոսկվայում՝ Միությունների տան Սյունազարդ դահլիճում:

Թե ինչ առիթով էի այդ օրերին գտնվում Մոսկվայում, չեմ հիշում, և դա կարևոր էլ չէ: Ինձ հաջողվել էր հրավիրատոմս ձեռք բերել և մուտք գործել դահլիճ:

Ասեղ գցելու տեղ չկար: Այնտեղ էին մայրաքաղաքի մտավորական ու մշակութային դասի խոշոր ներկայացուցիչներ, կուսակցական և պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, տեղի հայ համայնքի մեծանուն անձինք, Հայաստանից ժամանած հյուրեր, որոնց թվում էր նաև Նաիրի Զարյանը:

Պատանեկության և վաղ երիտասարդության տարիներին ես Զարյանի գրականության ջերմ երկրպագուներից էի: Ըստ իս, իր բնածին տաղանդի հզորությամբ նա միայն մի մրցակից ուներ՝ Շիրազը: Ստալինին նվիրված նրա մոնումենտալ կերտվածքը մեր սերնդին շշմեցնում էր ոչ միայն հեղինակի հզոր տաղանդով, այլև իմացականության խորախոր պաշարներով: Նա ուներ շատ ուրիշ բանաստեղծություններ, որոնց նմանները ևս չկային: «Հացավան» վեպը կարդում էինք ու վերակարդում: Իսկ հետագայում գրած «Արա Գեղեցիկը» ... Դա եզակի երևույթ էր մեր գրականության մեջ, մեզ տանում էր մարդկային վեհությունների ու անձնուրաց սիրո աշխարհը:

Սյունազարդ դահլիճում հիմնական զեկուցումից ու երկուերեք ելույթից հետո խոսքը տրվեց Նաիրի Զարյանին: Ելույթը ոգեշունչ էր, զգացմունքների իսկական հեղեղ: Հայացք նետելով հայոց վաղնջական ժամանակներին՝ նա հպարտորեն գովքն էր հյուսում անցյալի մեր մեծերի և աստիճանաբար դարեդար բարձրանում: Երբ անդրադառնում էր Մեսրոպ Մաշտոցին ու նրա կատարած մեծ գործին, Զարյանը բարձրաձայնեց, թե նա եղել է նաև վրացական գրերի ստեղծողը, բայց արդի վրաց մտավորականները ազգայնական մղումներով խեղաթյուրում ու չեն ընդունում ակնհայտ փաստը: Եվ դա ասվում էր այն ժամանակ, երբ վրացի Ստալինը և Բերիան իրենց փառքի գագաթնակետին էին:

Վեր հանելով հայոց անցյալի հերոսական դրվագները՝ մեծն Զարյանը դրանք միահյուսում էր Հայրենական մեծ պատերազմում հայ մարտիկների ու զորահրամանատարների հերոսապատումներին, դրանք համարում հայ ժողովրդի՝ ազատ ու անկախ ապրելու դարավոր պայքարի տրամաբանական շարունակություն:

Խորհրդային մայրաքաղաքում իր ժողովրդին պանծացնող ժամանակի այդ զորեղ մտավորականը ներկայումս բոլորովին մատնված է լռության: Ավելին՝ նա գանակոծվում է որպես ռեժիմի գովերգու, որպես իշխանություններին հաճոյանալու միջոցով հաց վաստակած մարդ: Իսկ նրա ստեղծած մեծամեծ արժեքնե՞րը, դրանք արդյոք մե՞րը չեն:

Շատ տարիներ հետո ես իմացա, որ Զարյանը մասնակցել էր Սարդարապատի ճակատամարտին:

Զարյանը հպարտ, իր արժեքն իմացող մարդ էր:

Տասնամյակներ շարունակ, ինչպես անցյալ դարի 20-30 -ական թվականներին, այնպես էլ Հայրենական պատերազմից

հետո, Հայաստանի գրողների միությունը եղել է ոչ միայն գրական գործընթացներին ուղղություն տվող մարմին, այլև սուր վիճաբանությունների ու փոխադարձ վիրավորանքների, անարդարացի ամբաստանությունների ասպարեզ: Անշուշտ, Զարյանը նույնպես մասնակից է եղել այդ ամենին, բայց նախաձեռնող չի եղել, եղել է ավելի հավասարակշռված: Գուցե դա էր պատճառներից մեկը, որ վերևներում նրան գերադասում և վստահում էին՝ առաջին հերթին, իհարկե, հաշվի առնելով նրա հզոր տաղանդը:

Հովհաննես Բաղրամյանի ծննդյան կապակցությամբ Հայաստանի կոմկուսի կենտկոմը ողջույնի նամակի տեքստ էր պատրաստում: Նախնական տարբերակ կազմելը ինձ էր հանձնարարված: Որոշ դիտողություններով հավանեցին:

Ղեկավարությունը, չգիտես ինչու, որոշել էր տեքստը վերածել չափածոյի: Կանչել էին Նաիրի Զարյանին: Պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Ստեփան Վարդանյանի աշխատասենյակում էի, երբ եկավ Զարյանը: Ողջագուրվեցին: Շատ լավ հարաբերությունների մեջ էին: Կարճատև զրույցից հետո Վարդանյանը նրան տվեց ողջույնի տեքստը՝ խնդրելով ծանոթանալ: Պոետը արագ աչքի անցկացրեց երեքէջանոց նամակը:

- Լավ,- ասաց նա:

- Նաիրի՛ ջան, ժամանակը սուղ է, եթե կարող ես, խնդրում եմ՝ երկու-երեք օրում վերջացնես:

- Ի՞նչ երկու-երեք օր,- վրա բերեց նա: - Հիմա մի փոքր սենյակ տո՛ւր, որ առանձնանամ և աշխատեմ:

Բաժնի վարիչն ինձ խնդրեց, որ աշխատասենյակս տրամադրեմ նրան: Որոշ ժամանակ հետո ինձ հարկ եղավ մի քանի րոպեով մտնել աշխատասենյակ՝ ինչ-որ փաստաթուղթ վերցնելու համար: Ես ականատես եղա, թե բանաստեղծի ուղեղում ինչպես են ծնունդ առնում պոետական տողերը: Նա ոչ միայն ծախսում

էր իր մտավոր ուժը, այլև, կարելի է ասել, կռիվ էր տալիս նամակի տեքստի հետ: Երբ իր ուզածի պես չէր ստացվում որևէ տողի չափածո դարձնելը, նա մռնչում էր, անհասկանալի ձայներ հանում, ստեղծագործական քուրայում թրծում արձակ տողերը: Եվ երբ ստացվում էր իր ուզածը, երեսին շողում էր բավարարվածության ժպիտը: Մի քանի ժամ կռիվ տալով արձակ տեքստի հետ՝ Զարյանը ստեղծեց պոետական մի իսկական գլուխգործոց:

Անձնական գործով շենքից կարճատև դուրս եկա: Վերադարձա և մտա Վարդանյանի մոտ: Նրանք երկուսով ջերմորեն զրուցում էին:

- Ա՛ռ, կարդա՛, թե ինչ լավ պոեմ ես գրել,- կատակով ասաց Վարդանյանը և ինձ մեկնեց Զարյանի «թարգմանածը»:

Հոյակապ, մեծարժեք մի ստեղծագործություն էր, որն արարվել էր ընդամենը երկու ժամում:

Պաշտոնական անարյուն տեքստն ընդամենը երկու ժամում վերածվել էր մի հոյակապ ստեղծագործության՝ արժանի Մեծ զորավարին:

Չգիտեմ՝ այդ արարումն ուղարկվե՞ց Մոսկվա, թե՞ այն մնաց կենտկոմի թղթերում, գուցե զորավարի արխիվում. ինձ հայտնի չէ:

Անցան տարիներ: Հիվանդացել էի և պառկած էի հետագայում «Նաիրի» բժշկական կենտրոն վերանվանված հիվանդանոցում: Երկու-երեք օր անց այդտեղ բերեցին նաև Նաիրի Զարյանին՝ տեղավորելով հարևան հիվանդասենյակում: Մի քանի օր մենք կազդուրվում էինք: Երբ արդեն նրա առողջական վիճակը բարելավվել էր, ես այցելեցի նրան: Հետո, երբ բավականաչափ իրեն լավ էր զգում, միջանցքի բազմոցին նստած զրուցում էինք ամենատարբեր հարցերի շուրջ:

Այդ ժամանակներում սկսել էի հանգամանորեն ուսումնասիրել զորավար Անդրանիկի կյանքն ու գործունեությունը և մտադիր էի, եթե հաջողվեր, նրա մասին գրել որևէ աշխատություն: Բնականաբար կարդացել էի զորավարի մասին հրապարակի վրա եղած պատմագիտական և այլ կարգի ուսումնասիրությունները, նաև նրան նվիրված գեղարվեստական ստեղծագործությունները: Ծանոթ էի նաև Անդրանիկի մասին Զարյանի գրած բանաստեղծությանը, որով նա, տուրք տալով ժամանակի հովերին, հայ ժողովրդի ազգային հերոսին ներկայացրել էր որպես անմեղ թուրքերի դահիճ:

Ես Զարյանին տեղեկացրի, որ կարդացել եմ այդ չափածո գործը և ուզում եմ իմանալ, թե իսկապես ինքը համոզվա՞ծ է, որ Անդրանիկը անզեն թուրքերի վրա սուր է բարձրացրել:

Պոետը մռայլվեց: Ես մտովի սկսեցի ինձ հանդիմանել. վշտացրել էի արտաքինից ոչ հրապուրիչ, բայց շատ քնքուշ սիրտ ունեցող մարդուն, այն էլ նրա ծանր հիվանդության պահին:

Մի կարճ ժամանակ անց Նաիրի Զարյանը վախճանվեց: Ես շատ էի ազդվել: Ափսոսանքով լի՝ ցավում էին հազարավոր ուրիշ մարդիկ: Մենք բոլորս կորցրել էինք իր ժողովրդի ցավերով ապրող մի հզոր անհատականության:

ՆՐԱ ԱՆՈՒՆԸ ՄԻՇՏ ԻՆՁ ՀԵՏ Է

Նրան հիշելիս ես այսօր էլ՝ 90-ին մոտ տարիքում, հաճելի զգացում եմ ապրում, որ իմ կյանքի որոշակի հատվածում (1953-1959 թթ.) աշխատել եմ այդ Մեծ մարդու հետ, եղել նրա կողքին, նրա հոգատար հայացքի ներքո:

Դա Հայաստանի կոմկուսի Գորիսի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Արմենակ Խաչատրյանն էր:

Երկար տարիներ աշխատել եմ տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների հետ, բայց ոչ մեկը նման չէր նրան:

Նա բացարձակ արդարամիտ մարդ էր: Չէր կարողանում տանել կեղծիքն ու երեսպաշտությունը: Իր անբիծ կյանքով, գործին անսահման նվիրվածությամբ, Հայաստան հայրենիքի նկատմամբ որդիական պատասխանատվությամբ իսկական օրինակ էր շրջապատի համար: Նա կերտում էր մարդիկ: Նրա ստեղծած կյանքի դպրոցում եմ դասեր առել ես:

Շրջկոմի առաջին քարտուղարը խիստ պահանջկոտ էր, բայց ամենից առաջ՝ իր նկատմամբ: Աշխատանք. ահա նրա կյանքի գլխավոր իմաստը: Նրա համար ապրելը նշանակում էր անդադրում գործել: Մենք չգիտեինք, թե նա երբ է պառկում քնելու: Նրա մոտ գիշերը խառնված էր ցերեկին:

Ընկեր Խաչատրյանը հատուկ ուշադրության կենտրոնում էր պահում երիտասարդ կադրերի դաստիարակության ու առաջքաշման գործը: Նրա պաշտոնավարման տարիներին թե՛ Գորիս քաղաքում, թե՛ շրջանի գյուղերում բազմաթիվ գործունյա և գրագետ երիտասարդներ առաջ քաշվեցին պատասխանատու աշ-

խատանքների: Նա վստահում էր երիտասարդներին ու մշտապես հետևում նրանց աճին:

Արդեն երկու տարին լրանում էր, որ աշխատում էի շրջկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնում: Օրերից մի օր, երբ աշխատանքի վերջին րոպեներին պատրաստվում էի տուն գնալ, լսվեց հեռախոսի զանգը: Ընկեր Խաչատրյանն էր: Ասաց, որ երեկոյան ինքը գյուղ է գնալու:

- Կուզե՞ս հետս գալ,- հարցրեց նա:

Ես հանկարծակիի եկա:

- Իհարկե՛, ընկե՛ր Խաչատրյան, կգամ,- պատասխանեցի:

- Այդ դեպքում կճաշես ու կսպասես ինձ:

Ուղևորվեցինք շրջանի ամենամեծ գյուղ՝ Խնձորեսկ: Ճանապարհին շրջկոմի քարտուղարը տեղեկացրեց, որ կոլտնտեսության ընդհանուր ժողով է լինելու, որի ընթացքում քննարկվելու են անասնապահության զարգացման հարցերը:

Խնձորեսկը հզոր տնտեսություն ուներ: Հիշում եմ, միայն ոչխարաբուծական ֆերմայում կար 15 հազար գլուխ ոչխար:

Տեղ հասանք, և ժողովը սկսվեց: Ընկեր Խաչատրյանը ինձ առաջարկեց միասին բարձրանալ նախագահություն, միաժամանակ պատվիրեց գրառումներ անել:

Ժողովն ընթանում էր սուր քննադատության մթնոլորտում:

Երբ ժողովը մոտենում էր ավարտին, հանկարծ շրջկոմի քարտուղարը դիմեց ինձ.

- Կուզե՞ս ամփոփել ժողովը:

Մտքովս անգամ չէր անցնում, որ ինձ նման առաջարկություն կարվի: Ես հանկարծակիի եկա ու շփոթվեցի, քանի որ աննշան գիտելիքներ ունեի անասնապահությունից, իսկ հիմա պետք է հանդես գայի մեծավաստակ ու պատկառելի անասնապահներին սովորեցնողի դերում:

Ուզում էի առարկել. «Ընկե՛ր Խաչատրյան, ախր ... »:

Նա ընդհատեց՝ ասելով. «Ամեն ինչ լավ կլինի, ելույթիդ համար հիմք ընդունի՛ր ժողովի ընթացքում արված քննադատությունները»:

Ինչ արած, տեղից բարձրացա ու մոտեցա ամբիոնին: Բոլորի համար զարմանալի էր, իսկ շրջկոմի քարտուղարի համար՝ ոչ:

Իմ ամփոփիչ ելույթը բանի նման չէր: Ես դա զգում էի առաջին շարքերում նստած կոլտնտեսականների խորամանկ ժպիտներից:

Դա ինձ համար մեծ փորձառություն էր:

Երբ ժողովը վերջացավ, շրջկոմի քարտուղարը հայտնվեց բազմության մեջ: Նրան շրջապատել էին կոլտնտեսականները՝ թե՛ անասնապահներ, թե՛ դաշտավարներ, թե՛ այգեգործներ: Երկար ու մտերմիկ զրուցում էր բոլորի հետ, պատասխանում նրանց հուզող հարցերին:

Իր կյանքով ու գործով շրջկոմի քարտուղարն օրինակ էր շրջապատի համար: Բոլոր մարդիկ ունեն արժանապատվության իրենց չափաբաժինը, ասում էր նա, ուստի պետք է հարգանքով վերաբերվել ամեն մի անհատի, եթե նա, իհարկե, աշխատանքի մարդ է, ազնիվ ու անկաշառ:

Ընկեր Խաչատրյանը համաժողովրդական, հանրային սեփականությունը համարում էր սրբություն: Շրջկոմի պլենումներում ու խորհրդակցություններում մշտապես շեշտադրում էր ընդհանուրի սեփականության անձեռնմխելիությունը՝ այն համարելով բոլորի բարեկեցության աղբյուր, ուստի ներել չէր կարողանում հանրային միջոցների նկատմամբ առանձին ղեկավար աշխատողների ոտնձգությունները:

Նա որքան պահանջկոտ էր, նույնքան էլ բարի ու հոգատար:

Իմ՝ որպես կուսակցական աշխատողի ձևավորման ու դաստիարակության համար ես պարտական եմ այդ Մեծ մարդուն, որն ինձ սովորեցրել է, թե ինչպես անմնացորդ նվիրվել գործին, երբեք չմեծամտել հաջողություններով ու երբեք չընկրկել, երբ վրա են հասնում դժվարին ժամանակներ:

Անցան տարիներ: Ես աշխատում էի Հայկոմկուսի կենտրոնական կոմիտեում, երբ իմացա, որ շրջանի գյուղերից մեկն այցելության ժամանակ Արմենակ Խաչատրյանը սրտի ծանր կաթված էր ստացել և ընկել անկողին: Քիչ թե շատ կազդուրվելուց հետո ոտքի էր կանգնել, բայց ի վիճակի չէր եղել ամբողջական ծավալով շարունակել իր պատասխանատու գործը, ուստի դիմել էր վերևներ և կամավոր հրաժարվել պաշտոնից: Տեղափոխվել էր Երևան, ուր ուներ համեստ բնակարան: Ստացած թոշակը չէր բավականացնում:

Ես տեղյակ չէի, որ նա դիմել էր վերադաս մարմիններ և խնդրել իրեն տալ մի աշխատանք: Խոստացել էին, ամիսները տարիներ էին դարձել, բայց նա մնացել էր տանը փակված:

Օրերից մի օր աշխատասենյակում հնչեց հեռախոսազանգ: Լսափողը վերցրի: Ընկեր Խաչատրյանն էր: Իջեցրի անցագիր, նրան դիմավորեցի դրսի աստիճանների վրա, և միասին բարձրացանք վերև:

Շատ տարիներ չէի տեսել նրան: Նիհար էր ու գունատ: Չկար երբեմնի կրակը սրտում, բայց նախկինի պես մնացել էր հմայիչ: Զրուցում էինք տարբեր բաների մասին: Ես չգիտեի, որ ինքն աշխատել է ուզում, բայց վերևները չեն արձագանքում: Այդ մասին խոսք անգամ չբացեց: Կարծում էի, թե ուղղակի քաղաքավարական այց է կատարել: Նկատում էի, որ խոսելուց հոգնում է և չի ուզում զրույցը շարունակել: Եղավ մի պահ, երբ նա բարձրացավ ու հաջողություն մաղթեց: Ես նրա հետ շենքից

դուրս եկա, և բաժանվեցինք դարպասների մոտ:

Դա իմ վերջին հանդիպումն էր Մեծ ու սիրելի մարդու հետ:

Կարճ ժամանակ անց նա հրաժեշտ տվեց կյանքին:

Հուղարկավորությանը եկել էր մեծ բազմություն: Ելույթներ եղան նաև կենտրոնական կոմիտեից ու կառավարությունից: Երբ հրաժեշտի խոսք էր ասում կենտկոմի պատասխանատու աշխատողներից մեկը, Սերո Խանզադյանը թեքվեց դեպի ինձ, թե՝ «Սրանց մեղքով Արմենակը հեռացավ կյանքից: Եթե աշխատանք տային, դուրս կգար տնից, կշփվեր մարդկանց հետ, դեռ կապրեր»: Ես անմիջապես վերհիշեցի իմ վերջին հանդիպումը ընկեր Խաչատրյանի հետ: Նոր միայն հասկացա, որ նա փորձել էր աշխատանքի հարցով դիմել նաև ինձ՝ միջամտելու ղեկավարության մոտ: Եկել էր, հանդիպել էինք, բայց այդպես էլ խոսք չէր բացել:

Անցել են տասնամյակներ, բայց ամեն անգամ իմ սիրելի մարդուն վերհիշելիս ամոթի ու երախտամոռության զգացում եմ ապրում, որ նրա կյանքի դժվարին պահին աջակից չեղա նրան: Եվ դա այն դեպքում, երբ ինձ համար դժվար չէր մուտք ունենալ կենտկոմի քարտուղարներից կամ բաժինների վարիչներից որևէ մեկի մոտ և խնդիր հարուցել:

Ների՛ր ինձ, ի՛մ պաշտելի ղեկավար, ի՛մ կյանքի մեծ ուսուցիչ, ընկե՛ր Խաչատրյան:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԵԼԻ» ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

1953 թ. աշնանը Հայկոմկուսի կենտկոմի գաղափարախոսական գծով քարտուղար Հրաչյա Մարգարյանը աշխատանքային այց էր կատարել Զանգեզուր: Սիսիանից հետո երկու-երեք օրով եկել էր Գորիս, ապա մեկնելու էր Ղափան ու Մեղրի: Նպատակն էր աշխատավորների շրջանում տարվող գաղափարական-քաղաքական աշխատանքների վիճակին ծանոթանալը:

ՀԿԿ Գորիսի շրջկոմում հավաքվել էր շրջանի կուսակցական ակտիվը: Բոլոր ելույթ ունեցողները, հատկապես գյուղերից եկածները, զեկուցում էին, թե կուսակցական և կոմերիտական կազմակերպություններն ինչպիսի մեծ ու քրտնաջան աշխատանք են տանում սովետական նոր մարդու ձևավորման, կերտման ու դաստիարակության ուղղությամբ: Շեշտադրվում էր նաև, որ քաղաքում և բոլոր գյուղերում արդյունավետ գործունեություն է ծավալվում հատկապես հին սերնդի մարդկանց վերադաստիարակման ուղղությամբ, և որ հենց այս բնագավառում նվաճումները հսկայական են:

Օրինակ՝ շրջանի ամենածայրամասային և ընդամենը 8-10 տուն ունեցող Մալդաշ գյուղի ներկայացուցիչը իր ելույթում նշեց, որ գաղափարական առաջավոր եղանակների գործադրմամբ հաջողվել է գյուղում եղած չորս-հինգ ծերունիների գիտակցության միջից լիովին արմատախիլ անել անցյալի վերջին մնացուկները:

Ընկեր Մարգարյանը ելույթ ունեցողներին մի քանի անգամ հորդորեց խոսել նաև մասսայական-քաղաքական աշխատանքներում տեղ գտած թերությունների մասին, բայց նրանք համառորեն պնդում էին, որ ամեն ինչ լավ է, ոչ մի թերություն չկա, շրջանի բոլոր աշխատավորները անչափ գոհ են իրենց կյանքից և ամեն օր, ամեն ժամ բազմապատկում են ջանքերը կուսակցության առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար:

Ընկեր Մարգարյանը, որ սկզբից որոշ կասկածանքով էր վերաբերվում ելույթ ունեցողների գովաբանություններին, որոշ համոզիչ ելույթներից հետո հակվեց հավատալու, որ աշխատավորների կոմունիստական դաստիարակության ուղղությամբ Գորիսի շրջանը, իսկապես, տպավորիչ հաջողությունների է հասել:

Միջոցառումը վերջացավ բարձր տրամադրությամբ: Մասնակիցները ցրվեցին, իսկ շրջկոմի պատասխանատու աշխատակիցները ընկեր Մարգարյանի խնդրանքով հավաքվեցին գաղափարական գծով քարտուղարի աշխատասենյակում: Կենտկոմի քարտուղարը հատուկ շնորհակալություն հայտնեց մասսաների շրջանում տարվող հետևողական աշխատանքի համար: Նա հատկապես ոգևորված էր արդեն ծերացած մարդկանց հետ տարվող դաստիարակչական աշխատանքների փաստով և ասաց, որ կենտկոմն անպայման կանդրադառնա այդ յուրատեսակ առաջավոր փորձին և քայլեր կձեռնարկի հանրապետության մյուս շրջաններում այն տարածելու համար:

Տրված բարձր գնահատականով մենք բոլորս հպարտ էինք:

Հանդիպումը վերջացավ: Երբ բոլորս դուրս էինք գալիս, դեռ սանդուղքների վրա լսեցինք փողոցից եկող խառնիխուռն խռպոտ բղավոցներ:

Դուրս գալով փողոց՝ տեսանք, որ մեր կողմն են գալիս ծայրաստիճան հարբած, իրար փաթաթված երկու ծերունի՝ զարգար* Տիգրանը և Անդրուն Պուղին: Նրանք երկուսն էլ ժամանակին Նժդեհի զորքում կռվել էին Կարմիր բանակի դեմ, բայց, չգիտես ինչու, սովետները նրանց չէին գնդակահարել: Հիմա էլ անբաժան ընկերներ էին, համարյա ամեն օր մտնում էին քաղաքային այգու ճաշարան, մի լավ խմում, այնուհետև օրորվելով գնում քաղաքի վերևներում գտնվող իրենց տները: Բայց այս անգամ այնքան էին կոնծել, որ կորցնելով կողմնորոշումը՝ բռնել էին հակառակ ուղղությունը, որը բերում էր դեպի մեզ:

Ոտքերը ճոճելով և հազիվ աջ ու ձախ նետելով՝ ծերունիները, ձայները գցած գլուխները, բղավում էին՝ կցկտուր արտաբերելով ինչ-որ անծանոթ երգի առանձին պատառիկներ: Լսվում էր նաև «դաշնակցություն» բառը: Հավանաբար նրանք դեռ չէին մոռացել Նժդեհի ժամանակների մարտական երգի փշրանքները:

- Էս հո՞ւմ տոնն ա,- շրջկոմի շենքին նայելով՝ ընկերոջը հարցրեց զարգար Տիգրանը:

- Հենց ա ռայկոմը ինի,- հազիվ լսելի ձայնով պատասխանեց Պուղին:

- Բա սրանք հո՞վ են:

- Ես հինչ գիդամ, գյուդում չեմ: Հալբաթ ռայկոմի ըշխատողներն են: Սրանց սաղին կուտուրիլի ա ...

Կենտկոմի քարտուղարը կողքին կանգնած Ջորաշեն գյուղի ակումբի վարիչին հարցրեց.

- Ի՞նչ են խոսում, ի՞նչ են ասում:

---

* Ոսկերիչ:

- Ասում են շրջկոմի բոլոր աշխատողներին պետք է կոտորել,- եղավ միամիտ ակումբավարի պատասխանը, որին երևի փոքրուց սովորեցրել էին, որ չի կարելի ստել:

Մենք շվարել էինք: Վիճակից դուրս գալու ելք չկար:

Կենտկոմի քարտուղարը մի կարճ ժամանակ լուռ էր: Հետո այլայլված դիմեց շրջկոմի գաղափարական գծով քարտուղարին.

- Ապրե՛ք, շա՜տ ապրեք: Իսկապես որ այս շրջանում կոմունիստական դաստիարակության առաջավոր փորձ կա:

Ապա շուռ գալով դիմեց հեռվում կանգնած իր վարորդին.

- Ավտոն բե՛ր, Ղափան ենք գնում...

ԱՅԴՊԵՍ ԷԼ Է ԼԻՆՈՒՄ

1955 թ. ամռան վերջին լուր հասավ, թե արտասահմանից Գորիս է գալու մի ինչ-որ հոգևորական: Մենք բոլորս զարմացել էինք. ի՞նչ գործ ունի հոգևորականը Գորիսում, այն էլ՝ արտասահմանից:

Որոշ ժամանակ հետո խոսակցությունները դադարեցին, բայց նորից վերսկսվեցին աշնան սկզբին:

Շրջանային կոմիտեի առաջին քարտուղարը արձակուրդ էր գնացել, և հոգսերն ընկել էր երկրորդ քարտուղարի ուսերին: Հենց այդ ժամանակ էր, որ շրջանի վրա կախվեց իրական վտանգը:

Եկեղեցական կոմիտեի նախագահ Սերգեյ Գասպարյանը վաղ առավոտյան Երևանից զանգահարել էր կուսակցության շրջկոմի երկրորդ քարտուղարին, թե վաղը մեկ օրով ձեզ մոտ է գալու Լիբանանից Երևան ժամանած մի եպիսկոպոս՝ Դերենիկ Փոլադյան անուն-ազգանունով, որը նաև պատմաբան-գիտնական է, հետաքրքրված է Տաթևի վանքի արձանագրություններով: Գասպարյանը նաև տեղեկացրել էր, որ նա տաղանդավոր մարդ է, և հավանաբար շուտով դառնալու է Լիբանանի հայոց թեմի առաջնորդ:

Ի՜նչ թեմ, ի՜նչ եպիսկոպոս. Գորիսում ո՞վ էր տեսել այդպիսի բան:

Եկեղեցական կոմիտեում կազմվել և հեռախոսով շրջկոմի քարտուղարին էր թելադրվել ճանապարհային հետևյալ ծրագիրը. եպիսկոպոսը ինքնաթիռով առավոտյան ժամանելու է Սի-

սիան և օդանավակայանից անմիջապես գալու է ձեզ մոտ: Սի-սիան և Գորիս շրջանների սահմանագլխին նրան պետք է դիմա-վորել ոչ մեծ խմբով՝ երեք-չորս հոգով: Դիմավորող խումբը պետք է գլխավորի շրջանի իշխանության ղեկավարը՝ գործկոմի նախագահը: Արքեպիսկոպոսին Տաթև ուղեկցողը, ինչ գործի կամ պաշտոնի էլ լինի, պետք է ներկայանա որպես գյուղական դպրոցի դասատու և հնարավորինս լինի սակավախոս: Անհրա-ժեշտ է ամեն կերպ խուսափել նրան քաղաք տանելուց, բայց եթե շատ պնդի, ամեն ինչ պետք է անել «Գրիգոր Լուսավորիչի» մոտ չտանելու համար:

Այս ցուցումը ստանալուց հետո պատասխանատվության զգացումից խիստ լարված քարտուղարն ինձ անմիջապես կան-չեց իր մոտ: Չգիտեր՝ ինչից սկսել: Վերջապես, որոշ դադարից հետո դիմելով ինձ՝ ասաց.

- Արա՛, գլխներիս օյին ա գալու: Մի եպիսկոպոս ա, ինչ զհարմար ա, Գորիս ա գալիս: Էդ շան որդուն դու պիտի տանես Տաթև: Եթե ճանապարհին հարցուփորձ անի, կասես՝ Հալիձոր գյուղի դպրոցում դասատու եմ աշխատում:

Փորձանքից ազատվելու համար առարկեցի, թե ինձ՝ շրջկոմի պրոպագանդայի բաժնի վարիչիս, փաստորեն մղում եք խաբեության, որ էդ իմ գործը չէ:

- Բա ո՞ւմ դնենք էդ շան որդու հետ, պատասխանատու գործ ա ...

- Ես չգիտեմ,- ասացի: - Ձեզ են վերևից կարգադրել, Դուք էլ ում հարմար եք գտնում, հանձնարարե՛ք: Քաղաքում ինձնից արժանավոր հարյուրավոր մարդիկ կան:

- Ի՞նչ ա, դու է՞ս վճռողը: Ես քեզ եմ հարմար գտնում,- ջղա-յին շարժումներով բռնկվեց նա: - Դու ի՞նչ ա, ինքնագլո՞ւխ ես, մեծ պան ես քեզ երևակայո՞ւմ:

Տեսնելով, որ խոսակցությունը գնալով սպառնալից բնույթ է ստանում՝ ես համաձայնություն տվեցի:

- Գիտե՞ս, չէ՞, քեզ հունց պիտի պահես,- հարցրեց քարտուղարը և ավելացրեց. – պիտի վեչ մի զրուց չունենաս նրա հետ: Եթե հարցեր տա, չպատասխանես: Կասես՝ գյուղում չեմ: էդպես են ասել վերևից:

- Լավ,- ասացի,- եթե Տաթև գնալիս էդ մարդը ճանապարհին ասի՝ որտեղ է զուգարանը, ես ի՞նչ ասեմ, չպատասխանե՞մ:

- Չէ՛, մի՛ պատասխանի, էդպես են վերևից ասել: Թող գնա իրենց երկիրը, ինչ ղալաթ ուզում է, անի: էտ իմ գործը չի:

Վայրկյաններ անց նա հանդարտ տոնով հարցրեց.

- Արա՛, գյուղո՞ւմ ես՝ հինչ ա թեմը: Վերևից ասացին, որ նա շուտով թեմի ղեկավար ա դառնալու:

Ես պատասխանեցի, որ եկեղեցական գործերից գաղափար չունեմ, բայց գիտեմ, որ, օրինակ, մեր ֆուտբոլի կոմանդային թիմ ենք ասում:

- Ա՛, հինչ էս ախմախ-ախմախ խոսում: Ֆուտբոլի կամանդան ի՞նչ գործ ունի էդ շան որդու հետ:

Կարճատև ընդմիջումից հետո նա շարունակեց.

- Իսկ գյուղում ե՞ս, թե ով ա Լուսավոր Գրիգորիչը: Վերևից ասել են, որ էդ շան որդուն չտանեք Լուսավորի մոտ:

- Չգիտեմ, Լուսավոր անունով մարդ չեմ ճանաչում Գորիսում:

- Ինչ ասում ենք, մի հակառակ պան ես ասում: Թռի գրադարանի Պետրոսի մոտ, հարցրու, խելոք մարդ ա, կիմանա: Հարցրու թիմը ի՞նչ ա, ֆուտբոլինը չէ, էն: Տես՝ ինչ ա ... էտ Լուսավորն էլ իմացի՝ ով ա ...

Պետրոսը քաղաքային գրադարանի վարիչն էր: Հազիվ էր լսում: Գորիսի նախկին դաշնակցական մտավորականներից էր:

Քաղաքը բոլշևիկացնելուց հետո հալածանքների չէր ենթարկվել: Անսահման գիտելիքներ ուներ, և հավանաբար դա գնահատվել էր նոր իշխանությունների կողմից:

Շտապեցի գրադարան և նրա վարիչին բարձրաձայն համառոտ պատմեցի մեր գլխին եկածի մասին: Նա անմիջապես ինձ՝ համալսարանավարտիս, հասկացրեց, որ թեմը թիմի հետ ոչ մի առնչություն չունի: Թեմը ենթադրում է եկեղեցու որոշակի տարածքային կառավարում:

Շնորհակալություն հայտնելով՝ դուրս եկա գրադարանից, բայց դեռ խնդրահարույց էր մնում, թե ով է Լուսավորը:

Ճանապարհին հանկարծ հիշեցի, որ Պարսկաստանից ներգաղթած և Գորիսում հաստատված վարսավիր Խաչիկի ավագ եղբոր անունը Լուսավոր է: Իսկույն շտապեցի նրա մոտ:

- Խաչի՛կ, ո՞ւր է եղբայրդ՝ Լուսավորը,- հարցրի:

- Ի՞նչ կա,- տագնապած հարցրեց նա: - Երևան է գնացել:

Ես նրան բացատրեցի, որ Լուսավորը կապ ունի Լիբանանի ինչ-որ հոգևորականի հետ, որը վաղը գալու է Գորիս: Ցեկայից հանձնարարել են նրանց հանդիպումը կանխել:

Խաչիկի դեմքը մի վայրկյանում սևացավ:

- Իմ եղբայրը ոչ մի լիբանանցու հետ կապ չունի, Սիմոնյա՛ն ջան: Ախր էդ ի՞նչ ես ասում:

Ես վերադարձա ու շրջկոմի քարտուղարին զեկուցեցի իմ հանդիպումների մասին: Վերջապես իմացել էինք, թե ինչ է թեմը: Նաև բարի լուր էր, որ Լուսավորը դեռ գտնվում էր Երևանում, և չէր կայանա նրա հանդիպումը հոգևորականի հետ:

Մեր խոսակցությունը դեռ չէինք վերջացրել, երբ Երևանից լսվեց նոր հեռախոսազանգ: Այս անգամ ինքը՝ կենտկոմի քարտուղար Հրաչյա Մարգարյանն էր: Այդ երբ էր եղել, որ կենտկոմի քարտուղարը հեռախոսի մոտ կանչեր շրջկոմի երկրորդ քար-

տուղարի: Վերջինս շփոթված ունկնդրում էր հեռախոսաթելի մյուս ծայրից եկող լրացուցիչ ցուցումները: Իսկ երբ լսեց, թե՝ «Զգո՛ւյշ մնացեք, եպիսկոպոսը դաշնակցական է», քարացավ տեղում:

Անմիջապես շրջկոմի աշխատողների շրջանում լուր տարածվեց, թե դաշնակցական է գալիս շրջան: Մենք բոլորս ցնցված էինք, քանի որ դաշնակցականին պատկերացնում էինք թավ բեղերով, մորթե փափախը գլխին, մաուզերը կողքից կախած կատաղի մարդու, ինչպես «Կարմիր Զանգեզուր» ֆիլմում էր, իսկ հիմա մեր աչքերով պիտի տեսնեինք կենդանի դաշնակցականի:

Ո՞վ կմտածեր նման բան:

Շառից - փորձանքից հեռու լինելու համար շրջկոմի բաժնի վարիչներից ու հրահանգիչներից ոմանք, մեջտեղ բերելով զանազան պատրվակներ, այդ օրն իսկ մեկնեցին գյուղեր՝ որքան կարելի է քաղաքից հեռու:

Մոտ մեկ ժամ հետո Երևանից կրկին հեռախոսազանգ լսվեց: Դարձյալ Մարգարյանն էր: Նա մեր քարտուղարին խնդրեց թուղթ ու գրիչ վերցնել և թելադրեց ողջույնի այն խոսքը, որով շրջսովետի նախագահ ընկեր Մայսուրյանը Սիսիան-Գորիս շրջանների սահմանագլխին պիտի դիմեր արքեպիսկոպոսին: Ահա այդ ողջույնի բովանդակությունը. «Բարով եք եկել Զանգեզուրի մեր լեռնաշխարհ, մեծարգո սրբազա՛ն հայր»:

Շրջանի պաշտոնական ղեկավարը դրանից ավել չպետք է որևէ խոսք ասեր:

Միաժամանակ եկեղեցական կոմիտեի նախագահը կրկին հիշեցնում էր, իսկ քարտուղարը թղթի վրա գրում էր, որ եթե արքեպիսկոպոսը շատ համառի քաղաք գալ, ապա ոչ մի դեպքում

նրան չպետք է ցույց տալ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, թե չէ կխայտառակվենք:

Մենք նոր միայն գլխի ընկանք, որ Լուսավոր Գրիգորիչ անուն-հայրանունով մարդու մասին չէ խոսքը, և ես խեղճ Խաչիկին զուր եմ սարսափի մատնել:

Կոմիտեի նախագահը գերազանց գիտեր հանրապետության բոլոր եկեղեցիների տեղն ու դրանց վիճակը: Իսկ Գորիս քաղաքի միակ եկեղեցու դրությունն անմխիթարական էր:

1921 թվականին, երբ Գորիսը վերջնականապես բոլշևիկացվել էր, կարմիրբանակային, խնձորեսկցի Տիգրան Բեգլարյանը բարձրացել էր եկեղեցու գլուխ, խաչը պոկել ու շպրտել ներքև, ապա իջել, քահանային վռնդել ու կողպել աղոթատունը: Մեր օրերին եկեղեցին ցորենի պահեստ էր, իսկ հարակից տարածքը՝ շարքից դուրս եկած մեքենաների ու գյուղգործիքների աղբավայր:

Ահա թե ինչու եկեղեցական կոմիտեի նախագահը զգուշացնում էր արտասահմանից եկած բարձրաստիճան հոգևորականին չառաջնորդել այնտեղ:

Իսկ տվյալ իրավիճակի գլխավոր պատասխանատու անձին՝ շրջգործկոմի նախագահ ընկեր Մայսուրյանին, բաժին էր ընկել ծանր պարտականություն:

Արմենակ Մայսուրյանը տարիքն առած հին կոմունիստ էր, ազնիվ ու անկաշառ մարդ: Շրջանի հմուտ ղեկավարն առաջին անգամ պետք է կատարեր իր համար միանգամայն անհասկանալի պարտականություն:

- Մայսուրյանը գյուղում է,- դիմելով ինձ՝ ասաց քարտուղարը: - Որ եկավ, կուղարկեմ քեզ մոտ: Ա՛ռ, էս Երևանից հայտնած խոսքերն են: Կտաս իրեն: Դու պրոպագանդայի բաժնի վարիչ ես, դու էլ պատասխանատու ես էս բոլոր բաների համար:

Լավ սովորեցրո՛ւ նրան: Թող անգիր անի, դու ես պատասխանատուն: Հանկարծ խայտառակ չի տառնանք:

Ապա հոգոց հանելով ավելացրեց.

- Գիշերը շառ երազ եմ տեսալ:

Աշխատաժամը վաղուց վերջացել էր, երբ Մայսուրյանը եկավ: Քարտուղարը արդեն նրան հայտնել էր իր պարտականության մասին:

- Տոր տեսնամ՝ հինչ ա էդ թողթը,- ասաց նա:

Ես նրան մեկնեցի: Կարդաց, հետո թե՝

- էս հի՞նչ ա վեր: էնպես կկարդամ, վեր քեփդ կյա ...

- Ընկե՛ր Մայսուրյան,- ասացի,- կարդալու չես, այլ անգիր պիտի անես:

- Բա հո՞ւնց,- վրա բերեց նա:

Խնդրեցի տեքստը մի քանի անգամ կարդալ, հետո բանավոր արտաբերել կարդացածը:

- «Բարավ ես եկալ»,- բանավոր արտաբերեց նա և կանգ առավ: Մի տասը-տասնհինգ անգամ ևս կրկնեց, բայց արդյունքը նույնն էր. ոչինչ չէր ստացվում: Ես հուսահատվել էի:

Հանկարծ Մայսուրյանը բողոքեց, թե «լեռնաշխարհ» ու «մեծարգո» բառերը չի արտասանելու և պահանջեց դրանք հանել տեքստից:

Ես, որ արդեն համբերությունից դուրս էի եկել, բարձրաձայնեցի, թե դա հնարավոր բան չէ, քանի որ տեքստը հաստատված է կենտկոմում, և եթե նշված երկու բառերը ինքնագլուխ հանվի, ապա հնարավոր է, որ պատասխան տա կուսակցական տոմսով:

- Արա՛, էս խոխան շառ ա, հա՛,- ասաց նա և գլուխը կախեց:

Վայրկյաններ անց նա պահանջեց.

- Տո՛ւր, նորից եմ կարդում:

Տվեցի: Նորից մի քանի անգամ կարդաց ու տեքստը վերադարձրեց:

Ոչինչ չէր ստացվում:

- Լավ,- ասացի,- ընկե՛ր Մայսուրյան, գուցե տեքստը վերցնես, երեկոյան տանը պարապես ու անգիր անես:

Ուրախացավ:

- Ապրե՛ս տու հա՜,- ասաց,- կարգին տղա ես: Տանը ընենց եմ անգիր ընելու, վեր քեփդ կյալու ա:

Մենք բաժանվեցինք՝ պայմանավորվելով, որ ինքը տեքստի վրա լարված աշխատելու է, իսկ ես ժամը 11-ի կողմերը հեռախոսով զանգահարելու եմ՝ իմանալու արդյունքները:

Պայմանավորվածության համաձայն՝ տնից զանգահարում եմ:

- Կործը շատ լավ ա առաջ քինում, արխային կաց,- ասաց նա,- հեսա անգիր եմ ընելու մինչև քնիլը, լափ արխային կաց:

Գիշերը լուսացրի տագնապների մեջ:

Առավոտ շուտ աշխատանքի գալով՝ սպասում եմ ընկեր Մայսուրյանին: Եկավ: Հարցնում եմ:

- Կյործերը լավ են քինում, մտածես վեչ,- եղավ պատասխանը:

Տեքստը նրանից վերցնելով՝ խնդրեցի արտասանել: Նա լուռ էր, իսկ նշված երկու ատելի բառերը թանաքով այնպես էին ջնջված, որ հետքերն անգամ չէին երևում:

- Վախես վեչ,- ասաց: - Կտեսնաս՝ հինչ լավ եմ ըսիլու, մտածես վեչ, արխային կաց: Քինացինք:

Նստելով նրա մեքենան՝ ճանապարհ ընկանք: Հետևից գալիս էր շրջսովետի «Վիլիս» մեքենան: Տեղ հասանք և սահմանագլխին սպասում էինք:

Վերջապես հեռվում երևաց Սիսիանի շրջգործկոմի նախագահի ավտոմեքենան: Կանգ առավ, և այնտեղից դուրս եկավ սրբազան հայրը: Տպավորիչ էր. մեր առջև մի գեղեցիկ տղա-

մարդ էր՝ սև փարաջայով, լանջախաչը կրծքին:

Ընկեր Մայսուրյանն ու արքեպիսկոպոսը մոտեցան, ձեռք մեկնեցին իրար:

- Բարով ես եկալ մեր ղոլերը,- ասաց Մայսուրյանը և կանգ առավ:

Ոչինչ չէր հիշում: Մի պահ լռություն էր, բայց հետո թե՝

- Բարով ես եկալ, ընկե՛ր տերտեր ...

Պահո՜ ...

Ես գետին էի մտել, իսկ ընկեր Մայսուրյանը շատ խաղաղ էր, կարծես ոչինչ չէր պատահել:

- Գյուդում եմ, վեր Տաթև ես քինալու,- ասաց նա արքեպիսկոպոսին և մատով ցույց տալով ինձ՝ շարունակեց,- էս խուխի հետ ես քինալու: Կուսակցության ռայկոմում ա ըշխադում: Միասին քինացաք:

Սրբազան հայրը չհարցրեց, թե ինչ է ռայկոմը: Երևի քաջ գիտեր:

«Վիլիսը» մոտեցավ, և արքեպիսկոպոսի հետ մեկնեցինք Տաթև: Ընկեր Մայսուրյանը, կարծես ոչինչ չէր պատահել, վերադարձել էր քաղաք՝ իր գործին:

Տեղի ունեցածը երկար ժամանակ քաղաքի տղերքի համար ծիծաղի, զվարճանքի նյութ էր: Պատմելով ու վերապատմելով նրանք մոգոնում ու դեպքին ավելացնում էին նորանոր չեղած դրվագներ:

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԽՄԿԿ կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայի երկու անդամների՝ Բորիս Մկրտչյանին և ինձ, կանչել էին ԽՄԿԿ կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժին:

Բորիս Միխայլովիչն իմ թանկագին ընկերն էր, մեծատաղանդ լրագրող, որը հետագայում դառնալու էր "Голос Армении" թերթի հիմնադիրը և շատ տարիներ, մինչև իր ցավալի մահը, վարելու էր գլխավոր խմբագրի պաշտոնը:

Մեզ կենտկոմ էին կանչել՝ կարծիք հայտնելու Հայաստանի ռադիոպետկոմի թույլտվությամբ եթեր արձակված մի ռադիոպիեսի մասին, որի հեղինակն էր Երևանի՝ այն տարիների ճանաչված մտավորականներից մեկը:

Ռադիոբեմադրությունը նվիրված էր հայոց Մեծ եղեռնի օրերին Մեծն Կոմիտասի կյանքի ողբերգական դրվագներին, նրա կրած հոգեկան տանջանքներին՝ ի տես իր ժողովրդի նահատակության: Նրա փխրուն հոգին չէր դիմացել համազգային ողբերգությունից ծնված մեծ ցավին:

Բեմադրությունը կենտկոմ էր հասել իր, իբր, ազգայնամոլական բովանդակության համար:

Մեզ տարան զանազան սարքավորումներով հագեցած մի սենյակ, ուր ներկա էին կենտկոմի աշխատողներից 3-4 հոգի: Սկսեցինք լսել ռադիոբեմադրումը: Շատ էինք ազդվել և չէինք թաքցնում մեր հոգեկան ալեկոծումները:

Հոյակա՜պ էր:

Ռուս պաշտոնյաները մեզ նայում էին զարմացած: Նրանք կարծել էին, թե մենք՝ որպես կենտկոմի ակադեմիայի ունկնդիրներ, կդատապարտենք Երևանում հայտնի մի քանի բանսարկուների կողմից աղմուկ բարձրացնելու պատճառով Մոսկվայում հայտնված այդ հրաշալի ստեղծագործությունը:

Երբ վերջացավ ունկնդրությունը, հարցեր եղան: Բորյան անճանաչելի էր: Ռուսախոս էր, բայց նման չէր Հայաստանի այն ժամանակների ռուսախոս իր շրջապատին: Իր ժողովրդի արժանավոր զավակ էր՝ անկեղծ ու անվախ: Խոսքը հատու էր ու փաստարկված:

Եվ դա հայոց Մեծ եղեռնի 50-ամյակի համազգային շարժումից վեց տարի առաջ էր:

ԿԱՐՈՏ

Մոսկովյան ակադեմիայում դասերի ավարտից հետո Բորիս Մկրտչյանի հետ դուրս էինք եկել զբոսնելու:

Հասել էինք Նիկիտսկի դարպասների մոտ, երբ նկատեցի, որ արդեն բավական ժամանակ երկու-երեք մետր հեռավորությամբ մեր ետևից գալիս են սլավոնական արտաքինով երկու անձնավորություններ: Բորյային կասկած հայտնեցի, որ դրանք կարող են «կագեբե»ականներ լինել: Նա շուռ եկավ. պարզվեց՝ զինվորականներ են: Բայց ինչո՞ւ էին մեզանով այդպես հետաքրքրված: Բորիսին առաջարկեցի ստուգելու համար թեքվել երկու-երեք նրբանցքներով, բայց զինվորականները կրնկակոխ շարունակում էին հետևել մեզ՝ արդեն մեկ-երկու մետր հեռավորությամբ:

Համբերություններս հատել էին. Բորիսը մի պահ արագ շուռ եկավ և զայրալից հարցրեց. “Слушайте товарищи. Почему так упорно преследуйте нас? Кто вам дал это право, шпионов нашли, что ли”?:

Բորիսի այդ խոսքերի վրա զինվորականները ժպտալով ընդհուպ մոտեցան մեզ:

- Կարոտել ենք ձեզ, շա՜տ ենք կարոտել,- իրար հերթ չտալով՝ հայերեն ասացին նրանք: - Ձեր հայերեն խոսքն էինք ուզում լսել: Կարոտել ենք մեր գյուղն ու Սևանա լիճը, մեր դպրոցն ու մեր ընկերներին:

Եվ սկսվեց մի մտերմիկ զրույց: Ավելի շատ նրանք էին խոսում ու հարցուփորձ անում: Պատմեցին, որ միասին ավարտել են նույն գյուղի դպրոցը, միասին զորակոչվել են բանակ և միասին էլ ծառայության են ուղարկվել հեռավոր Կամչատկա՝ ռազմական մի փակ տեղամաս, ուր և մինչև հիմա ծառայում են մայորի զինվորական կոչումով: Ամուսնացել են տեղացի աղջիկների հետ, երեխաներ ունեն: Երկու օր առաջ են եկել Մոսկվա, ստացել նոր նշանակում և առավոտյան մեկնելու են ծառայության վայր:

Զրույցը կարող էր դեռ երկար տևել, բայց Բորյան ասաց, թե կարևոր գործ ունենք և պետք է գնանք: Նրանք մոտեցան ու գրկեցին մեզ:

Այդպես էլ է լինում...

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԸ

«Նաիրի» կինոթատրոնի տնօրենն էր Սիմոն Պետրովիչը, որի հետ շատ լավ հարաբերություններ ունեի: Հաճախ էի լինում նրա՝ առաջին հարկի փոքր աշխատասենյակ-խցում, որը լիքն էր գրքերով: Մինչև ուղնուծուծը մոլի կոմունիստ էր: Ոչ մի շեղում չէր ընդունում մարքս-լենինյան տեսությունից: Ստալինի մեծ ջատագով էր:

Հայրենական պատերազմի առաջին օրերին կամավոր էր գրվել և նշանակվել էր ծառայելու հայկական դիվիզիայում: Ուտելիքի կամ հագնելիքի փոխարեն նա իր հետ վերցրել էր մարքսիզմ-լենինիզմի դասականներից գրքեր: Նա մարտի էր գնում՝ այդ գրքերը մեջքապարկում խնամքով դասավորած: Արյունալի կռիվներից հետո՝ կարճատև դադարի պահերին, բացում էր ուսապարկը, հանում որևէ գիրք և կարդում հազար անգամ կարդացածը:

Պատերազմի ամենաթեժ օրերին նրանց դիվիզիան Ղրիմի մարտերում կրած մեծ կորուստներից հետո անցել էր Կերչի նեղուցը՝ ժամանակավորապես հանգիստ առնելու, վերադասավորվելու և համալրելու նոսրացած շարքերը:

Այդ դիվիզիայի կոմիսարն էր եղել Սուրեն Թովմասյանը: Ավտոմեքենայով դուրս գալով՝ կոմիսարը եկել էր՝ հերթական ստուգումները կատարելու և պարզելու, թե անհաջող կռիվներից հետո ինչպես են վերականգնվում զինվորական շարքերը, ինչպիսին է մարտիկների բարոյահոգեբանական վիճակը:

Գումարտակներից մեկի հրամանատարի հետ նրա վրանում ունեցած զրույցից հետո դուրս են գալիս շրջայցի: Մոտենում էին մեկ այս, մեկ մյուս վաշտին, հարցազրույց ունենում մարտիկների հետ:

Նկատել էր, որ հեռվում միայնակ նստած մարտիկներից մեկը, առանձնացած ու գլուխը կախ, զբաղված է ինչ-որ բանով: Հետաքրքրվել էր և գումարտակի հրամանատարի հետ քայլել դեպի նա: Տեսնում են՝ մարտիկը, նստած երկու մետրանոց գերմանական չպայթած ռումբի վրա, ավտոմատը դրած կողքին, անշարժ ու դրսի աշխարհից անջատված, գիրք է կարդում: Կոմիսարն ու գումարտակի հրամանատարը արդեն զինվորի կողքին էին, բայց նա չէր կարողանում կտրվել գրքից ու չէր բարձրացնում գլուխը: Վերջապես, հրամանատարը թափահարում է ուսը՝ ասելով. «Արթնացի՛ր, Սիմո՛ն Պետրովիչ, դիվիզիայի կոմիսարն է կողքիդ»: Բանից պարզվում է, որ կոմիսարը լավ գիտեր զինվորին. նրանք գրկախառնվում են: Հաջորդ վայրկյանին Սիմոնը նրանց հրավիրում է նստել իր կողքին՝ չպայթած ռումբի վրա, բայց նրանք, շնորհակալություն հայտնելով, հրաժարվում են: Կոմիսարը հետաքրքրվում է, թե այս խառնակ ժամանակներում ինչ է կարդում զինվորը: Պարզվում է, որ Վլադիմիր Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» փիլիսոփայական շատ բարդ գիրքն է՝ քրքրված ու սևացած:

Կոմիսարն ու հրամանատարը հիացել էին այդ մարդու արարքից:

- Ա՜յ մարդ, դրա ժամանա՞կն է,- հարցրել էր կոմիսարը:

- Մարքսիզմի կլասիկների գրվածքները ժամանակ չեն հարցնում,- պատասխանել էր Սիմոն Պետրովիչը:

Կոմիսարի հարցին, թե կոնկրետ հիմա ինչ խնդիր է ուզում պարզել մարտիկը, սա պատասխանում է, թե գրքում մի նախադասություն կա, որ չի կարողանում հասկանալ:

- Մտածում եմ, որ թարգմանական սխալ է: Եթե ռուսերեն օրինակը մոտս լիներ, կհամեմատեի,- ափսոսանքով ասում է նա:

- Ուրեմն ռուսերեն օրինա՞կն էլ պիտի հետդ բերեիր,- հարցնում է դիվիզիայի կոմիսարը:

- Չէ՛, պայուսակումս տեղ չկար,- պատասխանում է Սիմոն Պետրովիչը:

Ո՞վ էր տեսել կամ լսել այդպիսի բան:

Երբ հրաժեշտ են տալիս մարտիկին և հեռանում, կոմիսարը գումարտակի հրամանատարին հարցնում է.

- Իսկ ինչպե՞ս է մարտերի ժամանակ իրեն դրսևորում Սիմոնը:

- Գերազանց, ընկե՛ր կոմիսար: Կարգապահ ու քաջարի մարտիկ է: Կռվի է գնում՝ գրքերը ուսապարկում խնամքով դասավորած: Մարտից հետո՝ կարճատև դադարի ժամանակ, անմիջապես բացում է ուսապարկը, հանում գրքերից մեկը և կարդում հազար անգամ կարդացածը:

Իսկ արյունալի շատ մարտեր դեռ առջևում էին:

ԽԵԼՔԸ ԳԼԽԻՆ ՄԱՐԴԸ

60-ականների սկիզբն էր: Այն տարիներին Հայաստանի կոմկուսի կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնում գործում էր արտահաստիքային քարոզչական խումբ՝ բաղկացած շուրջ 30 հոգուց: Նրանում ընդգրկված էին մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներ, գիտահետազոտական հիմնարկների աշխատողներ, մայրաքաղաքի մտավորականության ուրիշ ներկայացուցիչներ: Ես նույնպես խմբի անդամ էի:

Մեր խնդիրն էր պետական նշանավոր հոբելյանների, կոմկուսի ղեկավար մարմինների ընդունած կարևորագույն որոշումների լայնորեն մասսայականացումն աշխատավորների շրջանում:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հերթական տարեդարձի առթիվ մեր արտահաստիքային խմբի հավաքն այս անգամ տեղի էր ունենում կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, նշանավոր Գևորգ Հայրյանի ընդարձակ աշխատասենյակում:

Հայրյանը հզոր ինտելեկտով օժտված մարդ էր, գրող ու հրապարակախոս, միաժամանակ արտակարգ սրամիտ, կատակների ու ծաղրանքների հեղեղը շուրթերին:

Ներկաներից մի քանիսին, հատկապես նրանց, որոնց հետ մոտ էր, կատակներով ծաղկանախշելուց հետո Հայրյանը մեզ հանձնարարեց մեկնել շրջաններ, միաժամանակ, ինչպես ըն-

դունված էր, մի քանի ղեկավար ցուցումներ տվեց: Այնուհետև իր տեղակալին պատվիրեց կարդալ ցուցակը, թե ներկաներից ով որ շրջան պետք է մեկնի:

Խորհրդակցությունը դեռ շարունակվում էր, երբ Հայրյանի քարտուղարուհի Գոհարը կամացուկ ներս մտավ և, մոտենալով նրան, կամացուկ, բայց բոլորիս լսելի ձայնով տեղեկացրեց, որ գրականության ինստիտուտի գիտաշխատող Սուրեն Շտիկյանը, որին կանչել է իր մոտ, դժգոհեց, թե արդեն մեկ ժամից ավելի ընդունարանում է, որ այլևս չի կարող էլի մնալ, քանի որ օդանավակայանում պետք է դիմավորի Մոսկվայից վերադարձող կնոջը, և թողեց ու հեռացավ:

Հայրյանի դեմքն անմիջապես փոխվեց. վայրկյանների ընթացքում այն դարձավ այլայլված ու դաժան: Հավանաբար մտածում էր՝ ինքը ինչ- որ մի գիտաշխատողի կանչել է, իսկ սա թույլ է տալիս նման հանդգնություն:

- Շո՛ւտ թռիր և հե՛տ բեր այդ համբակին,- զայրալից գոչեց նա: Գոհարն իրար անցնելով անմիջապես դուրս թռավ:

Մինչ հավաքին ներկա գտնվողները սսկվել էին, Հայրյանը հարայ-հրոցով Շտիկյանին այպանում էր նրա բացակայությամբ:

Բանն այն էր, որ դրանից երկու-երեք ամիս առաջ Բեյրութում լույս տեսնող գրական-քաղաքական հանդեսներից մեկում Սուրենը տպագրել էր հոդված, որով բարձր էր գնահատել դաշնակցական հայտնի գրողներից մեկի՝ Համաստեղի գրական վաստակը: Եվ հիմա նա պետք է պատասխան տար:

Գոհարին հաջողվել էր շենքից հեռացող Սուրենին հետ բերել:

Վերջապես քարտուղարուհին ներս մտավ ու հաղորդեց, թե Շտիկյանը ընդունարանում է:

- Կանչի՛ր, թող էդ համբակը գա,- որոտաց պաշտոնյան:

Դռների արանքում նախ երևացին գրականագետի ակնոցները, հետո՝ գլուխը: Կես քայլ անելուց հետո նա կանգ առավ: Շատ բարի ու անմեղ տեսքով այդ մարդը կյանքում երբեք գործ չէր ունեցել բարձրաստիճան պաշտոնյայի հետ, և հիմա միանգամից կանչել էին կենտկոմ:

- Արի՛, արի՛, մոտեցի՛ր,- բարձրաձայնեց պաշտոնյան:

Շտիկյանը, մեկ-երկու քայլ անելով, կանգ առավ:

Հայրյանը գործի անցավ:

- Դու սրա՛ն նայիր և իր արած ղալաթին,- որոտաց նա: - Դու գիտաշխատո՞ղ ես, թե՞ ծակ քաղաքական գործիչ: Ի՞նչ գործ ունես դաշնակների հետ: Շա՞տ ես ուզում բանտում փտել: Սրա՛ն մի նայիր: Հերոս ա հայտնվել:

Բաժնի վարիչը երկար ժամանակ եռանդով շարունակում էր սպառնալիքները՝ դրանք համեմելով հարուստ լեզվից առատորեն հորդող հեգնանքախառն սրամտություններով:

Սուրենն անտարբեր լուռ էր: Կարծես նրա մտքերն ուրիշ տեղ էին: Իսկ մենք բոլորս լարված սպասում էինք, թե ինչով է վերջանալու այդ բոլորը:

Փոքր դադարից հետո Հայրյանը գնաց դեպի գրասեղանը: Մենք շունչ քաշեցինք՝ կարծելով, թե դա վերջին արարն է: Բայց դեռ չնստած բազկաթոռին՝ նա շուռ եկավ դեպի Սուրենը և, ցուցամատը թափահարելով, սպառնաց.

- Եթե մեկ էլ գործ ունենաս դաշնակների հետ, ես քո ... շալվարդ կհանեմ ... Գնա՛ ...

Այդ սպառնալիքը լսելուց հետո Սուրենը վայրկենապես շուռ եկավ՝ միաժամանակ ձեռքերով շարժումներ անելով գոտկատեղի շրջանում: Վայրկյաններ անց նրա շալվարն ընկել էր ծնկներին:

- Ի՞նչ ես անում, ա՛յ տղա,- գոռաց Հայրյանը:

- Շալվարս եմ հանում, ընկե՛ր Հայրյան,- անմեղ դեմքով պատասխանեց նա: - Ես չեմ ուզում, որ դուք նեղություն քաշեք: Ես ինքս եմ հանում ...

Ձվարճասեր ու կատակների մեծ սիրահար, նաև ոտքի վրա անեկդոտներ հնարող Հայրյանի դեմքն իսկույն պայծառացավ: Նա փռթկաց և ձեռքի ափերն իրար զարկելով՝ սկսեց բարձրաձայն հռհռալ: Երկար ժամանակ նա չէր կարողանում զսպել ծիծաղը: Ռոպեների ընթացքում Սուրենը նրա համար դարձել էր սիրելի: Ընդհուպ մոտենալով շալվարը ծնկներին ընկած գրականագետին՝ մեծագույն հաճույք ստացած կենտկոմի բաժնի վարիչը, ձեռքը դնելով նրա ուսին, բարձրաձայնեց.

- Դու ի՞նչ լավ տղա ես, արա՛: Մինչև հիմա ես չգիտեի, որ ձեր ինստիտուտում խելքը գլխին մարդ կա: Գնա՛, սրանից հետո ինչի մասին ուզում ես գրի՛ր ու տպագրի՛ր ...

Սուրենն անդրավարտիքը վեր քաշեց:

ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ – ՎԱՆԵՑԻ

Ընթերցողը կարող է կարծել, թե այս արարքի «հերոսը» առնվազն ցինիկ է կամ մտքով տկար: Իրականում Սուրենը փայլուն մտավորական էր՝ բառիս իսկական իմաստով, իմ ջերմագին բարեկամն էր և ընկերը:

Բազմաշնորհ գրականագետ էր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պետական մրցանակի դափնեկիր: Նա հեղինակել էր երկու տասնյակից ավելի մենագրություն և շուրջ 300 գիտական հոդված: Հատկապես մեծ արձագանք էին գտել Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական ժառանգությանը, նրա հայրենասիրական պոեզիային նվիրված Շտիկյանի բարձրարժեք աշխատությունները: Սուրենը կազմել էր «Հայ նոր գրականության մեծարժեք ժամանակագրությունը (1801-1875 թթ.)» Ն.U.O.S.S. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կյանքի ժամանակագրությունը և նրա աշխատությունների մատենագրությունը, հեղինակել էր շատ այլ գրվածքներ:

Նա լի էր հումորով, երեխայի պես միամիտ էր: Կյանքի վերջին տարիները համընկան Հայաստանի անկախության ցուրտ ու մութ տարիներին: Սուրենը դժվարությունների դեմ անօգնական եղավ, չէր դիմանում ստեղծված անտանելի պայմաններին: Ձմեռները մի քանի տարի իսկական տանջանք էին ընտանիքի համար: Վառելիք չկար: Բժշկուհի կինը՝ Մելանյան, և երկու աղջիկները՝ Նարինեն ու Տաթևիկը, սառչում էին ցրտից: Սուրենը,

որ ընտանիքի միակ տղամարդն էր, ստիպված տնից դուրս էր գալիս՝ այս ու այն տեղից վառելու մի բան գտնելու: Փողոցներից հավաքում էր պատահաբար ընկած փայտի ու թղթի կտորներ, այն ամենը, ինչով կարելի էր քիչումիչ տաքացնել տունը:

Մեր ձեռքի տակ է այդ անտանելի օրերին Սուրենի կատարած գրառումները՝ «Դատապարտվածի օրագիրը» վերնագրով: Նա թղթին էր հանձնել իր դառը մտորումները 90-ականներին ստեղծված անտանելի վիճակի մասին, որոնցից մի քանիսը հատվածաբար հանձնում ենք ընթերցողի ուշադրությանը: Օրագիրը ցույց է տալիս, թե այդ դժվարին օրերին որքան անօգնական էր հայ մտավորականը: Այն հնարավոր չէ կարդալ առանց տխրության ու ցավի:

Նոյեմբերի 15, երկուշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 14°

Արթնացել եմ ժ. 9-ին, եթե կարելի է այսպես ասել, «ողբերգական հանգիստ» վիճակում: Այսպիսի վիճակում երևի լինում է այն հիվանդը, որը գիտե, որ, միևնույնն է, իրեն փրկություն չկա, կամ պատժի առավելագույն չափին դատապարտված այն հանցագործը, որը հաստատ գիտե, որ ինչ էլ անի-չանի, իր նկատմամբ պատիժը, միևնույնն է, իրագործելու են: Լույս չկա, ջուր չկա ...

Այսօր մենք պետք է վառարան դնենք: Չգիտեմ՝ իմ օրագիրը կարդացող որևէ եվրոպացի կհասկանա՞, թե ինչ բան է վառարան դնելը, բայց ես պետք է ասեմ, որ, օրինակ, մեր տանը վառարան դնում էինք 1943-45-ական թվականներին և հետո նույնիսկ մոռացանք այդ մասին: Իսկ հիմա 1993 թվականն է: Այսինքն՝ այսօր՝ 1993 թվականին, մենք շպրտվել ենք մինչև 1943-45-ի մակարդակը:

Երեկ հատվածաբար լողացել եմ: Այս էլ չի հասկանալու որևէ քիչ թե շատ քաղաքակիրթ երկրի քաղաքացի, ուստի բացատրեմ: Քանի որ տաք ջուրը խնդիր է, ապա մի անգամ «լողանում ենք» մինչև գոտկատեղ՝ կռանալով վաննայի վրա, իսկ հաջորդ օրը կամ հաջորդ անգամ «լողանում ենք»՝ լվանալով գոտկատեղից ցած գտնվող մասերը: Գազով տաքացվող և ցնցուղից ցած թափվող ջրի տակ լողանալու մասին արդեն մոռացել ենք: Բա՛, սա էլ է անկախության բարիքներից մեկը: Ահագին էլ գործ ունեմ անելու: Հետաքրքիր է, որ նույնիսկ այս «դրախտային» պայմաններում աշխատանքս չեմ դադարեցնում: Գոնե գրել-ջնջելով զբաղվելով՝ մոռանում ես այս զզվելի իրականությունը:

Նոյեմբերի 16, երեքշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 13, 5°

Երանի առավոտյան կողքիս լինի մի կինոնկարահանող, որ սերունդների համար անմահացնի այն մի քանի րոպեները, երբ անկողնուց ելնում է Սուրեն Շտիկյանը:

Արարողությունն սկսվում է նրանով, որ հանում եմ «անկողնային» գուլպաներս, որովհետև ես քնում եմ գուլպաներ հագած, քանզի ցուրտ է, և հագնում եմ «դրսի», այսինքն՝ քիչ ավելի տաք գուլպաները: Հետո հագնում եմ վերնաշապիկս և տնային շալվարս: Այս վերջինը հագնում եմ «հետևառաջ», այսինքն՝ թարս, այսինքն՝ այնպես, որ առաջին մասը հետևում լինի, իսկ հետևի մասը՝ առջևում: Ինչո՞ւ: Որովհետև այս դեպքում շալվարի մաշվածությունը հավասարապես կտարածվի թե՛ առջևի, և թե՛ հետևի վրա, և, ուրեմն, շալվարս ուշ կմաշվի: Ի՞նչ փույթ, թե ոչ մի նորմալ մարդ այս ձևով շալվար չի հագնում նույնիսկ տանը, թե իմ ծանոթ-բարեկամները հենց իմ

երեսին ծիծաղում են՝ տեսնելով այսպիսի ծաղրածուի կերպարանքով: Ես հնարավորինս պետք է խնայեմ ամեն ինչ, խնայեմ ամեն մի կոպեկը, խնայեմ թեկուզ և այս գնով՝ ինքս ինձ խենթի տեղ դնելով, քանզի մեր ամեն մի կոպեկը հաշված է: Փող քիչ ենք ստանում, իսկ ապրանքների գները թանկանում են բառացիորեն ամեն օր: Հետո վերնաշապկի վրայից հագնում եմ «իշլիկս» (սա թուրքերեն բառ է, և գործածում էր տատիկս), դրա վրայից էլ՝ էլի անթև ջեմպրը, դրա վրայից՝ արդեն թևավոր բրդյա ջեմպրս, վրայից՝ իմ տնային հնամաշ կոստյումս, գլխիս եմ դնում Տաթևիկիս գործած կանաչ գլխարկը, որը ավելի շուտ կվայելի կրկեսի ծաղրածուներին ...

Նոյեմբերի 16, երեքշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 13, 5°

Երեկ գնացի նավթ առնելու: Մեկ լիտր նավթ, որն արժի 7000 ռուբլի, իսկ որպեսզի ավելի պարզ լինի, ասեմ, որ իմ աշխատավարձը 30.000 ռուբլի է: Նավթ լցնելու արարողության պահին ներս մտավ ըստ ամենայնի սովորական մի տղա և, ձեռքի երկու կանիստրները դնելով գետնին, տիրաբար հրահանգեց. «Քառասուն լիտր, ապերո՛»: Մինչ «ապերոն» զբաղված էր նրա հրաման-կարգադրությունը կատարելով, վերջինս ձեռքը տարավ գրպանը և ...

Եվ այն, ինչ հանեց գրպանից, ստիպեց ինձ ցնցվել տեղումս: Մի կույտ տասհազարանոց հանեց գրպանից, երևի մի 5-6 հարյուր հատ տասհազարանոց: Անփութորեն սկսեց հաշվել՝ «ապերոյին» վճարելու համար, իսկ ես հապշտապ դուրս թռա այդտեղից:

Նոյեմբերի 18, հինգշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12,8°

Այն, ինչ որ գրելու եմ ստորև, պատմել է իմ այն ծանոթներից մեկը, որի ասածին չհավատալ չեմ կարող: Նա պատմում էր, որ մահացել էր իր հարևանը, որը մտավորական ընտանիքի հայր էր, մասնագիտությամբ՝ ինժեներ-քիմիկոս: Նրա երեխաներից մեկը մանկավարժ էր, մյուսը՝ տնտեսագետ, կինը ժամանակին եղել էր համալսարանի դասախոս, այժմ թոշակառու էր: Հանգուցյալի հարազատները ոչ միայն փող չեն ունեցել իրենց հարազատի թաղումը կազմակերպելու համար, այլև չեն կարողացել անգամ մի հասարակ դագաղ գնել: Հարցը լուծել են հետևյալ կերպ. հանգուցյալին փաթաթել են սպիտակ սավանի մեջ և կեսգիշերին հանձնել հողին: Կեսգիշերին, որովհետև լույս-ցերեկով մարդիկ կարող էին տեսնել ...

** * **

- Դուք ի՞նչ եք անում երեկոյան, ընկե՛ր Զրբաշյան,- անցյալ օրը հարցրի մեր ինստիտուտի տնօրենին: - Ժամը 6-ից հետո արդեն մութն ընկնում է, ո՛չ գրել, ո՛չ կարդալ չի լինում, որևէ այլ գործ անելն էլ անհնար է: Ես, օրինակ, հենց այնպես նստում-մնում եմ կամ վեճ-աղմուկ եմ անում մերոնց հետ: Դուք ի՞նչ եք անում երեկոյան:

Զրբաշյանը կողքանց նայեց ինձ:

- Ինչ եմ անո՞ւմ: Ապուշանում եմ:

Նոյեմբերի 28, կիրակի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12, 5°

Երեկ գնացի հացի և մեկ ու կես ժամ հերթ կանգնելուց հետո առա մեզ հասանելիք մի քանի կտոր հացը: Իսկ որովհետև հղփացած ու լկտի լակոտների մի խումբ, առանց հերթ ու կարգ հարցնելու, փորձեց խցկվել առաջ, բարձրացրի ձայնս, հետո՝ ձեռքս, հետո բռունցքով խփեցի մի լակոտի: Հետո եկա տուն, սրտի նոպա ունեցա: Մինչև հիմա էլ նստվածք է մնացել հոգուս վրա:

Ախր 63 տարեկան ես, գիտությունների թեկնածու, լավ-վատ հայտնի մարդ ես, հացի խանութում էլ քեզ ճանաչողները քիչ չէին, էլ բռնցքակռիվ անելը ո՞րն է, Սուրե՛ն Շտիկյան:

* * *

Լեչկոմիսիայի հիվանդանոցում, որտեղ աշխատում է կինս՝ Մելանյան, մահացության դեպք էր տեղի ունեցել: Եվ չորրորդ հարկում մահացած հանգուցյալին երկու սանիտարուհիներ տեղափոխել էին վերելակ՝ առաջին հարկ իջեցնելու համար: Իրենք էլ տեղ էին գրավել վերելակում՝ մահացածի կողքին, սեղմել էին ներքև իջնելու համապատասխան կոճակը: Վերելակը իջել էր մինչև ճանապարհի կեսը և ...

Եվ հենց այդ ժամանակ լույսն անջատվել էր: Մինչև լսելի էր դարձել բուժաշխատողների օրհասական գոռոցներն ու ճիչերը, մինչև պարզել էին, թե որտեղ է էլեկտրիկը, մինչև ճշտել էին, որ սա, իր աշխատանքն արդեն ավարտված համարելով, տուն է գնացել, մինչև գնացել ու տնից բերել էին նրան, մինչև սա բացել էր վերելակի դուռը, անցել էր ավելի քան երկու ժամ:

Երկու ժամ երկու սանիտարուհիներ վերելակի փոքրիկ տարածության մեջ՝ հանգուցյալի հետ կողք կողքի ...

Դեկտեմբերի 10, ուրբաթ, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10°

Տասը աստիճանը առավոտյան է, և սա մի քիչ մխիթարում է ինձ: Օրվա ընթացքում կդառնա մինչև 11, և կարծես թե լավ կլինի:

Գրողների միության գրադարանից «ցրեցի» (թոռնիկիս բառն է, չի կարողանում ասել «թռցրի») «Հուշարար միություն» և Բեյրութի «Շիրակ» ամսագրերի 10-12 համարները և Անդրանիկ Սարյանի «Պատմվածքներ» ժողովածուի «Ա» հատորը: Անդրանիկ Սարյանի ժողովածուն էլ հուզիչ մակագրություն ունի՝ «Սովետական գրականութիւն» ամսագրի պատուարժան խմբագրութեանը, խորին հարգանքներով՝ Անդրանիկ Սարեան, Թեհրան-Իրան, 3.03.86: Ցրեցի՝ «վասն մեր վառարանի»:

... Ընդհանրապես ասած, գիր-գրականություն «ցրելը» գոնե ինձ համար շատ էլ դժվար բան չէ: Այն միջավայրերը, որտեղ ես լինում եմ, ինչքան ասես կա այդ ամենից և որ կարևոր է, դրանք վստահված են օգտվողների ազնվությանը և նրանց հոգատարությանն ու խնամքին: Չէ՞ որ Ազգային գրադարանի, Մատենադարանի, Գրականության ու արվեստի թանգարանի և նման այլ տեղերի ընթերցասրահներում անկարելի է պահանջել, որ սրահի վարիչը աչքերը չորս արած հետևի բոլոր պահարանների գրքերին: Ինչքա՛ն անգամ է պատահել, որ նրանք որոշ ժամանակով դուրս են եկել սրահներից՝ այնտեղ եղած գիր-գրականությունը վստահելով ընթերցողների ազնվությանն ու հոգատարությանը: Ահա նման դեպքերում և մանավանդ, երբ ընթերցասրահում էլ լինում եմ միայն ես ...

Կա նաև հարցի մյուս, այսպես ասած բարոյագեղագիտական կողմը. ընթերցասրահում նստած է Սուրեն Շտիկյանը՝ ակնոցով, փողկապով, վեհաշուք արտաքինով մի այր, բավականին հայտնի

գրականագետ-գիտնական: Դե՛, սիրելի՛ բարեկամներ, մի՞թե կարելի է նրա վրա կասկածի գեթ նշույլ անգամ ունենալ:

Դուք չկարմրեցի՞ք իմ փոխարեն: Ես գետինն եմ մտնում ամոթից, բայց պետք է ասեմ ու գրեմ միայն ճշմարտությունը, դառն ու անողոք ճշմարտությունը ...

Դեկտեմբերի 13, երկուշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 11°

Սարսափելի կերպով մռայլ եմ ու անտրամադիր:

Դե՛, ինչքա՜ն կարելի է հանդուրժել այս բոլորը՝ տասնմեկ աստիճան սենյակային ցուրտը, որի պայմաններում ոչինչ չես կարող անել քո և ընտանիքիդ անդամների կիսաքաղց գոյությունը, հիգիենայի հասարակ կարիքները (արդեն չեմ հիշում, թե վերջին անգամ երբ ենք ամբողջ մարմնով լողացել) ինչ-որ կերպ ապահովելու համար, որևէ տիպի հեռանկարի կատարյալ բացակայությունը, համազգային կործանման սարսափը, հայ ազգի անլույս հեռանկարը, տնտեսության կատարյալ քայքայումն ու զարհուրելի սովի՝ ավելի ու ավելի որոշակի գծագրվող ուրվանկարը ...

Ես մեկն ասացի, դուք հազարը պատկերացրե՛ք:

Տաթևիկը գնացել է նավթի կտրոնները ստանալու: Գիտեք երևի, որ բարեգործական չգիտեմ որ կազմակերպության ջանքերով հայ ժողովրդի ավելի կարիքավոր հատվածին կտրոններով ձրի նավթ են տալիս: Տաթևիկս, ահա՛, գնացել էր այդ կտրոններն ստանալու և հերթ է կանգնել ինը ժամ: Այո՛, ինը ժամ, իմ քնքուշ ու նրբիրան Տաթևիկը ինը ժամ դրսում ... Այս ձյուն-ձմռանը ինը ժա՛մ...

Չկրկնե՞մ Պարույր Սևակի խոսքերը՝ «Դե՛, ե՛կ, տնավե՛ր, մի՛ խելագարվիր»:

Ավելի ու ավելի եմ հանգում երկու սարսափելի, բայց փրկարար գաղափարի՝ ինքնասպանություն գործել (նույնիսկ մտածել եմ ձևը՝ ինձ վայր գցել Մատենադարանի կտուրից. ավելի կհոչակվի թե՛ Մատենադարանը, թե՛ Սուրեն Շտիկյանը) կամ էլ, թողած ամեն ինչ, փախչել արտասահման: Մտովի նույնիսկ հարցազրույց ունեցա լրագրողների հետ, սկսեցի պատասխանել նրանց՝ ինձ տրվող հարցերին: Պատկերացնում եք, չէ՞, թե ինչքա՛ն բան կունենամ նրանց ասելու, ինչքա՛ն բաներ կունենամ հրատարակելու նրանց պարբերականներում: Թեկուզ իմ այս օրագիր-տանջանքապատումը:

Հետաքրքիր է, որ այս դաժան գաղափարը իմ մտքում ծնվել էր նաև անցյալ տարի: Բայց անցյալ տարի ես սրան հանգեցի փետրվար ամսվա սկզբին: Իսկ հիմա ...

Ե՞րբ պետք է վերջանա այս մղձավանջը ...

Դեկտեմբերի 18, շաբաթ, 1993 թ.

Տան ջերմաստիճանը՝ 10°

Տասը աստիճանը մեր բնակարանում այն է, երբ խոսելիս բերանից գոլորշի է դուրս գալիս: Վառարանը դրել ու վառում ենք, բայց որովհետև վառելիքը քիչ է, աշխատում ենք խնայողաբար օգտագործել ամեն մի ծեղը, իմ «ցրած» գրքերի ամեն մի էջը: Գիրք թռցնելու հարցում արդեն մասնագիտացել եմ:

Արդեն երրորդ օրն է, որ Տաթևիկս գնում է ԲՇԳ՝ օգնության նավթը ստանալու համար, և հերթ է կանգնում օրական 10-12 ժամ: Կրկնում եմ՝ օրական 10-12 ժամ, և հերթը չի հասնում: Բարեբախտաբար չեմ տեսնում, թե ինչպես է տուն գալիս, որովհետև եթե ես այդ տեսնեմ, երևի սրտի նոպա կստանամ: Եվ գիտեմ, թե ինչպես է հոգնում իմ եղնիկը, իմ Տաթևիկը: Արդեն չեմ խոսում այն մասին,

որ նավթը ժողովրդին տալիս ամեն 40 լիտրի մեջ 2-3 լիտր պակաս են տալիս: Սա գիտեն բոլորը, և սա նույնիսկ օրինաչափ բան է դարձել: Չեմ խոսում այն մասին, որ դեռ օդանավակայանում «լավ տղերքը» գործը դասավորել են այնպես, որ այդ նավթի մի մասը «առգրավում են»՝ զարտուղի ճանապարհով վաճառելու համար և, ուրեմն, ժողովրդի մի մասին չի հասնում: Այդ մասին նույնիսկ պաշտոնապես հայտնեց մեր ռադիոն:

Երեկ տանը հիստերիայի նոպա ունեցա:

Դեկտեմբերի 24, ուրբաթ, 1993 թ.

Տան ջերմաստիճանը՝ 9°

Գրում եմ մեկ մոմի լույսի տակ, դրա համար էլ աչքերս ցավում են:

Վառում եմ գրադարանիս հերթական գիրքը, որի վրա մակագրված է. «Մեծ հարգանքով՝ հմուտ ու հոգատար բժշկուհի Մելանյա Բարունակովնային և սիրելի Սուրեն Շտիկյանին: Լավագույն ցանկություններով ... Հեղինակից»: Հեղինակը նշանավոր պատմաբան, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Վարդան Պարսամյանն է, գիրքը՝ «Պատմագիտական աշխատություններ»՝ հրատարակված Երևանում 1985 թվականին:

Հաջորդի վրա մակագրված է. «Սիրելի Սուրիկին՝ եռանդուն երիտասարդ բանասերին: Նվիրում եմ սիրով»: Նվիրողը Ասատուր Ասատրյանն էր, ճանաչված ու հարգելի մի գրականագետ, իմ ավագ ընկերն ու բարեկամը: Գիրքը կոչվում էր «Սոցիալիստական վերածննդի հայ գրականության պատմությունից», այն ևս հրատարակվել էր Երևանում 1959 թվականին:

Այս ողբերգական թվարկումը ես կարող եմ շարունակել, և ամենաողբերգականն այն է, որ այս թվարկումը դեռ կշարունակվի մինչև ձմեռվա վերջ, թեև բուն գրքերը արդեն օգտագործվել են «վասն վառարանի»:

Իմ ընկերների, իմ հեռու-մոտիկ բարեկամների գրքերը ...

Մակագրված ամեն մի գիրք հիշողություն է ինձ համար, ջերմ, քնքուշ, հուզումնառատ ու հուզումնաշատ մի հիշողություն: Կարող եմ զգայացունց դեպքեր պատմել, թե ինչքան հոգատար էր իմ նկատմամբ Ասատուր Ասատրյանը, կամ պրոֆեսոր Վարդան Պարսամյանն ինչեր արեց իմ «Ալիշանի» հրատարակությունն ապահովելու համար: Ինչքա՛ն հուզումնալից բաներ կպատմեի ամենաներկայանալի մարդկանցից մեկի՝ անզուգական ու անկրկնելի Խաժակ Գյուլնազարյանի մասին ...

Իսկ հիմա ես վառում եմ նրանց գրքերը: Այսինքն՝ այրում եմ այն չքնաղ հիշողությունները, որոնք իմ կյանքի իմաստն են կազմում, կազմում են իմ կյանքի բովանդակությունը: Այսինքն՝ ես կորցնում եմ լիարժեք մարդ կոչվելու հասարակական իմ իրավունքը և, ուրեմն, հոգեպես ու ներքնապես ավելի եմ աղքատանում:

Ի՜նչ վիրավորական բան է մտերիմների գրքերն այրելը, գիրք այրելը առհասարակ: Եվ հարյուրապատիկ անգամ իրավացի էին բոլոր ժամանակների իմաստուն այրերը, երբ մարդկության մեծագույն հանցանքների թվում դասում էին նաև գիրք այրելը:

Ձեր լուսավոր ու տաք սենյակներում նստած և կյանքն ըստ ամենայնի վայելող իմ հեռու-հեռավո՛ր բարեկամներ, խնդրում եմ՝ չայրեք ձեր գրքերը: Եղե՛ք ազատ, համարձակ ու անկաշկանդ գրքերի նկատմամբ, բայց երբեք մի՛ այրեք դրանք, քանզի դա, գոնե իմ կարծիքով, հանցանքներից մեծագույնն է, որովհետև դու միտքն ես այրում, իսկ միտքը մենաշնորհ է, որ տրված է ի վերուստ: Եվ միշտ հիշե՛ք, որ կար մի ողջախոհ այր՝ Սուրեն Շտիկյան - Վանեցի

հորջորջմամբ , որ մրմուռ սրտով այրում էր իր գրադարանի գրքերը, բայց ամեն գիրք այրելիս աշխատում էր տնեցիներից թաքցնել արցունքները, որ թեև հոգեկան տվայտանքներ և սրտի ծակոցներ էր ունենում, բայց չէր կարող չանել այդ բարբարոսությունը, քանզի բնակարանի ջերմաստիճանը ինը աստիճան էր, իսկ տանը 5 տարեկան թոռնիկ ուներ:

Բարի հիշե՛ք մեղավոր Սուրեն Շտիկյան – Վանեցուն և ... խղճացե՛ք նրան ...

Դեկտեմբերի 31, ուրբաթ, 1993 թ.

Տան ջերմաստիճանը՝ 8,5^{O}

«Լսե՛ք, դարե՛ր և հեռավո՛ր գալիքի սերունդներ ...»

Մեր գրականության դասական Նաիրի Զարյանի հանրահայտ բանաստեղծության առաջին տողն է, որն, իմ կարծիքով, առավել քան հարմար է Նոր տարվա իմ այս գրառումների համար:

Մռայլ չկամությամբ ու բթասիրտ անտարբերությամբ դեպի հավերժ ենք ճանապարհում 1993 զարհուրելի թվականը, որը մտավոր կատարյալ անկման, հոգեկան անկարության հասցրեց Հայաստան աշխարհի մտավորական դասին, այսինքն՝ գրողներին, գիտության տարբեր բնագավառի մեծ ու փոքր ներկայացուցիչներին, արվեստի աշխատողներին, նրանց, որոնց գրչի ու մտքի արտադրանքով է յուրաքանչյուր ազգ իր հասարակական տեղն ու գոյության անկապտելի իրավունքը նվաճում աշխարհիս մյուս ազգերի շարքում:

Ճանապարհ ենք դնում 1993 թվականը, որը հրապարակ հանեց ողբերգական մի դրսևորում ևս՝ հայրենի երկրից հեռանալը:

Հայրենի երկրից հեռանալը, իհարկե, ավել կամ պակաս չափով, շատ կամ քիչ դրսևորումներով, միշտ էլ եղել է բոլոր դարերում և բոլոր ժամանակներում: Բայց նախորդ մեկ-երկու տարիներին և, մանավանդ, այս՝ անցնելիք 1993 թվականին, այն դրսևորվեց չտեսնված-չլսված չափերով: Եթե ասեմ միայն, որ վերջին տարիներին մեր Հայաստան աշխարհից հեռացածների թիվը ոչ պաշտոնական տվյալներով հասնում է մեկ միլիոնի, մեկ մի-լի-ո-նի, ապա ասելիքս, եթե կարելի է այսպես ասել, ողբերգականորեն կամբողջանա: Մեկ միլիոն հեռացող Հայաստանից, երեք միլիոնանոց Հայաստանից:

Հունվարի 1, շաբաթ, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 15,5°

Երկու օր առաջ իմացա, որ Ամերիկա է մեկնել Ստեփան Թոփչյանը: Շնորհալի գրականագետ, տեսական թեքումով մի քանի աշխատությունների ու բազմաթիվ հոդվածների հեղինակ, և, ի լրումն այս բոլորի, անուրանալի կարողությամբ օժտված նկարիչ: Պաշտոնական ձևակերպումն այն է, որ գնացել է մասնակցելու Բոստոնում, թե Լոս-Անջելեսում բացվելիք հայ նկարիչների անհատական ցուցահանդեսին: Բայց ես գոնե ոչ մի տարակույս չունեմ, որ նա այլևս չի վերադառնա:

Այսօր էլ իմացա, որ գնացել է Արտակ Քալանթարյանը՝ արձակագիր Արտաշես Քալանթարյանի որդին: Նա մասնագիտությամբ համակարգչային ծրագրավորող էր, իր գործին հմուտ ու քաջագիտակ, հաճելի, «համով-հոտով» մի երիտասարդ: Նա էլ ...

Գնում ու գնում են մեր հայորդիները դեպի օտար ափեր ու անծանոթ հորիզոններ՝ բախտ փնտրելու, օտարի դռանը հաց մուրա-

լու, արյուն-արցունքով շաղախված մի կտոր կենսական գոյավիճակ ապահովելու համար: Ինչքա՛ն օգտակար գործեր կարող էին անել նրանք մայր հայրենիքում ու հայրենիքի համար ...

Հունվարի 19, չորեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10,2°

Այսօր շուկա տարանք հորս «Աշխատանքային արիության համար» շքանշանը՝ վաճառելու: Մեծ աղջկաս՝ Նարինեի ֆինանսական դրությունը շատ վատ է: Տնից մի քանի անգամ արդեն այլևայլ բաներ են վաճառել՝ մի կերպ գոյատևելու համար, իսկ որովհետև ծայրը ծայրին չեն հասցնում, որոշեցինք հորս շքանշանը վաճառել՝ նրանց օգնելու համար:

Հորս շքանշանը վաճառո՛ւմ ենք ...

Աշխույժ ու եռանդուն, հումորով ու կատակասեր մարդ էր հայրս՝ Արշավիր Շտիկյանը: Աշխատող տղամարդու վերաբերյալ ինքնատիպ կարծիք ուներ:

- Տղամարդու հանգստանալը ո՞րն է: Որ ձեռքերս ծալեմ, նստեմ-մնամ, դա կլինի հանգստանա՞լ: Ո՞վ ասաց: Դա կլինի մեռնել: Դրան դեռ կհասնենք,- ասում էր նա:

Դրան հաջորդում էր հարցի տեսական հիմնավորումը.

- Տղամարդու հանգստանալն այն է, որ եթե այս գործից հոգնեց, մյուսն անի, դրանից էլ հոգնեց, երրորդն անի, այս էլ արեց ու հոգնեց, չորրորդը սկսի և այսպես մինչև անկողին մտնելը: Պարապ նստելը տղամարդու գործ չի, աշխատանքի ոճ չի:

Այդպես էլ աշխատում էր հայրս, այդ նույն կարգառճը սովորեցնում էր մեզ՝ ինձ ու քրոջս, նույն կարգառճը հետևողականորեն հիմնավորել էր այն բոլոր գործարաններում, որոնց տնօրենն էր եղել:

Հունվարի 23, կիրակի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 11°

Երբ նայում եմ իմ այս տանջանքապատումի սկիզբը, գոհունակությամբ արձանագրում եմ, որ արդեն երկու ամիս անցել է այս դժոխքից, և, ուրեմն, կարծես թե գոյատևեցինք: Մնում է միայն մեկ ամիս, մեկ ամիս, որ անցնի ամեն ինչ, և գարունը հայտնվի: Իսկ ես 63 տարեկան եմ և իրավունք չունեմ ոչ մի բոպե «հենց այնպես» անցկացնել. գոնե կիսատ գործերս պիտի հասցնեմ վերջացնել: Այնինչ օր ու ժամ հաշվելով անցկացրի շուրջ երկու ամիս, և դեռ փետրվարն էլ առջևում է, որը պիտի մի կերպ անցկացնեմ, քանզի աշխատելու ոչ մի հնարավորություն չկա:

Կա միայն մտավոր-հոգևոր կատարյալ անկում:

Հունվարի 26, չորեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12°

Արդեն մի քանի ժամ է՝ լույս ունենք. միացրել ենք բոլոր ջերմատու գործիքները, և տունը մի քիչ տաք է:

Երեկ նշեցինք ներկայանալի մարդկանցից մեկի՝ Գևորգ Տիրացյանի մահվան տարելիցը:

Հունվարի 30, կիրակի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 11°

Տանը մենակ եմ, և սա իմ կյանքի ամենավատ վիճակն է:

Վառել եմ մեկ հատ մոմ և նստել խոհանոցում, որովհետև քիչումիչ տաքացող տեղը խոհանոցն է: Մեկ մոմի լույսի տակ կարելի է

նստել, անջատել ուղեղը և հենց այնպես գոյատևել՝ առանց մտքի, առանց որևէ գործի ցանկության, առանց որևէ մտավոր ճիգի ու լարման: Այսպես եմ ես: Հայաստանի մտավորականության առնվազն 90 տոկոսը այսպիսի մտավոր անկարության մեջ է:

Ո՞վ է պատասխան տալու սրա համար:

Դուրսն ահավոր մառախուղ է: Մեկ հատիկ մոմս էլ շուտով կայրվի կվերջանա, ու ես կմնամ խոհանոցում մենակ, մթի մեջ:

Փետրվարի 9, չորեքշաբթի, 1994 թ.

Տան ջերմաստիճանը՝ 10,5°

Մի քանի օր առաջ մահացավ Ռուբեն Զարյանը՝ իմ ավագ ընկերն ու բարեկամը, մեր ընտանիքի մտերիմը, թատերագետն ու թատրոնի տեսաբանը, հետաքրքիր հուշագիրը: Գրած գրքերի մեծ մասը՝ համապատասխան մակագրություններով, նվիրել է ինձ ու կնոջս, մեր ընտանիքին՝ «Ի հիշատակ», «Ի խորոց սրտի», «Ի հիացումն ...»: Այդ գրքերն այսօր չկան: Այրվեցին ձմեռվա ընթացքում: Մնացին միայն մակագրված էջերը: Այսպես «հարգեցի» ձեզ, Ռուբե՛ն Վարոսովիչ:

Կանգնեցի դագաղի մոտ, երկա՛ր նայեցի այդ խոհական, մտացի դեմքին, ուզեցի ելույթ ունենալ և ասել այն, ինչ գրել եմ վերևում, բայց ելույթ չունեցա և կյանքում առաջին անգամ երանի տվեցի հանգուցյալին ...

Մեռավ պրծավ այս կյանք դժոխքից, այս ...

Երանի՛, հազա՛ր երանի քեզ, Ռուբե՛ն Վարոսովիչ ...

Մարտի 8, երեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 13,3°

Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ

Ո՛չ, ո՛չ, ես Գրիգոր Նարեկացին չեմ և ամենևին էլ չեմ անդրադառնալու նրա հանճարեղ «Մատեանին»: Պարզապես վերցրել եմ նրա այս խոսքերը, քանզի ես էլ, Ֆրիկի խոսքերով ասած, «Հանդէս ունիմ բան մի վիճի» այն անըմբռնելի ու անիմանալի մեծության հետ, որին դարեր շարունակ «Աստված» են անվանել:

... Հայն առաջիններից մեկն էր, ո՛վ Տեր, որ ընդունեց Միածին որդուդ, նրա քարոզած ուսմունքը: Ավելին՝ պաշտամունք դարձրեց այն, դարձրեց անբեկանելի հեղինակություն: Այդ պաշտամունքը չափանիշ դարձավ մեր ազգի հոգևոր, մտավոր, աշխարհայացքային բոլոր բնագավառներում, այդ պաշտամունքը դարձավ մեր ազգի հաց հանապազօրը ...

Ապրիլի 7, հինգշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 18,7°

Շահե սրբազանի հետ խոսակցությունս կարճ ու կոնկրետ եղավ: Ցույց տվեցի Ալիշանի մասին իմ կազմած «Տարեգրությունը», ասացի, որ ցանկանում եմ հրատարակել և հավելեցի, որ հրատարակչական կազմակերպություններ կան, որոնք դեմ չեն գործս հրատարակելուն, բայց ինձանից 150 դոլար են ուզում:

- Ես 150 դոլար որտեղի՞ց ճարեմ, սրբազա՛ն,- խոսակցությունս ավարտեցի ես. - գոնե դրսում հրատարակենք ...

Երևի կերպարանքս և արտաքինս շատ էր «խնդրողական», որ սրբազանը միանգամից համակ պատրաստակամություն դարձավ:

Դրսում հրատարակելու տարբերակը բացառեց անհապաղ. ինքն այդքան կապեր ու հնարավորություններ չունի: Բայց ասաց.

- Դուն գիրքդ ակադեմիայի ճանապարհով հասցրո՛ւ տպարան, 150 դոլարը ես կուտամ:

Հարցը լուծված համարեցի, և մի քիչ էլ հավուր պատշաճի խոսելուց հետո դուրս եկա:

Բայց մռայլ եմ, ներքնապես նվաստացած: Սա մուրացկանություն չէ՞ր ...

Ապրիլի 12, երեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 18,2°

Այսօր հանում ենք վառարանը:

* * *

Սուրենի սիրտը չդիմացավ ցուրտ ու մութ տարիների արհավիրքին: 1996 թվականին նա հրաժեշտ տվեց կյանքին:

ԴԻՄԱԿԱՎՈՐ ՄԱՐԴԸ

Հայաստանի կոմկուսի կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի աշխատանքային պլանի համաձայն՝ պետք է ստուգեինք հանրապետության շրջաններից մեկի կուսակցության կոմիտեի կողմից աշխատավորների շրջանում տարվող կուլտուր-մասսայական աշխատանքների վիճակը, հետո բաժնում քննարկեինք այդ հարցը:

Բաժնի երեք աշխատակիցների հետ ինքնաթիռով հասանք Մեղրի և օդանավակայանից անմիջապես գնացինք կուսշրջկոմի առաջին քարտուղարի մոտ, որը նախապես զգուշացվել էր մեր գալու և նպատակների մասին:

Թռուցիկ զրույցից հետո շրջկոմի քարտուղարն անմիջապես հեռախոսով կանչեց շրջխորհրդի մշակույթի բաժնի վարիչին, որ նրա հետ կազմենք շրջանում գտնվելու օրերին մեր աշխատանքների ծրագիրը:

Շուտով մշակույթի բաժնի վարիչը ներկայացավ, և ծանոթացանք: Հենց սկզբից նա մեզ վրա թողեց արտակարգ դրական տպավորություն: 40-45 տարեկան տղամարդ էր՝ բարձրահասակ և հմայիչ արտաքինով: Բայց ես հատկապես համակվել էի նրա անթերի գրական լեզվով, գեղեցիկ խոսելաոճով ու բացարձակ ճիշտ առոգանությամբ: Այն աստիճան, որ ակամայից սկսեցի խիստ վերահսկել արտասանվող նախադասություններս, որ հանկարծ թույլ չտամ շարահյուսական սխալներ և բարբառային արտահայտություններ:

«Այս հեռավոր անկյունում որտեղի՞ց է հայտնվել այսքան կուլտուրական մարդը»,- զարմացած էինք մայրաքաղաքից եկածներս: Մտածում էի Երևան վերադառնալուց հետո անպայման հարց բարձրացնել՝ նրան տեղափոխելու մայրաքաղաք՝ մշակույթի նախարարության տրամադրության տակ:

Հյուրանոցում տեղավորվելուց և նախաճաշելուց հետո մեր հրահանգիչներից երկուսը մեկնեցին գյուղեր, իսկ ես ընկերներից մեկի՝ Սիլվեն Սաղաթելյանի հետ պետք է ստուգեի շրջկենտրոնի մշակութային կյանքը:

Մշակույթի բաժնի վարիչը մեզ առաջարկեց ամենից առաջ ծանոթանալ շրջանային կուլտուրայի տան գործունեությանը, որտեղ, նրա ասելով, շատ մեծ աշխատանքներ են տարվում:

Գնացինք: Ես շարունակում էի խիստ հետևել իմ լեզվին, որպեսզի թույլ չտամ խոսակցական արտահայտություններ:

Կուլտուրայի տունը երկհարկանի շինություն էր, որին մոտենալիս երկրորդ հարկից լսվեց աղջիկների խմբի երգեցիկ ձայնը: Մտնելով բակ՝ փայտյա ճռճռան սանդուղքով բարձրանում էինք երկրորդ հարկ, երբ երգչախմբի ղեկավարը, իմանալով մեր գալստյան մասին, դադարեցրեց գործը և դուրս եկավ շքամուտք՝ մեզ դիմավորելու: Հենց այստեղ էլ տեղի ունեցավ անսպասելին: Մշակույթի բաժնի վարիչը հանկարծ հարձակվեց նրա վրա ու տուր թե կտաս քթին ու մռթին: Խեղճը փախավ դահլիճ, նա՝ հետևից: Բայց դա դեռ ոչինչ: Նա ծեծը ուղեկցում էր փողոցային զազրախոսություններով: Աղջիկների երգչախումբը վախից սկսվել էր: Շրջանի մշակույթի ղեկավարի բերանից չքացել էին գրական բառերը, և նա լիովին ազատություն էր տվել իր փողոցային բառապաշարին:

Ես չիմացա ծեծկռտուքի պատճառը: Անմիջապես դուրս եկա և գնացի հյուրանոց:

Հաջորդ օրը եղա առաջին քարտուղարի մոտ և պատմեցի եղելությունը:

- Ոչինչ, պան չիկա,- ասաց նա: - Կուլտուրայի փրոնտի շատ լավ ընշխատող ա, պան չկա:

Շրջանի «մշակույթի» բաժնի վարիչն այլևս չերևաց:

Ես զարմացել էի, թե այդ մարդ էակը ինչ վարպետությամբ էր թաքցնում իր իսկական դեմքն ու դաստիարակության աստիճանը:

ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԸ

Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջերին միութենական հանրապետությունների կոմկուսների կենտկոմների պրոպագանդայի և ագիտացիայի բաժինները ի մի էին բերում տարվա ընթացքում աշխատավորների շրջանում կատարված աշխատանքները և արդյունքների մասին մանրամասն զեկուցագրեր ներկայացնում Մոսկվա՝ ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեի գաղափարական բաժին: Վերջինս, իր հերթին, ամփոփում էր ստացված տվյալները և ընդհանուր զեկուցագիր ներկայացնում ղեկավարությանը, որով և կարծիք էին կազմում հանրապետություններից յուրաքանչյուրում աշխատավորների կոմունիստական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Այդ տեսակետից Հայաստանը միութենական հանրապետությունների թվում համարյա միշտ բռնում էր միջին տեղեր, որը վատ չէր:

Լինելով Հայաստանի կոմկուսի կենտկոմի կուսպատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող՝ ես հասարակական կարգով ներգրավվել էի կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի արտահաստիքային աշխատողների կազմի մեջ և մասնակցում էի Մոսկվա ներկայացվելիք հաշվետվություններ կազմելու աշխատանքներին:

Տարեկան աշխատանքներն ամփոփելուց պարզ էր դարձել, որ նախորդ տարվա համեմատ 1964 թվականի ընթացքում Հա-

յաստանում կազմակերպված դասախոսությունների ու զեկուցումների թիվը խիստ պակասել է: Հանրապետության աշխատավորների շրջանում կատարված մասսայական-քաղաքական աշխատանքների ցածր ցուցանիշը կարող էր բացասական գնահատականի արժանանալ ԽՄԿԿ կենտկոմում:

Մենք չորս հոգով՝ սեկտորի վարիչ Արտո Ալեքսանյանը, հրահանգիչներ Սիլվեն Սաղաթելյանը, Պարգև Մարտիրոսյանը և ես, մտանք բաժնի վարիչ Գևորգ Հայրյանի աշխատասենյակ՝ մեղավորի պես հաղորդելու ստացված անբավարար արդյունքների մասին: Սեկտորի աշխատողներն անձամբ էին պատասխանատու աշխատավորների շրջանում տարվող մասսայական քարոզչական աշխատանքների համար:

- Հը՞, ի՞նչ եք պռոշներդ կախել,- դիմեց մեզ Հայրյանը: - Գործերը վա՞տ են, հա՞:

- Հա՛,- ասաց Արտոն ու գլխիկոր նստեց դիմացի աթոռին:

Մենք հետևեցինք նրան և լուռ զբաղեցրինք մեր տեղերը:

- Դե որ ամբողջ տարին զվռնեք ձեզ համար և աշխատանքները պռավալ տաք, արդյունքն էդ կլինի, էլի՛:

Մենք բոլորս խոնարհած գլուխներով լսում էինք բաժնի վարիչի մեզ ուղղված նախատինքներն այն մասին, որ մեզանից քաղաքական աշխատող դուրս չի գա, քանի որ անպատասխանատու մարդիկ ենք:

Ես դեռ կենտկոմի հաստիքային աշխատող չէի և մտածում էի, որ այդ գնահատականն ինձ այնքան էլ չի վերաբերում: Ճիշտ էլ մտածում էի, որովհետև հաջորդ վայրկյաններին Հայրյանն այպանում էր այդ երեքին՝ նրանց մեղադրելով անգործության մեջ:

- Ամբողջ օրը ոչինչ չանելով՝ գործերը պռավալ եք տալիս,- որոտալով կրկնեց Հայրյանը, ապա դիմելով Արտոյին՝ հարց-

րեց,- անցյալ տարվա համեմատությամբ այս տարի որքան է պակասել դասախոսությունների ու զեկուցումների թիվը:

- Կուսակցական կազմակերպությունների գծով՝ 50%-ով, իսկ «Գիտելիք» ընկերության գծով՝ 30%-ից ավելի,- գլխիկոր պատասխանեց սեկտորի վարիչը:

- Ձեզանից կուսակցական աշխատող չի լինի,- զայրացած շարունակեց Հայրյանը: - Քիչ ա մնում՝ տնից բարձերը շալակած գործի գաք և աշխատասենյակներում քնեք: Իզուր էլ խոսում եմ: Մեկ է, ձեզանից մարդ դուրս չի գա:

Մի պահ լռություն տիրեց: Մենք չգիտեինք մեր անելիքը և գլուխներս կախ սպասում էինք նոր հանդիմանությունների:

Վերջապես Հայրյանը նորից խոսեց:

- Արտո՛,- հարցրեց նա - Ադրբեջանում ու Վրաստանում վիճակը ո՞նց ա:

- Չեմ կարող ասել, ընկե՛ր Հայրյան, տեղեկություն չունեմ,- մի քիչ սրտնեղած տեսք ընդունելով՝ պատասխանեց սեկտորի վարիչը:

- Տեղեկություն չունե՞ս: Արջի ականջում քնած եք: Հիմա Մոսկվայում նրանց կփառաբանեն, իսկ ես թուքումուր կուտեմ:

Ասելով «նրանց»՝ նա նկատի ուներ մյուս հանրապետությունների գաղափարական բաժինների վարիչներին:

Կարճատև լռությունից հետո դիմելով Արտոյին՝ Հայրյանը կարգադրեց.

- Շո՛ւտ կապվիր Թիֆլիս, քո գործընկերոջից իմացի՛ր նրանց տվյալները և ինձ անմիջապես տեղյա՛կ պահիր:

Արտոն շտապ դուրս եկավ, իսկ բաժնի վարիչը դեռ շարունակում էր երեքիս ծաղրաբանել՝ անընդհատ կրկնելով, որ մեզանից կուսակցական աշխատող դուրս չի գա: Մենք լուռ ու գլխիկոր լսում էինք:

Վերջապես մի 8-10 րոպե հետո Արտոն վերադարձավ և հայտնեց, որ ինքը հենց նոր հեռախոսով կապվեց Թիֆլիս և Վրաստանի կոմկուսի կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի իր գործընկերոջից իմացավ, որ նախորդ տարվա ընթացքում հանրապետությունում կարդացվել է 280.000 դասախոսություն ու քաղաքական բնույթի 345.000 զեկուցում:

- Մեր զեկուցագրում կրկնակի՛ գրիր. մոտ կես միլիոն դասախոսություն և 918 հազար 210 զեկուցում,- կարգադրեց Հայրյանը:

Մենք զարմացել էինք: Արտոն փորձեց կիսաձայն առարկել, թե դրանք անհավանական թվեր են: Հայրյանը կանխեց նրան:

- Քեզ ինչ ասում են, այն էլ արա՛,- վճռական ձայնով վրա բերեց նա:

Մենք դուրս եկանք՝ կատարելու բաժնի վարիչի առաջադրանքը:

Մոտ մեկ ամիս անց իմացանք, որ Մոսկվայում Հայաստանի աշխատավորների կոմունիստական դաստիարակության ուղղությամբ կատարված սույն թվականի աշխատանքները «գերազանց» էր գնահատվել: Միաժամանակ ընդունված փաստաթղթով միութենական բոլոր հանրապետությունների կոմկուսներին հանձնարարվել էր ուշադիր ուսումնասիրել և ընդօրինակել Հայաստանի գործընկերների առաջավոր փորձը:

ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳՌՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կենտկոմի շենքի հետնամասի ընդարձակ բակի հեռավոր ծայրին վոլեյբոլի դաշտ էր, որտեղ աշխատանքից հետո աշխատակիցները հաճախ մրցախաղեր էին անցկացնում:

Օրերից մի օր պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի աշխատողները մրցելու էին դուրս եկել գիտության և կրթության բաժնի աշխատողների հետ: Խաղը դիտելու էին եկել նաև բաժնի վարիչներ Գևորգ Հայրյանը և Ռոբերտ Խաչատրյանը:

Նախօրյակին ԽՄԿԿ կենտկոմի պլենումը քննության էր առել աշխատավորների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու միջոցով ժողովրդական տնտեսությունը աշխուժացնելու հարցը և այդ առթիվ ընդունել էր համապատասխան ընդարձակ որոշում:

Հայրյանը մտադրվեց ԽՄԿԿ կենտկոմի պլենումի որոշումն իրագործել տեղնուտեղը և այդ նպատակով դիմեց մեր թիմին.

- Արա՛ անբաններ, գիտե՞ք, չէ՞, որ հիմա կուսակցությունը խոստանում է լավ աշխատողներին լավ վարձատրել: Եթե խաղը տանեք, «Սովետ էրմանիստանի» թերթի խմբագրին կարգադրելու եմ՝ ձեր ախմախ հոդվածներն ու նյութերը տպագրի առանց ծպտուն հանելու և բարձր հոնորարներ նշանակի:

Ընդմիջեմ: Բաժինների շատ աշխատակիցներ որոշ գումար հայթայթելու համար հոդվածներ էին ուղարկում քրդական «Ռյա

թազա» և ադրբեջաներեն նշված թերթերին՝ լավ իմանալով, որ ոչ ոք դրանք չի կարդալու:

Ոգևորվել էինք: «Կկատարենք Ձեր հանձնարարականը, ընկե՛ր Հայրյան», «Խոստանում ենք բաժնի պատիվը գետնով չտալ, ընկե՛ր Հայրյան» և նմանատիպ այլ խոստումներ էին լսվում մեր թիմի շարքերից:

Այդ օրը մենք խայտառակ պարտություն կրեցինք:

ԲԱՆԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ՀՐԱՀԱՆԳԻՉԸ

Ամերիկյան զորքերը Վիետնամ ներխուժելու և այնտեղ ծավալված արյունալի կռիվների օրերին էր:

Խորհրդային Միությունը կանգնել էր գաղութատիրությունից ազատագրված և հարձակման ենթարկված երկրի կողմը և նրան սատարում էր բոլոր միջոցներով: Վիետնամական բանակը զինվում էր խորհրդային զենքի համարյա բոլոր տեսակներով, ավելին՝ վիետնամցի մարտիկների հետ կողք կողքի ամերիկացիների դեմ կռվում էին խորհրդային կանոնավոր զորամասեր:

Այդ ամենին զուգահեռ՝ խորհրդային իշխանությունների նախաձեռնությամբ աշխարհում հակաամերիկյան բողոքի հսկա ալիք էր բարձրացել, ամենուրեք կազմակերպվում էին աշխատավորական զայրալից ցույցեր ու ժողովներ, ընդունվում էին բանաձևեր՝ անարգանքի սյունին գամելով ագրեսորներին: Նրանցից պահանջվում էր՝ անմիջապես դադարեցնել սանձազերծած ագրեսիան վիետնամական եղբայր ժողովրդի դեմ և հեռանալ բազմաչարչար երկրից:

Խորհրդային Հայաստանը չէր կարող դուրս մնալ այդ ընդհանուր «համաժողովրդական շարժումից»: Հանրապետության իշխանությունները նույնպես, համաձայն վերևից եկած հրահանգների, կազմակերպում էին զանգվածային հավաքներ, ընդունում հակաամերիկյան որոշումներ՝ պահանջելով զորքերն անհապաղ դուրս բերել Վիետնամից:

Հուլիսյան շիկացած տապը բռնել էր Գորիսի շրջանի հացահատիկի դաշտերը: Հունձը թևակոխել էր վճռական օրեր: Կոլտնտեսականները քափ - քրտինքի մեջ ամեն ճիգ գործադրում էին՝ բերքը ժամանակին ու անկորուստ հավաքելու համար: Կուսակցության շրջկոմի և շրջանային խորհրդի բոլոր աշխատողներին ուղարկել էին կոլտնտեսություններ՝ հնձի աշխատանքները կազմակերպելու համար:

Ահա այդ վճռական ժամանակաշրջանի օրերից մեկն էր: Կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Արամ Հարությունյանը նոր էր մտել աշխատասենյակ, երբ հնչեց հեռախոսի զանգը: Նա բարձրացրեց հեռախոսափողը, և տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը.

- Բարև Ձեզ, ընկե՛ր Հարությունյան:

- Բարև Ձեզ,- պատասխանեց շրջկոմի քարտուղարը:

- Ընկե՛ր Հարությունյան, կուսակցության կենտկոմից Բաբախանյանն է: Դուք ինձ դեռ չեք ճանաչում. ես նոր աշխատող եմ:

- Ասացե՛ք խնդրեմ, ընկե՛ր Բաբախանյան, ես Ձեզ լսում եմ:

- Ընկե՛ր Հարությունյան, կենտկոմի բյուրոյի որոշման համաձայն՝ այսօր ամբողջ հանրապետությունում բողոքի ցույցեր և ժողովներ են անցկացվելու: Այդպիսի միջոցառումներ պետք է անցկացնել նաև Ձեր շրջանի բոլոր գյուղերում և շրջկենտրոնում:

- Ի՞նչ միջոցառումներ,- հարցնում է Հարությունյանը:

- Միջոցառումներ՝ ուղղված Վիետնամում ամերիկյան ագրեսորների դեմ: Պետք է վճռականորեն պահանջել, որ ագրեսորները կռիվը դադարեցնեն և իրենց զորքերն անհապաղ դուրս բերեն երկրից:

- էդ ի՞նչ եք ասում, ընկե՛ր Բաբախանյան: Մեր կոլտնտեսականների ոտքի տակ հիմա կրակ ա վառվում: Էս հնձի թեժ

պահին ո՞նց հրավիրենք ժողովներ ու միտինգներ: Մարդիկ զբաղված են բերքը հավաքելով:

- Ընկե՛ր Հարությունյան, դա իմ գործը չէ: Կենտկոմն է որոշել, պատասխանատու հանձնարարություն է, և ենթակա չէ քննության:

Շրջկոմի քարտուղարը գլխի է ընկնում, որ նորաթուխ հրահանգիչը բանից միանգամայն անտեղյակ մարդ է: «Լավ, եթե էդքան շտապ ա, մի բան կանենք»,- ասում է նա, լսափողը դնում հեռախոսի լծակին և պատրաստվում մեկնել Խնձորեսկի ենթաշրջանի գյուղերը, ուր հունձը թևակոխել էր վճռական շրջան:

Չէր անցել մեկ ժամ, երբ նորից է հնչում կենտկոմական հեռախոսը: Նույն հրահանգիչն էր, որը այս անգամ ավելի վճռական և ավելի հրամայական շեշտով է խոսում շրջկոմի քարտուղարի հետ.

- Ի՞նչ արեցիք միտինգների հարցով, ընկե՛ր Հարությունյան:

- Ընկե՛ր Բաբախանյան, հենց քիչ առաջ ես էի ուզում Ձեզ զանգահարել և զեկուցել, որ բոլոր գյուղերում կոլխոզնիկները, դաշտային աշխատանքները թողած, բողոքի միտինգներ են անցկացնում: Մեծ միտինգ է սկսվել նաև շրջկենտրոնում՝ Գորիս քաղաքում: Կենտրոնական հրապարակում հավաքվել է շուրջ 20 հազար մարդ: Չնայած մեր խնդրանքներին ու սպառնալիքներին՝ նրանք չեն ցրվում և անդադար աղմկում են:

- Ինչի՞ համար, ընկե՛ր Հարությունյան, ի՞նչ են ուզում:

- Ընկե՛ր Բաբախանյան, մարդիկ այնքան են զայրացած, որ այլև չեն կարողանում տանել ամերիկյան ագրեսորների կատարած գազանությունները: Նրանց համբերությունը հատել է: Պահանջում են իրենց շատ շտապ զենք տրամադրել: Բոլորը ուզում են Վիետնամ գնալ՝ զավթիչներին դաս տալու համար: Բայց ամբողջ դժբախտությունը այն է, որ շրջանում այդքան զենք չկա:

Կանգնել ենք անհարմար փաստի առջև: Իմ խնդրանքն է անձամբ Ձեզ՝ եթե կարող եք, մի բան արեք: Խնդրում եմ, էսօր-վաղը քիչ-միչ, գոնե մի 5-6 հազար հրացան ուղարկեք մեր շրջան:

- Ընկե՛ր Հարությունյան, էդ հարցը ես ո՞նց լուծեմ: Որտեղի՞ց հրացան գտնեմ: Խնդրում եմ ժողովրդին հանգստացրեք:

- Չէ՛, դա հնարավոր բան չի, ընկե՛ր Բաբախանյան: Արդեն հրապարակում մարդիկ ցուցակագրվում և մարտական ջոկատներ են կազմում: Ժողովրդի համբերությունը հատած է: Մարդիկ ասում են, թե մեր եղբայրներին Վիետնամում գազանաբար կոտորում են, իսկ մենք զբաղված ենք դատարկ-մատարկ բաներով՝ բերքահավաքով և նման երկրորդական հարցերով:

Հեռախոսաթելի մյուս ծայրին հրահանգիչը մի պահ պապանձվել էր: Վերջապես ուշքի գալով՝ նա շրջկոմի քարտուղարին կրկին խորհուրդ է տալիս ժողովրդին հանգստացնել, մինչև որ ինքն այդ ամենի մասին տեղյակ պահի ղեկավարությանը:

Մտնելով կենտկոմի քարտուղար Հովհաննես Բաղդասարյանի մոտ՝ նորաթուխ հրահանգիչը նրան շնչակտուր հաղորդում է Գորիսում ստեղծված պատերազմական տրամադրությունների և շրջանում զենքի պակասի մասին: Հազիվ զսպելով ծիծաղը՝ քարտուղարը բանից անտեղյակ հրահանգչին ասում է.

- Լավ, դու գնա՛, ես զենքի հարցով կզբաղվեմ:

ԱՀԱ ԹԵ ՈՐՆ Է ԸՆԿԵՐԸ

Լրացել էր Ստեփան Շահումյանի ծննդյան 100-ամյակը:

Հայ ժողովրդի արժանավոր զավակի, մեծ հեղափոխականի հոբելյանի առթիվ ամբողջ հանրապետությունում անցկացվում էին բազմաբնույթ միջոցառումներ:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի որոշմամբ եզրափակիչ հոբելյանական հանդիսավոր նիստը պետք է տեղի ունենար Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի դահլիճում: Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ինձ էր հանձնարարված հանդես գալ զեկուցումով:

Մինչև հանդիսավոր նիստը կար մոտ տասը օր, և ես ձեռնարկեցի գրելու զեկուցման տեքստը:

Նոր էի սկսել շարադրել, գրել էի ընդամենը հինգ-վեց էջ, երբ սկսեցի վատ զգալ: Վարակվել էի ծանր գրիպով: Ընկա անկողին:

Այդ օրերին իմ նվիրյալ ընկերներից մեկը՝ նշանավոր պատմաբան Համբարձում Կարապետյանը, գնացել էր Կիսլովոդսկ՝ առողջարաններից մեկում բուժվելու:

Չէր անցել մեկ շաբաթ, երբ նա պատահաբար ինձ զանգահարեց: Պատմեցի վիճակիս մասին, նաև ասացի, որ այսօր ուզում եմ դիմել կենտկոմի ղեկավարությանը՝ զեկուցելու համար ուրիշ մարդ նշանակելու խնդրանքով:

- Խնդրում եմ՝ չանես այդ բանը, չանես,- ասաց նա: - Գրիպն ի՞նչ է, կանցնի-կգնա: Դեռ ժամանակ ունես, կգրես: Վաղը էլի կզանգահարեմ:

Մի օր էլ անցավ, բայց վիճակս ավելի վատացավ: Խոսել անգամ չէի ուզում:

Կրկին զանգ եղավ. Համբարձումն էր: Նորից հարցուփորձ արեց: Ես կարճ կապեցի՝ ասելով, որ հենց հիմա վիճակիս մասին պետք է տեղեկացնեմ կենտկոմ և հրաժարվեմ:

- էդ բանը չանես, խնդրում եմ, մեկ-երկու օր էլ սպասի՛ր,- ասաց նա:

Ես ի՞նչ իմանայի, թե ինչու է ասում՝ սպասի՛ր:

Երկու օր անց նորից բժիշկ հրավիրեցինք, քանի որ վիճակս չէր լավանում: Բժիշկն առաջարկեց գնալ հիվանդանոց, բայց ես հրաժարվեցի: Նրան նոր էինք ճանապարհել, երբ դռան զանգը հնչեց. Համբարձումն էր: Զարմացել էի:

- Էս ո՞ւր ես եկել,- հարցրի՝ մտածելով, թե տանը մի բան հո չի՞ պատահել:

- Գործով եմ եկել,- ասաց:

- Ինչ գործով,- հարցրի:

- Ձեկուցմանդ գործով,- ժպտաց նա::

Ապշել էի, չգիտեի ինչ պատասխանել: Բայց ներքնապես ուրախ էի:

Վերցնելով իմ նյութերը՝ Համբարձումը երեք օր շարունակ նստեց իմ աշխատասենյակում՝ գրելով զեկուցման տեքստի շարունակությունը:

Վերջացնելուց հետո Համբարձումը դարձյալ մեկնեց Կիսլո-վոդսկ:

Կարծես բան չէր պատահել:

«Ի՞նչ անենք, ընկերս է, իսկական ընկերս»,- մտածում էի ես:

Հանդիսավոր նիստում իմ (ներողություն՝ մեր) զեկուցումը շատ լավ ընդունվեց: Հատկապես հավանել էին երկրորդ մասը:

Բացարձակ նվիրյալ էր ընկերս:

Ափսոս, այդպես քիչ է պատահում:

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

ՏԵՂԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

- Անդրանի՛կ, ո՞նց ես,- ասաց մեկը նախրի հետևից գնացող նախրապանին:

- Ի՞նչ Անդրանիկ, արա՛: Անդրանիկը փաշան էր, որ առաջնորդում էր հազարավոր քաջերի: Ես նախրի գոնե ոչ թե առջևից եմ գնում, այլ հետևից: Կարգին էլ չեմ կարողանում կովերը լավ արածացրած գյուղ բերել: Ինձ Անդրանիկ մի՛ ասի, խնդրում եմ: էդ անունը ափսոս ա, ինձ Անդո ասի:

ԽԵԼԱՑԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Գորիսում մսավաճառ Թևոսից երկու կիլոգրամ միս էի առել: Ասացի. «Խնդրում եմ, փաթաթի՛ր մի թղթի մեջ»: Խեթ նայելով ինձ՝ պատասխանեց. «Արա՛, գողությո՞ւն ես արել, որ փաթաթեմ: Քու փողով մես ես առալ, տա՛ր տոն, էլի՛»:

ՄԵԾԱՀԱՆՃԱՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Գորիսի շրջսովետի գործկոմի գլխավոր ճարտարապետի մասին ասում էին, որ շատ խելոք մասնագետ է:

Օրերից մի օր քաղաքի միջով անցնող Վարարակ գետը կատաղել էր, ափերից դուրս եկել, տակնուվրա արել ու հիմքից քանդել կամուրջը, որը նախագծել ու կառուցել էր մեր ճարտարապետը:

Ժողովուրդը հավաքվում է տապալված կամրջի մոտ և տարբեր դատողություններ անում:

Գալով վթարի վայրը՝ ճարտարապետը ջղայնացած ասում է. «Մինչև շինարարությունը սկսելը գործկոմի նիստում հարցը քննարկելու ժամանակ հազար անգամ ասացի, թե լավ կլինի կամուրջը կառուցել գետից մի հարյուր մետր հեռու, ա՜յ էն հարթ, չոր ու անվտանգ տեղը, բայց ինձ չլսեցին էդ հիմարները ...»:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Պատմել է հայտնի մտավորական, պետական ու հասարակական գործիչ Աբել Սիմոնյանը, որը ծննդով Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղից էր:

«Սովի տարի էր, ես էլ՝ պատանի: Ինչ-որ տեղից մեր տանը հայտնվել էր երկու լավաշ: Տատս, դիմելով ինձ, ասաց.

- Արի՛ ճաշենք:

Նստեցինք քուրսու մոտ: Նա լավաշներից մեկը բաժանեց երկու մասի, մեծ կտորը դրեց իր առջև, փոքրը՝ իմ: Նոր էի ձեռքս մեկնել իմ բաժին հացին, երբ նա, խառնելով հոնքերն, ասաց՝ «Արա՛, էդքան կուտե՞ն, հերիք ա ...»:

ՀԱՄՈԶԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ

Երբ Արթյուն ամու հազը բռնում էր, տևում էր երկար՝ չորս-հինգ րոպե:

Մի անգամ, երբ հազը դադարում է, Երևանից եկած թոռն ասում է.

- Պապի՛, էդ ի՞նչ վատ ես հազում:

- Շա՛ն տղա, վաթսուն տարի հազում եմ, հալա փի՞ս եմ հազում,- հետևում է պատասխանը:

ԿԵՍԳԻՇԵՐԱՅԻՆ ԶՐՈՒՅՑ

Ձմռան գիշերին կեսրայրը տեղաշորից դուրս է գալիս՝ բնական պահանջը հոգալու համար: Երբ վերադառնում է՝ մտնելու անկողին, քնից արթնացած հարսը խնդրանքով դիմում է նրան.

- Ապի՛, ապի՛, հինչ կինի, մին ստաքան ճո՛ւր տուր, էլի՛:

- Ա՛յ շան աղջիկ,- հանդիմանում է սկեսրայրը,- վեր ապուն ցեթը կյար վեչ, ծարավ ստկելո՞ւ իր:

ԽԱՉԻԿԻ «ԲՐԻՈԼԻՆԸ»

Խաչիկն ու իր ավագ եղբայրը հայրենադարձվել էին Իրանից: Մի քանի ուրիշ պարսկահայերի հետ նրանց բնակեցրել էին Գորիս քաղաքում:

Եղբայրներից ավագը զբաղվում էր մանր առևտրով: Մեկնում էր Երևան, այնտեղից քիչ-միչ բաներ բերում ու վաճառում:

Իսկ Խաչիկը, որ վարսավիր էր, կարճ ժամանակում դարձել էր քաղաքի երիտասարդության կուռքը: Մի փայտյա փոքր խցիկ էր դրել կուսակցության շրջկոմի նորակառույց շենքի մոտ և իր կողմը քաշել երիտասարդներին: Մազերի հարդարման համար մենք բոլորս նրա մոտ էինք գնում այն պատճառով, որ հարդարելուց հետո նա հաճախորդի գլխին առատորեն լցնում էր ինչ-որ հեղուկ և սանրում: Դրանից քաղաքի բոլոր երիտասարդների գլուխները փայլփլում էին արևի ճառագայթների տակ: Խաչիկը մեզ հավատացնում էր, որ այդ թանկարժեք հեղուկը մեծ դժվարությամբ է ձեռք բերում Երևանի սպեկուլյանտներից, ուստի մեզանից վերցնում էր կրկնակի վարձ՝ պատճառաբանելով, որ Եվրոպայում արտադրվող այդ հեղուկն ինքը շատ թանկ է գնում:

Հետո պարզվեց, որ «բրիոլին» կոչվածը «տեղական արտադրության» է: Արդեն փչացած և դեն նետված տրանսֆորմատորներից հանելով ուժը կորցրած տեխնիկական յուղը՝ նա այն «մատաղ» էր անում մեր գլուխներին:

Երբ դա հայտնի դարձավ, Խաչիկն անհետացավ քաղաքից:

ՀԱՍՑԵ ՈՐՈՆՈՂ ՁԻՆՎՈՐԸ

Հայրենական պատերազմը նոր էր վերջացել: Ծանր տարիներ էին: Մենք ապրուստի քիչ թե շատ միջոցներ ունեինք, բայց հարևան ընտանիքներից շատերը հազիվ էին պահպանում իրենց գոյությունը: Դրանցից մեկը՝ ամենաաղքատը, բազմանդամ էր՝ 5-6 երեխա, իսկ տան գլխավորը պատերազմից չէր վերադարձել:

Այդ ընտանիքին մայրս վերցրել էր իր հոգածության ներքո: Օգնում էր, ինչով կարող էր՝ թե՛ ուտելիքով, թե՛ հագուստով: Երեխաները օրեցօր մեծանում էին: Եվ ահա ավագ որդուն՝ Արտեմին, բանակ էին կանչել և ծառայելու ուղարկել Հեռավոր Արևելք: Շատ չէր անցել, ընդամենը երկու-երեք ամիս, երբ մայրս նրանից նամակ էր ստացել: Արտեմը գրում էր, թե ամեն ինչ լավ է, գոհ է ծառայությունից և հրամանատարներից, ձեռք է բերել նոր ընկերներ: Ապա ջերմ զգացումներով երախտագիտությամբ լի խոսքեր էր ուղղել մորս՝ վերջում ավելացնելով. «Մարիա՛մ մորաքույր, խնդրում եմ՝ հասցեդ ուղարկես, որ նամակ գրեմ ...»:

ՀՆԱՐԱՄԻՏ ԸՆԿԵՐՍ

Ուսանողական տարիների ընկերներիցս մեկը՝ Հրաչիկ Ոսկանյանը, որ գերազանց սովորում էր մանկավարժական ինստիտուտում, երկրորդ կուրսում 1949 թ. հունվարյան քննություններին չէր պատրաստվել. ծնողներից մեկի առողջական վիճակը խիստ վատացել էր, և նա մեկնել էր գյուղ: Երբ հիվանդը սկսել էր կազդուրվել, Ոսկանյանը եկել էր քննությունները հանձնելու:

Առաջինը եղել էր պատմության դասավանդման մեթոդիկա առարկան: Քննատոմսը վերցրել էր և նստել մտածելու, բայց երեք հարցերից ոչ մեկի պատասխանը չէր իմացել: Երբ հերթը հասել էր իրեն, սկսել էր ինչ-որ ուրիշ բաների մասին խոսել: Քննող դասախոս Սերգո Բոշնաղյանը խիստ դժգոհել էր և պատրաստվել անբավարար նշանակելու: Հրաչիկը խնդրել էր լրացուցիչ հարցեր տալ:

- Ի՞նչ կասես Մոնղոլիայի մասին, որքա՞ն բնակչություն ունի այդ երկիրը,- հարցրել էր Բոշնաղյանը:

- 30 միլիոն,- անմիջապես շատ վստահ պատասխանել էր Ոսկանյանը:

- Ի՞նչ ես հեքիաթներ պատմում, ա՛յ տղա: Այդ երկրում նույնիսկ մեկ միլիոն բնակչություն չկա,- վրդովված ասել էր դասախոսը:

- Ես ոչխարներն էլ եմ հաշվում, ընկե՛ր Բոշնաղյան,- անմիջապես վրա էր բերել Հրաչիկը:

Քննող դասախոսը չէր կարողացել զսպել փռթկոցը:

- Ա՜յ տղա, դու էդ ի՜նչ լավ տղա ես: Տո՛ւր ստուգման գրքույկդ. չորս եմ նշանակում,- ասել էր և վերցրել գրիչը:

ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԳՈՐԻՍՈՒՄ

1953 թ. նոյեմբեր ամիսն էր: Աշխատում էի կուսակցության Գորիսի շրջկոմում՝ որպես պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի հրահանգիչ:

Օրերից մի օր կուսշրջկոմի երկրորդ քարտուղար ընկեր Ասյա Ծատրյանը՝ շատ կիրթ ու բարեհամբույր մի անձնավորություն, իր մոտ էր կանչել մեր բաժնի վարիչ Ալեքսանդր Առաքելյանին և հայտնել, որ Երևանից անձամբ զանգահարել են շրջկոմի առաջին քարտուղար ընկեր Հակոբ Մելոյանին և հայտնել, որ միայն մեկ դասախոսություն կարդալու համար Գորիս է գալիս համաշխարհային լայն ճանաչման արժանացած կենդանաբան, պրոֆեսոր Բոխչագյուլ Ղուկասյանը: Ժամանակի սղության պատճառով նա Գորիսում մնալու էր միայն մեկ օր, քանի որ, ստացած հրավերի համաձայն, երկու օրից մեկնելու էր Լենինգրադ՝ իր հետազոտությունների վերջին արդյունքների մասին իրազեկելու տեղի գիտնականներին:

Հանձնարարություն ստացած ընկեր Առաքելյանը, գալով բաժին, իր երկու ենթականերին՝ Գուրգեն Դադալյանին և ինձ, հայտնելով լուրը, ավելացրեց. «Հազարից մի անգամ է այդպես պատահում»: Ապա մեզ խստորեն կարգադրեց, որ հեռախոսով կապվենք քաղաքի բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների, կուսակցական կազմակերպությունների քարտուղարների, քաղաքի և գյուղերի բոլոր դպրոցների տնօրենների հետ և պարտադրենք ներկա լինելու կարևորագույն միջոցառմանը:

Ըստ որում՝ նրանք իրենց հետ բերելու էին կենսաբանության և աշխարհագրության բոլոր ուսուցիչներին:

Բաժնում սկսվել էր իսկական իրարանցում: Կատարած քրտնաջան աշխատանքն իր արդյունքը տվեց. քաղաքը սպասում էր մշակութային մեծ իրադարձության:

Երկու օր հետո ինքնաթիռով ժամանեց պրոֆեսոր Ղուկասյանը՝ մի տղամարդու ուղեկցությամբ: Գիտնականին դիմավորելու էինք գնացել ընկեր Առաքելյանը և ես: Ծանոթացանք: Փոքրամարմին մի կին էր՝ սևին մոտեցող թուխ դեմքով, շարժվում էր կաղին տալով, բայց արագաշարժ ու կտրուկ, համարձակ ու տիրական: Մենք տպավորված էինք:

Հյուրանոցում նրա իրերը տեղավորելուց հետո գնացինք շրջկոմ, և ընկեր Առաքելյանը գիտնականին առաջնորդեց առաջին քարտուղարի մոտ:

Ձեկուցումը նշանակված էր երեկոյան ժամը 6-ին, բայց արդեն մեկ ժամ առաջ շրջկոմի շենքի առաջին հարկի մեծ դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Լիքն էին միջանցքներն ու աստիճանավանդակները: Քաղաքի մի մեծ խումբ հետաքրքրասեր պատանիներ, որոնց ոչ ոք չէր կանչել, մուտք էին գործել դահլիճ և զբաղեցրել պատուհանների գոգերը: Այնտեղ տեղ չգտած պատանիներից շատերը ստիպված բարձրացել էին պատուհաններին մոտ գտնվող դրսի ծառերի վրա: Իսկ շենքի առջև հավաքված մոտ հարյուրի չափ մարդիկ, հիմնականում ուսուցիչներ, որոնք չէին կարողացել մտնել ներս, դրսում աղմկում էին: Հատկապես զայրացել էին հեռավոր գյուղերից եկածները:

Բոլորն անհամբեր սպասում էին: Վերջապես դահլիճի բեմի հետնամասի դռնից ներս մտավ գիտնականը՝ շրջկոմի երկրորդ քարտուղարի ուղեկցությամբ: Փոթորկալի ծափերի տակ նրանք նստեցին բեմի առաջամասում դրված աթոռներին:

Ներկայացնելով Ղուկասյանին՝ ընկեր Ասյան ձայնը փոխանցեց նրան: Կաղալով և աջ ձեռքը արագ առաջ ու հետ տանելով՝ նա մոտեցավ ամբիոնին և սկսեց դասախոսությունը:

Պրոֆեսորն ասաց, թե իր դասախոսությունը բաղկացած է լինելու երեք մասից՝ ծովային կենդանիներ, ցամաքային կենդանիներ և թռչնաշխարհ:

Մենք ընկերներով՝ Կիմը, Կարլը, Գուրգեն Դադալյանը, Համոն, Տատունց էդիկը, Հենոն, նստել էինք դահլիճի աջ կողմի առաջամասի նստարաններին, կամացուկ զրուցում էինք տարբեր բաների մասին, երբեմն-երբեմն նաև ծաղրախոսքերով քննարկում գիտնականի արտաքին «բարեմասնությունները»: Նախագահողը աչքերով ու գլխի շարժումներով մեզ դիտողություն էր անում, բայց րոպեներ անց շշուկներով շարունակում էինք մեր «աննկատ» զրույցը:

Չէր անցել 10-15 րոպե, երբ դահլիճի տարբեր տեղերից աղմուկ բարձրացավ: Դու մի ասա, պատմելով կետերի մասին՝ Ղուկասյանն ասել էր, թե գիտնականները վերջերս ապացուցել են, թե սրանք առաջացել են շնաձկների նախորդներից և, ըստ էության, ձկնաշխարհի մի անբաժան մասն են: Դա զարմանք ու դժգոհություն էր առաջ բերել հատկապես կենսաբանության մասնագետների շրջանում, իսկ վերջին շարքերում նստած Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը փայլուն ավարտած, այժմ քաղաքի առաջին միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նինա Զիլֆուղարյանը, որը տարիներ անց դառնալու էր Երևանի Կրուպսկայայի անվան դպրոցի տնօրեն, տեղից զայրալից դժգոհություն էր հայտնում զեկուցողին՝ նրա ասածը համարելով տգիտություն:

- Տգետը Դուք եք,- փոխադարձեց Ղուկասյանը,- Դուք Ձեզ կարգի՛ն պահեք:

Բարեկիրթ ուսուցչուհին վիրավորանքին չարձագանքեց, սակայն բանակռվի մեջ մտավ:

- Կետը կաթնասո՞ւն է, թե՞ ձվատու,- պրոֆեսորին հարցրեց Նինան:

- Ի՞նչ է, չգիտե՞ք,- հակադարձեց պրոֆեսորը և լռեց՝ դահլիճի մեծ մասին մատնելով անորոշության:

- Ի գիտություն Ձեզ՝ կետը կաթնասուն է, իսկ ձուկը՝ ձվատու: Կաթնասունը չի կարող ծնվել ձվից:

Դահլիճը բարձրաձայն ու միահամուռ աջակցում էր Նինային, իսկ դրսի ծառերի վրա նստածները, լսելով դահլիճից եկող աղմուկը, հետաքրքրությունից դրդված, բարձրաձայն կանչում էին պատուհանների գոգերին նստածներին՝ նրանցից իմանալու, թե ինչ է կատարվում ներսում:

- Արա՛ Սերո՛ժ, հի՞նչ ա ասում էդ կնիկը,- աղմկում էր մեկը ծառի ճյուղից:

- Հիլա սո՛ւս ըրա, սո՛ւս ըրա, տեսնանք,- եղավ կարճ պատասխանը:

- Թո՜ւհ, հի՜նչ մուռտառ լակոտ էս,- ծառից թափվեց հուսահատ զայրույթ:

Թեև աղմուկը դադարեց, բայց դահլիճում լարվածությունը չէր պակասում: Կրթված, ամեն բանից տեղյակ գորիսեցին զարմացած էր:

Կատարվածից այլայլված՝ ընկեր Ասյան, տեղից բարձրանալով, ներկաներին ցածրաձայն խնդրեց համբերել և պրոֆեսորին թույլ տալ շարունակելու բանախոսությունը:

Անդրադառնալով ցամաքում ապրող կենդանիներին՝ Ղուկասյանը սկսեց նրանով, որ Ավստրիայում կա մի կենդանի՝ ջայլամ անունով, որն աշխարհի ամենաարագավազ և ամենախորամանկ կենդանին է: Երևի կարծում էր, թե գորիսեցիներն

առաջին անգամ են լսում «ջայլամ» բառը:

Խոսքը չէր վերջացրել, երբ դահլիճի տարբեր կողմերից կրկին աղմուկ բարձրացավ:

- Ընկե՛ր դասախոս, Դուք Ավստրալիան շփոթում եք Ավստրիայի հետ,- տեղից ձայնեց Սվարանց գյուղի դպրոցի տնօրեն Շահենը:

Շատերին հատկապես զայրացրել էր ջայլամի ամենախորամանկ լինելու մասին պնդումը:

- Ո՜նց թե, բա աղվե՞սը, բա աղվե՞սը,- լսվում էին բացականչություններ դահլիճի տարբեր կողմերից:

Իսկ ծառերը շարունակում էին աղմկել:

Ամենաառաջին շարքում՝ հենց մեր հարևանությամբ, նստած էր Հայրենական մեծ պատերազմի մասնակից ջղային մի մայոր, որն ապրում էր քաղաքի վերին թաղերից մեկում: Նա հազվադեպ էր իջնում կենտրոն և ոչ ոքի հետ չէր շփվում: Պատերազմի ավարտից արդեն անցել էր յոթ-ութ տարի, բայց նա միշտ զինվորական նույն բաճկոնի մեջ էր՝ մի քանի կարկատաններով:

- Глупости болтайте,- ջղայնացած և այլևս չհամբերելով՝ տեղից գոչեց նա,- прекратите, наконец, болтовню, хватит.

- Գիտե՞ք ինչ կա,- վրա բերեց Ղուկասյանը,- ես Ձեզ չեմ պատասխանի՝ հարգելով Ձեր տարիքը: Լավ կլինի՝ լռե՛ք:

Բարեբախտաբար այս անգամ աղմուկը կարճ տևեց: Պրոֆեսորն արդեն անցել էր զեկուցման վերջին հատվածին՝ թռչողներին:

Ինչ-որ անհասկանալի բառերով նա ներկայացնում էր զանազան թռչունների բարեմասնությունները: «Եթե թռչունները թևեր չունենային,- ասաց նա,- նրանց վիճակը ցամաքի վրա չափից ավելի ծանր կլիներ»: Այս խիստ կարևոր միտքն արտաբերելուց հետո նա անցավ թռչնաշխարհի մյուս խնդիրներին:

Դահլիճն արդեն հանդարտվել էր, իսկ մենք, ծռմռելով Ղուկասյանի ասածները և հազիվ պահելով մեր փռթկոցները, սպասում էինք նոր անակնկալների: Այդ պահին Կարլը նկատեց, որ մայորը, գրպանից հանելով թուղթն ու մատիտը, ինչ-որ բաներ է խզմզում:

Պրոֆեսորը հայտարարել էր, թե Տիբեթում կա մի թռչուն, որն օրական ածում է 10-12 ձու: Հաշվարկը արագ-արագ վերջացնելուց հետո մայորը, զարմացած նայելով ստացած անհավանական թվերին, բարձրացավ տեղից և խոժոռ հայացքով որոտընդոստ գոչեց. “Опять Вы говорите ерунду. По Вашему получается, что эта птица в год несет более четырех тысяч яиц? В предвоенные годы я работал в Москве на подшипниковом заводе. Даже наши станки не выпускали столько шариковых подшипников. У этой птицы стальной зад что ли?”:

Ձեկուցողը դարձյալ մեծահոգաբար չպատասխանեց մայորին և, մարտական տեսք ընդունելով, երեք-չորս րոպեից հետո վերջացրեց դասախոսությունը:

Դահլիճից հնչած վիրավորանքների հանդեպ Ղուկասյանի հանգիստ վերաբերմունքը առաջ էր բերել ունկնդիրների համակրանքը:

Նախագահող ընկեր Ասյան խնդրալի ձայնով անմիջապես դիմեց դահլիճին. «Ընկերնե՛ր, ամեն ինչ բարեհաջող վերջացավ: Շնորհակալություն հայտնենք պրոֆեսորին մեզ համար շատ օգտակար դասախոսության համար: Կարծում եմ՝ հարցեր տալու կարիքը չկա, որովհետև ...»: Նա դեռ չէր ավարտել խոսքը, երբ Համոն տեղից վեր թռավ, մոտեցավ բեմեզրին և դիմելով ընկեր Ասյային՝ աղերսագին խնդրեց ձայն տալ, քանի որ իրեն շատ է տանջում կարևոր մի հարց:

Շարքերից ձայներ լսվեցին՝ «տա՛լ», «տա՛լ»: Ընկեր Ասյան ստիպված էր զիջել:

Դիմելով զեկուցողին՝ Համոն ասաց.

- Ընկե՛ր Ղուկասյան: Շուտով տոնելու ենք Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 33-րդ տարեդարձը: Այդ հոբելյանի կապակցությամբ Գորիս քաղաքում և շրջանի բոլոր գյուղերում տեղի են ունենում աշխատավորների հանդիսավոր ժողովներ, որոնցում ամփոփվում են խորհրդային իշխանության տարիներին ձեռք բերված մեր մեծ նվաճումները: Այդ ժողովներում անընդհատ բարձրացվում է մի շատ կարևոր հարց, որի պատասխանը այդպես էլ ոչ ոք չի կարողանում տալ: Խոսքն այն մասին է, որ մարդիկ շատ են ուզում իմանալ, թե խորհրդային իշխանության տարիներին հանրապետությունում և հատկապես Գորիսի շրջանում որքան է աճել ... ծտերի թիվը:

Ո՞վ կարող էր երևակայել այդպիսի բան:

Դահլիճը քարացած սպասում էր: Բարի ու գթասիրտ գորիսեցու համակրանքը արդեն դասախոսի կողմն էր:

Մի պահ տևած լռությունից հետո Ղուկասյանը, ձախ կաղ ոտը խփելով գետնին, ցուցամատը բարձրացրեց Մոսկվայի ուղղությամբ և կորովի պատասխանեց.

- Վերևից խիստ հրահանգ կա ծտերի թվի մասին ոչ մի խոսք չասել:

Իբր թե ինքը գիտի, բայց չի ասում:

Այդ անսպասելի և իմաստուն պատասխանը ծափերի և ցնծության իսկական փոթորիկ առաջ բերեց: Բոլորն ուրախ էին ու երջանիկ: Մեծ գիտնականը հաղթանակով էր դուրս եկել փորձությունից:

Ասում էին, թե նույնիսկ մայորի դեմքին ժպիտ էր երևացել:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԸ

Գորիսի քաղաքային պետական թատրոնում 50-ական թվականներին աշխատում էին Կիրովականի թատրոնից տեղափոխված տաղանդաշատ դերասան Գևորգը և Երևանի թատերական ինստիտուտի շրջանավարտ Ռոման:

Երկուսն էլ փնտրված դերասաններ էին, հատկապես՝ Գևորգը: Կիրթ ու համակրելի տղաներ էին: Շատ լավ մերվել էին երիտասարդների մեր շրջապատին, դարձել մեր մշտական զրույցների ու կատակների ակտիվ մասնակիցներ:

Գևորգը չափից ավելի գեր էր, իսկ Ռոման ծանր էր լսում:

Անցել էր 15-20 տարի, որ ես նրանց չէի տեսել:

Օրերից մի օր բարձրանում եմ Աբովյան փողոցով, երբ հեռվից նկատեցի, որ «Երևան» հյուրանոցի մոտով իջնում է Ռոման: Շատ ուրախացա: Երբ մոտեցանք, ես պատրաստվում էի գրկախառնվել, միաժամանակ գոչեցի. «Արա՛, է՛դ ո՞ւր ես, ա՜յ տնաշեն»:

Խոսքս դեռ չավարտած՝ նա ձեռքերը տարավ դեպի ականջները և ափերով փակեց:

- Կամա՛ց խոսիր, ականջներս խլացան, ինչո՞ւ ես գոռում,- եղավ պատասխանը:

Հանկարծակիի գալով շփոթվել էի:

Տեսնելով իմ զարմանքը՝ պատմեց, որ երեք-չորս ամիս առաջ մեկնել է Մոսկվա, որտեղ լսողությունը վերականգնելու համար ենթարկվել է վիրաբուժական միջամտության:

- Հիմա քաղաքի փողոցներում ինչքան աղմուկ կա, ականջներիս մեջ է,- բողոքեց նա: - Խցանիչներ էլ եմ դնում, չեն օգնում: Խելագարվելու բան է:

Ցածրաձայն մի քանի նախադասություն փոխանակելուց հետո հեռացա:

Բայց դա դեռ ոչինչ: Երկու-երեք տարի անց՝ Բաղրամյան փողոցով իջնելիս, հեռվից նկատում եմ, որ դիմացից գալիս է չափից ավելի նիհար մի տղամարդ: Մտածում եմ, որ սրան ինչ-որ տեղ տեսել եմ: Մոտենում է. Գևորգն է:

Վաղուց չէինք տեսել, գրկախառնվեցինք: Հարցուփորձ: Էլի Կիրովականի թատրոնում էր: Հարցրի, թե ինչու է այդքան նիհարել:

- Մի՛ հարցրու,- ասաց: - Դարդերս մի՛ քրքրիր:

Բայց սկսեց պատմել. «Երեք-չորս տարի առաջ Գերմանիայից Երևան էր եկել մի վիրաբույժ, որը չաղ մարդկանց որովայնից ավելորդ ճարպերը հանելու մասնագետ էր և վիրահատություններ էր անում: Լուրը հասել էր Կիրովական, և ես որոշեցի գալ Երևան և հանդիպել այդ պրոֆեսորին: Մտածում էի, որ վիրահատվելու համար դիմողներ շատ կլինեն, կգնամ, կհերթագրվեմ: Բայց Երևանում իմացա, որ պրոֆեսորը պարապ է: Ինձ տեսնելով՝ անմիջապես առաջարկեց վիրաբուժական միջամտություն: Առանց երկար-բարակ մտածելու՝ համաձայնություն տվեցի: Դժվար էր, բայց մարդն իր գործն արեց: Իբր թե կազդուրված վերադարձա տուն: Դրանից հետո ուշքի չեկա. մի ինչ-որ հիվանդությամբ վարակվեցի և երկար ժամանակով ընկա անկողին»:

Մտամոլոր կանգնել էի, չգիտեի, թե ինչ ասեմ ...

- Հիմա ոչինչ, լավ եմ,- ասաց ու լռեց:

Դեմքին ժպիտ երևաց: Ինձ թվաց, թե նախկին Գևորգն է, գորիսյան երջանիկ օրերի մեր սիրելի Գևորգը:

- Մինչ վիրահատությունը, երբ թատրոնում դերեր էին բաժանում,- դառնացած ասաց նա,- ինձ տալիս էին թագավորի, իշխանի, տանուտերի և նման դերեր: Հիմա, որ շատ նիհարել եմ՝ միայն տնային ծառայողի, դռնապանի, փողոց ավլողի ...

Մի փոքր շունչ առավ: Հևում էր: Ապա շարունակեց. «Անցյալ օրը դերեր էին բաժանում: Առանց հաշվի առնելու իմ կարծիքը՝ տվեցին Ծիպլի Ծատուրի դերը»:

Ես Գևորգին ոչնչով օգնել չէի կարող: Պինդ գրկեցի: Շտապում էի:

ԴԻՊԼՈՄԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆԻ ԲՈՂՈՔԸ

Գորիսի դրամատիկական թատրոնի կոլեկտիվում կռիվ էր ընկել: Երկու-երեք դերասան տաղանդավոր ռեժիսոր Բենիկ Բժշկյանի դեմ խռովություն էին բարձրացրել՝ նրան մեղադրելով, թե իրենց հալածում է՝ «չտալով կարգին դերեր»: Նրանցից հատկապես ուժգին էր բողոքում Աղասին՝ ասելով, թե ինքը թատերական ինստիտուտ է ավարտել, իսկ ռեժիսորը՝ ոչ, հետևապես նա բարոյական իրավունք չունի իրեն զրկելու գլխավոր դերերից: Նրան ջերմորեն պաշտպանում էին իր երկու կողմնակիցները:

Գործը հասել էր կուսակցության շրջկոմ: Որոշվեց հրավիրել կոլեկտիվի ընդհանուր ժողով, ինձ հանձնարարվեց անցկացնել այն: Հատկապես աղմկոտ ելույթ ունեցավ Աղասին՝ նորից ու նորից շեշտելով, թե ինքը դիպլոմ ունի, իսկ ռեժիսորը՝ ոչ: Վերջում Բժշկյանը ելույթ ունեցավ՝ ասելով.

- Աղասի՛, ինստիտուտ ավարտեցիր, բայց այդպես էլ դերասան չդարձար: Սովորելով դերասան չեն դառնում, այլ դերասան ծնվում են: Դիպլոմով անհնար է գրիմ անել և բեմ բարձրանալ...:

ԲԱՆԿԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԶՆԻՎ ՊԱՀԱԿԸ

Առավոտյան աշխատանքի գնալիս Գորիսի շրջանային բանկի դիմաց հանդիպեցի նրա գիշերային պահակ Արմենակին: Հարցրի.

- Բարի՛ լույս, ո՞նց ես:

- Հո՞ւնց եմ, շան քթից ճուր եմ խմում, որ խոխորցը յոլա տանեմ,- եղավ պատասխանը:

Կատակով ասացի.

- Ա՛յ տնաշեն, աշխարհի փողերը քո ձեռքի տակ են, յոլա գնալս ո՞րն է:

- Փողերն ի՞մն ա, փողերը պետությանը չի՞,- եղավ պատասխանը:

- Բա քո պետը ինչո՞ւ յոլա չի գնում: Հիմա էլ իր այգում մի պալատ է կառուցում: Բա որտեղի՞ց այդ փողերը,- սրեցի հարցը.- բանկի փողերից չի օգտվո՞ւմ:

Արմենակը, ուսերը թոթվելով, շշնջաց. «Ես հի՞նչ գիդամ»:

Բանկի պետն, իրոք, կառուցում էր: Բայց ի՞նչ էր կառուցում: Ավագ որդուն ամուսնացնելու էր և կազմվելիք նոր ընտանիքի համար իր տանը կից մի փոքր սենյակ էր ավելացնում:

Զրուցակիցս արդեն խորասուզվել էր մտքերի մեջ: Մտահոգ տեսք ընդունելով՝ ես շարունակեցի.

- Միամի՛տ մարդ, քո պետին կարելի է, քեզ՝ չէ՞:

- Ա՛յ ընկեր Սիմոնյան,- նախատեց ինձ Արմենակը,- բա ամոթ չի՞, ըտենց պաներ ես ասում: Ես կուսակցական մարդ եմ, բոլորը

գյուդում են, որ ազնիվ կոմունիստ եմ, կյանքումս մի ծոռ պա՛ն չեմ ըրալ ...

Ես անմիջապես հակադարձեցի. «Միամի՛տ մարդ, դե թող երեխաներդ մնան նեղության մեջ: Գիշերները բանկի ներսում մրափելու փոխարեն սեյֆը բա՛ց արա, շատ չէ, գոնե մի քանի հազար ռուբլի վերցրո՛ւ: Բանկի փողերը նաչալնիկիդ հալալ են, քեզ՝ չէ՞: Խելքդ գլուխդ հավաքիր, մեղք են երեխաները: Մի սեյֆի բանալին ի՞նչ է, որ չես կարողանում սարքել»:

Արմենակը լռեց և դարձյալ ընկավ մտքերի մեջ, ապա մի պահ ուշքի գալով՝ հազիվ լսելի ձայնով շշնջաց. «Արա՛ Սիմոնյան ջան, գիշերները ես էլ եմ է շատ մտածում, ախր, էդ անդեր սեյֆի վիրան տասը քիլիդ* կա, վե՞րը պա՛նա՛մ ...»:

---

* Կողպեք:

ՄԻ ԴԵՊՔ ՁՄԵՌԱՆՈՑՈՒՄ

Գարնան սկզբից Ադրբեջանից անթիվ-անհամար ոչխարի հոտեր ու կովերի նախիրներ բարձրանում էին Սիսիանի սարերը և ամբողջ 5-6 ամիս մնում խոտառատ արոտավայրերում: Փոխարենը ձմռան սկզբին Գորիսի շրջանի կոլտնտեսություններից յոթանասուն-ութսուն հազար ոչխար էր քշվում Արաքս գետի խառնարանի ադրբեջանաբնակ արոտավայրերը, ուր մնում էին մինչև գարնան սկիզբը:

Այդ ամիսներին կոլտնտեսությունների վարչությունների նախագահները և այլ պատասխանատուներ, ինչպես նաև շրջանի սովետական և կուսակցական ղեկավարներ, հերթով մեկնում էին նշված ձմեռանոցներ՝ ուսումնասիրելու հովիվների կենցաղն ու վիճակը, իսկ վերադառնալիս ձեռնարկվում էին հարկ եղած միջոցներ՝ նրանց կարիքները հոգալու համար:

Հերթը նաև հասել էր ինձ: Պիտի ձմեռանոց գնայի շրջգործկոմի նախագահի և ֆինբաժնի վարիչ Կարլ Գրիգորյանի հետ՝ գործկոմի «Վիլիս» մեքենայով:

Գորիսից ճանապարհվել էինք, երբ այնտեղ դեռ խոր ձմեռ էր: Գործկոմի նախագահը նստած էր վարորդի կողքին, իսկ մենք՝ մեքենայի հետնամասում:

Երեք-չորս ժամ ճանապարհ անցնելուց հետո մենք հայտնվեցինք պայծառ արևով ողողված փարթամ կանաչի անծայրածիր տարածություններում:

Գործկոմի նախագահի ախորժակը բացվել էր: «Փա՜հ, փա՜հ, փա՜հ, հի՜նչ կանաչ ա, է՜, հի՜նչ խոտ ա, է՜, փա՜հ, փա՜հ, փա՜հ»,- արտաբերեց նա: Ոոպեներ անց, դիմելով մեզ, նորից կրկնեց. «Արա՛, տեսնո՞ւմ եք հի՜նչ կանաչ ա, հի՜նչ խոտ ա, փա՜հ, փա՜հ, փա՜հ»:

Արդեն շատ հեռվում հազիվ երևացին հովիվների վրանները:

Չեմ հիշում, թե գործկոմի նախագահն արդեն որերորդ անգամ էր «Փա՜հ, փա՜հ, փա՜հ» անում, երբ հանկարծ Կարլը բարձրաձայն դիմեց վարորդին՝ «Վաղո՛, պահի՛ր, մեքենան կանգնեցրո՛ւ, Վաղո՛»: Միաժամանակ շարժումներ արեց, թե, իբր, մեքենայի խցից դուրս է գալիս:

- Հի՞նչ ա պտահալ, Գրիգորյա՛ն ջան, հի՞նչ ա պտահալ,- երկյուղած հարցրեց վարորդը:

- Մեր ղեկավարն էնքան «փա՜հ, փա՜հ» արեց, էնքան «Հի՜նչ լավ խոտ ա» ասեց՝ գնում եմ՝ արածեմ, կանգնեցրո՛ւ ...

Գործկոմի նախագահը մինչ տեղ հասնելը լուռ էր ...

ԱՐԴԱՐ ՆԱԽԱՏԻՆՔ

Հեղինե մայրիկը իր քրոջ տղա Մարտունին հարցրեց.

- Այ տղա՛, Մատի, կուսակցության մեջ մտա՞ր, թե՞ չէ:

- Չէ՛, մորաքո՛ւյր, չեն ընդունում:

- Արա՛, հազար շուն ու գել մտան, բա քեզ խի՞ չեն ընդունում:

ԱՆՀԱՋՈՂ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Շրջանի պանրագործարանի տնօրեն Գալստյանից խնդրեցի մեկ-երկու կիլոգրամ պանիր, իսկ նա թե՝ «Ազնիվ խոսք, մի գրամ չունեմ»:

Երբ բաժանվում էինք, նորից անդրադարձա ինձ հուզող հարցին.

- Մի՞թե այդպես էլ պանիր տալու ոչ մի տարբերակ չկա:

- Տարբերակներ շատ կան, բայց ... պանիր չկա,- աչքերը կկոցելով ասաց ընկերս:

Ա՜Յ ՔԵԶ ԼՃԱՑՈՒՄ

«Լճացման» կերուխումի տարիներին Գորիսի շրջանի գյուղերի բնակիչները այնքան էին զարգացել, որ իրենց ընկուզենիների բերքը այլևս փայտյա երկար ձողով չէին թափում ու հավաքում: Օդանավակայանի ուղղաթիռներից որևէ մեկի օդաչուի հետ պայմանավորվելով՝ հարցը լուծում էին տեխնիկական առաջադիմության ընձեռած հնարավորություններով: Ուղղաթիռը թռչելով ընդհուպ մոտենում էր ընկուզենուն, և օդային պտուտակից առաջացած ուժգին քամին, մի քանի րոպեում ծառը «մաքրելով», բերքը վար էր բերում:

Լա՜վ լճացում էր ...

ՇԱՔԱՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՅՐԻԿԸ

Հարևանի բնակարանում իրարանցում էր: Ես անհանգստացած ներս մտա: Ընտանիքի մեծ մոր սիրտը վատացել էր և շտապ օգնություն էին կանչել, որը շուտով ժամանեց: Մինչ բուժքույրերը նախապատրաստվում էին, բժիշկը, նստելով հիվանդի մոտ, մի քանի հարց տվեց:

- Իսկ շաքար ունե՞ք,- հերթական հարցն ուղղեց բժիշկը:

- Շաքա՞ր, չէ՛, չունենք, բայց շաքարավազ ունենք,- պատասխանեց մայրիկը:

ՍՊԱՌԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ

Կոլտնտեսության նախագահի պաշտոնից ազատվելուց հետո Արշակ Սուջոյանը նշանակվում է հայրենի գյուղի խորհրդի նախագահ: Նա արդեն տարիքն առած մարդ էր, բայց առաջվա պես առույգ, աշխատասեր, կատակը շուրթերին:

Գյուղի երիտասարդներից մեկը մի անգամ մտնում է գյուղխորհուրդ և դիմում Սուջոյանին.

- Արշա՛կ դայի, յուղունիկներիս* չորսը կորալ ա: Խնդրում եմ՝ մի ճար անես: Լավությանդ տակից տուս կի կա՛մ: Շա՜տ եմ խնդրում ...

- Ա շա՛ն տղա,- ասում է Սուջոյանը,- ասի հավը կորալ ա, քինամ ման կա՛մ, ճարեմ: Ասի հորթը կորալ ա, քինամ ման կա՛մ: Բա ես լյոտչիկ եմ, յուղունիկնին հո՞ւնց ճարեմ: Տու հինարն ասի, ես անեմ: Թռնեմ փռնե՞մ ...

---

* Աղունիկ:

ՀՐԱՏԱՊ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Բակունց Սուրենը շատ տարիներ Գորիս գյուղի կոլխոզի նախագահն էր, ազնիվ ու հարգելի մի անձնավորություն: Շատ էր նեղվում գրագիտությունից, ուստի աշխատում էր ստորագրությունից բացի թղթին չհանձնել որևէ բառ: Բայց մի անգամ Երևանից եկած ու վերադարձող պաշտոնյայի խնդրանքով ստիպված Սիսիանի ամառային արոտավայրերում գտնվող իրենց ֆերմայի վարիչին գրում է. «Ընկե՛ր Ալեքսան, գրաբերիս ծախի մի վօճղառ և նշի քու մոդ»:

«Ոչխար» բառի միայն մի տառն էր եղել իր տեղում, հինգ ուղղագրական սխալ:

ՀԱՇՏ ՍԿԵՍՈՒՐՆ ՈՒ ՀԱՐՍԸ

Կիմ Թաթարյանի հետ Կարլ Գրիգորյանի տանն էինք: Առատ սեղանի շուրջը ծայր առած կենացներն ու կատակները վերջ չունեին: Կարլի կինը՝ Էմման, շատ մարդամոտ, հյուրասեր անձնավորություն էր, քաղաքի լավագույն ուսուցիչներից մեկը:

Չնայած դրան՝ Կարլի մայրը՝ Գայանեն, ինչպես բոլոր սկեսուրները, հարսի նկատմամբ այնքան էլ լավ չէր տրամադրված, բայց դա ամեն կերպ թաքցնում էր ուրիշներից:

Կենացներից մեկի ժամանակ Կիմը խորամանկորեն հարց տվեց.

- Գայանե՛ մայրիկ, հարսդ հո՞ւնց ա է՞, հավանո՞ւմ ես:

Հանկարծակիի եկած սկեսուրը մի պահ լուռ էր:

- Հինչ ա է՞, մեր հարսը շատ էլ լավն ա,- պատասխանեց Գայանե մայրիկը:

Քիչ հետո, զգալով, որ, ախր, «շատ» է ասել, ավելացրեց.

- Հի՞նչ ա է՞, խալխին լավը պիրելու են մեզ տա՞ն ... Հը՞:

ՆԱԽԱՏԻՆՔ

Կարլ Գրիգորյանի մոտ էի, երբ նրա աշխատասենյակ մտավ ծանոթներից մեկը՝ խիստ վրդովված և այլայլված: Բարևեց ու լռեց:

- Ի՞նչ է պատահել, Սեդրա՛կ,- հարցրեց Կարլը:

- Ընկե՛ր Գրիգորյան,- ասաց նա,- շրջկոմից եմ գալիս: Ուզում են ինձ կուսակցությունից հեռացնել: Խնդրում եմ ...

Խոսքը դեռ չվերջացրած՝ Կարլը հարցրեց.

- Կուսակցություն ընդունվելիս փող ես տվե՞լ:

- Չէ՛,- ասաց այցելուն:

- Դե՛, եթե չես տվել, մուֆթա բանն էլ էդպես կլինի էլի,- նախատեց Կարլը:

Խեղճը, քթի տակ ինքն իրեն անիծելով, ձեռնունայն հեռացավ:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՏՈՒՄ

Ինձ պատմել է Հայկոմկուսի Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանը:

Աշնան վերջն է լինում: Կոլտնտեսություններում սկսվել էին տարեկան ժողովները, որոնցում ամփոփվում էին անցած ժամանակաշրջանում կատարված աշխատանքների արդյունքները: Սովորաբար այդ կարևոր հավաքներին մասնակցություն էին բերում նաև կուսակցության շրջանային կոմիտեների և շրջգործկոմների պատասխանատու աշխատողներ:

Ղափանի շրջանի գյուղերից մեկի՝ Արծվանիկի կոլտնտեսության տարեկան ժողովին մասնակցելու է գնում ինքը՝ շրջկոմի առաջին քարտուղարը:

Ժողովն անցնում է բուռն քննադատությունների մթնոլորտում: Կոլտնտեսականներից մեկը՝ Գեդեոնը, զայրացած ելույթ է ունենում՝ շեշտադրելով, որ աշնանը շրջկենտրոնից գյուղ եկած պատասխանատու աշխատողները կոլտնտեսության պահեստից տանում են զանազան մթերքներ՝ հաշվապահություն մուծելով չնչին գումարներ: Որպես առավել ցայտուն օրինակ՝ նա մատնացույց է անում մեղվաբուծությունից ստացված եկամտի հետ անփույթ վարվելու փաստը: Դիմելով կոլտնտեսության նախագահին՝ նա հարցնում է.

- Ընկե՛ր Գևորգյան, էդ որ շրջանից* գալիս են մեղրը տանելու, էդ ոչի՛նչ, իրենց հալալ ինի, բայց ռամկաները պետք ա ետ ղրկե՞ն, թե՞ չէ:

Իբր ժողովրդի դարդն ու ցավը ռամկաներն են:

Գլխի ընկնելով, թե ինչ է ուզում հասկացնել Գեդեոնը՝ կոլտնտեսության նախագահը անմիջապես պատասխանում է.

- Հա՛, իհարկե, Գեդեոն ջան, ռամկաները պիտի ետ ուղարկեն, որ գալիք տարի նույնպես մեղր տանեն ...

Գեդեոնին ասելու բան չի մնում:

* Նկատի ուներ շրջկենտրոնը:

«ՀԱՐՄԱՐ» ԹԵՄԱ

Կենտկոմում աշխատելուս տարիներին էր: Դուրս եկա միջանցք և հանդիպեցի Եղեգնաձորի կուսշրջկոմի երկրորդ քարտուղարին: Ասաց. «Ուզում եմ ատենախոսություն գրել, չգիտեմ, թե ինչ թեմա վերցնեմ»: Մինչ ես մտածում էի, թե ինչ թեմա կարող եմ առաջարկել, հանկարծ երևաց Գևորգ Հայրյանը և մոտեցավ մեզ:

- Ինչի մասին եք խոսում,- ասաց նա:

Պատասխանեցի, թե ընկերը Եղեգնաձորի կուսշրջկոմի երկրորդ քարտուղարն է, դիմել է ինձ ատենախոսության թեմա ընտրելու համար, բայց առայժմ ոչինչ առաջարկել չկարողացա:

- Ես մի շատ լավ և շատ հարմար թեմա կառաջարկեմ,- ասաց նա: - Վերցրո՛ւ և գրի՛ր. “Деятельность Ехегнадзорского партийного актива по ограблению социалистического имущества”:

Բոլորս խնդացինք: Ես ազատվեցի թեմայի շուրջ մտորելու հոգսից:

ԲԱՆԻՄԱՑ ԸՆԿԵՐՈՋ ԻՄԱՍՏՈՒՆ ԿԱՐԾԻՔԸ

Հայաստանի կոմկուսի կենտկոմի արտասահմանյան երկրների բաժնի վարիչ Լևոն Մանասարյանն իմ ընկերներից էր՝ ծայրաստիճան ազնիվ մի մարդ, այն ժամանակվա ռուսական կրթություն ստացած, ինչ-որ տեղ կյանքից կտրված դասական կերպարներից մեկը:

Մի օր վերադառնում էինք «Զվարթնոց» օդանավակայանից, իսկ դիմացից գալիս էր մի հսկայական ավտոամբարձիչ՝ քթից կեռը կախված:

Ես նրան կատակով հարցրի.

- Լևո՛ն Պետրովիչ, եթե էդ կռունկի ծայրի կեռը մտնի մարդու քթի ծակը, կարո՞ղ է վնասել:

Նա ինձ նայեց որպես բանից միանգամայն անտեղյակ մարդու:

- Ի՜նչ միամիտ մարդ ես, զարմանում եմ: Քթի մյուս ծակն էլ կվնասեր: Ես կասկած չունեմ,- գերագույն բանիմացությամբ վրա բերեց նա:

ԱՐԴԱՐԱՑԻ ՄՈՏԵՑՈՒՄ

1950-1970-ական թվականները Գորիս քաղաքի համար երջանկության տարիներ էին: Մարդիկ զարմանալիորեն բարի էին, հարգալից միմյանց նկատմամբ, ներողամիտ ու զիջող: Ստեղծվել էր համակեցությամբ ապրելու, փոխադարձ հարգանքի ու զիջողության համընդհանուր մթնոլորտ: Կյանքի կանոններից մեկն էր չնեղացնել բարեկամին ու հարևանին: Երբ երեխաները փողոցում խաղալիս կռվում էին, ծնողներից յուրաքանչյուրը հանդիմանում ու սաստում էր իր, այլ ոչ թե հարևանի երեխային:

Պատշգամբում նստած թերթ էի կարդում, երբ դարպասի դուռը բացվեց, և քիթը բռնած, ճչոցով, վա՜յ, վա՜յ, վա՜յ անելով՝ բակ մտավ փոքր եղբորս՝ Լևոնի հազիվ 3-4 տարեկան աղջնակը և նետվեց դեպի մայրս՝ բողոքելու ու հայցելու նրա խղճահարությունը: Եվ երկուսի միջև տեղի ունեցավ մտքերի հետևյալ փոխանակումը:

- Հի՞նչ ա պտահալ, ա՛յ աղջի,- հարցրեց մայրս:

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ, տատի՛, Համլետը քեթս կծալ ա, վա՜յ, վա՜յ, վա՜յ,- աղիողորմ պատասխանեց աղջնակը՝ հուսալով, որ տատը կգնա և կպատժի Համլետին:

- Համլետը շատ էլ լավ ա ըրալ, որ կծալ ա: Աչքդ ալ հանել ա: Ախր հինչ կործ ուներ քու քեթը խալխին տղի պիրանումը, որ կծեր, հը՞:

ՏԵՂԻՆ ՆԱԽԱՏԻՆՔ

ՀՀՇ-ական ցուրտ ու մութ տարիներն էին: Ժողովուրդը հայտնվել էր անասելի զրկանքների մեջ: Արշակ Սուջոյանը՝ արդեն ծերացած և հիվանդ, համազյուղացիների հետ կիսում էր վրա հասած արհավիրքը:

Գարնան սկիզբն էր: Նստած իր տան դարպասների մոտ և սուզված մտքերի մեջ՝ ծերուկն արևկող էր անում, երբ նկատում է հեռվից մոտեցող կոլտնտեսության նախկին կոմբայնավար, իր աշխատասիրությամբ ողջ շրջանում հայտնի Սամսոն Հարությունյանին: Երբ սա մոտենում է, նրանց միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը:

- Արա՛ Սամո, էսքան վախտ իշտե՞ղ ես, իրևում չես,- հարցնում է Սուջոյանը:

- Քինացել էի Ըրևան, Արշա՛կ դայի:

- Հո՞ր ես է քինացալ:

- Քինացալ էի, վեր աչքս օպերացիա ընեն:

- Հա՞, ըրալ ե՞ն:

- Ըրալ են, Արշա՛կ դայի:

- Արա՛, խալխը աչքերը քուռուցնում ա, վեր պա՛ն չտեսնա, տու օպերացիա ես ըրալ, վեր հի՞նչ տեսնաս,- մղկտալով հարցնում է ծերուկը:

Հարցը մնում է անպատասխան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՈՏ

ՄՈՒՏՔ....5
ՏԱՏՍ....7
ՄԵՐ ԳՈՄԸ....18
ԱՆԱՎԱՐՏ ԼՈԳԱՆՔ....20
ՎԱՐԴԱԳՅՈՒԼԻ ԾԱՏՈՒՐԸ....22
ՍԱԹԵՆԻԿԻ ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՓԱԽՈՒՍՏԸ....24
ԲՈՒՇԻՆ ԱՎԵՏԻՍԸ ՆԱԽԻՁԵՎԱՆՈՒՄ....27
ՁՐԱՂԱՑՔԱՐԻ ԽՆԴԻՐԸ....29
Ա՜Ղ ԲԱՆ....31
ԱՐՀԱՎԻՐՔ....34
ԲՈՂԱՐԸ....36
ՀԱՆՃԱՐԵՂ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ....37
ՄԱՇՈՆ....39
ԲԱԶԱՐՋԱՅԻ ՍԱՐԵՐՈՒՄ....46
ՀՆԻ ՈՒ ՆՈՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ....59
ԴԱՏԱՎՃԻՌ....62
«ԱՐՎԵՍՏԻ ԿՈԹՈՂՆԵՐԻ» ՄԵԾ ՎԱՐՊԵՏԸ....67
Ա՜Յ ՔԵԶ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ....70
ԵՐԱՆԵԼԻ ՕՐԵՐ....73
ԱԼԱՍԿՅԱՐԸ....75
ՍԱՔՈՅԻ ԱՍՐԻՆ....78
ԽԵԼԱՄԻՏ ԱՌԱՁԱՐԿ....81
ՏԱԹԵՎՑԻ ԲԱԳՈՆ....83
ԱԴՈՒՇ ԱՄԻՆ....87

ՄԵԾԱՄԻՏ ԱԲԵԼԸ *(լրացում նախորդ շարադրանքի)* 98
ԱԼԵՔՍԱՆ ԴԱՅԻ 100
ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ 102
ՀՈՒՍԱՀԱՏ ԽՆԴՐԱՆՔ 105

ԴԵՊՔԵՐ ԵՎ ԴԵՄՔԵՐ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԸ ԳՈՐԻՍՈՒՄ 111
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԱՐՇԱԼԻ ՀԵՏ 114
ՄԵԾ ԳԻՏՈՒՆԻ ԱՎԱԳ ԴԱՍԵՐԻՑ ՄԵԿԸ 120
ՄԵՐ ՍՈՒՐԵՆԸ 123
ՄԻ ՔԱՆԻ ԴՐՎԱԳ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻ
ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՑ 144
ՄԵՐ ՍԵՐՈՆ 152
ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ 163
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒՄ 177
ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ ԳՐՈՂՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ 182
ՆՐԱ ԱՆՈՒՆԸ ՄԻՇՏ ԻՆՁ ՀԵՏ Է 187
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԵԼԻ»
ԴՐՍԵՎՈՐՈՒՄ 192
ԱՅԴՊԵՍ ԷԼ Է ԼԻՆՈՒՄ 196
ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ 205
ԿԱՐՈՏ 207
ԶԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԸ 209
ԽԵԼՔԸ ԳԼԽԻՆ ՄԱՐԴԸ 212
ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ – ՎԱՆԵՑԻ 216
ԴԻՄԱԿԱՎՈՐ ՄԱՐԴԸ 234
ԱՌԱՁԱՎՈՐ ՓՈՐՁԸ 237
ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳՌՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ 241
ԲԱՆԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ՀՐԱՀԱՆԳԻՉԸ 243
ԱՀԱ ԹԵ ՈՐՆ Է ԸՆԿԵՐԸ 247

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

ՏԵՂԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ 251
ԽԵԼԱՑԻ ԽՈՐՀՈՒՐԴ 252
ՄԵԾԱՀԱՆՃԱՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ 253
ՃԱՇԿԵՐՈՒՅԹ 254
ՀԱՄՈԶԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ 255
ԿԵՍԳԻՇԵՐԱՅԻՆ ԶՐՈՒՅՑ 256
ԽԱՉԻԿԻ «ԲՐԻՈԼԻՆԸ» 257
ՀԱՍՑԵ ՈՐՈՆՈՂ ԶԻՆՎՈՐԸ 258
ՀՆԱՐԱՄԻՏ ԸՆԿԵՐՍ 259
ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԳՈՐԻՍՈՒՄ 260
ՄԻԶԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԸ 267
ԴԻՊԼՈՄԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆԻ ԲՈՂՈՔԸ 270
ԲԱՆԿԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԶՆԻՎ ՊԱՀԱԿԸ 271
ՄԻ ԴԵՊՔ ՁՄԵՌԱՆՈՑՈՒՄ 273
ԱՐԴԱՐ ՆԱԽԱՏԻՆՔ 275
ԱՆՀԱՋՈՂ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ 276
Ա՜Յ ՔԵԶ ԼԱՃԱՑՈՒՄ 277
ՇԱՔԱՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՅՐԻԿԸ 278
ՍՊԱՌԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ 279
ՀՐԱՏԱՊ ԳՐՈՒԹՅՈՒՆ 280
ՀԱՇՏ ՍԿԵՍՈՒՐՆ ՈՒ ՀԱՐՍԸ 281
ՆԱԽԱՏԻՆՔ 282
ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՏՈՒՄ 283
«ՀԱՐՄԱՐ» ԹԵՄԱ 285
ԲԱՆԻՄԱՑ ԸՆԿԵՐՈՋ ԻՄԱՍՏՈՒՆ ԿԱՐԾԻՔԸ 286
ԱՐԴԱՐԱՑԻ ՄՈՏԵՑՈՒՄ 287
ՏԵՂԻՆ ՆԱԽԱՏԻՆՔ 288

ՍԻՄՈՆՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ Է ...

Չափսը՝ 60x84 1/16: 18.25 տպ. մամուլ:
Տպագրություն՝ օֆսեթ: Թուղթ՝ օֆսեթ:
Տպաքանակ՝ 500:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1